Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1623

1999

- 52
9 - 52

.Ս ՉԵՐԱԶ

ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

ՏԱՂԵՐ, ՃԱՌԵՐ, ԱՌԱԾՆԵՐ,
ՆԱՄԱԿՆԵՐ, ԳՐԱԴԱՏՈՒՄՆԵՐ,
ԱՐԳՈՍԻ ԽՈՀԵՐԸ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
1874

575

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ

ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

ՏԱՂԵՐ, ՃԱՌԵՐ, ԱՌԱՍՆԵՐ,
ՆԱՄԱԿՆԵՐ, ԳՐԱԴԱՏՈՒՄՆԵՐ,
ԱՐԳՈՍԻ ԽՈՇԵՐԸ.



ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
—
1874

Գ/623-60

ՀԲ. 1629

ՁՕՆ.

Կը ձօնեմ այս գիրքը իմ վաղամեռիկ հայրին, **ԳՐԻԳՈՐ ՁԵՐՍԱՁ**, որ մի գործաւոր էր ատաղձագործ, տգէտ, աղքատ, թշուառ, այլ պարկեշտ եւ ազնիւ:

Մ. Ձ.

ԱՌԱՋԱԲԱՆ.

Ա

Շատ կանուխ մի բանաստեղծական ոգի կազմեցին ինձ իմ վաղահաս որբութիւնը, տնական վիշտերը, եւ թերեւս մի բնական տրամադրութիւն, զի կ'երեւի թէ մարդ կայ որ քար կը ծնի, մարդ կայ որ քնար: Սակայն, մի այնպիսի հասակի մէջ, ուր հոգին հեզ է ջուրի պէս, որ ամեն ամանի ձեւը կ'առնու, եւ ջուրի պէս թափանցիկ, որ ամեն առարկայի պատկերովը կը տոգորուի, պատահիլով այնպիսի անձերի որք ջանացին շեղեցուցնել սիրտիս ընթացը, ես ինձ անծանօթ մընացի: Դպրոցական էի, եւ ինձ առաջնորդ կը հաւտայի այն դասիարակները որք 'զիս կը շրջապատէին. ինչ կը քարոզէին ինձ դոքա.—թէ բանաստեղծութիւնը յիմարութիւն է, թէ ոչ դովաւ յառաջ կ'երթայ մարդկութիւնը, թէ գիտութիւնները միայն նշմարիս, թէ սոքա միայն են օգտակար, եւ հեսեւապէս մշակելի: Այս մարդերին վրայ հաւաս ունէի. գիտէի թէ նոքա յինէն աւելի իմաստուն եւ փորձառու էին. ուստի, համոզուեցայ թէ գրական կեանքը չ'է կարող բարգաւաճե-

ցունել ազգային կեանքը: Տարակոյսներ կը զգայի երբեմն, մանաւանդ երբ մի ֆերբուած ձեռֆս անցնէր. այլ, երբ դասիարակներիս կը դիմէի, նոցա հեգնական ժպիտը կը փարատէր իսկոյն երազներիս ամպը: Վերջապէս, բոլորովին անձնատուր եղայ նոցա սկիզբներին: «Իրաւունք ունին, կը մտածէի. երեւակայելը ցնորիլ է. բանասեղծութիւն եւ տղայութիւն համանիշ բառեր են. ապրի թուանշանը. 2 անգամ 2, 4. քանի վսեմ է այս, քանի պատշեալի:» Եւ սակայն կը ֆերբէի: E pur si muove!

Ա՜հ, ինչ բոցեր մարած են արդեօք այսպիսի ցուրտ շունչերի առջեւ. ինչ ֆնարներ փշրուած են այս մարմարէ մատերին տակ. քանի հոգիներ կոխան եղած են այդ սրբապիղծ ոտֆերին. եւ քանի հանճարներ պիտի համրէր այսօր ազգը իւր մէջ, թէ անխոհեմ դասիարակներ չը յանդգնէին խամրեցուցնել այն մատղաշ ծաղիկները, որոց վրայ ասուռածային ցող էր իջած:

Դասիարակներ, ձեր պարտն է արմատախլել ինչ որ չար է մանուկին մէջ. մի խիզախէք աւելի հեռին. մի՛ ջանաք սրբագրել բնութիւնը, զի չ'էք կարող 'զայն ըմբռնել եւ զի մի Աստուած ներդաշնակած է 'զայն: Մի՛ զուցէ, պատրոյկը վառելի համար, դուք արեւը մարէք . . . :

Բ

Մի օր, այն ազնիւ գերդասանը, որ իւր զաւակներին դասիարակութիւնը ինձ էր յանձնած, ներկայացուց 'զիս այն անձին, որոյ համբաւը միայն կը ճանաչէի յայնժամ: Աշուն էր եւ երեկոյ:

«Ո՞ր գիտութիւնը սիրելի է քեզ ամենէն աւելի,» հարցաւ ինձ նա:

—Դրական գիտութիւնները կը սիրեմ, պատասխանեցի:

«Ճաշակ չ'ունիս, յարեց, բանասեղծութեան:»

—Ոչ, պատասխանեցի. եւ սկսեցայ կրկնել այն գաղափարները 'զորս ինձ ներշնչած էին իմ դասիարակները, ինչպէս այն բառերովը 'զորս զոց արած էի գրէթէ: Կ'ասեմ բանասեղծութիւնը՝ մարդկային ազգի տղայ հասակին մէջ ծնած է այն. տգէս ժողովուրդների գիտութիւնն է. մարդը գիտութիւնով միայն մեծ է, աշխարհը գիտութիւնով միայն կը քաղաքակրթուի. բանասեղծութիւնը սուտ է եւ ոչ իր, սուտիւն եւ ոչ ճշմարտութիւն. այս դարին մէջ ասել. «Ես բանասեղծ եմ», կը նշանակէ. «Ես կոյր եմ»:

«Չ'եմ հասկընար թէ ինչպէս կարելի է այդքան ատել բանասեղծութիւնը, պատասխանեց: Դիտէ սա վերջալոյսը, եւ, ըսէ ինձի, բան մը չ'ես զգար այս տեսարանին առջեւ:»

Դուրս նայեցայ պատուհանէն: Նոքա միայն, որք բնակած են Հասգիւղի մէջ, կրնան ըմբռնել ինչ որ պարզուեցաւ յայնժամ աչքիս առջեւ: Ամեն տեղէ միեւնոյն կերպով չ'է տեսուիր վերջալոյսը. զանազան կետերէ դիտուիլով, զանազան երեւոյթներ կը ստանայ. բնութիւնը միութիւնի մէջ իսկ անհուն փոփոխութիւններ ունի եւ անեզր ձեւաշատութիւններ: Եւ այս է որ այնքան տարբեր եւ այնքան նոխ ներշնչումներ կ'ազդէ Պիւֆոնների,

Պէռնառտէն տը Սէն-Բիէռնեռի, Շաղոպռիանեռի :

Արեւը Էյուպի բլուրներին վրայ խոնարհած էր, մոս այն Բամիզ-Ջիֆդլիկիին, ուր, կ'ասէ աւանդութիւնը, 1829ին ապաստանեցաւ Սուլթան Մահմուտ Բ, Թուրքերին գրէթէ Մեծն Պետրոսը, Տիպիչ Զապալգանսքիի խիզախ արշաւը լսելով : Իւր շլացուցիչ նահանջները ամփոփելով իւր շուրջը, իբր արծիւ որ թեւերը կը ծռարէ երբ պատրաստուի հանգչիլ, բլուրին ետեւ կ'իջնէր տակաւ տակաւ : Լոյսի գոյնագոյն երակներ այդ լեռնակներին վրայ կ'երկարէին ծայրէ ծայր, բաց ներկերէ մութերի անցնելով, առաջին խաւերը մեղմ, վերջինները խիստ երանգներով : Երկինի կապոյտ յատակին վրայ, կաթնաթոյր ամպերի եւ այն բարձրութիւններին մէջ շրջանակուած որ դեռ կանաչ էին, այդ վսեմ պատկերը, 'զոր մի Աստուած կը նկարէր վարդ լոյսերով եւ այն փափուկ գոյներովը որովք անմեղ կոյսը կը շիկնի, մի դիւթութիւն էր աչքի համար եւ հոգիի համար : Հեռին, տրխուր նոճիների երկար շարերին մէջ, ուր ամբողջ սերունդներ կը ննջեն եւ ուր մի խորհրդաւոր մթութիւն կը տիրէ միշտ, տկար ճառագայթներ սպրդած կը նուաղէին. մութ աւելի յանկուցիչ քան լոյսն իսկ : Ոսկեղջիւրի ալեակները կարմրած էին թեթեւ, եւ մի ծիրանի շղարշի տակ կը խաղային ծաւալուն. երկու նաւակ ջուրի վրայէ կը թռչէին : Հոս, հոն, մզկիթների գորշախայտ գմբէթներին եւ ներսակ *մինարէ*ներին վրայ, տուների ապակիներին վրայ, հեռաւոր լոյսեր կը

ճեռուէին : Լռութիւնը կը սկսէր ծանրանալ աշխարհի վրայ, ստուերները կ'աճէին, եւ, հեռին, մինչ յետին ճանանչը կը սրբուէր հորիզոնին վրայ եւ ծովային բադը իւր վերջին թռիչը կ'առնուր, *միւէզզինի*ն լուրջ ձայնը կը սկսէր աղօթքի հրաւիրել բարէպաշտ մահմեդականները: Անկարելի էր չը յուզուիլ այս մեծվայելուչ հանդէսին առջեւ :

«Այս տեսարանէն չ'ԷՆ զգածվիր. — մտածելու մոս այս վերջին հատագայթը տարտամ շողերով չը՞ շրջապատեր հաեւ քու սիրտդ ու խորհրդաւոր ձայներ չ'ԷՆ արթննար ներսի դիդ : Այդ լոյս-ստուերը, այդ ներքին ձայնը, իր թացատրութիւնն ունի եւ այդ թացատրութիւնն իսկ այնչափ անհուն է որչափ չը կրնար ճեղքվիլ զգացումը. եւ այդ իսկ է բանաստեղծութիւն : »

Այս պայծառ եւ վսեմ սահմանը ցրեց վարանումներս : Իսկոյն չ'թացաւ այն կեղծ կեղեւը 'զոր սիրտիս շուրջը գոյացուցած էին օտարները : Այն խոհուն աչքը որ ինձ էր դարձած, այն համոզիչ ձայնը որ ինձ կը խօսէր, այն բրգային հակատը որ դիմացս էր պարզուած իբր մատեան հանճարի, այս ամենը մի հզօր ներգործութիւն ունեցաւ իմ վրայ. փրկուած էի : Զգացի թէ մի մեծ հեղինակութիւն էր որ ինձ կը խօսէր, զի կը հաւատայի, եւ դեռ կը հաւատամ, թէ ոչ ոք այնչափ բարձր գրական մարդ է որչափ Օսեան :

Այդ ինձ համար նշանաւոր օրէն սկսիլով, զբրեցի այն տաղերը, հատերը, առածները, նամակները, գրադատումները եւ Արզոսի խոհերը, 'զորս ահա երկրորդ անգամ կը հրատարակեմ :

Գ.

Առաջին տաղս մի ողբ է. մարդը լալով կը սկըսի: Պէշիկթաշլեանի մահին հետեւեալ օրը գըրուած է այս տաղը, 'զոր «Մասիս» հրատարակեց: Սիրած եմ միշտ այդ մեծ ոգին, թէեւ չ'եմ ճանաչած. նորա մտերիմներէն մին խոստացաւ 'զիս ներկայացուցանել նմա. մահը կորզեց 'զայն իմ զարմացումէն, հազիւ մի շաբաթ յետոյ. նոյն դժբախտութիւնը ունեցայ երբ փափագեցայ տեսնել Դուրեանը, Իսկիւտարի սոխակը: —Կը սիրեմ Պէշիկթաշլեանը, եւ խանդավառ սէրով. նորա քնարը երկու լար ունի, սէր եւ հայրենիք. ուստի եւ նա մեր ժողովրդային եւ ազգային բանաստեղծն է. հանճար ունի եւ հոգի. կրկին անմահութիւն: Մի գաղափար տալի համար իմ անզուսպ հիացումին վրայ, պիտի պատմեմ հոս մի դէպք ներքին կեանքի: Պէշիկթաշլեանի մի բարէկամը մի օր ցոյց տուաւ ինձ նորա բանաստեղծութիւններէն մի քանին, որ յետոյ տպուեցան. սոցա մէջ կային նաեւ քերթողին երկու ինքնագիր տաղերը. պատանեակ էի. ամեն բան աւիւն կ'ազդէր ինձ. Պէշիկթաշլեանի ձեռագիրը ունենալ, ինչ երջանկութիւն. խնդրեցի, եւ երբ մերժեց, էր կեղծեմ, զողցայ. կրնամ խոստովանիլ կեանքիս մէջ կատարած այս միակ գողութիւնս, քանի որ Ժ. Ժ. Ռուսօ իւր աւելի անմեղելի գողութիւնները կը պատմէ իւր անմման «Խոստովանութիւններ»ին մէջ: Կը յուսամ թէ պիտի ներէ

ինձ այդ բարէկամը, երբ կարդայ այս անկեղծ խոստովանութիւնը: — Երկիւղածութիւնով պահած եմ այդ երկու տաղերը, որ հեղինակին լաւագոյններէն են: Երբ «Մատենագրութիւնք Մ. Պէշիկթաշլեանի»ի տպուած առաջին քերթերը տեսայ, հրատարակիչներին դիմեցի իսկոյն, յայտնելով թէ իմ ունեցած ձեռագիրները բաւական տարբեր են իւրեանց ձեռագիրներէն եւ լաւագոյն. պատասխանեցին թէ Պէշիկթաշլեան եւ ոչ մի տաղ ունի որոյ ձեռագիրները նման լինին իրարի, թէ կարող չ'են ի հրապարակ ածել այն բոլոր ձեւափոխութիւնները, եւ ոչ իսկ ծանօթութիւններ յաւելելով: Համոզուեցայ թէ անկատար պիտի լինէր այդ հրատարակութիւնը, որ այնքան հապճեպով եւ երկիւղով կը կատարուէր եւ ուր կը պակսին անման քերթողին բաւական բազմաթիւ գրութիւնները, որպէս շատեր կը հաւատան: Զի պատկառոս սէրով կը սիրեմ Պէշիկթաշլեանը, պարտ կը համարիմ ինձ գործադրել հոս ինչ որ ի զուր առաջարկեցի ուրիշներին, յուսալով որ անօգուտ չ'են լինիր այս դիտողութիւնները երբ երկրորդ անգամ լոյս տեսնեն նորա երգերը եւ մտածումները: Աւասիկ առաջին տաղը.

Ուստի յանկարծ ծագէ այս լոյս
'ի յաղջամուղջ իմ սրտիս
Զերբ արեւուն շող թափանց
'ի սեաւ անտառ Դերեզմանաց: —
Ցոյս գեղանի՝ ոսկեթեւ
զբաւարթաթռիչ դու թիթեռնիկ

Քանիցս արդեօք թեւածեալ
զմեղամաղձիկ իմ սրտիւ
Հարար 'ի բախտն իմ անողոք,
եւ քրքրնեալ քո ծիրանիք
Ի'անդամանդեայ այն զարդերդ
աւա՛ղ յերկիր թօթափեցան.
Ընդվայր իմովքս ձեռամբ
ես ըզնակաս քո պնեցի
Եւ դափնիդեայ մի ընձիւղ
ոլորեցի քեզ 'ի պըսակ,
Եւ նրբուլիւ մի սիրոյ
ըզքո թեւերդ զարդարեցի.
Հէ՛ք թիթեռնիկ, արդ անկենդան
անկեալ դընիս յիմ սրտիկ,
Եւ զամենայն կորուսեալ
սրտիս 'ի մռայլ ծածկիմ 'ի վիհ,
Զաչքս փակեմ չը տեսանել
երբ զիմ՚ արդ պարեն ասեղք
Զիարդ ծաղկունք փունջ կապեն
եւ կամ բնութիւն նազի յիւր գահ.
Իբրեւ ըզնիւղ մի կիպարին
ես խոնարհիմ 'ի գերեզմանն
Ցուսոց իմոց եւ բասից
եւ լուսաթոյր Երջանկութեան:
Սակայն ուստ՚ի ծագէ յանկարծ
լոյս 'ի խաւար իմ սրտիս.
Ոհ զինչ տեսիլ. միթէ հրեշտա՞կ,
կոյս կամ մանուկ գեղաշնորհ
Որ յիս մտի եւ մատնանիշ
առնէ զգաւառս ինձ լուսոյ.

Որ ասելի եւ անհանդոյժ
էին տիեզերք աչաց իմոց
Նա արդ բնութեան զեղով զարդու
շքով լինի ինձ յանդիման.
Ո՞ իցես դու արդեօք.
հրեշտակք անշուշտ հանաչէք դուք,
Զի քոյր քրի նա հրեշտակաց.
դուք հանաչէք ըզմարդապայլ
Ըզնակատն ուր զայ բազմի
ժպտի շիկնի պարկեշտութիւն,
Եւ զայն ծիծաղ իւր շրթանց
ոյր չիք անուն յազանց լեզուս,
Եւ զմանկունի իւր այտերն
եւ ըզխոպոպսքն գեղանոյլ
Եւ զերկինս որ 'ի վրնիս
լուսապարեն 'ի սեաւ աչկունս.
Ըզսիրտ նորա եւ զնոգեակ
անշուշտ հրեշտակք դուք հանաչէք
Ամենեքին 'ի պատկեր
չրքնաղ մարմնոյն ձեւեալ են այնք:
Եկ ո՛ կուսիկ, որ 'ի փրշուս
կենացս ուղի երեւեցար
Հրաշատեսիկ երեւոյթ,
եւ զհանապարհն իմ լրցուցեր
Խնկով վարսիցդ եւ երեսաց,
լուսով բրբացդ եւ նայուածոց,
Մինչչեւ անցեալ, Եկ ո՛ կուսիկ,
շուշանափայլ քո զուլանէն
Կախեմ մանեակ զտոլս իմ զայս
ընդելուզեալ յայն զիմ սրտիկ

Եւ ապա մնց բրուխ ի կոյս.
Ես մնացից յամայութեանս
Զի աննըշան միջատին
չիք բոյլ յերկնից ասղրն բեւել :

Աւասիկ երկրորդ տաղը.

ՅԻՇԵԱ՛ ԶԻՍ ԿՈՅՍ.

Ցիշեա՛ զիս կոյս՝ յորժամ գըլուխդ
հանգչի փափկիկ բեւոցդ 'ի բարձ,
Եւ գրուչնեկին ննջես ըզքուն.
յիշեա՛ զիս կոյս՝ յորժամ անուշք
Աշխոյժ եւ հոյլ երամով
գեղապարեն առ սընարաւդ :
Ցիշեա՛ զիս կոյս՝ յորժամ զաչկուն-
սրդ մեծամեծ եւ լուսալիր
Բանաս յողջոյն շողից արփւոյն
բողեալ զենքուռ քո զանկողին
Ըզբոյնըն զայն այնքան գեղոյ,
պարկեշտասուն այնքան շնորհաց :
Ցիշեա՛ զիս կոյս՝ յորժամ այգուն
ճեմիս 'ի մարգ ցողատարափ
Սընունդ տալ մրտացըդ քոց
եւ երկնաբուիչ խանդից հոգւոյդ
Զեփիւռիւ առաւօտուց
եւ նըշուլիւ արեգական,
Համասփիւռ խնկով ծաղկանց,
եւ սոխակաց նուագածութեամբ.

Եւ ասասջիր. «Ցորմէ հեռէ
ետես զիս նա, վասն էր արդեօք
Ոչ եւս սիրէ ըզծաղիկ
ոչ ըզզեփիւռ առաւօտուց.
Վասըն իւր ցողատարափ
պարտէզք չունին անուշութիւն,
Ոչ երկինք նըշուլազարդ,
ոչ աղաւնեակք եւ ոչ սոխակք» :
Ցիշեա՛ զիս կոյս՝ երբ՝ նայելով
'ի հայելիդ, զոչես խաբեալ.
«Զի՛ գեղեցիկ, զի՛ սիրուն,
զի՛ չարաճճիկ է այն պատկեր.»
Եւ բիւր մանեակս յօրինես
'ի յոլորից սամոյր վարսիցդ,
Եւ մանկական զողտրիկ ձեւօք
ժպտիս խաղաս ընդ պատկերիդ.
Ո՛հ ասասջիր եւ յայնժամ կոյս.
«Բանիցս անգամ ջանացաւ նա
Համոզակեր ինձ լինել
երբէ աչկունքս են աննրման,
Եւ թէ մեղուք զայտրս իմ
եւ ըզտրբունս վարդըս կարծեն,
Եւ թէ հանգոյն եմ հրեշտակաց.
արդեօք իրաւ զոր ինչ ասաց : »
Ցիշեա՛ զիս կոյս՝ երբ բերկրանք
ձեռն 'ի ձեռին, ֆեզ տարփացեալ
Փարին ըզգիրգ քո մարմնով
եւ փայփայեն զերեսս քո :
Ցիշեա՛ զիս կոյս՝ երբ Տրտմութիւն
ըզշնորհազեղ զըլուխդ հակէ

Զերբ ցօղալից վարդից կոկոն.
զսէրն իմ դրնեմ այնրմ նեցուկ :
Յիշեա՛ զիս կոյս երբ ըզվայրի
ոն տեսանես դու ըզծաղիկ
Որ հսկէ 'ի վերայ
իմ մենաւոր գերեզմանին : —

Թող գրագէտը բաղդատէ ըզ սոսա «Մատենագրութիւնք Մ. Պէշիկթաշլեանի»ի 96, 97, 98, 99, 100 էջերին հետ, եւ առաջին ակնարկով պիտի տեսնէ թէ որչափ ընտրագոյն են իմ. ֆով պահպանուած բնագիրները տպուածներէն : Թէ երկիւղած եւ անձնուէր խնամով կրկին տպագրուին այս ներշնչուած բերթողին ամբողջ գործերը, ազգը յայնժամ պիտի զգայ թէ ինչ կորցուց Պէշիկթաշլեանը կորցունելով :

Երկրորդ տաղս մի դամբանական է Լամարդինի վրայ, մի ամիս յետոյ գրուած նորա մահէն, որ փետրվար 16ին տեղի ունեցաւ. չքնաղ գլուխ, որոյ շուրջը փառքի լուսապսակ եւ ժողովրդականութիւնի դափնի կայ բոլորուած : Երբ մի բանաստեղծ կը պակսի աշխարհի բատրաբեմէն, մի առաքինութիւն է որ կը պակսի մարդկային ազգէն : Երբ մի բերթող կը լռէ, մի առաջդիմութիւն է որ կանգ կ'առնու : Բանաստեղծները կը բաղմակրթեն մարդկութիւնը. աշխարհի առաջին դարերին վրայ մի բնար կայ որ լոյս կը սրփռէ, վերջին դարերին վրայ ալ մի բնար պիտի ծագի : Սմա համար, մարդը պարտաւոր է սուգ առնուլ երբ մի Հոմերի հոգին կը դադրի բրբռալ:

— Երբ այս տաղը հրատարակուեցաւ, սա նեռածութիւնը կը կրէր.

«Ոչ ոք լացաւ այս մարդը. եւ սակայն ոչ ոք ողբալի է քան այս մարդը :

Արտասուը, որ մի զօրութիւն է փոքր հարուածների դէմ, կարծես ուժաթափ կը լինի մեծ հարուածների առջեւ, եւ լռութիւնը, մի կապարէ խուփի պէս, կը գայ կնռել մեր բերանին վրայ :

Լամբ, երբ մեր հայրը մեռնի. երբ մարդկային ազգին հայրը մեռնի, լամբ.— թշնամանք է այդ. միեւնոյն հարկը չը կրնայ վնարուիլ դոցա. Ինչ անեմք ուրեմն.—լռեմք, եւ յիշեմք . . . :

Այսպէս արին Հայերը : Արամեան բնարները, որք, աւաղ, ողբալ կը սիրեն քան երգել եւ որք այնչափ պերճախօս են երբ արտասուեն, վար առին այն սեւ քողը որ ալ գունաս է բիւր շիթերի տակ, եւ 'զայն իւրեանց լարերին վրայ փռելով՝ Լամարդինի սուգը սգացին անձայն :

Մեք կը յանդգնիմք քողը վեր առնուլ առաջին անգամ, եւ ընդհատել այն լռութիւնը որ մեր շուրջը կը տիրէ տակաւին :

Մեր սուգը խզած չ'եմք լինիր սովաւ :

Հռոմ մի տարի պահեց Բրուտոսի սուգը : Աշխարհ պիտի սգայ 'զայն յաւիտեան : »

Դեռ ուսանող էի երբ այս տաղը գրեցի. վարժարանին տեսչութիւնը կը հսկէր միշտ գրութիւններս վրայ, 'զորս յանախ կը խեղէր իբր անսալով կրօնական եւ քաղաքական նկատումների.

«Եւ երբ ի գան միահեծան
Եղաւ դաւօրդն Պօնապարդ, »

տողը սապէս հրատարակուեցաւ «Երկրագունց»ի մէջ.

«Եւ երբ ի գահ միահեծան
բախտով ելաւ Նաբոլէոն,».

արեւմուտքի կիսասուռածը այսչափ ահ կ'ազդէր մինչեւ իսկ արեւելքի մէջ. Նաբոլէոն Գի եսեւ դեռ ոչ ոք կը նշմարէր Սրտանի վասը:

Երրորդ եւ չորրորդ տաղերս հրատարակեց «Մասիս»:

Հինգերորդ տաղս ՝նեռնչուած է մի դպրոցական հարկէ:

Վեցերորդ եւ եօթերորդ տաղերս ալ «Մասիս» հրատարակեց: Այս վերջինին մի սրտառուչ եղանակ յարմարցուցած է Պ. Ա. Խորասանեան, տաղանտաւոր դասատու դաշնակահար:

Ութերորդ տաղս Խրիմեանի նուիրուած է. «Արարատ», «Մասիս», «Ծիածան», զրէթէ բոլոր ազգային թերթերը հրատարակած են 'զայն. Պ. Տ. Զուիանեան, մեր ազգին ամենէն աւելի ականաւոր արուեստագէտը, մի շքեղ տեսրի մէջ, որոյ վրայ նկարուած էր Հայրիկին պատկերը, հրատարակեց 'զայն իւր ձայնագրած գեղեցիկ եղանակովը: — Շատ կանուխ սիրեցի այս հայասանցի վարդապետը. հոգիս, որ մի կայծով կը բորբոքէր, իսկոյն արծարծուեցաւ նորա սէրովը: Նա մի հայրենասիրուբիւնի դասատու եղաւ ինձ համար, եւ թերեւս ազգիս համար: Երբ նուիրական բեմին վրայ կը տեսնէի այն հսկայ հասակը, այն բանասեղծ կրօնաւորը որ պարզ էր առաքեալի պէս եւ հեզ Յիսուսի պէս, երբ կը լսէի

այն հայկական արտասանութիւնը որ կը մոգէր, այն քարոզները, հայրենասէնչ հառաչներով ընդհատուած, որ այնքան նոր էին եւ այնքան ազատ բռիչ ունէին, այն համակիր ձայնը որ սիրտին մինչեւ խորերը կ'երթար շարժել, մի հայ Մովսէս կը թուէր նա իմ շլացած աչքերին: Եզեկիէլի պէս կը լափէի նորա գիրքերը, լի աղէկէզ ողբերով ազգի վրայ եւ հայրենիքի վրայ: Յետոյ, երբ առիթ ունեցայ կենակցիլ այս այնքան ժողովրդային անձին հետ, աւելի եւս աճեցաւ հիացումս: Ոչ, Վիզդոմիէն Սառտուի Ռապականերէն չ'է Խրիմեան. շատ բարձր է նա իւր ոսոխներէն, որոց մի քանին պատեհ ունեցայ գնահատել Վարժապետական ժողովին մէջ:

Երկու վերջին տաղերս մասնաւոր հրատարակութիւն ունեցան. սիրուն եղանակներ յատկացուցին նոցա, միին Պ. Յ. Ասատուրեան, ուսանող երաժիշտ յուսալից, միւսին Պ. Խորասանեան:

Առաջին հատս, որ յունարէն արտասանուած է մի դպրոցական հանդէսի մէջ, շատ յոյն թերթեր ներբողներով հրատարակեցին, «*Էրպա՛ղօմօս*»էն առնուլով. «*Անապոլի՛*» յունատառ եւ բրախոս լրագիրն ալ նորա քարգմանութիւնը հրատարակեց:

Երկրորդ հատս, 'զոր «*Մանզումէի հֆքեար*» ալ հրատարակեց, Մ. Զ. սոորագրութիւնով ի լոյս ընծայուեցաւ, զի մեր դպրոցական տեսչութիւնը արգելեց ինձ խոստովանիլ մի այսպիսի իբր թէ չափազանց ազատական զրութիւն, 'զայն բաւական խուզելէ իսկ յետոյ: — Առաջին անգամ էր որ կ'երթայի Հիւնքեար-Իսկէլէսիի դաշտը, ա-

ռաջին անգամ էր որ այնքան բազմաթիւ Հայեր ի մի հաւաքուած կը տեսնէի, եւ, որ աւելին է, առաջին անգամ էր որ կը կոխէի ասիական հողին վրայ. ինչ խանդ ողողեց հոգիս. Ասիան կը տեսնէի, կը տեսնէի այն աշխարհը որ իմ պաշտելի Հայաստանին էր կպած, կը մտածէի թէ մարդ կրնայ ուղղակի հոն հասնիլ այն եզրերէն. ընթերցողը, որ արդէն ճանաչեց 'զիս Պէշիկթաշլեանի ձեռագիրին տպաւորութիւնը իմանալով, չը պիտի զարմանայ երբ լսէ թէ իսկոյն անուշադրութիւնով վար անկնիլ ձեւացուցի եւ կարօտով համբուրեցի այդ հողը . . . մի հոսանք կը մղէր հոգիս. կարող չ'էի զսպել 'զայն: —Ժողովուրդը կրկնել տուաւ ինձ այս ճառը. զգաց նա թէ ինչ անհուն սէրով կը սիրեմ 'զայն, եւ այս բացառիկ պատիւը շնորհեց ինձ:

Չորրորդ ճառս մի դպրոցական հանդէսի մէջ արտասանուած է. «Մասիս» հրատարակեց 'զայն:

Հինգերորդ ճառս խօսուած է Շահնազարեան վարժարանին մէջ, ուր սովորութիւն էր տեղեակ բանական կրթութիւններ անել տալ ուսանողներին, ճաշի ատեն. անձնիւր օր մի աշակերտ պարտաւոր էր խօսիլ իւր ընտրած նիւթին վրայ. մի օր ալ ես խօսեցայ, եւ յեռոյ ի գիր առնուլով հրատարակեցի ինչ որ ասած էի: Շատ օգտակար է այս կրթութիւնը, որոյ կը բաղձամ մուտ գտնելը մեր դպրոցներին մէջ:

Վեցերորդ ճառս մի դամբանական է, Հասգիւղի Ս. Ստեփաննոս եկեղեցիին մէջ արտասանուած. «Օրագիր Ծիլն Աւարայրոյ» հրատարակեց 'զայն:

Եօթերորդ ճառս Բէրայի մի գրական ակումբին մէջ խօսուած է:

Ութերորդ ճառս արտասանուած է Հիւնքեար-Իսկէլէսիի դաշտին մէջ: Երեք տխմար վարդապետներ կը զրպարտէին յայնժամ Խրիմեանը. ես, որ հաւատ ունէի նորա անմեղութիւնին վրայ, հոն դոցա դէմ բողոքեցի. երբ սա անէծքը ժայթքեցի նոցա հակատին, «Անիծեա՛լ լինին այդ մարդերը, որք, մութի զաւակներ, Հայրիկին եղեւէ աղբայ կը կնրտեն եւ նենգութիւնի դիմակին տակ սուտ կը խօսին: Անիծեա՛լ լինին այդ մարդերը, որք Յուդայի համբոյրը կը տան եւ կ'երթան անուրդի հանել արդարին պատիւը: Անիծեա՛լ լինին այդ մարդերը, որք Կիրակոսների, Ամնաղիններեի փառքին կը նախանձին, ռամիկը սուտ հրաշքներով կը դիւրեն, եւ իւրեանց մոլեգնութիւնին մէջ՝ անմեղը բզկտել, արդարը զրպարտել, ազգը մատնել, առաջդիմութիւնին դէմ կիր զարկնել կը ջանան:», «Ներկայ հանդիսականք ալ սոյն միջոցին միաձայն *ասելին վասերը* պօռացին», որպէս մի խմբագրական ծանօթութիւնի մէջ կը գրէ «Օրագիր Կ. Պոլսոյ», որ այս ճառը հրատարակեց:

Չորրորդ եւ հինգերորդ առածներս էին «Հաւատը կուրութիւններին վսեմագոյնն է:», «Ցոյսը խաղցրագոյնն է խաբէութիւններին:». դպրոցական ոսիկանութիւնը սապէս հրատարակեց ըզ նոսա. «Հաւատը ճշմարիտ յափշտակութեանց վրսեմագոյնն է:», «Ցոյսը խաղցրագոյն սփոփանքն է մահկանացուին:»: Այսչափ կանուխ ճանաչեցի բռնութիւնը:

Նամակներիս վրայ մի մասնաւոր բան չը պիտի պատմեմ հոս :

Առաջին եւ երկրորդ զրադատումներս հրատարակեց «Սէր» : Երկրորդը Պ. Թղլեանի *Լենկրիմուր*ովը կը զբաղի: Ազգային զգացումը կանուխ դրդած էր 'զիս հայ ժողովուրդին պատմութիւնը ուսումնասիրելի զոնել կեանքիս մի մեծ մասը. անյաղութիւնով կարդացած էի բազմաթիւ պատմիչներ որ մեր ազգին եւ մեր երկիրին վրայ կը խօսին. ազգային դիւցազնները կը վառէին մանուկ երեւակայութիւնս, ազգիս թշնամիներին դէմ մի անհաշտ ատելութիւն կը տածէի. ամենէն աւելի կ'ատէի Լէնկ—Դիմուրը, այդ մեծ խտրիկը. նա մի մարդ չ'էր ինձ համար , մի մեքենայ էր մարդասպան. օդ չ'էր շնչեր, արիւն. ինքն առանձին մի դժոխք էր: Լի այս մտածումներովը, 'զորս պատմութիւնը կը ներշնչէր, գնացի տեսնել Պ. Թղլեանի ողբերգութիւնը. ապշեցայ. իմ երեւակայածին հակոտնեայն էր այն Դիմուրը որ ներկայացաւ թատրաբեմին վրայ. իժը տատրակի փոխուած էր. վագրը կը մայէր. հայասէր չ'էր նա , հայամոլ էր. թէ Դիմուր—Լէնկի անունին տեղ Վարդան Մամիկոնեանի անունը դրուէր, ոչ ոք պիտի կասկածէր թէ հեղինակը սորա վրայ չ'էր գրած իւր թատրախաղը. Լէնկ—Դիմուր «Կեցցէ՛ Հայաստան, կեցցե՛ն Հայկազունք, կեցցէ՛ Վարազդատ Բ թագաւոր Հայոց» կ'աղաղակէր. Լէնկ—Դիմուր, այո, Լէնկ—Դիմուր «Եղբա՛յր եմք մեք» կ'ասէր Հայերին, իբր թէ մի Պէշիկթաշլեան լինէր: Հոգիս ապստամբեցաւ. ինձ այնպէս թուեցաւ թէ տասչորսերորդ դարի հայութիւնը կը հրամայէր ինձ մենամարտիլ այդ արիւնթաթախ ուրուականին դէմ: Մի զրադատում հրատարակեցի այս խաղին դէմ, ջանալով խեղդել զայրոյթս եւ արհամարհանքս, որչափ կարելի էր. Պ. Թղլեան պատասխանեց. երկրորդ յօդուածս աւելի կարծր եղաւ. Պ. Թղլեան պատասխանեց. երրորդս ռումբի պէս պայթեցաւ. Պ. Թղլեան ա՛լ չը պատասխանեց: Երբէք գրական կրկէսին մէջ այսպիսի կոռակոռ պարտութիւն չ'էր տեսուած: Ալ չը համարձակեցաւ նա ի հրապարակ հանել իւր ողբերգութիւնը. *Լենկրիմուր*ի առաջին ներկայացումը վերջին ներկայացում եղաւ: Զը մոռնամ ասել թէ այս Թղլեանը, որ Փայլատեան կը սնոռագրէր երբեմն, այժմ կը սնոռագրէ Սուրէնց. հաստատամիտ մարդ : — Ինչ որ աւելի հետաքրքրական է, սա է թէ նա յայնժամ Շահնազարեան վարժարանի մէջ պատմութիւնի դասատու էր մեզ. Ամբրոսիոս Պալճեանի «Համառօտ պատմութիւն Հռովմայեցւոց»ը մեր առջեւ կարդալով, կը կարծէր թէ պատմութիւն դասախօսած կը լինէր. աշակերտը յայտնեց թէ դասատուն չը գիտէր այդ ուսումը : Այս զրադատումիս տակ անունիս սկզբնատառները դրուած էին. չը գիտէր նա թէ ես էի որ այնքան չարաչար կը հարուածէի 'զայն. ամեն անգամ որ մեր դասարանը կը մտնէր, չ'էի կարող զսպել մի ժպիտ որ շուրթիս վրայ կը ձեւանար. «Որչա՛փ զուարթ ես» ասաւ ինձ մի օր :

Երրորդ զրադատումս ալ նոյնին մի ուրիշ ողբերգութիւնին դէմ է. սորա նախագիրին մէջ

«մեծահանճար հեղինակ» հռչակուած էր Պ. Թղլեան. խե՜ղճ ազգ:

Հինգերորդ գրադատումս կը զբաղի մի գիրքով, 'զոր Պ. Պուպլի թարգմանած է Ֆռանսերէնէ: Սոյն լեզուին ընթերցումն իսկ չը գիտէ այս պարոնը. «Շալը» գրած է նա հեղինակին անունը, առանց գիտնալի թէ Ֆռանսացիները «Շալ» կը կարդան 'զայն: Ինչ որ այս առիթովը գրած եմ սոփեստներին (σοφιστής) դէմ, կրնայ նկատուիլ այն իբր շարունակութիւն պերճախօսութիւնի հարիս:

Արգոսի խոհերը հրատարակուեցան «Երկրագունս»ի մէջ: Շահնազարեան ուսանողները կը խմբագրէին այս շաբաթական հանդէսը, որոյ խմբագրապետը եղայ ուր ամիս. յինէն յետոյ շարունակեց Պ. Հ. Իփէկճեան, որ, ընդունելութիւն չը գտնելով, սիպտուեցաւ դադրեցունել 'զայն ֆիչ ատենէն: Կը ցաւիմ որ, դասախօսութիւններս շատ ֆիչ ժամանակ բողուլով ինձ, չը կրցայ աշխատիլ այդ հանդէսին այնչափ որչափ կը փափագէի. այլ, իւր այն վիճակին մէջ իսկ, ազգային թերթերի լաւագոյնն էր, որպէս վկայեց Օտեան, որոյ գրական հաշակը անհակառակելի է: Նաեւ, որպէս ասի արդէն, դպրոցական գրաքննութիւնը չորս աչքով կը նայէր յօդուածներիս. Պոպիդիոսի շրջանակին մէջ կը կաշկանդէր 'զիս. գաղափարներս մկրատէ կ'անցունէր. կրօն, քաղաքականութիւն. սոքա ինձ համար երկու ոգիներ էին անխոցելի եւ բոցազէն, որ ազատութիւնի ադիները կը փակէին իմ առջեւ: Որչափ կը

տխրէի երբ գրութիւններիս աղաւաղ հրատարակութիւնը կը տեսնէի. մի օր «Պապին եռայարկ խոյրը դեռ շատ կարծր է տեղի տալի համար Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն հրոչակուած այն աւեստարանական սկիզբներին, որ դարիս Երորդութիւնը կը կազմեն:» գրած էի, «դարիս նուիրական Եռութիւնը» տպուեցաւ. Ֆուշէն եւ Պուսսոդը յիշեցի. մահի պատիժի հարիս մէջ ասած էի թէ Իւկօ դարիս «Աւեստարանը» գրեց, «Զէնս-Ավէստայն» տպուեցաւ. ոռը պատմեմ. այս գիրքին անձնիւր էջը մի վիշտ կը յիշեցունէ ինձ, զի սիրտս արիւն կ'երթար երբ այդ նախնիները կը տեսնէի: Լաւագոյն պիտի լինէր այս գործը, թէ չը կառափնատէին 'զայն:

Արգոսի խոհերին առաջին հատուածը «Երկրագունս»ի առաջաբանն է:

Հինգերորդ հատուածը մի խորին մտածում կը պարունակէ. պիտի յայտնէի 'զայն, թէ չ'ապրէի մի այնպիսի երկիրի մէջ ուր բանադրուեցաւ Արմենակ Հայկունի: Ուշիմ ընթերցողը կրնայ լուծել այդ հանելուկը. Իդիպոս հարկ չ'է լինիլ:

Ութերորդ հատուածը կը զուգակշռէ Պէշիկթաշլեանը եւ Ալիշանը, որ իրարի հետ գրէթէ այնպէս կը համեմատին որպէս Լամարդին եւ Իւկօ մի բարձրագոյն մթնոլորտի մէջ:

Ինեերորդ հատուածը կը խօսի Վիգդոռ Իւկօի վրայ: Ը կայ մի գրիչ որ այնչափ խանդավառէ 'զիս որչափ այս մարդը: Տասնինգ տարեկան էր երբ Շաղոպրիան տեսաւ 'զայն եւ ասաւ. «Մի վսեմ մանուկ է սա:» Վսեմ ոգի, վսեմ հան-

նար : Փառք մարդկային ազգի : Թշուառութիւնը նկարագրելով, երջանկութիւնը անեցուց նա. մարդին մէջ աւելի բարութիւն դրաւ. աստուածային գործ : Երբ նորա *Լէ միզէռապլը* կարդացի, աղքատ կը փնտռէի ողորմութիւն տալի համար. այնքան ուզօր է այս իմաստասէր բանաստեղծը : Տասուքերորդ դարը Վօլդէռինն է, տասիներորդը Իւկօինն է. եւ սակայն Իւկօն մեծ է Վօլդէռէն, զի միտէն մեծ է հոգին :

Յաջորդ հատուածներին մէջ ուշադիր ընթերցողը մի թեթեւ մելամաղձութիւն պիտի նշմարէ : Նոյն միջոցին էր որ, մի գիշեր, մի ամայի սալարկի վրայ գրեցի. «Երանի՜ ձեզ, քարեր : »....

Տասիներորդ հատուածին մէջ յիշուած ուղեւորն է Օտեան :

Դ

Թէ ինչ ընդունելութիւն գտան այս գրութիւնները իմ ժամանակակիցներէն, պարտաւոր կը համարիմ 'զիս յայտնել 'զայն հակիրճ, զի այս գիրքին կենսագրութիւնն է այդ : Սակայն քաջ գիտեմ թէ ապագային վճռավճիռը անկախ է միտս անցեալին գովեստներէն կամ պարսաւներէն : Իւր ժամանակակիցներէն պատուեցաւ Պուալօ, 'զոր ապագայ սերունդը վար պիտի առնուր պատուանդանէն. իւր ժամանակակիցներէն քարկոծուեցաւ Ռուսօ, 'զոր ապագայ սերունդը պիտի աստուածացուներ :

Ջերմ համակրութիւն գտայ գրական կեանքիս

այս առաջին տարիներին մէջ. չը կրնամ ծածկել 'զայս, զի, որպէս գրած եմ երբեմն, մի խնկարկու եմ նշմարտութիւնի : Շատ յաճախ տեսուեցան նպաստաւոր ակնարկութիւններ լրագիրների մէջ, գիրքերի մէջ. մինչեւ անգամ վարդապետներ գրտուեցան որք իմ խօսքերը բնաբան առին իւրեանց քարոզներին. շատ երկար կը լինէր թէ ուզէի մի գաղափար տալ այն ընդհանուր քաջալերական ցոյցերին վրայ. ուստի, մի քանի վկայութիւններով գոհ պիտի լինիմ :

Օտեան, իւր մի նշանաւոր ատենաբանութիւնին մէջ 'զոր «Մամուլ» հրատարակեց, «որոտման պէս գոռացող լեզու» անուանեց մեծագործութիւնի նաւս :

«Մասիս», որ այնքան ժլատ է գովեստ տալի մասին, ներբող կարդաց առաջդիմութիւնի նուիս:

Պ. Եղիա Տէմիրճիպաշեան, երիտասարդ լի սիրտով, լի հանճարով, իւր «Շահնազարեանի մը խղճին պարզ քննութիւնը» մակագրուած տետրին մէջ, որ մի հրատակերտ է 89ի շունչովը դողդոջուն, սապէս գնահատեց պերճախօսութիւնի եւ մտքի պատիժի նաւերս, որք «Երկրագունտ»ի մէջ հրատարակուեցան. «Շահնազարեան դպրոցը Մըխիթարեան վանքի շարունակութիւնն է. սակայն դա, տարբեր ձգտումով սկսի : Ոգիով ու փիլիսոփայութեամբ ԺԸ^դ դարու, սրտով ու գաղափարներով ԺԹ^դ դարու, եւ իղձերով ու մարգարէութեամբ Ի^դ դարու համագոյակից, այս դպրոցը տրամադրի որոշապէս տալ ազգային մարմնոյն այն յաւիտենական մղումը որ, զանի անսպառ շար-

ժումին մէջ դնելով, որ յառաջդիմութիւն ըսուի, ձգողականութեան օրինօք պիտի բարձրացրնէ միտն իւր գագաթնակէտը եւ հակէ զիւր հոգին իւր ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ :

Ասի պլատօնական է ըսեն թերեւս ոմանք. ասի անհեռելի չափազանցութիւն է, զոչեն զայրոյթով իրենց սրտին մէջ այլք, զոր ճանչեմ : Այն ատեն ես իրողութեան հողին վերա իջնեմ, եւ բաց ճակտով ու բարձրագոչ հռչակեմ թէ *Երկրագունտի* մէջ երեւած երկու յօդուածներ (Պերճախօսութիւն եւ Մահի պատիժ.—Մ. Զերազ) լեզուի կատարելութեամբ, բացատրութեանց վսեմութեամբ, ըզգացմանց բարձրութեամբ, գաղափարաց վեհանձնութեամբ, իմաստասիրութեանց կորովութեամբ եւ վարդապետութեանց ողջմտութեամբ, աւելի ծանր կշռեն բանաքննութեան կշռին մէջ, քան բոլոր քսան եւ ութ տարու *Բազմավէպ*ներ : Այսպէս ըսես, ոչ խիղճ իմ, որ ամեն կիրէ վեր, ամեն շահերէ անկախ, յառաջ վազես, եւ մինչ շուրթեր մտքի բոլոր զօրութիւնն յիւրեանց ամփոփած, լեզուի պերճախօսութեամբ ստել ճշնին ըզ թեզ վայրապար, դու տրտիման եւ գոյնի պերճախօսութեամբ խօսած ես արդէն մեր կուրծի եւ այտերու վերա : »

«Օրագիր», հրատարակելով անձնուիրութիւնի ճառս, 'զոր Օտեան ալ «սքանչելի» անուանեց, սա ներածութիւնը գրեց նորա ճակատը. «Հետեւեալ ճառը՝ որ հայազգի երիտասարդ գրագէտի մը բարձր հանճարոյն եւ ազգասէր սրտին կենդանի նկարն է, մայիս 24 կիւրակէ օր տարեդարձի հանդիսավայրին մէջ թէպէտ 'ի լուր ժողովրդեան կարդացուած եւ կրկնակի ծափահարութեամբ ու համակրական ցոյցերով ողջունուած է, սակայն՝ թէ օրուան մէկ քանի անակնկալ պատահմանց եւ թէ հանդիսականաց ամբոխին աղմկեալ շշնկոցներուն պատճառաւ շատեր անոր ունկնդրութենէն զուրկ մնացած ըլլալով, ճառին իր ամէն պարագաներովն ունեցած վսեմութիւնը կը հարկադրէ զմեզ կրկին նոյնը մեր էջերուն մէջ հիւրընկալելով ազգային լրութեան ուշադրութեանը ներկայացնել 'ի պատիւ ուսումնական ազգասէր երիտասարդին:

Դարուց 'ի վեր հայ գրականութեան փառքն ու համբաւը վերածնող եւ 'ի նոյն զազգութիւնը վերակենդանացնողները չափազանց չըլլար խոստովանել թէ Մ. Զերազի նման հայ Հոմերիկներն եղած են, որոնց ուսման ու գիտութեան մասին ունեցած եզական զարմանալի ընդունակութիւնը Հայուն Եւրոպայի էն լուսաւորեալ ազգաց անգամ նախանձը շարժելուն եւ համարմանցն արժանանալուն միակ սկզբնապատճառն եղած է :

Որչափ որ սքանչելի ու սիրելի է տեսնել դեռ քսան տարիքը չը լրացուցած երիտասարդի մը զբրութեանը մէջ մտաւոր առարկայից վրայ այն աստիճան հասուն դատողութիւն եւ աշխոյժ մը, եւ ազգայնութեան զգացման նկատմամբ այն աստիճան համակիր միտում մը, այնչափ ալ արժանի է նա նախանձելի օրինակ մը ըլլալու այն ամէն ուսումնասէր երիտասարդաց, որք՝ իբրեւ Ազգին միակ յոյսն՝ անոր ապագայ երջանկութեան տարրերը պիտի բաղկացնեն :

Ճշմարիտ ոչ այնչափ արդարացի է հրճուիլ նիւթական հարստութեան մը սացմանը վրայ՝ որչափ բերկրիլ մէկ երիտասարդ գրագէտի մը գոյութեանը վրայ, որ պատօն մեծ կ'սանձնէ յինքն՝ մարդկային հոգւոյն զգացումներն ընդարձակելու եւ ազնուացնելու : »

Օտեան գնահատեց «Երկրագունտ»ը, որոյ խմբագրապետն էի, հետեւեալ նամակովը, 'զոր Պ. Ս. Միքայէլեանի ուղղեց եւ որոյ հրատարակութիւնը այնքան նախանձորդներ հանեց մեր հանդէսին դէմ.

«Ազնիւ Տնօրէն Երկրագունտի,

Շատ շնորհակալ եմ որ Երկրագունտին առաջին թիւը ղրկեր էք ինձի : Այդ հանդէսը՝ Նուպար-Շահնազար վարժարանին պատանի աշակերտաց խմբագրութիւնն է. բայց մեծ մարդիկ կրնան կարդալ 'զանի : Ես ոչ միայն պիտի կարդամ, այլ եւ պիտի պահեմ գրքատանս մէջ՝ ուր այս քանի տարի է, ափսոս, որ հայերէն գիր կամ մատեան մը չ'եմ կրցած աւելցընել : Կը յուսամ թէ ինձի պէս պիտի մտածէ ամեն զգայուն Հայ, որ հայութեան վերաբերեալ ամեն բաները կը յարգէ, եւ որու Երկրագունտին պէս թերթ մը, թէ եւ մանուկներէ խմբագրեալ, կուգայ յիշեցնել ուր ուրեմն՝ թէ մենք ալ ունինք դեռ հայերէն լեզու մը, եւ այդ լեզուով կրնան եղեր գրվիլ լուրջ ու զգօն յօդուածներ :

Այն սրբազան հուրը, 'զոր կրցած էք վառել ձեր աշակերտաց սրտին մէջ, ջանացէք միշտ վառ պահել 'զանի, որ ըլլան դարուս նշմարիտ որդիքն ու

արժանի սանունք Վարժարանիդ սրբազան Վերատեսչին :

Ի վերջոյ՝ կ'աղաչեմ որ բաժանորդ գրէք 'զիս ձեր նորածին հանդէսին :

5 յուն. 1870. Բերա.

Գ. Ս. ՕՏԵԱՆ »

Ե

Հակակրութիւն ալ գայ. ժողովրդականութիւնի վարդը սուր փուշեր ունի. փառքը մի բարէկամ կը շահեցունէ եւ տաս թշնամի :

Պ. Թղլեան, պատմած եմ արդէն, կատաղի յարձակումներ արաւ ինձ դէմ. յաղթուեցաւ չարաչար :

«Մամուլ» յաջորդեց նմա, աւելի կատաղի. օձէն յետոյ, վիշապը : Զորս յօդուած հրատարակեց ինձ դէմ, եւ հինգ առաւ պատասխան. ալ լռեց : Եւ սակայն այս թերթն էր որ երկրորդ ճառս հրատարակեց սա ներբողովը. «Ցեսագայ ընտիր ճառը՝ որ Տարեդարձի հանդիսին մէջ կրնամ ըսել կարդացուած ճառերուն ամենէն իմաստալից եւ ազդուն է, եւ որ կրկնուեցաւ ժողովրդոյ խնդրանքօք, արժան կը համարիմք ասանօր հրատարակել ի խնդրոյ բազմաթիւ ազգայնոց : ». այս թերթն էր որ երրորդ ճառս հրատարակեց, «ընտիր» հրաչակելով 'զայն. այս թերթն էր որ առաջին նամակս հրատարակեց, «զգացմամբ լի տխուր հրաժեշտ» անուանելով 'զայն. այս թերթն էր որ երկրորդ նամակս հրատարակեց, «ազդու եւ վսեմ» կո-

ԼԵՕ ԳՐԱԴԱՐԱՆ

չելով 'զայն: Բարի ընթերցողը չը պիտի կարենայ մեկնել այս անակնկալ փոփոխութիւնը, թէ պատճառը չը յայտնեմ. «Մամուլ» բարէկամ եղաւ ինձ այնչափ ատեն որչափ նմա կը յանձնէի գրութիւններս. այլ երբ «Երկրագունց»ը ծնունդ առաւ, ուր միայն պիտի գրէի այնուհետեւ, նորա զգացումները փոխուեցան: Մարդեր կան որոց բարէկամութիւնը կը դադրի երբ շահը դադրի:

2

Ուրիշների դատողութիւնէն յետոյ կ'ուզեմ յայտնել 'զիս ալ:

Ըստ ինձ, ոչ այնքան գովեստի արժանի են այս գրութիւնները եւ ոչ այնքան պարսաւի: Նոքա, որք 'զիս կը ճանաչեն, գիտեն թէ այդ ներբողներին հաւատալի չափ միամիտ չ'եմ, գիտեն թէ բաւական բարոյական այժ ունիմ այդ թշնամանքներին առջեւ չը տկարանալի համար:

Հոս շնորհակալութիւնս կը վկայեմ որոց հանեցան քաջալերել 'զիս իւրեանց հաւանութիւնովը, հասակս անշուշտ նկատելով եւ ոչ արժանիքս, որ, ըստ ինձ, զրօ է. այդ բարէկամ սիրտերին յիշատակը միշտ քաղցր պիտի լինի ինձ համար: Շնորհակալութիւն ոսոխներիս ալ. նոքա իմ տկար գրիչին յեսանը եղան:

Այս հրատարակութիւնները զրական փորձեր են միայն, որպէս անուանած եմ զգ նոսա. աշխատած են թէ ոչ այս փորձերը, ընթերցողը պիտի վճռէ 'զայն: — Թէ իմ անձնական դատողութիւնը պա-

հանջուի, կ'ասեմ թէ շատ տկար, շատ անկատար են այս փորձերը: Ոչ ոք յինէն աւելի կրնայ ճանաչել նոցա թերութիւնները. Հռամսինիսի հարտարապետը միայն գիտէր իւր շէնքին տկար կողմը, որպէս կը վիպէ Երոդոտոս:

Անաչառ խօսիլով, աւելի եռանդ քան իմաստ են այս էջերը. հրաբուխ, եւ ոչ հրագ. շանթ որ կը թռչի, այլ որ չ'է լուսաւորեր. շարժումի տեղ, թռիչ. ոստում, եւ ոչ առաջդիմութիւն: Գերի ամեն տպաւորութիւնի. ամեն ծայրայեղութիւնի հակամէտ: Զուրկ այն շրջահայեցութիւնէն, 'զոր կը տան երկար ուսումները եւ երկար խորհրդածութիւնները միայն. զուրկ այն կորովէն, 'զոր տարիները միայն կը կազմեն. զի, որպէս գրած եմ արդէն, ժամանակը ամեն չարիքի դանիճ է եւ բժիշկ:

Սակայն, քանի որ կատարելապէս անաչառ լինիլ հարկ է, սիրելի ընթերցողներիս ուշը կը հայցեմ սա կէտին վրայ, որ թերեւս արդարացունէ 'զիս.—1870, 1869, 1868 տարիներին մէջ գրուած են սոքա, երբ դեռ տասեօր, տասվեց, տասինգ տարեկան էի:

Այդ հասակին մէջ, մարդկային միտը, աղջամուղջէ նոր ազատած, մշուշի մէջ է տակաւին. աղօս թոռ եւ բոռ, ուր դեռ չ'է լսուած արարիչ հրամանը. «Եղիցի՛ լոյս:»

Թէ ներուի ինձ ամբողջացունել դիտողութիւններս, պիտի ասեմ նաեւ թէ այս գիրքը, իւր մեծամեծ պակասութիւններովը հանդերձ, ոչինչ կը պարունակէ յորոյ ամօթ զգամ եւ այսօր: Եւ ոչ

մի զգացում, որ վաս լինի, նոն առնագանգ է զգած. եւ ոչ մի չար մտածում կրցած է մուս զսնել նոն: Այն անհեռող աչքովը, որով Բրուտոս դահինի տապարին դատապարտեց իւր որդիները, դատեցի այս գործը. տկար զտայ 'զայն, այլ ոչ նուաստ. թոթով, այլ ոչ շողոքորթ. կաղ, այլ ոչ ծնկոտ: Ճշմարիտ հանճարները պատշուած են նոն, կեղծ հանճարները արհամարհուած. առաքինութիւնը գահի վրայ, մոլութիւնը առաքուր. աղօթք ազատութիւնի համար, անէծք բռնութիւնի համար: Գեղեցիկը երգուած է նոն, բարին ներբողուած. ճշմարիտը մի վրէժխնդիր զգած է, վրեմը մի բագին: Խիղճս անդորր է. այս գիրքը անպիտան է, այլ չ'է անարժան:

Կը յուսամ թէ ազնիւ ընթերցողը, այս բացատրութիւնները լսելէ յետոյ, պիտի հանի մեղմացունել իւր դատապարտութիւնը այս անդրանիկ մատեանիս դէմ:

Է

Հետեւիլով իմաստուն վանառականի օրինակին, որ, նոր գործերի ձեռնարկելէ յառաջ, հին հաշիւները կը կարգադրէ, ուզեցի նախ այս առաջին աշխատութիւններս կազմակերպել, մի որոշ եւ վերջնական մարմին տալ նոցա: Թէ ազգս ինձ խրախոյս բառնայ այս վեհերոս փորձիս մէջ, թէ քաջալերէ առաջին քայլս գրական ասպարէզին մէջ, ուր կը մտնեմ, յեսին զինուոր անհնտան, ճշմարտութիւնի պատերազմը պատերազմիլ այն

այնքան արի մարտիկներէն յետոյ, որոց շատերը նահատակ անկան եւ շատերը դեռ պատնէշին վրայ կեցած են կանգուն, պիտի հրատարակեմ նորանոր աշխատութիւններ, որ աւելի քան սոքա հանելի եւ օգտակար լինին. թերեւս, ց'որչափ ատուածային շունչը ոգեւորէ այս տկար եւ քայքայուն կաւը:

1870ին ի լոյս պիտի ընծայուէր ներկայ գործը, թէ երկու ազգային խմբագրապետներ, մին ձախակողմեան եւ միւսը աջակողմեան յորջորջուածներէն, նիւթապէս եւ բարոյապէս վնասելով ինձ, խափան չը լինէին սմա: Գիտէի արդէն, այս արկածէն շատ յառաջ, թէ ճշմարտութիւնը ոչ աջ է եւ ոչ ձախ. ճշմարտութիւնը կեդրոն է: Թերեւս այս խօսքերը բաւական յստակ չը թուին. մեղադրելի չ'է այդ, բնական է. այդէն յետոյ կը ծագի արշալոյսը, աւօտէն յետոյ կը պարզուի առաւօտը:

Որպէս ասի արդէն, գրական կեանքիս առաջին երեք տարիներին մէջ ազգային թերթերը հրատարակեցին այս գրութիւնները: Օրագիրները ծառի տերեւների կը նմանին. անձնիւր վայրկեան կը թափթփին մի առ մի, եւ հովը հրապարակին վրայ կը հոսէ զգ նոսա. չ'են թողուր մի տեւական յիշատակ. մնալի համար չ'են ծնած, թռչելի համար ծնած են: Ուստի, այն թերթերէն հաւեցի խնամով ինչ որ մնալի արժանաւոր կարծեցի: Թէ բոլորն ալ առնուի, այս գիրքը կրկին ստուարութիւն կ'ունենար. այլ ինչ փոյթ. քանակ եւ որակ շատ տարբեր բաներ են: Ինչ որ չ'է անցած այս

գիրքին մէջ, կորչիլի դատապարտուած է հեղինակէն: Եւ արդարութիւն է այս:

Գալով այն տաղերին, հառերին, առածներին, համակներին, զրադատումներին եւ Արզոսի խոհերին, որք մուս գտած են հոս, անաչառ դատած եմ զգ հոսա, անխնայ վարուած եմ հոցա հետ, հախճիր գործած եմ հոցա այն կետերին մէջ որք չ'են կրցած գոհացուցել 'զիս. աւելորդը հետած եմ եւ հարկաւորը յաւելած երբեմն. վերջապէս, տուած եմ հոցա այն ձեւը որոյ տակ կ'ուզեմ որ մնան, այն անհատութիւնը 'զոր կ'ուզեմ որ պահեն: Նաեւ քուրայէ անցած է հոցա ոճը եւ հոր ձոյլ սացած. կը կրեն հոքա այն գրական հորոգութիւններին կնիքը, որովք ջանացած եմ մի վերջնական կանոնաւորութիւն տալ մեր արդի ազգային լեզուին:

Ը

Ժողովուրդի զաւակ լինելով, ես բնազդով յարած եմ աշխարհաբար հայերէնին, եւ գրաբարը նկատած եմ միշտ իբր մի ազնուապետական լեզու, որպէս է իսկ: Սակայն վարժարանին մէջ մի դպրոցական գրաբար միայն կ'աւանդուէր մեզ, որով գրուած են տաղերս. այլ ուշադիր ընթերցողը պիտի նշմարէ հոցա մէջ իսկ մի ձկտում դէպ աշխարհաբարը, մի հզօր մղում դէպ ժողովրդային լեզուն. գրիչս կը դժկամակէր գրել մեռած խօսքեր կենդանի ականջների համար. ողջմտութիւնս կ'ապստամբէր, զի կը զգայի թէ մի ոչ ուսումնականների համար կ'աշխատէի, քանի որ պարտաւոր էի աշխատիլ ազգին մանաւանդ տգէտ մասին համար, որ մեծամասնութիւնն է. այս ներքին պատերազմը չը տեւեց երկար. աշխարհաբարը յաղթանակեց, զի նշմարտութիւնը կը յաղթէ վերջապէս: —Տաղերիս շէնքը չ'ուզեցի խախտել, չ'ուզեցի փոփոխել հոցա լեզուն. որոշեցի պահել զգ հոսա իւրեանց վիճակին մէջ: Մի բան կը յիշեցուներ ինձ հոքա. այն թէ ազգն ալ վերջապէս գրաբարէն աշխարհաբարին պիտի անցնի բոլորովին, որպէս այս գիրքին մէջ. եւ մի բան կը յուսացուներ. այն թէ, որպէս հոս, ազգն ալ աւանդական դրութիւններէն եւ գոթական բորբոսած ձեւերէն պիտի անցնի այն հորոգութիւններին, որոց վրայ իւր ուշադրութիւնը կը հայցեմ խոնարհապէս:

Սակայն, այն օրը, ուր աշխարհաբարը սկսեցայ գրել, զգացի թէ քաոսի մէջ է այն, Բաբելոնի աշտարակ կամ Բէդօ թագաւորի արքունիք. տեսայ իսկոյն թէ այս լեզուն անիշխանութիւնի մէջ է, նման այն ազգին որ 'զայն կը գործածէ: Ուստի, մեր բոլոր ականաւոր գրագէտներին դիմեցի, որպէս զի լոյս առնում ի հոցանէ. ուշի ուշով կարդացի հոցա գործերը որք հեղինակութիւն ունին արդի լեզուին մէջ. ամեն դրութիւն փորձեցի, ամեն ուղղութիւն դիտեցի, ամեն առաջարկութիւն քննեցի. աւաղ, սա տխուր եզրակացութիւնը ստացայ թէ ոչ որ կարող է գոհացուցել լիովին, թէ չը կայ մի գրական դրութիւն որ կա-

ռենայ տոկալ մի խիստ հարցաքննութիւնի, թէ ոչ ոք զերծ է հակասութիւններէ, թէ չը կայ մի գրագէտ որ գրական սկիզբներ ունենայ որոշ եւ հաստատ: Ուրիշներէ յոյսս կտրած, հարկադրուեցայ ես ինքինին կազմակերպել այն լեզուն 'զոր պիտի գործածէի, եւ օրինաւոր սկիզբներով ճշդել 'զայն վերջնապէս: Ռօպէնսօնի վիճակին մէջ երեւակայեցի 'զիս, ամեն բան յինէն միայն ակընկալելի բռնադատուած:

Մի մեռած լեզու կար իմ առջեւ, եւ մի կենդանի լեզու, իւր գաւառալեզուներովը եւ գաւառաբարբառներովը հանդերձ. ո՞ր ընտրել. ոչ ոք կ'ուզէ հպատակիլ, իբր բացառակ տէրի, մի այնպիսի լեզուի որ տարբեր լինի յիւրոյն. նաեւ, այս բազմանիւղ ծառին անձնիւր ոստը ունի սեփական գեղեցկութիւններ, 'զորս ներելի չ'է բնաջինջ անել. այս նկատումներին առջեւ, զգացի թէ մի դրութիւն միայն կայ որ կարենայ լուծել այս գորդիոնեան հանգոյցը եւ որով կարենայ իրանալ լեզուի միութիւնը, որ միտս ազգասէր սիրտերի տենչն է եղած: Այս դրութիւնն է ընտրողականութիւն:

Սա 'զիս առաջնորդեց խարխափանքիս մէջ: Զերծ ամեն նախապաշարումէ, հաւասարապէս սիրելով ամեն դրութիւն, չը թողուլով ինձ տածել մի բացառիկ համակրութիւն կամ հակակրութիւն, բաղդատեցի մեր լեզուին զանազանութիւնները. ուր գրաբարը աշխարհաբարէն աւելի բանաւոր, կանոնաւոր, դիւրին, պայծառ էր, գրաբարը ընդունեցայ. ուր Տփղիս լաւագոյն էր

Կոստանդնուպոլիսէն, Տփղիսին յարեցայ. ուր Վասպուրական իրաւունք ունէր եւ ոչ Լեհաստան, Վասպուրականին հետեւեցայ. եւ, այսպէս, ջանացի կազմել մի լեզու որ կարենայ ընդունելի լինիլ ամենին, անձնիւր գաւառ իւր երեսփոխանը ունենալով հոն:

Այս լեզուն աւելի ներկայ առաջաբանին մէջ պէտք է դասել քան հետագայ հառերին, առածներին, նամակներին, գրադատումներին եւ Արզոսի խոհերին մէջ, ուր յանախ ստիպուեցայ նախկին շարը պահելի հոգ տանիլ ամեն բանէ աւելի, զի ազատութիւնս սահմանափակ էր: Թէ հարտար գրիչներ ի գործ ածեն 'զայն, ոչ ոք տժգոն պիտի լինի ի նմանէ. այս է իմ հաստատ հաւատը:

Ինչ որ անսովոր է, խորթ կը թուի, ոչ թէ լուրջ անձերի, այլ նախապաշարեալների: Գիտեմ որ սոքա հազուագիւտ չ'են այսօր մեր ազգին մէջ. այլ գիտեմ նաեւ թէ մի առողջ դատիարակութիւն հետզհետէ պիտի նուազեցուցէ սոցա թիւը, որք կը կարծեն ունենալ մի փափուկ, մի շատ փափուկ հաշակ:

Սովորութիւնը տրամաբանութիւնէ վեր չը կրնայ դատուիլ, երբ խնդիր է մի այնպիսի լեզուի վրայ որ, մեր արդի հայերէնին պէս, դեռ վերջնական ձեւ առած չ'է, դեռ զարգացումի ընդունակ է եւ փոփոխութիւնի ենթակայ: Գիտեմ որ քիչեր պիտի ըմբռնեն այս ճշմարտութիւնը. քիչեր պիտի հրաժարին սովորոյթի կուռքին երկրպագելէ, ճշմարտութիւնը ընդունելի համար; Ի՞նչ փոյթ. երբ

լոյսը ծաւալի, չիղջը անեռեւոյթ կը լինի : Եւ լոյսը պիտի ծաւալի :

Նոցա, որ վեր են ամեն նախակապէ եւ որ ազաս կը խորհին, հրաւէր կը կարդամ ընել իմ դրութիւնը եւ, երբ համոզուին թէ որքան բանաւոր է նա, ընդունիլ 'զայն : Եւ ոչ մի գրազէտի անձնասիրութիւնը կրնայ վիրաւորուիլ սուվաւ, զի, ինչ որ պիտի ընդունի, չ'եմ ստեղծած 'զայն, այլ հաւքած : Նաեւ, գրազէտը, որոյ կոչումն է լուսաւորել ժողովուրդը, պարտաւոր է խեղդել իւր մէջ ամեն եսական բզզում, երբ ազգային օգուտն է որ կը հրամայէ : Այն հրատարակիչը, որ այս արուրիւնը չ'ունի, լաւ կ'անէ թէ գրիչը բողու եւ բրիչը ձեռք առնու : «Կամ անունդ փոխէ կամ սիրտդ,» ասաւ Աղեքսանդր իւր մի հարմանուն այլ ոչ համասիրտ զինուորին :

Գալով ինձ, ուրախ եմ որ, երկար թարթափումներէ յետոյ, հասատուեցայ վերջապէս մի դրութիւնի վրայ, ուր ամեն բան օրէնով կը շարժի, ամեն բան տրամաբանութիւն է, ամեն արդիւն իւր պատճառը ունի, ամեն նորութիւն իւր փասը : Այս է իմ դաւանութիւնը, այս պիտի լինի միշտ իմ դաւանութիւնը. Եւ, զի իմ ազգը կը սիրեմ, կը ցանկամ որ այս լինի եւ նորա դաւանութիւնը :

Ալ ժամանակ է որ ընթերցողներիս դատողութիւնին ներկայացուցեմ աշխարհաբարի բերականութիւնս, յայտնելով նոցա համառօտ այն բերական եւ գրական սկիզբները որոց 'գործադրութիւնն է այս գիրքը :

Թ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԻ.

ԱՆՈՒՆ.

ԹԻՒ.—Ամեն միավանկ բառ *եր* մասնիկը առնուլով յոգնակի կը լինի. *ձի, ձիեր. փորձ, փորձեր* : Ամեն միեւկիսավանկ բառ *ներով* յոգնակի կը լինի. *ասող, ասողներ. զրուխ, զրուխներ* : Ամեն բազմավանկ բառ ալ *ներով* յոգնակի կը լինի. *գերի, գերիներ. շղթայ, շղթայներ* :

ՀՈԼՈՎ.— Ամեն բառ սապէս կը հոլովուի.

ուղղական, հայցական.	*հաց, հացեր.*
սեռական, տրական.	*հացի, հացերի.*
բացառական.	*հացէ, հացերէ.*
գործիական.	*հացով, հացերով.*

եղբայր, եղբայրներ. եղբայրի, եղբայրների. եղբայրէ, եղբայրներէ. եղբայրով, եղբայրներով. Ասուածի, մարդի, մարդեր, Հայի, առաւօտի, երեկոյի, այժմի, վաղի, վայրկեանի, էշի, արութիւնի, քաջութիւնէ, սահմանադրութիւնով, ղեռերի, դուռերէ, թշնամիով, հայրի, մայրէ, եղբայրով, տերի, քոյրի, կինէ, այրի, կայարի, երկուի, Սպանիայի, տեսնելի, խօսիլի, մարիլով, նստիլէ, իրարի, իրարէ, իրարով ;

ԹՈՒԱԿԱՆ.—Բացարձակներին մէջ դիտելի են *մի*, *եօթ*, *ութ*, *իմ*, *տաս*, *տասմի* եւ այլն, *երեսուն*, *քառասուն*, *եօթսուն*, *ինսուն*: Դասականներին մէջ դիտելի են *եօթերորդ*, *ութերորդ*, *իններորդ*, *տասերորդ*, *տասմիերորդ* եւ այլն, *երեսուներորդ*, *քառասուներորդ*, *յիսուներորդ*, *վաթսուներորդ*, *եօթսուներորդ*, *ութսուներորդ*, *ինսուներորդ*: Բաշխականը կը շինուի բացարձակին վրայ *ական* յաւելելով. *միական*, *հարիւրական*:

ԴԵՐԱՆՈՒՆ.

Պէտք է գրաբարէն առնուլ դերանունները: Ուր գրաբարը միէ աւելի ձեւ ունի, ընտրողականութիւն հարկ է. այն ձեւն է նախադասելի որ աւելի օրինաւորութիւն, աւելի կոկութիւն ունի:

Պէտք է ասել *տունս* կամ *իմ տունը*, *հայրդ* կամ *քո հայրը*, *այս վերարկուս* կամ *իմ այս վերարկուն*, *այդ ղոյսը*, *մեր զինուորները*, *ձեր ծովը*:

ԲԱՅ.

ԷԱԿԱՆ.—Անա այս բային համառօտ պատկերը. *եմ*, *ես*, *է*, *եմք*, *եք*, *են*. *էի*, *էիր*, *էր*, *էինք*, *էիք*, *էին*. *եղայ*, *եղար*, *եղաւ*, *եղանք*, *եղաք*, *եղան*. *լինիմ* եւ այլն, *լինէի* եւ այլն. *պիտի լինիմ* (ստորադասականին վրայ *պիտի* յաւելելով կը շինուի ապառնի. *գիտնամ*, *պիտի գիտնամ*. *կարենայի*, *պիտի կարենայի*) եւ այլն, *պիտի լինէի* եւ այլն. *լիր*, *եղէք* (կատարեալին *ի*, *այ* յանգերը *էք*ի կը փոխուին հաստատական

հրամայականի յոգնակի երկրորդ դէմքին մէջ. *թողի*, *թողէք*), *մի լինիր*, *մի լինիք*. *լինիլ* (ստորադասականի ներկայէն կը շինուի անեռեւոյթը, նորա եզակի առաջին դէմքին *մ* վերջնատառը *լ*ի փոխելով. *ունենամ*, *ունենալ*):

ՊԱՐԶ ԿԱՆՈՆԱՒՈՐ.—Առաջին լծորդութիւն. *կը սիրեմ*. *կը սիրեմք*. *սիրեցիր*, *սիրեց*, *սիրեցինք*. *սիրէ*. սմա կը հետեւին *ամաչել*, *վախել*, *զողել*, *գիտել*, *սպանել*, *զենել*, *արգելել*, *կիզել*, *յաւելել*, *հինել*, *քաղել*, եւ այլն: Երկրորդ լծորդութիւն. *կը նստիմ*. *կը նստի*. *նստեցայ*. *նըստէ*. սմա կը հետեւին *սկսիլ*, *փրթիլ*, *պրծիլ*, *երեւիլ*, *կարմրիլ*, *ապառիլ*, *զարթիլ*, *ջնռիլ*, *թաքչիլ*, *պակչիլ*, *ցասչիլ*, եւ այլն: Երրորդ լծորդութիւն. *կը հագամ*. *կը հագայինք*. *հագացինք*. *հագա՛*: Չորրորդ լծորդութիւն. *կը թողումք*. *կը թողուր*, *կը թողունիք*. *թողի*, *թողիր*, *թողաւ*, *թողինք*, *թողիք*, *թողին*. *թո՛ղ*:

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԿԱՆՈՆԱՒՈՐ.—Առաջին լծորդութիւն. *կը տեսնեմք*. *կը տեսնեիք*. *տեսայ*, *տեսար*, *տեսաւ*, *տեսանք*, *տեսաք*, *տեսան*. *տե՛ս*. սմա կը հետեւին *զարկել*, *գտնել*, *գիս*, *պագնել*, *թքնել*, *թուք*, *մտնել*, *մուտ*, *եղնել*, *իջնել*, *ի՛ջ*, *խածնել*, *հարցնել*, *ցուցնել*, *ցո՛յց*, եւ այլն: Երկրորդ լծորդութիւն. *կ'իմանամ*. *կ'իմանայի*. *իմացայ*. *իմացի՛ր*. սմա կը հետեւին *կարենալ*, *դառնալ*, *դարձայ*, *բառնալ*, *բարձի՛ր*: Երրորդ լծորդութիւն. *կ'ուսնիմ*. *կ'ուսնէի*. *ուսայ*. *ուսի՛ր*. սմա կը հետեւին *սնիլ*, *սնայ*, *ծնիլ*, *ծնայ*, *հեծնիլ*, *հասնիլ*, *անցնիլ*, *անկնիլ*, եւ այլն. իսկ *թոչիլ*,

փախչիլ, *փլչիլ*, *դպչիլ*, *կպչիլ*, *փակչիլ*, *կորչիլ* եւ այլն բայերին մէջ, *ն* տառին տեղ դրուած է *չ* եւ նորա պաշտօնը կը կատարէ. ուստի կ'ասուի *կը թոչիմ*, *կը թոչէի*, *թռայ*, *թռիր*: Զորրորդ լծորդութիւն. *կը զբօսնում. կը զբօսնուի. զբօսայ. զբօսիր.* սա կը հետեւին *կալնուլ*, *ցաժնուլ*, *ցաժեայ*, *զգենուլ*, *զգեցայ*, *զգեցի՛ր*, *ընթեռնուլ*, *ընթերցայ*, *ընթերցի՛ր*, *յեռնուլ*, *յեցայ*, *յեցի՛ր*, *երդնուլ*, *երդուայ*, *երդուի՛ր*, եւ այլն:

ԱՆԿԱՆՈՆ.—Սոքա են անկանոն բայերը. *թերեալ*, *թերի*, *թեր*. *դնել*, *դրի*, *դի՛ր*. *առնուլ*, *առի*, *ա՛ռ*. *տանիլ*, *տարի*, *տա՛ր*. *բանալ*, *բացի*, *բա՛ց*. *լալ*, *լացի*, *լա՛ց*. *ասել*, *ասի*, *ասա՛*. *անել*, *արի*, *արա՛*. *տալ*, *տուի*, *տո՛ւր*. *ուտել*, *կերայ*, *կեր*. *գալ*, *եկայ*, *եկ*. *երթալ*, *գնացի*, *գնա*:

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ.—Կատարեալին *ի*, *այ*, *եցի*, *եցայ* յանգերը *ուիլի* փոխուիլով կը կազմուի կրաւորականի անեռեւոյթը. *թողի*, *թողուիլ*. *կերայ*, *կերուիլ*. *սիրեցի*, *սիրուիլ*. *խօսեցայ*, *խօսուիլ*. *կը տեսուէի*, *պիտի լացուի*, *կերուեցաւ*:

ԱՆՑՕՂԱԿԱՆ.—Կատարեալին *ի*, *այ*, *ցի*, *ցայ* յանգերը *ցունելի* փոխուիլով կը կազմուի անցողականի անեռեւոյթը. *թողի*, *թողցունել*. *ուսայ*, *ուսցունել*. *սիրեցի*, *սիրեցունել*. *մաշեցայ*, *մաշեցունել*. *կ'անցունէի*, *դարձուցի*, *խնդացուց*, *խմեցու*, *փրթեցու*, *կորցո՛ւ*, *փախցուցիր*, *փախցո՛ւ*, *փլցո՛ւ*, *փակցո՛ւ*:

ԲԱՑԱՍԱԿԱՆ.—Անա օրինակ բացասականի. *չ'եմ տեսներ* (անեռեւոյթին *չ* տառը *ոի* կը փոխուի), *չ'ես տեսներ*, *չ'է տեսներ*, *չ'եմք տեսներ*, *չ'էք տեսներ*. *չ'էի տեսներ*. *չը տեսայ*. *չը տեսնեմ*. *չը տեսնէի*. *մի՛ տեսներ*, *մի՛ տեսնէք*. *չը տեսնել*. *չ'է մոռցուիր*, *չ'էի տրտմիր*: Բացառութիւն են *եմ*, *կամ*, *ունիմ*, *գիտեմ*, *կրնամ*, որ պարզ ունին բացասական. *չ'եմ*, *չը կամ*, *չ'ունիմ*, *չը գիտեմ*, *չը կրնամ*:

ԲԱՂԱԴՐԵԱԼ.— Անա օրինակ բաղադրեալի. *գործած եմ*, *խօսած էի*, *շուած եղայ*, *տեսեր եմ*, *հասկացեր էի*, *վազելիք եղայ*: *Լսած եմ* լաւագոյն է քան *լսեր եմ*:

ԿՐԿՆԱԿ.—Անա մի քանի օրինակ. *կը վայլէ*, *կը վայելէ*. *կը հաւանէի*, *կը հաւանէի*. *համրեցի*, *համարեցի*:

ԿԸ.—'Զայս կ'առնու ամեն սահմանականի ներկայ եւ անկատար, թէ ժխտական չ'է. *կը գամ*, *կը չամք*, *կը տայիր*, *կը կարծեմ*: Բացառութիւն են *եմ*, *կամ*, *ունիմ*, *գիտեմ*, *կրնամ*:

ԴԵՐԲԱՅ.

Կատարեալին *ի*, *այ*, *եցի*, *եցայ* յանգերը *օղ*, *ած*, *երի* փոխուիլով կը կազմուին դերբայները. *թողի*, *թողօղ*, *թողած*, *թողեր*. *զբօսայ*, *զբօսօղ*, *զբօսած*, *զբօսեր*. *գործեցի*, *գործօղ*, *գործած*, *գործեր*. *նստեցայ*, *նստօղ*, *նստած*, *նստեր*. *ունեցօղ*, *մտօղ*, *փախօղ*, *շացուցօղ*, *շացուցած*, *շացուցեր*: Ապառնի դերբայը կը շինուի անեռեւոյթին վրայ *իք* յաւելելով. *տալ*, *տալիք*. *յոգնիլ*, *յոգնիլիք*. *կոտրելիք*, *կոտրիլիք*, *կոտրուիլիք*:

ՄԱԿԲԱՅ.

Պէտք է գրաբարէն ալ, աշխարհաբարէն ալ մակբայ առնուլ, ընտրողականութիւնով:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ.

Պէտք է գրաբարէն ալ, աշխարհաբարէն ալ փոխառութիւն անել, ընտրողականութիւնով:

Իբր, որպէս *քան*, ամեն նոյնվէ խնդիր կրնայ առնուլ: *Մինչեւ*, *դեպ* տրական դերանուն կ'ուզեն. ուրիշ տեսակ բառերը ուղղական կը դրուին սոցա քով: Տրական կ'ուզեն *հաւար*, *հետ*, *մօտ*, *դէմ*, *չափ*, *հակառակ*, *ըստ*, *պէս*, *առանց*: Բացառական կ'ուզեն *զատ*, *ի վեր*, *ներս*, *դուրս*, *վար*, *վեր*, *յառաջ*, *յետոյ*, *հետի*, *զաղտ*: Սեռական կ'ուզեն *առջեւ*, *ետեւ*, *վրայ*, *տակ*, *մէջ*, *քով*, *դիմաց*, *տեղ*:

ՇԱՂԿԱՊ.

Պէտք է գրաբարէն ալ, աշխարհաբարէն ալ շաղկապ փոխ առնուլ, ընտրողականութիւնով:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ.

Պէտք է գրաբարէն ալ, աշխարհաբարէն ալ ձայնարկութիւն առնուլ, ընտրողականութիւնով:

ՅԱՒԵԼՈՒԱԾ.

Աշխարհաբարի մէջ *ք* վերջ ունեցող բառերին *ք* տառը պէտք է վերցուցեալ, թէ գրաբարը չ'ունի

այդ գիրը եւ չը կայ համանուն բառ. *որեն*, *ընթաց*, *կիրք*:

Աշխարհաբարի մէջ *ն* վերջ ունեցող բառերին *ն* տառը պէտք է վերցուցեալ, ուր սովորոյթը կը ներէ եւ ուր երկդիմութիւն չը գոյանար. *օգ*, *դաշ*, *երբեմն*:

Վայելչութիւնը կը պահանջէ որ կարճ բառերը երկարացերէն նախադասն համարուին. *մոռնչ*, *մօտիչ*:

Ներդաշնակութիւնը պարտաւոր է գրագէտին ուշը գրաւել, իբր էական պայման. *քաջապէս* լաւագոյն է *քաջաբար* է:

Ոճերը կրնան առուիլ մեր հին եւ նոր լեզուներէն, ընտրողականութիւնով. *թեկն ածել*, *ժանիք անել*, *թունդ հանել*, *զանց առնուլ*, *տուն տալ*:

Տառադարձութիւնի օրէնքն է հին բառերը անփոփոխ գրել, նոր բառերը անձնիւր ազգի նիշդ հընչումին համեմատ. *Պետրոս* առաքեալ, *Բիեռ Վէռօն*:

Ուղղագրութիւնի մէջ ալ պէտք է ընտրողականութիւն. *հոգեղից*, *պոռալ*, *թարվել*, *փնտռել*, *կարող*, *կեռ* (նիշ), *կեռ* (ձուկ), *ամեն* (բոլոր), *ամեն* (եղիցի):

Շարագրական յատկութիւնները գրագէտին տաղանտէն եւ նաեւ ակէն կախում ունին:-Մի հեղինակ պարտաւոր է յիշել անդադար թէ պայծառութիւնն է ոնին առաջին ընդհանուր յատկութիւնը, եւ ըստ այնմ գրել: «Առանց յատկութիւնի, կ'ասէ Պ. Էմիլ Լրծռանգ, ամենէն աւելի ճոխ զարդերը կը յոգնեցուցնեն ընթերցողը առանց հանոյանալի նմա:»

Ժ

Ահա մեր արդի ազգային լեզուին օրէնքները, երեք թուղթի մէջ ամփոփուած: Թող ըզ նոսա բաղդատեն գրաբարի բերականութիւնների սուտար հատորներին հետ, կամ նոյն իսկ ուրիշների շարագրած աշխարհաբարի բերականութիւններին հետ, եւ իսկոյն պիտի տեսնեն թէ ուր է դիւրութիւնը եւ ուր տաժանքը, ուր առաջդիմութիւնը եւ ուր ժամավանառութիւնը:

Իսկ թէ ուր է ճշմարտութիւնը, ազգը պիտի դատէ 'զայն երբ մի գրական պայքար տեղի ունենայ: Ես իմ բերականութիւնը չը պաշտպանեցի հոս, այլ լոկ պատմեցի, որպէս տեսուեցաւ. թէ գտուի մի գրագէտ, որ իւր միտին կորովովը չը կարենայ կշռել թէ որքան իրաւունք ունիմ, եւ յարձակի այն սկիզբներին դէմ 'զորս ուրուագրեցի, պիտի ճակատիմ նմա դէմ եւ պիտի փաստաբանեմ իմ դրութիւնը, պարզելով իմ հաւատը եւ այն երկարածիգ խորհրդածութիւնները որոց եզրակացութիւնն է այս բերականութիւնը: Ի՞նչ հարկ պաշտպանութիւն, քանի որ դեռ յարձակում չը կայ: Երբ Միհրներսեհը գրէ, Պաղնեցին կը պատասխանէ:

Սակայն, այս երեք թուղթը տեսնելով, չը կարծուի թէ մի քառորդի մէջ գրուած են նոքա: Ամբողջ տարիների մէջ խորհուած, փորձուած, սրբագրուած, շտապուած եւ շտապուած են հարիւր անգամ, մինչեւ որ այդ վերջնական անձնաւորութիւնը զգեցած են: Շատ ընթերցումներ, շատ խուզարկութիւններ հարկաւոր եղած են այդ էջերը արտադրելի համար: Այն մարդերը, որք Կիկերոն են երբ քննադատեն եւ Զաքարիա երբ կարգը ստեղծելի գայ, թող հանին հաւատալ թէ մի լեզու մի անհնութիւն է, թող հանին գուշակել թէ մի սանձարձակ լեզու մի լաբիրինթ է, թող հանին մտաբերել թէ ինչ խուրերի կը պատահի նա որ կը քայլէ մի ապստամբ լեզուի լայնակայլակ ովկիանին մէջ, եւ թող այնուհետեւ խօս առնուն. թող մի անգամ փորձեն օրէն դնել մեր ժողովրդային լեզուին, ուր անիշխանութիւնն է որ կ'իշխէ, եւ լուծել այն անհատնում խնդիրները, որք դիցաբանական վիշապին գլուխներին պէս իսկոյն նորէն կը ցցուին քանի խզուին, եւ թող այնուհետեւ դատաւոր հանդիսանան:

Կեանքի զարունին մէջ, ուր շատերի միակ տենչն է հետս ժամեր սահեցունել, երբ կը թողուի որ գրաւեն 'զիս այս աշխատութիւնները, եւ տակաւին ուրիշներ, որք լոյս պիտի տեսնեն թէ հայ ժողովուրդը խրախուսէ 'զիս, յօժար սիրտով կը տնտէի, մըտածելով թէ մի ծառայութիւն պիտի մատուցնէի ազգիս՝ կարգադրել ջանալով լեզուն, այնքան կարեւոր յատկանիշ ազգային կեանքի:

Պ. գրաբարեանները, գիտեմ 'զայն արդէն, զոհ չը պիտի լինին այս ձեռնարկութիւնէն: Մի խաւարամած անցեալի սիրահար, նոքա չ'են ուզեր հաւատալ ապագային, որ կը ներկայանայ լոյսով ողողուած. նոքա, ծերերին պէս,

Միշտ ներկայէն կը գանգատին
եւ անցեալին կը տան գովեստ,

որպէս կը գրէ Տէրուէռ. նոքա, հեռաւորութիւն, կ'ուզեն յարութիւն տալ մի լեզուի 'զոր չ'են իսկ ճանաչեր, եւ սպանել մի լեզու 'զոր ամեն վայրկեան կը գործածեն: Անցոյս եմ ես ի դոցանէ. նոր հայութիւնին, որ կը խլրտի անա, ինչ օգուտ կրնան անել այդ մարդերը որոց համար յեսադիմութիւնն է առաջդիմութիւն: Հայը շարժիլի պէտք ունի, եւ դոքա, Սիմէոն նգնաւորին պէս, 'զայն փտեցուցանել կ'ուզեն մի սիւնի վրայ, 'զոր ոսկէդարեան փառքի կոթող կ'անուանեն: Հայը լոյսի պէտք ունի, եւ դոքա Եզնիկը ցոյց կը տան նմա, այն վարդապետը որ արեւին շարժականութիւնը եւ երկիրին անշարժութիւնը կը փաստաբանէ: Այլ ուրախ եմ որ, Վարժապետական ժողովին մէջ, դոցա դէմ պատսպանեցի աշխարհաբարը, 'զոր տիղմի մէջ կը թաթաւեն, եւ վերջին հարուածը տուի գրաբարին, 'զոր մինչեւ ատսղները կը հանեն: Տեսայ որ դոցա գաղափարներին գործադրութիւնը կրնար աղիտաբեր լինիլ իմ ազգին, եւ, դիմադրեցի. այն զգացումը, որ տասերեքամեայ գիւղացին Ժօզէֆ Պառռաի փոխեց, այդ Վանեցիներին դէմ արիացուց 'զիս, որ այնքան տկար եմ եւ այնքան անկարող: «Բանաւոր փաստ մը միշտ հռչակելու է, փոյթ չ'է եթէ ներկան չ'ընդունի 'զանի, գրած է Ռուսինեան, ազգային ականաւոր բանասէրներէն եւ գրագէտներէն մին. ապագան կեցած է, ժամանակակից կիրքերէ ու նախապաշարումներէ ազատ' կու տայ իր վճիռը:»

Աշխարհաբարեանցներին գալով, մի բան պիտի խնդրեմ ի նոցանէ, այն է մի դրօշի տակ խմբուիլ: Նոցա զօրութիւնը անհուն է, այլ, թէ անջատ մնան, չ'են կարող գոյացուցանել այն հաւատական ներգործութիւնը որով կը յաղթանակեն նոր դրպրոցները. նոցա աշխարհակալութիւնները անսահման են, այլ, թէ անձնիւր ոք կղզիանայ, ներքին պատերազմ կը ծագի: Հոս աւելի քան այլուր պէտք է կրկնել ջերմագին թէ միութիւնը զօրութիւն է: Քանի որ անցեալը դեռ իւր մարտիկները ունի, քանի որ մի պահպանողական կուսակցութիւն կայ դեռ կանգուն, քանի որ կը գտուին դեռ երազատեսներ որք ճիգ կը թափեն, քանի որ նոքա ազգային եկեղեցին իւրեանց բերդ արած են եւ ազգային կղերը պատնէշ, պէտք է որ մեք ալ, մեք ներկայի զաւակներ, մեք առաջդիմութիւնի ախոյեաններ, միանամք մեր մէջ եւ մահացու հարուածը արձակեմք: Երբ Քսերքսէս կը սպառնայ, պէտք է որ Արիստիդէս եւ Թեմիստոկղէս ձեռք ձեռքի տան:

Այս խօսքերը կարծել չը տան թէ աշխարհաբարեանները իմ դրօշին տակ կը հրաւիրեմ գումարուիլ կուրօրէն. ես, նոցա յեսինը, հաւաս ունիմ, այլ ոչ յաւակնութիւն. ես նոցա աշխատութիւններէն բաղած եմ իմ դրութիւնը, 'զոր անա կը ներկայացուցեմ առաջին անգամ: Չ'եմ պահանջեր որ նմա փարին. ազատ վիճաբանութիւն կը պահանջեմ. կը պահանջեմ մի ժողով, ուր աշխարհաբարեանները գան սահմանադրել արդի լեզուն,

անձնիւր անդամի փասեր լսելով : Այդ ժողովը պիտի լինի մեզ համար ինչ որ Բարիզի հեմարանը եղած է Ֆռանսական լեզուին համար : Այլ, այս երկիրին մէջ, ուր ոչ խօսքեր լակոնացի են եւ ոչ գործեր, կը կարծեմ թէ լաւագոյն է այժմ ընդունիլ մի ընտրական դրութիւն, թէ ոչ իբր խաղաղութիւն, որպէս կը բաղձամ, զէր իբր զինադադար :

Մի դրութիւն ալ կայ, որ, ըստ ինձ, դրութիւն չ'ունեցողների դրութիւնն է. այն է թողուլ որ աշխարհաբարը ինքինին կազմակերպուի տակաւ տակաւ : Աշխարհաբարեանները թող չը խաբուին այս դրութիւնէն, որ գրաբարեանների բաղադրութիւն է. նոքա, սովաւ, կը ջանան յամեցուցնել արդի լեզուին անկախութիւնը եւ վերապետութիւնը. նոքա կ'ուզեն մի յաւիտենական խնամակալութիւնի տակ պահել 'զայն, որպէս զի իրաւունք ունենան ասել. «Աշխարհաբարը մանուկ լեզու է, խակ եւ տղայ. գրաբարին դիմեմք, որ միայն ունի արբուն.» նոքա կ'ուզեն մի առժամանակեայ էութիւն, մի անսոյգ վինակ տալ մեր լեզուին, որպէս զի գրագէտները տաղտկանան ի նրմանէ եւ հարկադրուին գործածել գրաբարը, իբր վերջնական եւ որոշ լեզու. վերջապէս, նոքա չ'են ուզեր որ կանոն եւ օրէն դրուի աշխարհաբարին, որպէս զի կարենան աղաղակել մեզ մերբ ընդ մերբ. «Ձեր լեզուն անկանոն է եւ անօրէն:» Կոստաս, Յուլիանոսի ապստամբութիւնը լսելով, սաստիկ 'զայն կշտամբեց՝ ասելով. «Ցիշէ՛ որ ես պաշտպանեցի զլ քեզ մինչ որբ էիր դու.»—«Ո՛րբ,

պատասխանեց Նիկոմիդիայի ուսանողը. որբութիւնս կը կշտամբէ ինձ նա որ ընտանիքս սպանեց:»

Եւ, չը մոռնամ յայտնել հոս, այդ վեհերոս գրաբարեանները աշխարհաբարի ատիճանաւոր զարգացում ասելով աշխարհաբարի ատիճանաւոր գրաբարացում կը հասկանան. «Այսօր աշխարհաբարին այսինչ մասը դարձի բերեմք, վաղ այնինչը կուլ տամք, կ'ասեն նոքա, մինչեւ որ լեզուին շէնքը քայքայուի բոլորովին եւ քար քարի վրայ չը մնայ.» ողորմած դահիճներ, որք չ'են ուզեր մի մեծ հարուածով սպանել 'զայն, կ'ուզեն անթիւ փոքր հարուածներով 'զայն յօշոտել : — Եւ չ'ե՛ն մտածեր թէ ինչ ծաղրելի լեզու պիտի լինի այն 'զոր պիտի ստեղծեն, ոտն առ ոտն ընթանալով մի կենդանի լեզուէ դէպ մի մեռած լեզու : Արդէն կ'երեւակայեմ այն աշխարհաբարով եւ գրաբարով խառնափնդորուած լեզուն, որ մի խոհանոցի հայերէն պիտի լինի, ժէնթի խորհրդածութիւններին արժանի. մեք ալ պիտի ունենամք մեր Մէռլէն Գօզզէ կամ Մէռլինօ Գօզզէները. հայ Թէոֆիլ Ֆոլէնկօներ պիտի նոխացուցեն ազգային լեզուն, մազառօնիկ կամ հիսարեան ոճը մտակելով : Ասուած . . . կարողութիւն տայ, չ'ասեմ աւելի ծանր բառ :

Որպէս կը հեսեի ց'արդ ասածներէս, աշխարհաբարի բերականութիւնի խնդիրը լուծուած է ըստ ինձ : Բառարանի խնդիրին գալով, դիւրին է յօրինել 'զայն, հետեւելով այն սկիզբներին 'զորս նախորդ հատուածիս մէջ գծագրեցի :

Ներկայ հատուածը վերջացուցեալ է յառաջ, նը-

կատելով. որ դեռ այնքան անտարբերութիւն կայ մեր մէջ գրական ոճի մասին, պարտ կը համարիմ ինձ մի քանի խօսով յիշեցունել հոս թէ քանի կարեւոր է ոճը: Ուստի, մեր արդի գրագէտներին, նաեւ ապագայներին, որ դեռ ուսանող են այսօր եւ որ վաղ իւրեանց հոծ վաստերովը գրական ասպարէզը պիտի գրաւեն, բոլոր այն գրիչներին, որ կ'ուզեն մի յիշատակ թողուլ ազգին մէջ եւ որ ապագային համար կ'աշխատին, խորին մտածումը կը հրաւիրեմ մի նշանաւոր բընագէտի եւ աւելի նշանաւոր գրագէտի սա խօսերին վրայ, որ 'զիս ալ զբաղեցուցած են յանախ.

«Լաւ գրուած գործերը միայն պիտի անցնին ապագայ սերունդին, կ'ասէ Պիւֆօն: Ծանօթութիւններին ճանաչութիւնը, իրողութիւններին եզականութիւնը, գիւտերին նորութիւնն իսկ անմահութիւնի ապահով երաշխաւորներ չ'են. թէ այն գործերը՝ որ կը պարունակեն զգ դոսա՝ փոքր առարկայների վրայ միայն կը դեգերին, թէ առանց նաշակի, առանց ազնուութիւնի եւ առանց հանճարի գրուած են, պիտի կորչին, զի ծանօթութիւնները, իրողութիւնները եւ գիւտերը դիւրով կը վերցուին, կը փոխադրուին, եւ մինչեւ անգամ կը շահին աւելի նարտար ձեռքերէ գործածուիլով: Այդ բաները մարդէն դուրս են, ոնը նոյն իսկ մարդն է: Ուրեմն ոնը ոչ կրնայ վերցուիլ, ոչ փոխադրուիլ, ոչ խանգարուիլ. թէ նա բարձր է, ազնիւ, վսեմ, հեղինակը հաւասարապէս պիտի զարմացուի ամեն ժամանակների մէջ. զի միայն նշմարտութիւնը կայ որ տեւական եւ նոյն

իսկ յաւիտենական լինի: Արդ, մի գեղեցիկ ոճ իւր ներկայացուցած անքիւ նշմարտութիւններովը միայն գեղեցիկ կը լինի արդարեւ: Բոլոր այն մտաւորական գեղեցկութիւնները որ կը գտուին նորա մէջ, բոլոր այն յարաբերութիւնները որովք բաղադրուած է նա՝ նոյնչափ նշմարտութիւններ են այնքան օգտակար, եւ աւելի քանկագին թերեւս մարդկային միտին համար, որքան այն նշմարտութիւնները որոց վրայ նիւթը կրնայ հիմնուած լինիլ:»

ԺԱ

Զը կրնամ ստորագրել այս առաջաբանը, որ արդէն շատ եղաւ երկար, առանց մի քանի խօս ուղղելի ձեզ, հայ ուսանողներ, դուք իմ ազգին միակ յոյսերը, դուք միակ մխիթարութիւն այն վեհ ոգիներին 'զորս մի թշուառ հայրենիքի վիշտերը կը մաշեցուցեն:

Ես ալ դժբախտապէս ի նոցանէ եմ որ շատ հաւաս չ'ունին ներկայ սերունդին վրայ: Ազգին մեծ օգուտներ չ'է կարող անել արդի հայութիւնը, որ ոչ սկիզբ ունի եւ ոչ նպատակ, ոչ ուղղութիւն եւ ոչ որոշ անձնաւորութիւն: Ցաւ է ինձ խոստովանիլ այս տխուր նշմարտութիւնը, այլ էր շողոքորթեմ ժամանակակիցներս: Մեր բոլոր շարժումները անսոյգ տատանումներ են տակաւին եւ ոչ աւելի. աւանդամոլութիւնը կը կաշկանդէ զգ մեզ, եւ ոչ են այն քաջ բազուկները որ խորտակել ճգնին այդ երկաթէ լուծը. մեք բիւզանդեան

վէճերով կը զբաղիմք, եւ ո՞վ է որ խորհի թէ ինչ ապագայ կը պատրաստուի հայ ազգին եւ հայ հայրենիքին. դասիարակութիւնը մեր առաջին խնդիրն է, եւ, աւա՜ղ, հոգէվար է այն . . . : Ի՞նչ ակնկալեմ այս սերունդէն, որ այնքան կարեւոր է եւ որ կարծես իւրեան նշանաբան առած է եսականին օրէնը. «Ցինէն յեռոյ թող ջրեղեղ յառնէ :»

Ուսի, հոգիս յոյսերով լի եւ արդէն մի քաղցր մխիթարութիւնով ողողուած, ձեզ կը դարձուցեմ իմ երեսը, հա՛յ ուսանողներ, ո՞վ թուխ նախատներ, ո՞վ խարտեաշ գլուխներ, որք ահա դպրոցական նստարանների վրայ կը զարգանաք հասակով, ձեր հանճարը կը կազմէք եւ ձեր հոգիին նոր ձոյլ կը տաք :

Պիտի գայ մի ժամանակ, եւ այս ժամանակը շատ հեռի չ'է ներկայէն, մի ժամանակ պիտի գայ ուր արդի սերունդը, տեղի տալով ձեզ, պիտի սրբուի աշխարհի բատրաբեմէն : Ազգային նախատգիրը ձեր երիտասարդ ափերին մէջ պիտի ամփոփուի յայնժամ : Թէ լաւ դասիարակութիւն ստանաք այսօր, ինչ երջանկութիւն պիտի նաշակէ ազգը : Դուք պիտի լուսաւորէք 'զայն, դուք պիտի բարձրացուցէք 'զայն, դուք պիտի փրկէք 'զայն : Դուք, նախապաշարումներէ ազատ, պիտի տապալէք այն հին խրտուիլները որք կանգուն են դեռ. դուք, կուսակցական կիրքերէ զերծ, նշմարտութիւնը միայն պիտի պաշտէք եւ խաւարը պիտի հալածէք. դուք, ոգիով անկախ եւ բնազդով ազատ, այս ամօթալի շղթայները պիտի փշրէք

եւ պիտի արձակէք վերջապէս հայութիւնը, անհուն Պրոմեթէոս, 'զոր դարերը Մասիսի վրայ բեւեռած են :

Հա՛յ ուսանողներ, ձեր կոչումը բարձր է, ձեր պաշտօնը մեծ, ձեր դերը վսեմ : Սուրբ է ձեր դասը, զի լոյսի դասն է այն : Ես, որ ոչ յոյս ունիմ ձեր վրայ, այլ հաւատ, եւ մի ուժգին հաւատ, զի ձեր եռանդուն եւ յուսախայտ խումբերին մէջ կ'ապրիմ ամեն օր, չը կրնամ երեւակայել իսկ թէ այս ընդարձակ ակնկալութիւնները ի դերեւ ելնեն: Ոչ, ձեր անպարտելի բանակին ոչ ոք պիտի համարձակի ասել. «Դու Մարկեղոս պիտի լինիս:» Tu Marcellus eris !

Հա՛յ ուսանողներ, ձեր դասիարակներէն մի՛ սպասէք ամեն բան. նոցա մէջ շատ քիչերն են արժանի այն ասուածային պաշտօնին 'զոր ընտանձնած են : Նոքա պանիպանողական մարդեր են ընդհանրապէս. դուք պէտք է որ աւելի հեռին խիզախէք : Առողջ ուսումներով կազմեցէք դուք ձեր ոգին, եւ ձեր միտը պարարեցէք վեհանձն գաղափարներով : Զգացէք ձեր բացառիկ կացութիւնը, եւ պատրաստեցէք դուք ըզ ձեզ : Վերջապէս, ըզ ձեզ ստեղծեցէք դուք, ազգը ստեղծել փորձելէ յառաջ: Մի՛ մտնէք անզէն այն ասպարէզին մէջ ուր փառքը ձեզ արդէն կը ժպտի :

Հա՛յ ուսանողներ, կարդացէք այս գիրքը : Անծանօթ չ'է ձեզ այս ձայնը. մի բարեկամ է որ կը խօսի ձեզ, մի եղբայր է որ ձեզ հրաւէր կը կարդայ :

Կարդացէք այս էջերը, ո՞վ միամիտ հոգիներ :

— Թէ ձեր մէջ կան որոց սիրտերը դեռ խաղաղ են լինի պէս, այս գիրքը պիտի փոքրիկ ըզ նոսա. թէ ձեր մէջ կան որ անդորր կեանք կը վարեն զի չը գիտեն իւրեանց կոչումը, այս գիրքը պիտի ալէկոծէ ըզ նոսա. թէ ձեր մէջ կան հոգիներ որ դեռ կը ննջեն, այս գիրքը ցունց պիտի տայ նոցա: Սէրով կարդացէք այս թերթերը: Զգացէք այս զգացումները, խորհեցէք այս մտածումները, ապրեցէք այս կեանքը:

Հայ ուսանողներ, արձանների բողէք անտարբերութիւնը, խոզերին թողէք անձնապարար շրջայութիւնը: Զարթեցէք, մատղաշ էակներ: Անասնական կեանքէն վեր բարձրացէք, դէպ անմահութիւն թեւ առէք:

«Զինուորներ, աղաղակեց Պօնաբարդ, այս բուրգերին գագաթէն քառասուն դար ձեզ կը նային:» Եւ ես, մի աւելի վսեմ պատերազմի մղելով ձեր մատաղ զունդերը, կ'ասեմ ձեզ. «Ո՛ւսանողներ, Հայաստան եւ հայութիւն իւրեանց աչքը ձեր վրայ յառած են:»

Հինգ տարեկան էր Միւռապ երբ իւր դաստիարակը, Բուասօն, առաջարկեց նմա գրել ինչ որ ուզէր. «Պատպանեցէք ձեր հայրենիքը» գրեց Կապրիէլ, որ մի օր Յեղափոխութիւնի անձնաւորութիւնը պիտի լինէր: Կը լսէք, հայ ուսանողներ:

Կարդացէք այս գիրքը, 'զոր ձեզ նման մի ուսանող գրած է այն դպրոցական գրասեղաններին վրայ, ուր դուք բազմած էք տակաւին: Այդ ուսանողը, ուսուցիչ եղած թէեւ տգէտ եւ ապիկար,

ձեր դասիարակութիւնին նուիրած է իւր կեանքը. տասերեքամեայ հասակէն ի վեր, նա ամեն օր իւր սիրտը կը քամէ ձեր առջեւ կաթիլ առ կաթիլ. . . :

ԺԲ

Ո՛վ գիրք, տկար արձագանգ մի սիրտի որ կը գոռայ, գաղջ դու շունչ մի բոց լեզուի, աղօտ նշոյլ մի հրաբուխ հոգիի, գնա ուր բախտը տանի ըզ քեզ:

Գնա սաւառնիլ հազարաւոր թեւերովդ հայ հորիզոնին վրայ, ողջոյն տուր հայ աշխարհին, եւ հայ ժողովուրդը յուզէ դու:

Ո՛վ գիրք, կը գուշակեմ թէ դու ճշմարտութիւնի բշնամիները քեզ դէմ պիտի հանես, անմիտներին ատելութիւնը, անօրէններին զայրոյթը քեզ դէմ պիտի գրգռես, բուռն յարձակումներ պիտի կրես, շատ պատերազմների պիտի բռնուիս. այլ, ինչ փոյթ. ինչ կրնայ անել քեզ խաւարը. քանի մնայ այն սիրտը որ ծնաւ ըզ քեզ, դու անպարտելի պիտի լինիս:

Գնա կատարել քո պաշտօնը եւ կոչումդ հպատակիլ. թէ բարութիւնը անհիտուած չ'է, ազատամիտները, առաքինիները, ազգասէրները քեզ պաշտպան պիտի կանգնին:

Գնա դասիարակութիւն պահանջել, լոյս աղաղակել, առաջդիմութիւն քարոզել, անձնուիրութիւն հոչակել, ազատ կեանք խնդրել, եւ անմահութիւն աւետել:

Գնա երգել ճշմարիտը եւ վսեմը. գնա հեգնել ինչ որ կեղծ է, անգոսնել ինչ որ նուաստ, եւ ազնիւը պանծացուցանել: Զարին կողին համար մի սլաք լեր դու, բարիին խոցին համար մի սպեղանի:

Երբ ազգը տեսնես քունի մէջ, զարթեցու դու 'զայն. երբ ազգը տեսնես անմիաբան, հաշտեցու դու 'զայն:

Դու այն կայծը լեր որ կը հրդեհէ, դու այն շիթը լեր որ ժայռը կը փշրէ:

Նոյի աղաւնին լեր դու, եւ փրկութիւն աւետէ այրարատեան աշխարհին:

Մի անկեղծ սիրտի խոստովանութիւնները պարզէ դու տարտամ էութիւնների առջեւ, եւ փարատէ այն մառախուլը որ ըզ նոսա կը պաշարէ տակաւին:

Զի դու խանդ ես, աւիւն ծաւալէ քո շուրջը:

Հզօրին առջեւ թումբ լեր դու, տկարին առջեւ ասպար:

Միթէ Արդարութիւնը կը համբառնայ:

Միթէ Ճշմարտութիւնը մարը կը մտնէ:

Միթէ Առաքինութիւնը մի անուն է միայն:

Միթէ Ազատութիւնը մի ցնոր է:

Միթէ Աստուած կը մեռնի:

Դնա:

Անհագնագոչ հոչակէ դու քո նշանաբանը, մինչեւ որ հայութիւնը 'զայն իւրեան ալ նշանաբան ընդունի. քո հեղինակին հետ անդադար աղաղակէ եւ դու. «Աստուած եւ Լոյս, Ազգ եւ Հայրենիք:»

Ո՛վ գիրք, գնա պատմել հայաստան ժողովուրդին թէ քո հեղինակը նմա ուխտած է զոհել իւր մեղանին մինչեւ յետին շիթը, իւր արիւնին մինչեւ վերջին կաթիլը:

Հասգիւղ, 1 յանվար, 1874.

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ.

ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ.

ՏԱՂԵՐ.

Ա

Ի ՄԱՀ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ.

Երբ նախանձոտըն Պղուտոն
խլլեաց չբնաղ 'զԵւրիդիկէ,
Արծաթալար քնարին երգով
աջողեցաւ անոյշն Որփէ
Թողել 'զկերբեր, բափել ըզ նուն
շնորհածաղիկ եւ նազելի:
Այլ մեղրախօս Որփէն Հայոց,
բաբէ՛, տաղիւբն հեշալուր
Ոչ կարաց մոգել ըզ Մահ,
պահել կենացն ըզ գարուն.
Եւ ընկնեցաւ. եւ քնարն աղու
բեկաւ անդէն ի մատունս:

Մեռաւ Պէշիկթաշլեան . . .
մեռաւ քերթողն այն փափկասուն,

Ոյր նրւագներ, մրշտամրմունջ
վրկայք ոգւոյն սիրազեղուն,
Քան զ բոյր արաբ խրնկոց,
'զԻմեստոնի քան մեղր ազնիւ
Հեշտալիք էին որոց
——յարին, բրուչին յիտէական.
Որբ եթող զ գեղեցիկ,
որբ զ վրսեմ բողեալ շիջաւ,
Եւ զ հողով փարեցաւ
իբր զ կուսիւ սիրանոյշ . . . :

Նա, բրնութեան մրտերիմ,
նոր խանդ քաղէր ի ծաղկանց.
Նա զեփիւռին թեթեւ թեւօք
'զիւր ողջոյններ խանդակաթ
Առաքէր առ հայրենի
սրգալրուիկ դերբուկներ,
Եւ առ կոյսն այն վատաբախտիկ
որ այժմ զ նա գուցէ ողբայ,
Բոկոտն եւ հերարձակ,
ընդ հովանեաւ նոնեստանաց,
Հեծեծանայն բողոք բարձեալ
ընդդէմ վրնռոյ Դրրածին . . . :

Նա սոխակին դայլայլեաց
հոգւոյն զ քնար դաշնակէր.
Նա հիացեալ դիտէր 'զնակաս
լուսագանգուր արշալուսոյ,
Եւ սիրէր ի նա յառիլ՝
միտն ընկրղմեալ ի քաղցր ուրուս.

Ո՛վ քերթողին ժամք երազուց,
ո՛վ ժամեր անմահութեան . . .
Եւ այժմ անլոյս ի փոս հանգչի
շատահանանարրն այն նակաս.
Անդ միայն լրուեցին
հրաշալիք ոսկիլեզուին :

Հոգի՛ ծաղկանց, դու քերթողին
լից զ շիրիմ մենաւոր.
Կայսա՛ռ Զեփիւռ, բուրով յաստին
խրնկեա 'զրսուեր հայ Միլվուայ.
Մելամաղձո՛ն Փիլոմելա,
երբ աւեսիս տալ նրմա
Թէ վեհափառ իւր անուն
դրրոշմեցաւ յարամեան լանջ.
Ո՛վ Արշալոյս, հա՛ռս ամաչկոս,
եթէ շատ չ'են մեր արտասուք,
Յոսկեբիբ աչացրդ հեղ
անդր զ քո շաղ մարգարտափայլ :

Եւ դուք, Մո՛ւսայք, որ Կարապին
Մանդուայ երբեմն զ դամբան
Ծածկեցէք ի սարդենիս
'զոր չ'իշխեցին բարշամել դարք,
Օ՛ն, սրփռեցէք անբառամներ
ի փոս մեծին Պէշիկթաշլեայ :
Եւ դու, Ա՛նմահութիւն,
ո՛վ կոյս ամբիծ եւ միշտ մանուկ,
Դու լուսափաղի ճառագայթեա
բանաստեղծին ի ցուրտ տապան

Զերդ վարդամաs հիւսիսայգ
. . . կամ զերդ ասղիկ բեւեռական:

1868, Նոյեմբեր 30.

Բ

Ի ՏԱՊԱՆ ԼԱՄԱՌԴԻՆԻ.

Այսպէս գողտրիկ անցնի զեփիւռ՝
սրգաւորին հովեալ ըզ սիրs.
Այսպէս լրռեն վէս ուրականք՝
ցընցեալ 'զոգիս ոնրագործաց.
Այսպէս սուրան կայծակք ահեղ՝
ըզ բրռնուրեան շանթելով զահ.
Այսպէս սառած մրնան նակատ,
որոց խորհումք սրրքանրւէր
Տողք են վրսեմ, 'զոր հեզէ Մարդ,
եւ ընթանայ քաջոտն յառաջ:

Այսպէս անցաւ եւ Լամառդին:
Լացող աչաց սրրքեց շիթեր,
Լոյս, ըսփոփանք սրփռեց հիգայ,
եւ դողդոջուն անմեղների
Խրնդրեց ըզ վրէժ. եւ երբ մեռաւ՝
որբեր կրրկին որբացան . . . :
Ցռանսաի մոգիչ հրնար,
իւր խանձարուրրն էր երկին:
Բարձրացաւ նա.—մարք է արփւոյն
բաքչիլ յանձաւրս անտես.—

Ցառաջին ցոլս արեգակին՝
աչք ասեղաց բրլշացան.
Վեր վազեցին յիւրեանց փոսէն
եւ շիրմաց վրայ կանգնեցան
Քերթողք հանուրց աշխարհաց,
որք ընդ Լինոս եւ ընդ Պայդրն,
Եւ ծափելով ողջունեցին
'զաղու սոխակրն Մազօնի:
Սէր դաշնակեց. ոչ մեղանով,
այլ ջինջ լոյսով գրրեց 'զիւր տաղս.
Վանկերն հեզիկ զերդ նրշոյլ
որ բեկրեկի մեղրին ի ծոր.
Զայն հրնարին կարծես բաւիշ
էր երերեայ՝ որ գրրգասոյլ
Շրփշրփելով ըզ լրսելիս՝
հեշտեաց ուրուս տայ մեզ յերազ.
Օ՜հ, եւ զիմարդ բառք մեր վայրի
հրեշտակային իւր ի շուրքեր
Մեղմ մեղեդիս յօրինեցին,
յաստուածային դարձան բարբառ.
Բառք մեր խուժդուժ, 'զոր հինն Ադամ
ըստեղծ 'զերկին անիծելով,
Սա յօրհնուրիւն Անմահին
ածեց ի կիր 'զայն խե՛ռ աւաչս:
Եւ զերդ կոյսին ընդ մատերով
բիւր ձայնք ի մի ձուլին հրաշով,
Լամառդինի 'նդ գրրչաւ այսպէս
գային յիրեարս խառնէին
Երկին, երկիր, էն եւ սէր,
վարդ եւ կայծակ, խաչ եւ ժրպիտ,

ՀԱՅԱՍՏԱՆ

Առ ի հալիլ եւ զերդ ի լին
փոխուիլ լրռին եւ անխորհում . . . :

Քերթող անզոյգ եւ պերճախօս,
ողբաց, ողբոց լուծեց վրէժ.
Մընչեց, գոռաց. երգեց մեղմով,
եւ որոտաց Լամարդին :
Վերամբարձեալ ի խռան ազգաց
զզ մեծ ճակատ իւր վեհապանծ,
Անէծս ի գլուխ տեղաց երիցս
արիւնլրեալ կառափնատին.
Երիցս արի եւ աննրկուն
կեցաւ պատշգան բրշուառ գերեաց:
Ի հրապարակ ածեց 'զոնիր
'զոր ի մրբան գործեն բրռունք,
Ի վեր հանեց նա 'զարտասուս
որ սղոսկին ի խաւարի,
Եւ յուզելով ազգաց սիրտեր՝
շանթահարեց զզ նենգաւորս:
Դրոշակիր ազատութեան
մեծ հրեշտակին այն Ցիսուսի,
Ճակատեցաւ, սանձահարեց
զզ հրահեղեղ Ցեղափոխման.
Գլխարկ թագի եւ մարդ մարդի
սա հրաչակեց համիրաւ.
Եւ երբ ի գահ միահեծան
ելաւ դաւողն Պոնապարդ,
Վասակաբեկ եւ ցասուցեալ
յեռ անպրտուղ այն մարտին՝
Բահ ի ձեռին առաւ քերթող,

պարտեալ եւ սէգ Կինկինատոս :

Եւ հանդարտ այս, որում անձուկ
էր եւ անեզրն Անհունութիւն,
Արդ պարուրեալ ամփոփուի
ի խոր վրին մառախլապատ.
Եւ քերթողիս ազնիւ աւիւն,
աշխոյժ արծիւն այն բոցաթեւ,
Արդ ընդ վիմաւ ցրտասառուռ
արձանանայ թեւասօղ.
Սակայն աչուին հեռահայեաց,
կիսախուփ այլ կորովաբիբ,
Ընդ պատուհան մութ տապանին
կարծես յապայն խորասուզուին.
Կարծես ցընցուին անիւնքն ի տես
հրեշտակին անմահութեան.
Կարծես հոգին, սուրբ աղաւնեակ,
դեռ հրծրծէ ի հեզ ուռոյն՝
Որ 'զիւր ոստեր հակէ լրմամբ
եւ քերթողին լայ ի շիրմակ . . . :

Հրսկահանձնար դու Լամարդին,
գիտեմ, աւա՜ղ, թէ մեր տաղեր
Բզզանք են լոկ որ ի ձանձիր
լընուն զզ նուրբ քո լրսելիս,
Գիտեմ, աղտոտ մեր արտասուք
սրբապրղծեն զզ յիշատակդ
'Զոր յարտասուս տխրանուշակ
երբեմն օծեց Կռանիէլլա,
Գիտեմ եւ ես թէ 'զհոյակապ

անիւնս լալոյ մենաբնորհն
Ունին եւեթ հրեշակք աչեղ,
քերոբք ի բեւս լուսաբրբիռ,
Սակայն եւ 'զայն գիտեմ թէ դու
խանդաղատիս ընդ Արեւելս.
Եւ մեր ողբեր, յարեւելեան
մարմնանալով ի բարբառ,
Հեշտով արդեօք, ով մեծ ոգի,
գրգռեն 'զանիւնդ վեհափառ.
Եւ թէ ծանօթ են կենդանիք
շիրմաբրջիկ ուրուներ,
Դու ճանաչես գուցէ 'զորդեակն
այն ձորերին մրշտադալար
Ուր Դարուն խընդամոլիկ՝
ի կայթ ոտին սրփուէ *կիւղեր*,
Եւ ուր յուծին՝ մելամաղձոս
երգս ի լեզուակ՝ բիւր *պիւղպիւղներ*:

1869, մարս 16.

Գ.

ԱՌ ՄԱՅՐ ՈՐԴԵԿՈՐՈՅՍ.

Օ՜հ, չ'ենն հերիք այնքան թախիծ,
այնքան հառաչք եւ արտասուք:
Թախիծ բոյն է սրտի կրնոջ,
հառաչ սիմուն է ծաղկասպան,

Արտասուք առուակ է որ, աւաղ,
յանգի ի փոս գերեզմանի:
— Մելամաղձոս՝ մինչ դու, հէգ մայր,
փուբաս թաղել ցաւդ յանկողին,
Ի մի ժրմիտ ձայն տան միմեանց,
զարթնուն մանկունքդ նազելի,
Եւ ձախ ի յաջ, գրլխիկ 'զուսով,
անմեղ նրստին ի ծայր շիրմին,
Եւ ի լեզու սերոբէից
ըզ քե՛զ յիշեն, ըզ քե՛զ մրնչեն...
Զերդ խունկրք զոյգ բուրվառաց՝
իղձեր նոցա խառնին յիրեար
Եւ սրբութեամբ յարքեցունեն
'զոգեակ անոյշ քերոբէից.
Լուսին, զերդ կոյս ամօրլեած,
քող ամպահիւս առնու 'զիւրեւ
Եւ հեշտասուն իւր նրբուլիւ
շոյէ 'զվարդի նոցին այտեր՝
Երբ աջ ի յուս նեմեն լրռին
եւ սարսրռան սիրով անհուն: —
Զի երջանիկ են այժմ, ով մայր.
թրշուառ տեսնել տենչայիր դու:

Ա՜հ, գիտեմ ես, երկարակեաց
իղձդ էր տեսնել ըզ նոսա:
Երկարակեաց երկրի վրայ.
գիտես, ով մայր, ինչ է երկիր.
Երկիր բաժակ է ուր հալին,
խառնին նեկտար եւ բանձր արիւն,
Երկիր թաղար է ուր ծրլին

վարդ եւ մեկոն, նարդ 'ւելեբոր.
Երկիր օրոց է ուր, աւաղ,
նընջեն հաշտ եւ գիրկ ի գիրկ
Արշուր եւ խինդ, երգ եւ եղերգ,
խոց եւ համբոյր, սէր եւ սուսեր.
Երկիր շիրիմ է մահասփիւռ
յորոյ, օհ, կեանք մուրան մարդիկ,
Ուր զան մեռնիլ Անմեղութիւն
'զոր խոցոտէ դաշոյն չարաց,
Արդարութիւն 'զոր բռնէ
անարգ ոսկին միահեծան,
Ազատութիւն, վե՜հն այն հիդրա
բիւրագլխոյ, 'զոր բրռնաւորք
Պարաւանդել եւ հեղձանել
ջանան բազկօք արիւնքաքաւ.
Երկիր, եհէ, դիակ է 'զոր
ժրպտեցուցել հրգնի Արուեստ:
Երկարակեաց երկրի վրայ.
գիտես, ով մայր, թէ ինչ է կեանք.
Կեանք, օհ, վարդ է ոյր ծոցին մէջ
բոյն ցողէ Մահն անողոք,
Եւ առ հանոյս՝ հատեալ նեստ
'զայն ի ձորակրն մրուայլ.
Կեանք բսկայ տաշ է տարածեալ
ընդ գերեզման եւ ընդ օրան.
Օրան, տապան. մոր առեղծուած.
Բարիքդ, Սկիլլա մարդկութեան...
Երկարակեաց երկրի վրայ.
ահ, այս վրշաց ծործորիս մէջ
Նոր հառաչներ խառնելի

համար եւ կամ նոր արտասուք:
Հեռի՛ այդ իղձ, ով մայր բրշուառ.
մի՛ քեզ որդիդ 'զայն կրշտամբեն...:

Ե՜րկիր, ներէ դու մօրն անյոյս.
կին է, մայր է. ահ, մեծ հարուած...
Մի եօթեակի մէջ ի հող
իջուցանել ծոց ի ծոց
Մի որդի նոր ժրպտած ի տես
լուսապատար երկու լուսնոյ
Եւ մի աղջիկ հազիւ 'զերկու
վարդիկ բաղած երկու զարնան,
Ո՞ր սիրտ կարէ տանիլ խոցիս.
մի մօր.—յիմար պահանջում...
Մօր սիրտ բնիքուշ է բան ծաղիկ.
կամիս խամրել 'զայն.—զմրկ որդին:
Ե՜րկիր, դու որ անհուն գուրգուդ
երկու դաշոյն շեշտեցիր
Մի մօր սրտին եւ արտասուաց
մի գերեզման դարձուցիր 'զայն
Ուր արդ նընջեն երկու անմեղ,
երկու խոց եւ սեւ յիշատակ,
Ըսփոփէ 'զայն. եւ այն աջով,
որով 'զորդիսրն հրնձեցիր,
Պատռէ 'զպատան սրտեկին,
յոյս եւ լոյս վառէ ի նրմին:

1869, ապրիլ 1.

Դ

Ա.Ռ Զեփիւռ.

Ա.

Զեփիւռ, զարնան ով դու աղջիկ գեղապար,
Դու բընութեան փափկասուն հարս օդավար,
Թող մի վայրիկ 'զանհուսութիւն եւ կեցիր.
Վար առ մանուկ բեւեռդ անխոնջ, ունկընդիր :

Ցանախ հազիւ 'զառաջին վարդ համբուրած՝
Հողմածածան 'զայն ինչ տապան ես գրած.
Հազիւ շոյած մատղաշ առուս կենսաւէտ՝
Օ՜հ, շընչասպան կորար յալիս վէտ ի վէտ :

Օնառածին զերդ պրդպրջակ ծիրանի,
Զերդ արծաթի ծուխ կընդրկան սրբենի,
Զերդ կաթնածիր շաղեր ցրուած ի Դաբրիւռ,
Կեանքդ անտեւ է. լաւ 'զայն վարէ, խօլ Զեփիւռ:

Ինչո՞ւ վատնես ոսկի ժամերդ խաղալով
Քեզ պէս մանուկ, բերեւ, անմիտ թիթռանց քով.
Ի՞նչ շահ թէ դու ծաղկէ ծաղիկ վազս առեալ
Հասնիս, բրռնես նոցա թրղանց փայլ ի փայլ :

Ի՞նչ շահ, ով չար, թէ վարատես ըզ յամեր
Եւ վարդերի փեսես կարմիր ըզ թերթեր,
Կամ թէ պանպան խաղաս ի զոգ շուշանաց :
Զեփիւռ, ուսիր գեղանազ ծիր քո կենաց ;

Բ

Լուսափեսուր Այգ նոր թառած ի ծայր բլեր՝
Դրնա կապտել 'զվարդ, շանոքրամ խընկաբեր,
Եւ մանուշակ, ոսկեծաղիկ, հարդ, յասմիկ.
Լից յայդ բուրմունքս 'զերերեայ քո ծոցիկ :

Ցեսոյ գիս դու հոնաւ թեւօքդ իմ եբէս,
Ականջն ի վար դու ճըլուրլա. «Սիրէ 'զքեզ,»
Եւ ջերմ համբոյրս, 'զոր աւանդեմ դողդոջուն,
Օ՜հ, թրթռացու ընդ իւր շուրթեր մեղրասուն...:

Լուսինն անա մելամաղձոտ նոճեաց ծայր
Գլորէ թերեւ լուսոյ ալիս ոսկեսայր.
Զեփիւռ, ոգել գնա շիրմաց վրայ 'զերգ մանուն.
Քեզ քնար նոճին լինի, ձայնկից՝ լալկան բուն:

Պէշիկթաշլեայ գնա գիս տապանն, ով Զեփիւռ,
Դեգերէ հոն, գբրկէ բազկօքդ համասփիւռ.
Հոն մեծութիւն հանգչի. մի վեհ տաղ հընչես,
Որոյ յանկերգ լինի. «Ցաւէ՜ս անման ես :»

Ժիր կանդի պէս պարզէ խիզախ քո թեւեր,
Հայաստան թռիր, եւ յաւերսն այն վաղաւեր
Շընչէ, Զեփիւռ. կայտռեն ոսկերք դիւցազանց,
Ցառնեն, վերջ տան Այրարատի հեծութեանց :

Եւ գնա մեռիր, մանուկ Զեփիւռ, սուրբ յեղեմն
Ուստի առ սէր Նայ եկար դու երբեմն.
Հրեշտակազուարն առուք լինին քեզ տապան
Եւ դրախտին վրնիս այեր քեզ պատան :

1869, մայիս 20.

Ե

ՈՒՂԵՐՁ ԱՌ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ.

Որպէս երբեմն ի խաւարուս
հորիզոնի տիեզերաց
Եգիպտոս նախ լուսափայլիւն
պարզեաց դրօշ կրրուրեան,
Նոյնպէս եւ այժմ անտի նշուլէ
Հայոց փարոս փրրկաւէս :
Երեք աստեղք, Շահնազար,
եւ Առաքել, եւ Նուպար,
— Լուսացրնցուղ եռոտանի,
պատգամ Հայոց երջանկութեան, —
Ցուսածիծաղ 'զարշալոյս
կազմեն մերոյ վերածնութեան :
Բէոփս, Բեփրէն եւ Միկերին
մի առաւել կացցեն անմահ :
Աւադիկ Շահնազար
եւ Առաքել՝ լուսոյ ի պսակս·
Եւ դու, Նուպար, ափափայից
Հայոց Նեղոս կենսածաւալ,
Անմահ մնասցես, ոլ նոխդ հոգւով,
ց'որչափ Հայք եւ տիեզերք :

1869, մայիս 29.

Զ

ԱՌ ՓՈՔՐԻԿՆ ՏԻՐՈՒՀԻ.

Տեսած ես դու վարդին այն բերք 'զոր հովիկ
Խրլեալ բողու մերք շուշանին ի ծոցիկ,
Ուր բերրրն որք բրրուայ երկար եւ երկմիտ՝
Մինչեւ ահա խուսափի այն զերդ ժրմիտ :

Այսպէս եւ դու, վարդափրրիր Տիրուհի,
Ցանմեղուրեան եւ մանկուրեան շուշանի
Թափչած իբրեւ մատաղ ծաղուկն ի բունիկ,
Մերք ընդ ըսկիհ ցնորաց բաղխես fo բեւիկ :

Օ՜հ, մի՛, մի՛ դուրս. անմեղուրեան տայ մարդ բոյն.
Մինչ դրրախտիդ մէջ բացխրփիկ խաղաս դուն՝
Այն ծաղկածիր սանմանէն, ծհ, չը դիտես
Ինչ է մարդ եւ ուր ձրկտին դաւք իւր անտես...:

Մանկիկ, fo վարդ լեզուակն յաւէտ բող խօսի,
Զի խօսրդ իսկ երգ է գողտրիկ, Տիրուհի·
Հրեշտակք անշուշտ արձագանգ տան fo երգոց,
Վարդ եւ յասմիկ պարեն ի բեւս խրնկահոտ :

Ժրպտէ, կուսիկ, զի բարմ ծիծաղիդ մէջէն
Հինգ զարուններ իւրեանց բուրում ծաւալեն,
Եւ ծլին ըզ fեւ կոկոնք վարդից լուսաշող՝
Որոց ժրմտիդ շոգին է սուրբ նախացող :

Աչքերդ, բոցէ դաշոյնք յապայն սրրտադուս,

Քողէ 'նդ դիմակ 'զոր ձօնէ քուն անզբրաւ.
Խրփէ բիբերդ. մի կայծ բրուչի բոցահեռ
Եւ հէգ սրտից կափարիչ դնէ ես ընդ ես :

1869, օգոստոս 14.

Է

ԱՂՕԹՔ ՈՒՍԱՆՕՂԱՅ.

Ո 'զսուրբ փոշիս պատուանդանիդ շափիւղայ
Թօրափելով յանհունութեան մրջակայ՝
Ծրնար ասեղս, եւ 'զկաւ պատուեալ յաջդ անեղ՝
Կազմեցեր 'զմարդ, խուն խաղալիդ հրաշագեղ.

Որ 'զովկիանքն վէս ծրնար ի մի շիր,
—'Զոր հրրնուանօք հեղեր ի տես ձեռնարկիդ,—
Նոյն եւ եռուր բիւրեղեայ բեւս առուակին
Որ դրդրչէ 'զանուանդ ընդ ժայռ ձորակին.

Ո 'զլոյսդ ոսկի տեղաս յարփին վեհափառ,
Եւ նոյն աջով՝ խոնարհիս, ով վեհրդ Հայր,
Պրենել չրինաղ ի բոյր, ի բոյր ըզ խրնծորն
Որ օրորի՝ առոյգ ի շունչդ՝ ի ծործորն.

Ասուածդ անմահ, մե՛ծդ ի մեծին 'ւի փոքուն,
Հայեաց ի մեզ, հայեաց յոգիս դողդոջուն...
Ընդ հաց, 'զոր ձօն հանապազօր մեզ ձօնես,
Լոյս տուր մրտաց. ծարաւ նորին մաշէ՝ 'զմեզ :

Ի Քեզ հայի, բիբէ ձագիկն աղարծի.
Գրբաս ի նա, տաս պատմուճան ծիրանի.
Ի Քեզ հայի, բիբէ բրուչնիկն ազազուն.—
Գրբաս ի նա, ցոյց տաս կորեակ ոսկէգոյն.

Ի Քեզ եւ մեք հայիմք, ով Դու Անվախճանդ.
Հեղ ի մեր միտս իմաստից ցող 'զարգաւանդ,
Թրուիչս հրեղէն տուր մեր սրտից մանկական,
Լրւա 'զոգիս ի բաժակիդ սրբրուբեան :

1869, հոկտեմբեր 2.

Ը

ՈՂՋՈՅՆԱՌ ԽՐԻՄԵԱՆ.

Թէ ի հրացան, դրօշ մահաբեր
Այլք ողջունեն իւրեանց տէրեր,
Կամ ի զոռիւն բրնդանօթաց
Անհեղ ողջոյն տան իշխանաց,
Մեք մեր սրտից ի բաբախիւն
Խոնարհ այլ ջերմ տամք քեզ ողջոյն,
Եւ թէ չ'ունիմք դրօշս արեան՝
Հեզ ձիրեանիք են մեր նրշան :

Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ
Երթամք, Հայեր, աջ ի յաջ.
Հերիք կոհակք անջատեն
'Զափրն որդւոց հոր լաստէն.

Պատռեմք Վոսփորն քաղցր ի ձայն՝
«Ողջոյն քեզ, ո՛ Խրիմեան :»

Հրեշտակդ յուսոյ, քրտիր առ մեզ.
Շատ քառեցար, քո՛ սրտակէզ,
Համր ի նոնին աւերակաց . . .
Թէ բարէկամ ես ամայեաց՝
Մեր սիրտ ալ են աւեր, քափուր.
Լից ըզ նոսա հոգւոյդ ի հուր.
Բոցովդ աչաց սառն արծարծես.
'Զանըզգայ սիրտըս եկ վառե՛ս :

Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ
Դիմեմք, Հայեր, աջ ի յաջ.
Հերիք կոնակք անջատեն
'Զափրն որդւոց հօր լաստէն.
Պատռեմք Վոսփորն քաղցր ի ձայն՝
«Ողջոյն քեզ, ո՛ Խրիմեան :»

Մեղմ Աստուծոյն հե՛զ փաստաբան,
Դու, խաչակիր խաղաղութեան,
Շանթից փոխան մեղրբ հոսէ,
'Զմեզ վերացու յայս թուխ փոսէ.
Եւ, մութի մէջ, Հայաստանցին
Թէ կորընչի հեծեծագին՝
Հասցո՛ն նրմա ջահ լուսաւոր.
Զ'ես դու Լուսոյ ուխտեալ զինուոր :

Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ
Վազեմք, Հայեր, աջ ի յաջ.

Հերիք կոնակք անջատեն
'Զափրն որդւոց հօր լաստէն.
Պատռեմք Վոսփորն քաղցր ի ձայն՝
«Ողջոյն քեզ, ո՛ Խրիմեան :»

Բախտն այս անգամ բանայ 'զաչեր,
Նրսեմ Արժէքն հանէ ի վեր.
Եւ թէ բաւէ տայ քեզ զանոյս՝
Լուռուս 'զաւերս ածէ ի յուշ.
Եւ զաւազան թէ տայ ոսկի՝
Դու նոյն հովիւն ես պարզ, արի,
Որ ջաղխեցիր ի ցուպդ անփուս
Դայլըս վայրի, Քուրդըս անգութ :

Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ
Թրուչիմք, Հայեր, աջ ի յաջ.
Հերիք կոնակք անջատեն
'Զափրն որդւոց հօր լաստէն.
Պատռեմք Վոսփորն քաղցր ի ձայն՝
«Ողջոյն քեզ, ո՛ Խրիմեան :»

Մարդ, որ հրզօր է ի պատժել,
Զի անզօր է ի վարձատրել.
Երկու տերեւ, մինչ մեծ արք կեան,
Մի քար երբ չ'են.—այս իւր վարձան...
Հայրիկ, քո վարձն է վեհագոյն.
Դէմ սրլամաց վաս Նախանձուն,
Դէմ զրնտակաց կոյր Խաւարի,
Մեր լանջ ասպար քեզ կանգնեսցի :

Օ՛ն, Հայրիկին մեք առաջ
Սրփռեմք մեր իղձ եւ հառաչ.
Մեր երակաց գիտէ քինդ,
Ըզքայ սրտից խոց եւ խինդ . . .
Պատռեմք Վոսփորն քաղցր ի ձայն՝
«Ողջոյն քեզ, ո՛ Խրիմեան :»

1869, հոկտեմբեր 15.

Ա. Ի ՊԱՆԴՈՒԽՏ.

Տրխուր սիրտով՝ ըզ մեզ յիշել արիր ուխտ,
Եւ գրլխիկոր, ցնի, հեռացար դու պանդուխտ...:

Ցիշէ՞ս արդեօք. յիշէ՞ս ըզ ծոց մայրենի
Ուր զորովով սնար քան ի կաթ քաղցրանենի,
Ուր ջերմ մի սիրտ նախ ընդ սրտիդ խառնեցաւ,
Խայտաց ի ժմիտդ եւ ի լալիսդ յուզեցաւ,
Եւ ուր ծաւալ տրւաւ սրտի քում անձուկ
Ամբաւութիւն 'զոր ՍԷՐ ձայնեն մահացուք :

Ցիշէ՞ս արդեօք. ըզ ձեռս յիշէ՞ս դու ջերմին
Ուր գրկէին ըզ քոյդ ի սէր մրտերմին,
Եւ 'զայն աչեր, ոյց քարմ նանանչք սրտավառ
Հեղին յաչերդ լոյս եւ ժրպիտ վառ ի վառ,

Եւ բաբախուն 'զայն հեզ ծրրունքրն վարդիք
Ուր քո անուամբրն խաղային բացխրփիկ :

Ցիշէ՞ս արդեօք. ի տես արփւոյն, որ 'զաւոս
Հայրենի տան ածէ ի յուշրդ անձկոս,
Սարսիս արդեօք յիշատակացդ ընդ բեռամբ.
Բիբեր լուսնոյն ամայացեալ եւ անամբ
Ցողքն արդեօք դանդաղ նրշոյլս ի շիքեր
'Զոր հատկրլեալ վիժեն մարած քո աչեր :

Ցիշէ՞ս արդեօք. մէն մի կուսի, որ ի սէր
Հրաւիրէ 'զքեզ օտար, նենգժոս ի վայրեր,
Թրւէ՞ս արդեօք ըզ սիրելեացդ անուանց շար,
Եւ մատնելով ըզ քո հոգեակն անմոլար՝
Գոչէ՞ս արդեօք. «Բաժակ սրտիս է զեղուն.
Մի շիք օտար չ՛ունի չրնչին անդ անկիւն :»

Ցիշէ՞ս արդեօք. ձեռն ի ծրնոս՝ երբ հրատին
Կաս առ երի՝ միտդ ի խոհանրս խորին,
Եւ դալկացօղ 'զածուխ շարժես անխօսուն,
Շարժէ՞ս արդեօք շիջած ոգւոյդ եւ 'զանիւն.
Եւ ցիրեւցան կայծերն հաւքած հոյլ ի հոյլ՝
Ցիշատակաց հրագին վառէ՞ս մուք նրշոյլ :

Ցիշէ՞ս արդեօք. ըստուեր խոհացդ առօրեայ
Երկարածգի՞ թեթեւ յանուրջ գիշերեայ,
Եւ անկողնոյդ մէջ դու անոյշ խաբկանօք
Փարի՞ս արդեօք կարծ ըզ բարձիդ անձկանօք՝
'Զայն ունելով առ իրան ինչ սիրասուն
Ուր գոգ առ քեզ սլանայ ի թեւրս սիրուն ;

Ցիշեմ արդեօք. Պոնտոսի ալիք անհամբոյր
Երբ ոռնալով ի լայն շուրթեր խաժաթոյր
Դան կատաղի ժայթքել փրփուրս ի նակատդ,
Արդեօք պաղին յուշք ի սրտիդ անասարս,
Եւ երկմտին թէ մթերմաց ընդ աղօր
Վայրագ ալիք ոչ խոյս տայցեն պատկառոս:

Ցիշէ, պանդուխտ. օրհնեա՛լ լինի յիշատակ,
Որ հին ժրպտօք ծածկէ նոր ցաւս անյատակ:

1870, փետրվար 7.

ՅԻՇԱՏԱԿ.

Որպէս ի կանթեղ տանարին
Կընդրկաթոյր խարտեաշ իւղոյ
Դեռ փայլփլի կաթիլն յետին՝
Հոգէվարի հանգոյն շընչոյ,
Նոյնպէս եւ քո սուրբ յիշատակ
Յուսոյ նըշոյլ սրփռէ քաղցրիկ
Թափուր սիրտիս մէջ այս ցամաք
Ուր այլ անուան արձագանգ չ'կայ:

Որպէս վարդին թերթ ընկեցիկ,
Ծիրանէթոյր յիւրում ծոցին,
Ըզ զեփիւռին յետին վանկիկ

Պահէ 'նդ երկար եռանդագին,
Նոյնպէս եւ քո վերջին բառեր
Դեռ հոգւոյս մէջ օրին մեղմիկ,
Իբրեւ անմահ մեղեդիներ
'Զոր բերոբին հընչէ տաւղիկ:

Որպէս կոնակըն երազուն,
'Զոր ծիծառնիկ թեւին ի հիւ
Ցուզէ եւ խոյս տայ անկայուն,
Կրէ ըզ հետսն արծաթածիր,
Նոյնպէս շուրթերս համբոյրներոյդ
Օ՜հ, դեռ ունին հետքեր ջերմին,
Եւ իբրու թէ բուրեն ըզ քոյդ
Շունչ սիրահալ տակաւին:

Որպէս արոյրըն սրբազան,
Ցեռ մահագոյժ դընդրընելոյ,
Արձակէ դեռ խուլ, երկար ձայն՝
Իբրեւ հառաչ մեռանելոյ,
Նոյնպէս ի հուսկ իւր բաբախման
Դեռ յիշեսցէ 'զքեզ իմ սրտիկ,
Ցետին շունչիս հետ միահան
Անունդ պիտի լրսես, Ա՛ննիկ:

1870, յունիս 2.

ԺԱ

ԵՐԴՈՒՄ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ.

Ո՛վ պատանիք, աւերց ներբեւ
Ալ մարեցա՛ւ Հային արեւ . . .
Լանջքս խոցոտ, ըսիցիս արիւն
Կաթեն, եւ չ'ելք ինձ փրկութիւն :

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ.

Օ՜հ, անո՛յշ մայրիկ,
Մի քիչ համբերէ.
Թէ այսօր մրրիկ՝
Վաղ անդորր է,
Եւ մօտ է վաղն այն.
Մեռն է ապագայն.
Մա՛յրիկ, հրճուէ դուն,
Մօտ է փրկութիւն :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ.

Զեռքս զարկայ վերայ շիրմաց,
Եւ կարկեցան ըսուերք արեաց.
Դէպ կենդանիս դարձի 'զերես,
Կո՛յր ձեւացան. լրբեա՛լ եմ ես . . . :

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ.

Ոչ, անո՛յշ մայրիկ,
Լրբեալ չ'ես բընաւ.
Քեզ հետ մեր հոգիք
Տրխրին, կամ անձկաւ
Օ՜հ, քեզ հետ խայտան.
Մեռն է ապագայն.
Մա՛յրիկ, հրճուէ դուն,
Մօտ է փրկութիւն :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ.

Շատե՛ր ինձ յոյս շրռայլեցին.
Ամեն խոսստում մոռցուց ոսկին,
Եւ ես մնացի դարձեալ ի սուզ.
Վախեմ, մանկունք, դրժէք եւ դուք...:

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ.

Անէ՛ծք մեր վրայ
Թէ անարգ ոսկին
Մեր առջեւ շողայ
Քան արտսուք քոյին.
Երդնումք միաձայն,
Մեռն է ապագայն.
Մա՛յրիկ, հրճուէ դուն,
Մօտ է փրկութիւն :

1870, յուլիս 3.

ԺԲ

ՈՒՍՈՒՄ.

Թէ մեր հարք անուս անկան յուսահաս
Անուոյ պարիսպին վրայ քայքայուն,
Եւ ալ մեզ բողին 'զեղեմն անապաս,
'Զազատրն Մասիս գերի եւ նրկուն,
Մեք ուսնիմք, Եղբարք,—եւ աւերք կանգնին,
Ծաղկին անապատք, հալին կուռ շրղբայք,
Եւ երջանկութեան ծիածանք պարզին
Հոն ուր բուխ գիշեր տիրէ դեռ անայգ :

Օ՛ն ի լոյս հատարձակ.
Լրսէք դարիս զանգակ,
Որ արագ բաբախէ
Եւ 'զմեզ յայն հրաւիրէ :
Օ՛ն ի լոյս, ո՛վ Եղբարք.
'Զայն ցոյց տան մեծ հանճարք,
Վեհ հոգիք լուսամաս
Եւ Յիսուս հոգէհրաս :

Ուսնիմք, Եղբարք, — եւ քրտնոռոգ մեր այս դափնիք
Մի օր փոխուին յանբառամներ անմահութեան.
Մեր շիրմաց վրայ երախտագէտքն Հայրենիք
Դրէ մի օր. «Անմահ մընան ոյք աստ հանգեան.»
Ուսնիմք դարիս վեհ ըսկըզբանց զոլ խաչակիր,
Եւ հանրութեան համար, Եղբարք, ուսնիմք ապրիլ՝
Հեգնեալ սին փառս, լոկ հանճարին լեալ շքեղիր,
Եւ թէ հարկ է՝ վասն ըսկըզբանց ուսնիմք մեռնիլ:

1870, յուլիս 10.

ՃԱՌԵՐ.

Ա

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

(Հասգիւղ, 1868, յուլիս 13.)

Պարոներ,

Այն ընդհանուր ուրախութիւնը, 'զոր ամենս ալ կը զգամք մեր սիրտերին խորերը, ոչ այլ ինչ կը նշանակէ բայց թէ այսօրեայ հանդէսին հոգեպարար եւ մեծ խորհուրդը :

Յաւիտենականը դաստիարակութիւնը կոչած է վեհապետել տիեզերքին : Եւ ահա սմա համար է որ, պարոներ, դպրութիւններին այս հանդէսը բիւր անգամ նախապատիւ է քան 'զոր կը կատարէին երբեմն Հռոմի մէջ, երբ մի մեծ մարդապան, «դիւցազն» անուանուած, յաղթականներուն տակէ կ'անցնէր, մի արիւնթաթաւ դաշոյն բռնած: Այս մրցանակները բիւր անգամ նախապատիւ են քան 'զորս կ'ընդունէին որք շատ անմեղ անձեր կը տապալէին ջախջախուած : Այո, այս համեստ մրցանակները հազար անգամ աւելի

կ'արժեն բաւ այն շաւնշաւնները որ անարժան կուրծքեր զարդարեցին եւ կը զարդարեն յանախ : Նոքա, որ փառաւոր շաւնշաւնների եւ անհուն ներքողների արժանի համարուեցան, իւրեանց սրնապատուութիւնին պժգալի կոթողը կանգնեցին ամբողջ բաղաքների աւերակներին, մեծամեծ մայրաքաղաքների մոխիրներին եւ անթիւ բաջերի կմախքներին մէջ, մինչ հոս այսօր մրցանակ սպացողները կոչուած են կանգնել այնպիսի կոթողներ որոց պատուանդանը սէր է եւ պսակը փրկութիւն: Ուրեմն ո՞ր սիրտը անտարբեր կրնայ մնալ այսպիսի մի նուիրական հանդէսի առջեւ.—Եւ ոչ մի սիրտ արդարեւ. իմ խօսքին եւ համոզումին հզօր ապացոյց է այն զուարթութիւնը որ ձեր ազնիւ ճակատները կը զարդարէ եւ ձեր հեռատես աչքերին մէջ կը կայծկլտայ :

Հաւատացէք, պարոններ, թէ մեր, ռուսանօղներիս, այսօրեայ ցնծութիւնը անչափ, անբացատրելի է: Մեր ցնծութիւնը աւելի եւս կ'անի՝ տեսնելով որ հոյակապ անձեր հոս գալ փութացած են, որպէս զի ըզ մեզ պատուեն իւրեանց ներկայութիւնովը եւ մեզ հետ ուրախակցին այն առաջդիմութիւններին վրայ 'զորս արած եմք մեզ աւանդուած ուսումներին մէջ, որոց կարգէն է հելլեն լեզուն: Թող ինձ ներուի մի պահ կանգ առնուլ հոս :

Այս գեղեցիկ լեզուին ուսումը, անհուն օգուտներէ զատ, մեծ պատիւ կը բերէ մեզ: Այս շրնորհալի լեզուն, 'զոր իմաստուն Եւրոպան մայրականէն անմիջապէս յետոյ կ'աւանդէ, այն լեզուն է 'զոր խօսեցան երբեմն Որիէներ, Հոմերներ, Եսքիղներ, Սոկրատներ, Պղատոններ, Դեմոսթենններ, աշխարհի բոլոր ուսուցիչները եւ լուսաւորիչները: Ուստի երջանիկ եմք որ, ուրիշների հետ, կ'ուսնիմք այս ասուածային լեզուն ալ, որոյ բաղդրութիւնին վրայ կը հիանայ մարդ: Այս լեզուն տիեզերական եղաւ երբեմն. բազաւորներ, իշխաններ եւ գիտուններ, ոչ միայն Եւրոպայի մէջ, այլ եւ մեր սիրելի Հայաստանին մէջ, երանելի կը համարուէին թէ կարենային նովաւ բացատրել իւրեանց զաղափարները : Պատմութիւնին էջերը անձայն այլ անսուս վկայ են զրուցածիս : Ցայնժամ մեր հայրենիքն ալ, բարձրացած մինչեւ զենիթը իւր փառքին, ունեցաւ բազաւորների բազաւորները, Արտաշէսը, Տիգրանը, եւ ուրիշներ, որոց յիշատակը միշտ պիտի փթացուցէ ժամանակին մանգաղը : Կը համարձակիմ, պարոններ, ասել թէ մարդկութիւնը մի հսկայ քայլ առած պիտի լինի, երբ մի լեզու գործածէ. եւ ես փափագողներէն եմ որ այդ լեզուն յունարէնը լինի, թէ իմս անկարելի է :

Վերջացուցելով իմ խօսքը, չը կրնամ անհուն շնորհալիք եւ երախտագիտութիւն չը յայտնել նոցա որ մեր բարոյական երջանկութիւնին օգնեցին, եւ մանաւանդ Վարժարանիս հիմնադիրներին, Շահնազարի եւ Նուպարի, որոց յիշատակը դարերի վրայէ պիտի անցնի յաղթական եւ անմահ :

Բ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

(Հիւնֆեար—Իսկէլէսի, 1869, մայիս 25.)

Հայեր,

Ուրախութիւնի բաժակին մէջ տխրութիւնի մրուրը նաշակել. այս է մարդին անփոփոխ նակատագիրը:

Մինչ մայիս ծիծաղկոտ ծաղիկներով այս դաշտերը կը պճնէ, մինչ Վոսփոր ոսկէհոսանց կը ծաւալի հայադրոշ նաւերին տակ, մինչ երկին անգամ, իւր սպառնալից ամպերը վանելով, այս խորհրդաւոր հանդէսին վրայ անհուն եւ վեհափառ կամար կը պարզէ, մինչ ամեն բան սպաս կը հարկանէ այս մեծ տօնին, ես բեմ կ'ելնեմ մի վայրկեան ձեր ցնծութիւնին ծաղիկը բարձրացունելի եւ ձեր զուարթութիւնը թունաւորելի համար:

Հայեր, այս մոգիչ վայրերը թող ըզ մեզ չը հրապուրեն: Այս եզրերը Եփրատինները չ'են. օդը, 'զոր կը շնչեմք, չ'է այն հայաստանցի օդը 'զոր մեր հայրերը ծծեցին. հողը, որոյ վրայ կը նեմեմք, չ'է այն նուիրական հողը ուր հայապէս անկան մեր նահատակները. այս դաշտը Շաւարշանի շուշաններ չ'է փթթեցուներ: Ինչ որ օտար է՝ մնաց օտար է, քանի սխրալի լինի այն:

Մեք ունիմք մեր հողերը եւ ջուրերը. մի հայրենիք ունիմք, Հայեր. աղէ՜, մի պանիկ հոն ար-

լանամք երեւակայութիւնի հրափեսուր թեւերով:

Տեսէք. Հայաստան աւերակների լրիւն եւ անռելի պատանը հագեր է. իւր մարգաշատ դաշտերը անապատ դարձեր են. այն վայրերը, ուր ժիր հայ մշակը, իւր բանին յեցած, կ'երգէր գոհ եւ զուարթ, որջ եղեր են արիւնկզակ Քուրդերի, որք իւրեանց հրացանների կռնցած՝ հայութիւնը կը սարսեցունեն անպատիժ եւ Հայաստանը Հային գերեզմանը անել կը սպառնան: Ա՜հ, ո՞ւր էք, Ararատի զաւակներ. եկէք, եկէք խորհիմք մեր վրայ: Մեր այնքան մեծութիւնէն լոկ մի հայրենիք մնաց. թողումք որ ա՞յն ալ մեռնի...: Սոսկամք. ահա կը նշմարեմ անողորմելի ապագայը, որ, մռայլ դիմակը վեր առնուլով, խոժոռ խոժոռ ըզ մեզ կը նկատէ իւր մեղուսեան աչքերովը. ահա կը տեսնեմ յաջորդ սերունդը որ մեզ դէմ կ'ելնէ, կը դատէ մեր օրերը, կը քննէ մեր գործերը, եւ կ'անիծէ՜ ըզ մեզ: Ուրեմն ազգին համար գործեմք, թէ չ'եմք ուզեր մատնուիլ ապագայ նզովների: Այն Հայը, որ անգործ է, ոնրագործ է: Մահ ոնրագործին:

Ո՞վ չը գիտէ թէ մեք ամեն բանէ աւելի լուսաւորութիւնի պէտք ունիմք. եւ սակայն ո՞վ է որ 'զայն պէտքերի մեծութիւնին համեմատ բաշխէ: Թողումք որ ծերերը իւրեանց անպիտան ոսկիները ծարեն, գերեզմանի մէջ գուցէ բարձ անելի համար ըզ նոսա. թողումք որ տղայները իւրեանց մանուկ արտասուները մի հատ շարարի համար թափեն. թողումք որ կիները իւրեանց միտին եւ սիրտին տգեղութիւնը ծածկեն շքեղ քուր-

ջերի եգիսին տակ. բողումք ըզ նոսա, եւ մեք սկսիմք գործել: Պատանեկութիւնը եւ երիտասարդութիւնը բող ձեռք ձեռքի տան հոս, այս դաշտին վրայ, որպէս զի Հայաստանի աւերակներին մէջ յոյսի ովասիսներ փրթին, որպէս զի այն դարաւոր դերբուկներին մէջէ Ասիֆիսի բուրգէն աւելի անխարխար բուրգեր կանգնին ճանանչաւոր, եւ որպէս զի մի լուսացնցուղ պըսակի փոխուի այն խաւարակուռ շղթայը որ ազաս Մասիսը կը կաշկանդէ:

Պատանեկութիւնը հայրենական վերածնութիւնին օրրանի մանուկն է. երիտասարդութիւնն է նորա խնամակալը. նա բուրաստանն է, սա Դեմետրէն. եւ որպէս զի ազգը լուսաւոր ապագայ ունենայ, հարկ է որ երիտասարդութիւնը ուսում աւանդէ, լոյս տայ պատանեկութիւնին:

Ոչ իբր անհաս կը ներկայանամ ձեզ այսօր, այլ իբր երեսփոխան միլիոնի չափ հայկազն պատանիների, որք ցրուած են ընդ ոլորտս աշխարհի: Լոյս տուէք մեզ, ո՛վ երիտասարդներ. մեք լոյս կ'աղաղակեմք: Ո՛վ երիտասարդութիւն, դու, որ Հայաստանի յոյսի արեւն ես, մտածէ մի անգամ խիղճիդ սպառնումին տակ. «Տասիներորդ դարին մէջ հայ պատանեկութիւնը լոյս խնդրեց երիտասարդութիւնէն, եւ սա զլացաւ» պիտի ասեն ապագայները: Լոյս. այս բառը, որ աշխարհի ցունց կը տայ, արձագանգ ունենալի է մինչեւ ձեր սիրտին խորը. զի նա է մարդկային մեքենային շոգին եւ հոգին, նա անապատին հրեղէն սիւնը, նա փրկութիւնի այգը: Բացէք մեզ լոյսի

աղբիւրներ. դպրոց բացէք մեզ, եւ յայնժամ «Ապրի՛ հայութիւն» գոչեցէք, զի, առանց ընտիր դպրոցների, պիտի մեռնի՛ հայութիւնը. արդէն այն ազգերը, որք տասիներորդ դարին մէջ ասիական անհոգութիւնի բարձին վրայ կը խռկան, քսաներորդին մէջ հոգէվար պիտի զարթին, եւ յայնժամ աւելի հեշտ է մի քայլով գերեզմանին մէջ գլորիլ քան աշխարհի յեղափոխումներին փրկաւէտ քաղաքը հասնիլ:

Արարաչի՛ բոռեր, դուք տիեզերքը զարմացուցելի համար ծնած էք. ափիբերան օտարներին ցոյց տուէք թէ ինչ անհնարին հակադրութիւնով կը միանայ Հային մէջ ազգայնութիւնի Մաքուսաղան եւ հանճարի մանուկը:

Հայ երիտասարդներ, ամուլ կեցցէներ չ'եմ սիրեր ես: Նախ մեր Հայաստանը լուսաւորելի ձեռնարկեմք, եւ ապա, վսեմ գոռոզութիւնով ուռած, գոչեմք միաբերան. «Ցաւէ՛ծ ապրի լուսաւորեալն Հայաստան:»

Գ

ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

(Հասգիւղ, 1869, յուլիս 28.)

Անմահութիւն, դու որ մարդին վերջալոյսին մէջ քո արշալոյսը կը պարզես, գերեզմանին յաւիտենական մշուշին մէջ կը վառես անշէջ ջա-

հերդ, կը սպանես Մահը որ ամեն բան կը սպանէ, կ'եղծես Ժամանակը որ ամեն բան կ'եղծէ, քո ծալերին մէջ կը նորոգես ինչ որ նա կը կործանէ, կը բարմացունես ինչ որ նա կը բառամեցունէ, ինչ որ նա կ'անհետացունէ՝ դու անջինջ եւ փառաւոր հետքեր կը գծես նմա, ինչ որ նա կ'ոչնչացունէ՝ դու 'զայն ի գոյ կ'ածես, դու որ Դարերի լոռուս կափարիչներին բանալին ունիս, դու որ գիշերին քողին տեսեւ ինչ որ կը գործուի երեւան կը հանես, ոսիրը եւ ոճրագործը, բարիքը եւ բարէարը, արդիւնը եւ պատնառը, ամեն բան կը տեսնես, ամեն ձայն կը լսես, ամեն իրէ աւելի կ'ապրիս եւ երբէք չ'ես ծերանար, միշտ պատանի, միշտ հզօր, միշտ արթուն, միշտ կայտառ, դու որ անհունին մէջ չ'ես կորչիր, վսեմին մէջ չ'ես հալիր, անհունին մէջ անհուն, վսեմին մէջ վսեմ, մեծին մէջ մեծ, Աստուածի մէջ աստուած ես, խորհրդաւոր Անմահութիւն, ոչ աստուածները, ոչ մուսաները ինձ օգի կը կոչեմ այժմ, այլ ըզ քեզ, ըզ քե՛զ միայն, որ գերագոյն էակների կը վերապատես. Անմահութիւն, վեստեան հուրիդ մի կայծը իմ դողդոջուն հոգիին մէջ շանթէ, որպէս զի այս քեզ նուիրուած խօսքս չը հնչեմ մարդկային երկչոտութիւնովը եւ թուլութիւնովը, այլ այնպէս որպէս հանոյ է քեզ:

Ե՛ղբայրներս,

Մարդկութիւնը դեռ կը խարխափի բռուտութիւնին բաւիղին մէջ առանց Արիադնէի թելին, կը մրափէ տգիտութիւնին խոր վիրապին մէջ, բռնութիւնին գեհենին մէջ մոխիր կը դառնայ:

Տեսէք սա ուղեւորը: — Մի սառնապատ վիհի մէջ անկած է. վեր ելնել կը նգնի. իւր եղունգներին տակ սառը կը պրծի. նուազ երջանիկ քան ճնին Լէնկ—Դիմուրի, կը կրկնէ իւր նիզերը, եւ նակատին վրայ կը պաղին քիրտերը. իւր շուրթերը, խաւարի մէջ փրթած վարդի պէս, կը տժգունին, այտերը մանուշակի գոյն կը զգենուն. դեռ կը նգնի. մի քայլ վեր կ'ելնէ, եւ դարձեալ վար կը գլորի. օգնութիւն կը պոռայ, եւ, հեռուն, վիհին կողերին վրայ ցցուած ժայռերը 'զինքն արդեօք կը ծաղրեն. մթին եւ անմարմին պատասխաններով. ահ, չ'է՛ ուզեր մեռնիլ. կը պոռայ, մինչեւ որ շունչը սառի լեզուին վրայ եւ երկիրը անաւոր մշուշի մէջ փաթթուի. եղեւիններին կ'աղաչէ, որք իւրեանց սեւ, սեպ գլուխը կը շարժեն սպառնալից. կ'անկնի. իւր յետին հառաչին մէջ կ'արձակէ հոգին: —Այսպէս է Թշուառութիւնը: Թշուառը, իւր շուրջը դիզուած խաւարին մէջ, լոյս չ'ունի որ 'զինքն առաջնորդէ, եւ թէ մի մենտոր ունի՝ մռայլ անյուսութիւնն է այն. եւ թէ սփոփի մի կայլակ գոյանայ իւր նուաղ աչքերին խորը՝ կսկիծը, անյազ սպունգ, 'զայն խկոյն կը լափէ:

Տեսէք սա մարդը:—Մարմարի մի կոտ հատոր կ'առնու, ձեւ կը տայ նմա, կեանք կը տայ նմա, եւ, որպէս կ'ասեն, իւր ծունկը խոնարհեցունելով նորա առջեւ՝ կ'աղաչէ նմա որ իւր կեանքին խնայէ: — Ո՛վ Տգիտութիւն, մի կոյրի տեսի հորիզոնէն քանի՞ աւելի բուխ է քո հորիզոնը. այլ մոս է այն օրը ուր շղթայիդ օղակներին մէ-

ջէ Լոյսը պիտի ճառագայթէ. դու նորա մէջ պիտի լուծուիս, եւ, անարգ մրուր, վար պիտի իջնես:

Տեսէք սա մարդը:—Բռնութիւնին գահին վրայ բարձրացած է, արիւնով ծիրանաւորուած. այն վարժարանը 'զոր կը ջանայ ծաղկեցուցել, բանտն է. կառափնատն է իւր թանգարանը, ուր կը գայ մարդ ուսնիլ մարդը իւր գերագոյն գազանութիւնին մէջ. անեղ ճիրանքներով մարդկութիւնին բազկերակը պատռելով, նորա արիւնը կը ծծէ անդադար. այդ հեղուկն է իւր հոգիին հայելին, որ թուխ երանգներով կը խեղդէ ինչ որ իւր մէջ կը պատկերուի եւ ուր մի սրտապախ փայլ կ'առնու աշխարհակալին ժպիտը, որ դառն է մի կսկիծի պէս, անուելի՝ մի մարմնացած ճիւաղի պէս, խոր եւ սեպ՝ մի անդունդի պէս:—Սակայն մի աւազ կայ ուր ամեն կոնակ կը մեռնի, ամեն գնտակ կը խրուի՝ խնուլ հեծեծումով: Այս աւազը Ժողովուրդն է:

Ե՛ղբայրներս, ամեն բան մի նպատակի համար եղած է:

Մարդկութիւնին նպատակն է երջանիկ լինիլ:

Դա մի հսկայ դիակ է այսօր. ով որ կենդանի է՝ պարտաւոր է մտրակել 'զայն, որպէս զի շուն հասնի իւր նպատակին, արծիւ շուն, շանթէ շուն: Եւ որպէս զի կատարուի այս, հարկ է որ անձնիւր անհատ մի նպատակ ունենայ.—Անմահութիւն:

Ես կ'ասեմ թէ յայնժամ միայն մարդին երջանկութիւնը կ'իրանայ, երբ ամեն ոք ապրի՝ մի մեծ գործով անմահանալի տենդով: Երանստատներ չը լինիմ բայց:

Երանի՜ նմա որ Թշուառութիւնին, Տգիտութիւնին եւ Բռնութիւնին, մարդկային ազգին այս երեակ դահիճներին դէմ կռուելով կ'անկնի. Անմահութիւնն է նորա լուսապսակը:

Մանուկ թէ պատանի, երիտասարդ թէ ծեր, այր թէ կին, ամենս ալ մեր ուղեղին մէջ սնցուցելի եմք մի որդ, որ կրծելով կրծէ 'զայն, եւ մի ըստուեր, որ մեր գիտակցութիւնին ներկայանայ ոճիրի պէս անողոք.—Անմահութիւնը լինի այդ:

Փառասիրութիւնը մոլութիւն է, ասին: Փառասէր եղէք, ե՛ղբայրներս. այլ մի փառասիրութիւն միայն տածեցէք.—Մեծագործութիւով անմահանալի փառասիրութիւնը: Զը կայ մի իղձ որ այսչափ վսեմ լինի:

Ե՛ղբայրներս, մի կտիր կայ. Թշուառութիւնը, Տգիտութիւնը եւ Բռնութիւնը նորա մի նժարը ծանրացուցած են. ինչ նետել պէտք է միւս թաթին մէջ, որ այդ չարիքների նժարը յօդս ցնդի:—Հոն նետէ ուղեղդ թէ հանճար ես. հոն խանդրդ թէ քերթող ես. հոն դաստոյնդ թէ զինուոր ես. հոն լեզուդ թէ պերճախօս ես. հոն հոգիդ թէ մայր ես. հոն թռիչդ թէ պատանի ես. հոն գանձրդ թէ հարուստ ես. հոն նետէ նրբամտութիւնդ երբ քաղաքագէտ ես. հոն հուրդ երբ յեղափոխական ես. հոն գաղափարդ երբ իմաստասէր ես: «Եղջերուամաղ է այդ» պիտի գոչեն մի քանի անձեր. չը հաւատամք, ե՛ղբայրներս. նոքա կոյրեր են որք երկու աչք ունին եւ արեւը չ'են տեսներ:

Մի բառ ալ, եւ պիտի վերջացուցեմ: Այսօր կը կնքեմ դպրոցական կեանքս եւ հրաժեշտ կը տամ

ձեզ, ով իմ եղբայրներ, 'զորս մի Ամենազէն միայն կրնայ գիտնալ թէ քանի՞ ջերմ կը սիրեմ. այսօր կը բաժնուիմ ի ձէնջ, 'զայս միայն պահանջելով որ օր չ'անցունէք առանց ձեր հրաբեր մտածումներին հիւսելի Անմահութիւնին խորհուրդը, 'զոր անա կ'երթամ քարոզել ձեր ուրիշ հասակակիցներին ալ:

Ո՛վ դուք իմ հոգիին եղբայրներ, ով կրակոս պատանիներ, թէ ապագային մէջ տեսնեմ զզ ձեզ անհնաշան; մի Երեմիան պէս ձեր սիրտին վրայ տաք տաք արտասուներ պիտի սրսկեմ, ջերմ ափսոսներ պիտի սփռեմ, մինչեւ որ զարթիք յորանջներուն մէջէ, անտարբերութիւնին պատանը բզկտէք, կայտռէք, բնդամ, եւ Մեծազործութիւնի համար ապրիք:

Ապագային մէջ անհնաշան ապրիլէ դողացէք:

ԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՆ.

(Իւսկիւտար, 1869, սեպտեմբեր 7.)

Օրիորդներ,

Էգ մարդը, երկար ատեն արուին լուծի կրելէ յետոյ, վերջապէս ահա կը զարթի, եւ 'զինքն ազատ եւ յաղթող կը տեսնէ. հրճուանքով եւ զոռոզութիւնով կ'ուզէ ազատութիւնին արշալոյսը եւ յաղթութիւնին լուսակամարը: Սակայն ներուի ինձ ասել թէ ինքն այս յաղթանակը չը կանգնեց, նահատակներ չ'ընծայեց զրէթէ. յաղթութիւնի մի կարմիր դրօշ ծածանեցաւ, աւա՜ղ, 89ին. այլ էգ մարդին արիւնովը չ'էր այն կարմիր: Այս վեմ յաղթանակը, 'զոր արիւնքաբաւ ձեռքեր ծափելով չ'աւեստեցին, այս յաղթանակներուն յաղթանակը՝ մարդկութիւնին յաւիտենական պարծանքին առարկայ մի քանի այրեր, կորովի անհատականութիւններ, ի կատար հանեցին 'զայն: Երջանիկ եմ ապահէն ի յուշ ածելով ձեզ այսօր իմաստասիրութիւնին այս յաղթանակը, որ յամօր մատնեց հնութիւնին բոլոր յաղթութիւնները. զի գրիչը առաջին անգամ հոն բաղխեց սուրին, իւր մեծութիւնը նորա փոքրութիւնին հետ չափեց նակատ առ նակատ, չքացուց նորա դարաւոր մրրտենին որ այնքան իրաւունքներուն դանին կանգնած էր, կտրեց ինչ որ նա չ'էր կրցած կտրել, սպանեց ինչ որ նա չ'էր կրցած սպանել, անհետացուց ինչ որ նա չ'էր կրցած անհետացունել, եւ կրկնակի յաղթական՝ ներբողներուն եւ ծափերուն յաղթակամարէն անցաւ:

Օրիորդներ, արու սեռը, ձեր անկապտելի իրաւունքը ձեզ դարձունելէ յետոյ, մուտ տուաւ ձեզ ուսումնատունի մէջ, ուր նոր մարդ կը ծնիք հինին մէջէ եւ ուր կը սանանք նահատակութիւնի սուրը, ձեր եւ ուրիշներուն իրաւունքը պաշտպանելի համար. ուրեմն, երբ այդ սուրին անբաւականութիւնը ցոյց տաք, իրաւունք չ'ունիք զոռալ որպէս զոռոզ սպարտուհին. «Մի քայլ աւելի առ:»

Գիտցած լինիմք որ մարդկային կատարելութիւնը մարմնացուցեալի չ'է բաւեր արական սեռը առանց իգականին աջակցութիւնին. թէ միրս հեղու առանձին, Դանաւոսի աղջիկներին տակառին մէջ կը լնու 'զայն: Թէ գեղեցիկ սեռը ձեռն ի գործ չ'արկանէ, մարդը կէս մարդ է, հանճարը կէս հանճար, եւ յաղթանակը կէս յաղթանակ. թէ նա ասպարէզ չը մտնէ, մեր, այրերիս, լուսաւորութիւնի, ազատութիւնի եւ երջանկութիւնի հասնիլի ճիգերը գեղեցիկ օդերեւոյթների կը նմանին, որ են եւ չ'են, մի վայրիկ տկար լոյս կը սփռեն եւ անդէն կ'անհետանան, եւ որոց խաւարումը աւելի մուր կը ծնի քան փայլը լոյս:

Օրիորդներ, մի վհատիք երբ ասեմ ձեզ թէ ծանր են ձեր պարտերը եւ անհուն ձեր պատասխանատուութիւնը: Պատասխանատուութիւնը կարողութիւնի համեմատական է: Դուք մեծ գործեր կրնաք ի գլուխ հանել. թէ չ'անէք, մեծ յանցաւորներ չ'էք լինիր: Աւելի եւս յուզելի համար ձեր գիտակցութիւնը, ահա կ'ասեմ ձեզ թէ մի ամբողջ ազգ փրկելի գաղտնիքը ձեր մէջ եւ մի համօրէն ժողովուրդ երջանկացուցելի իմաստասիրայինվէմը ձեր ձեռքին մէջ է: Այո, հայութիւնին ապագայը այս կուսական կուրծքերին վրայ պիտի ժպտի, հայութիւնին յոյսը այս մատղաշ բազուկներին վրայ պիտի օրօրի, հայութիւնին հակատագիրը այս դողդոջ ծունկերին վրայ պիտի լուծուի, եւ Հայաստանի լուսաւորութիւնին հանանչները այս բազմատրոփ գիրկերէն դուրս պիտի թռչին: Վա՜յ ձեզ թէ չը զտէք ձեր հոգիին մէջ Հային ապագայը,

որ ձեր ձեռքէն պիտի անցնի. ամօթ ձեզ թէ ազգին գեղեցիկ յոյսերը սպանէք, եւ անէ՛ծ՝ թէ թողուք որ ապրի այն չարաշուք հակատագիրը, որ ահա այս քանի դար է որ կ'ընկնէ ըզ մեզ:

Լոյսը, որ ձեզ կ'աւանդուի զրէթէ ձրի, նկատելի է իբր դրամագլուխ որոյ տոկոսը պէտք է վերնարել ազգին ամ ըստ ամէ:. Մի՛ տկարանաք ընթանալ այն ասպարէզին մէջ 'զոր Օրէնը կը գծէ եւ 'զոր Պարտը կը սրբագործէ: Մեծութիւնի անձնիւր պողոտայի վրայ գերեզմաններ կան, եւ անձնիւր գերեզմանի վրայ անծեր սարդենիներ, որոց մին եւեթ խլելի համար հազարաւոր կեանք խլելի էին արիւնի դարերին զաւակները:

Դուք, լոյսի դարին զաւակներ, դուք, տասիներորդ երջանիկ դարի աղջիկներ, լոյս հաւրեցէք որ լոյս ջամբէք կարի հեռ խառն, ներկային եւ ապագային մէջ կարնածիր լոյսի ծիածան պարզելով:

Ինչ որ չ'է սուրը զինուորին ափին մէջ՝ այն է դաստիարակութիւնը մայրին ձեռքին մէջ: Սուրը շինել չը գիտէ, կտրել գիտէ. դաստիարակութիւնը գիտէ կտրել ինչ որ չ'է բանաւոր եւ շինել ինչ որ բանաւոր է: Շինօղին պետութիւնը երկարատեւ է քան կործանօղինը:

Պիտի գայ մի դար ուր մայրերը զինուորներին պիտի յաջորդեն եւ մատեանները սուրերին, մի դար ուր բնդանօրներ ժայռեր փշրելի կամ բանգարաններ զարդարելի պիտի գործածուին, բերդերը եւ աշտարակները դիտարանի պիտի փոխուին, եւ նաւատորմիղներ ուսումնարանի պիտի վերածուին:

Ուսանողներ, այդ դարերի մեսիան մի թեւ ալ ի ձէնջ կ'ակնկալէ, որպէս զի շուտ հասնի: Մեր հայրերը օտար ազգերի սուրերին հետ մրցեցան, մեք նոցա քայլերին հետ մրցիմք: Ո՞չ ապահէն մրցումը առաջդիմութիւնի խթան է:

Մրցիմք ուրեմն, օրիորդներդ եւ պատանիներս, մրցիմք մեր մէջ՝ մարդկային ազգին շատ սպան հարկանելի մասին. նախանձիմք նմա որ աւելի ի մէնջ օգտակար կը լինի ժողովուրդին, եւ այս նախանձը դրդէ զմեզ նորա փառաւոր քայլերին զհետ պնդիլ, եւ հասնիլ անցնիլ՝ թէ հնար է. եւ մինչ մեք իրար անցնիլ կը ջանամք, անա Մարդկութիւնը իւր նպատակին հասնելի համար մի քայլ միայն ունի:

Ե

ՊԵՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

(Հասգիւղ, 1869, սեպտեմբեր 23.)

Պարոններ,

Ս.

Նա, որ մարդերը ընկերական ստեղծեց, տուաւ նոցա այն աներեւոյթ եւ անհուն շղթայը՝ որոյ օղերը ուրոյն ուրոյն կը ձեւակերպուին անձնիւր

ուղեղի մէջ՝ դուն ուրեմ կամ յանախ, յաւէտ կամ նուազ բարէձեւ: Այս օղերն են գաղափարները, եւ այս շղթայն է գաղափարներին հաղորդակցութիւնը:

Որ ընկերական է՝ նա պէտք ունի ընկերին նիւթապէս եւ բարոյապէս. նիւթապէս, զի շատ պարագայների մէջ իւր բոլոր զօրութիւնը տկարութիւն է միայն. բարոյապէս, զի շատ կեսերի վրայ ընկերին գաղափարները աւելի ճշմարիտի մօտ կամ ճշմարիտ կրնան լինիլ: Այս վերջին ճշմարտութիւնը զարգացումի պէտք ունի:

Ինչ որ այժմ իմ միտը կը զբաղեցունէ՝ յինէն յառաջ կամ ինձ հետ շատեր նոյնպէս զբաղած են եւ կը զբաղին: Ինչ որ դարիս իմաստասէրին խորհրդածութիւնին առարկայ կը լինի՝ ոմն կրնայ պնդել թէ չ'է ներկայացած առաջին մարդին, երբ գիշեր ատեն Հայաստանի ժայռերէն միին վրայ նստած, աչքերը դէպ անհունութիւն կը սեւեռէր եւ իւր որդիներին ապագային եւ մարդին նպատագիրին մէջ կ'ընկղմէր մտախոհ: Անձնիւր մարդ, անձնիւր դարի մէջ, գաղափարներ ունեցած է եւ կ'ունենայ. երկրագործը եւ նաւաստին բոյսի եւ ծովի գաղափարները ունին. սակայն նաւաստին բոյսին վրայ չ'է ըմբռներ այն գաղափարը 'զոր ունի երկրագործը. սա ալ չ'է հանաչեր ծովը այնպէս որպէս գիտէ նաւաստին: Նա որ, այսինչ առարկային աւելի միտում զգալով, նմա հետամնին եղած է, այդ առարկային վրայ աւելի հիշ գաղափար կրնայ ունենալ քան այն անձը որ նուազ միտում զգացած եւ նուազ կա-

rեւորութիւն տուած է. ի սմանէ ծնունդ կ'առնու զաղափարների կատարեալ կամ թերի լինիլը, եւ սմա համար է որ ընկերական մարդը մի ուրիշի fով այսինչ կեցին վրայ աւելի յուսաւոր խորհուրդներ կրնայ զտնել քան իւր fով: Այսպէս, զաղափարների հաղորդակցութիւնին պէտքը կը սկսի զգալի լինիլ:

Ընկերին խորհուրդը ստանալի համար՝ պէտք է հարցնել նմա. հարցնելի համար՝ խօսիլ պէտք է: Գաղափարների հաղորդակցութիւնին, այն ազնիւ եւ պատկառելի տուրեւառին դրամը խօսն է:

Խօսիլ, համոզել ընկերը, եւ սխալումի մէջէ 'զայն վեր հանելով ուղղութիւնի մէջ դնել. այս է պարտը նորա որ մի մոլորող ընկերի կը հանդիպի: Սակայն, լոկ մի ընկերի չ'է կոչուած օգնել մարդ. յանախ հարկ է բազմաթիւ մոլորեալների եւ կարօտեալների մէջ կանգնիլ եւ զգաստութիւնի կոչել ըզ նոսա հրապարակով եւ բարձրաձայն: Ցայնժամ, ունկնդիրների միտին եւ սիրտին վրայ ազդեցութիւն ստանալ, իշխել հարկ է՝ խօսով: Եւ ահա կը ծնի բոցափեստուրն Պերճախօսութիւն:

Բ

Ի՞նչ է Պերճախօսութիւնը:

—Պերճախօսութիւնը, պարոններ, այն հրեղէն լեզուն է որ մի ակնթարթի մէջ, մի բառով, մի ձեւով, մի ակնարկով ժողովուրդների էութիւնին ոգիանը կը տատանեցունէ, մի համօրէն աշխարհ

ելեկտրական հուրով կը բռընկցունէ: Պերճախօսութիւնը այն բոցեղէն լեզուն է որ միլիոնաւոր սուրեր կը հալեցունէ, բիւր սուինների գլորածը կը կանգնէ, հազարաւոր թնդանօթների թնդիւնները իւր գոռումին մէջ կը խեղդէ: Պերճախօսութիւնը ժողովուրդին հեծեծանքին եւ խեղդուկ ճիչերին ահեղագոչ ձայնատարն է, որ կը հնչէ մինչ բռնաւորը կը յօրանջէ եւ կարմիր երազների բարձին վրայ կը ննջէ: Պերճախօսութիւնը այն անզէն վեհապետն է, որ ամեն ընդդիմութիւն առաքուր կոխելով՝ իւր քիմքին եւ կամքին գահը կը կանգնէ: Պերճախօսութիւնը այն հիանալի արուեստագործն է, որ թափուած մի կաթիլ արիւնով ահեղ ուրուականներ կը շինէ, մի կաթիլ արտասուով դահիճներ կը յօրինէ կեղեքողների դէմ, եւ մի կաթիլ քիրտով անառիկ պարիսպներ կը կանգնէ ցորեանին եւ ցորեանը խլել ուզողին մէջ: Պերճախօսութիւնը մի կայծակ է, որ, ամբողջ հորիզոնին մէջ խոյանալէ յետոյ, ունկնդիրների սիրտին մէջ կ'անկնի, կը թաղուի, ամեն ակընթարթ յառնելի պատրաստ: Պերճախօսութիւնը մի վայրկեանի աստուածութիւն է:

Գ

Այն դարերին մէջ, ուր կեանքի անբնական բարձումը համաշխարհիկ նորաձեւութիւն դարձած էր, այն դարերին մէջ, ուր սուր գործածելը մի վեհ արհեստ էր եւ իւր նմանները գլխատելը նախանձելի աջողակութիւն, այն դարերին մէջ,

ուր արիւնի ափիոնէն ծնած երազները գերիների խումբերի տեսիլքով կը շրեղազարդուէին մինչեւ անգամ Պղատոնների համար, այն դարերին մէջ, ուր զազանութիւնի հրաւէր կարդացող պղինձէ փողերը ուժգին կը խօսէին պղինձէ սիրտերի եւ նոցա հետ մտերիմ յարաբերութիւնի մէջ էին, այն ամօթալի դարերին մէջ, պարոններ, Չինուորական պերճախօսութիւնը նախապատիւ էր:

Հին դարերի սպանապետները, 'զորս «ռազմագէտ» անունով կ'ոսկէզօծեն շողոքորթ պատմիչները, իւրեանց անարդար նպատակներին ընդդիմացող մի գաղափարի կամ գոյութիւնի դէմ ուրիշները զգուելի համար՝ նոցա անձնասիրութիւնի եւ փառասիրութիւնի երակները կը զգուէին, կը շփշփէին, եւ, այսպէս, Պերճախօսութիւնին բարէնպատակ նկատումներին դէմ կը մեղանչէին յանախ:

Պերճախօսութիւնին այս այլասերուած նիւղը անարժան էր ապրիլի. եւ, պիտի մեռնի: Երբ սուրը ժանգոտի, երբ զինուորութիւնը ծուլութիւնի եւ մուրոդութիւնի համապատիւ լինի, երբ արիւնի բիծ կրող դրօշը պիղծ համարուի, երբ մարդասպանութիւնի քաջալերող շարադրամները մարտիկների կուրծքին վրայ նոյն նշանակութիւնը ունենան ինչ որ ունին եղեռնագործ լանջերի վրայ կախուած դատապարտութիւնի թուղթերը, յայնժամ Չինուորական պերճախօսութիւնը գերեզմանի մէջ է արդէն:

Պատերազմների մօտալուտ բարձումը Պերճախօսութիւնին այս նիւղին մահի ժամը պիտի հնչե-

ցունէ: Ստուերը 'զինքն ծնող առարկայէն աւելի երկար՝ այլ ոչ աւելի երկարակեաց կրնայ լինիլ:

Դ.

Դատաստանական պերճախօսութիւնին հարկը անյիշատակ դարերէ ի վեր զգալի եղած է: Կ'երեւի թէ այս նիւղը սահմանաւոր տեւողութիւն չը պիտի ունենայ, եւ պիտի ապրի թերեւս այնչափ որչափ մարդը:

Արդարեւ, պարոններ, չը կայ ոք որ իւր կեանքին գործերին մէջ դատ չ'ունենայ մի ուրիշի դէմ: Հարստութիւնին աշխարհի վրայ ունեցած հսկայ վարկը եւ այս վարկէն ծնած փափաքը հարուստ լինիլի, նախանձը 'զոր շատեր իւրեանց դրացիին դէմ կը տածեն, ազանութիւնը որ շատերի համար մի երեւակայական փրկութիւն է, տժգոհութիւնը որով համակուած է ամեն կենդանի, անաշխատ նոխանալի կամքէն ծնած ծուլութիւնը, ընկերին ինչքը յափշտակելի չարանենիկ հանոյքը որ շատերի մի բնիկ տարրը եղած է գրէթէ, ցոփ շռայլութիւնէ բխող աղքատութիւնը, եւ այն անեղ եւ անմեղ թշուառութիւնը՝ որ նօթէանջ էակների հացը լիացած հարուստներէ խլելի համար սեւ խորհուրդների կը դիմէ, այս ամենը եւ դեռ շատ ուրիշներ քիչ կամ շատ օշափելի կ'անեն Դատաստանական պերճախօսութիւնին հարկը:

Մի անհատական զրկում, մի ոճիր կը լսուի, եւ Դատաստանական պերճախօսութիւնը նմա դէմ կը զինէ արդարութիւնը: Դատ ունեցող ռա-

միկը մի պերճախօս օրէնսգէտի ձայնովը կը զօրացունէ իւր իրաւունքը եւ օրէնքին անխտիր բարէարարութիւնին կը դիմէ: Բարձր կամ ֆիչ բարձր կարեւորութիւն ունեցող գործերի մէջ՝ իւրեանց կարծիքը դատաւորներին կը հաղորդեն պերճախօսները, եւ սովաւ անհուն ծառայութիւն կ'ընծեռեն հանրական խնդիրներին եւ նոցա մէջ շահ ունեցողներին: Դատաստանական պերճախօսութիւնը մասնաւորների ալ կ'ընծայէ նոյն օգուտը, երբ բանկագին խորհուրդներ կը տայ իւր հմտութիւնին դիմող անձերին:

Օրէնքին հիւրովը ուռնացած այս ճիւղը Պերճախօսութիւնին՝ համանակաս պիտի առաջանայ արդարութիւնին հետ, Ալֆօնս Քառռի կարծիքին եւ տենչին հակառակ:

Ե

Ճեմական պերճախօսութիւնը, պարոններ, ազնուագոյն առանցքի վրայ կը դառնայ:

Երկու դար յառաջ, գիտութիւնների եւ արուեստների վրայ կարդացուած յիշատակարանների եւ շնորհակալու բանախօսութիւնների մէջ միայն կը կայանար այն: Առաջին կարգի ճառերը ոեւէ գիտութիւնի կամ արուեստի մէջ եղած նոր գիւտերի վրայ դիտողութիւններով եւ քննադատական, պատմական, ժամանակագրական եւ տեղագրական լուսաբանութիւններով կը զբաղէին. երկրորդ կարգինները բազաւորների եւ իշխանների շնորհակալիք, ուրախակցութիւն, վշտակցութիւն յայտնելի մէջ կը բովանդակուէին:

Օլիվիէ Բաղռիւ փաստաբանը 1640ին Ֆռանսական ճեմարանին անդամ ընդունուած օրը շնորհակալութիւնի մի ընտիր ճառ արտասանեց. եւ այնուհետեւ սովորութիւն եղաւ «ընդունելութիւնի ճառ»եր խօսիլ, որով ճեմական պերճախօսութիւնին սահմանը աւելի ընդլայնուեցաւ:

Ընդունելութիւնի ճառերը երկար ատեն Ֆռանսայի ժամանակակից բազաւորներին ներբողներովը խնողուիլէ յետոյ, Վոլդէռ, ց'այնվայր համաշխարհիկ ընդունելութիւն գտած սկիզբների եւ սովորութիւնների դէմ խեռ ոգին այլանդակ, տապալեց սոյն տաղտուկ սովորոյթը, եւ, ճեմարանին անդամ ընդունուած օրը, բազը շնքելը ձգելով՝ դարին գրագիտութիւնը եւ գրագէտները ձեռք առաւ, այնչափ կծու որչափ արդար մի քննադատութիւն արաւ, եւ յաջորդներին նոր ուղի հորդեց ազատ ճառախօսութիւնի:

Յետոյ «պատմական ներբող»ներ անել առաջարկեց ճեմարանը. եւ բազմաթիւ կենսագրութիւններ մեծ մարդերի գործերին վրայ լոյս տուին եւ ընտիր օրինակներ եղան ի նմանութիւն ապագայ սերունդներին:

Ճեմարանների կողմէն մրցումի համար յանախ առաջարկուող իմաստասիրական, բանաստեղծական, քաղաքական, ընկերական, եւայլն խնդիրները ճեմական պերճախօսութիւնին արդէն ընդարձակ շրջանակը աւելի եւս կը լայնցունեն:

Զ

Քաղաքական պերճախօսութիւնը, պարոնցեր, ամենէն աւելի փառաւորը եւ ազնիւն է, եւ իւր անհուն կարեւորութիւնին առջեւ կը տկարանան Պերճախօսութիւնին միւս ճիւղերը:

Հոս է որ մարդկութիւնը վարող մեծ օրէնքները կը յօրինուին կամ կը մերժուին, ազգերի նակատագիրները կը ոչնչանին եւ կը վճռուին, բանակներ կ'առաջեն եւ բանակներ ետ կը քաշուին, բիւրաւորներ բիւրաւորների վրայ սուր ի բռին անկած ատեն՝ գինաթափ կը լինին մի բառով, աշխարհներ եւ ժողովուրդներ իբր մի երկրորդ նախախնամութիւնի թեւերին տակ կը շարժին, գերութիւնին մահի զանգակը յամր յամր կը հնչէ եւ փրկութիւնին ուսանելիները կը սկըսին, բռնութիւնը կը մթագնի եւ ազատութիւնը կը հառաջայրէ, արիւնի եւ արիւնի միջոցը դըռուած ցնորային տարբերութիւնները կը վերնան, իշխանները՝ ժողովուրդի մարդերին վրայ բարձրէն չը նայիլով՝ խորհուրդ կը հարցնեն նոցա, եւ ժողովուրդի մարդերը՝ իշխաններին երեսը տեսնելի համար՝ Միւապոի պէս իւրեանց նակատը ետեւ հակելի եւ վեր նայիլի պէտ չ'են ունենար . . . :

Քաղաքական պերճախօսութիւնը իւր վեհ նըպատակին համապատասխան դիրի մէջ գտուիլի համար, հարկ է որ պերճախօսները թոթափեն ոեւէ նախակապ, համայն մարդկութիւնին եւ ոչ լոկ իւրեանց երկիրին օգտակար խնդիրների

փաստաբան կանգնին: Դարիս մէջ քաղաքական ուսաւոր պերճախօսութիւնի մեծ օրինակ է Իւկոբոր նմա հետեւին:

Թէ այսպէս վարուին, քանի զոհեր պիտի խընայուին մարդկային սեռին:

Է

Սրբազան պերճախօսութիւնը, սիրելի եղբայրներ, գերմարդկային վսեմութիւնով կը խօսի: Միտէ աւելի սիրտի կը զարկէ, եւ սիրտէ աւելի հոգիի, որ սիրտին մթնոլորտը կը թուի:

Քարոզիչները եւ ոչ մի անձի շահին համար կը խօսին. Աստուածի շահը միայն կը պաշտպանեն. եւ երբ Նա տեսնէ թէ փաստաբանի պէտ ունի, մի քանի վեղարներ կայծակների խանձարուր կ'անէ:

Սրբազան պերճախօսները ամեն սիրտի բանալին ունին. մի Նիւդրն եւ մի փայտաս հաւասարապէս իւրեանց նակատը կը խոնարհեցուցեն նոցա առջեւ: Ամեն աչքի մէջ արտասուք եւ ամեն սիրտի մէջ ապաշաւ կրնան գոյացուցել: Եւ երբ, լեռներ լեռների վրայ բարդող Տիտաններին պէս, բարձր խօսքեր բարձր խօսքերի վրայ կը յաւելեն եւ մի այնպիսի վերացումի կը հասնին ուր դիմանալը անկարելի կը կարծեն ուրիշ ատենաբանները, յանկարծ մի հաւասար արագ թռիչով աւելի վերերը կը խոյանան, եւ կը հասնին մինչեւ հոն ուր հունը կը սպառի եւ անհունը կը սկսի, եւ ուստի վար նայիլէ կը սոսկան անտուրը պերճա-

խօսքերը: Կրօնը, այդ երկիրի վրայ իջող այլ երկինքէն կախուած գերբնական շղթայը, վեր կը բռնէ զգ նոսա եւ չ'է թողուր որ գահավիժին :

Բարձրէն կը սկսին եւ ի բարձրը կը յանգին: Ասուած է իւրեանց նախաբանը. իւրեանց վերջաբանն ալ Ասուած է :

Սրբազան պերճախօսներին պաշտօնը շատ ծանր է. եւ սա համար է որ սակաւագիւտ են այս անունին արժանացողները: Յիսուսի պէս, ընկերական ովկիանին կրայոյզ կոհակներին մէջէ քայլելով, պարտաւոր են հրամայել նոցա անխրոխ, եւ, վատապէս լեռը փախչիլի տեղ, որպէս կ'անեն միայնակեացները, ոգի ի բռին պարտաւոր են կռուիլ ալիքների դէմ :

Իւրեանց երջանկութիւնին մէջ Բարձրեալին էութիւնին դէմ ապստամբող գոռոզ գլուխների եւ թշուառութիւնի ատեն Արարիչին գոյութիւնին վրայ տարակուսող վայրահակ ճակատների մէջ կանգնած, զգ նոսա համոզելի համար զատ լեզու կը ճնարեն եւ սոցա խօսիլի համար տարբեր բառեր կը հանճարեն: Օ՜հ, դժուար է գաղափարի դէմ զինուիլ . . . :

Այն վսեմ դատարանին վրայ, որ «բեմ» կը կոչուի, քարոզիչը Ասուած դատաւորին առջեւ դատ կը վարէ մտակների եւ կայսրների դէմ, դատաւորների եւ զինուորների դէմ, եւ իւր իշխանական ձայնին առջեւ թագերը կը խոնարհին եւ գահերը կը յուզուին: Դատապարտութիւնը, 'զոր նոցա դէմ կը կարդայ, ներելի չ'է այլազգի պերճախօսների. այլ ներելի է նմա, զի ասուածային վճիռների

մէջ կը խաղէ 'զայն, եւ ոչ անձնական շահի կոյր դրդումների մէջ: Անվեհեր կը գոռայ դարին զեղծումներին դէմ, ընկերական ախտերին դէմ. եւ երբ համոզիչ ամեն փաստ սպառի, դեռ անսպառ բոցեր ունի ի հանդէս ածելի՝ թանձրամիտ ամբոխին համար :

Մի գերեզման կը բացուի. դագաղին ետեւէ գնացող մարդերը, յուսահատ, յերկիր կը նային. քարոզիչը, դեռ արի, աչքերը դէպ երկին կը դարձուցէ, եւ հոն մի այնպիսի բարձր սփոփ կը գտնէ որ տակաւ տակաւ ճակատները կը վերացուցէ եւ կը մոռցուցէ այն բերանաբաց գերեզմանը. եւ քայլ առ քայլ մեռեալին ետեւէ ապագայ կեանքին մէջ շրջիլ յեռոյ, անմահութիւնին կը յանձնէ 'զայն եւ ինքն մեզ կը վերադառնայ:

Ը.

Թէ Բանաստեղծութիւնին համր յաղթանակներին վարձը անշշուկ մրտենիներն են, Պերճախօսութիւնին որոտընդոստ յաղթութիւններին վարձն ալ են անեղազոյ ծափերը :

Թէ Պերճախօսութիւնը մի կայծակ է, պարոններ, ծափն ալ շանթահար ապառաժին խորախորին գանգիւնն է :

Երբ պերճախօսը արդարութիւնին լեզուին վրայ մի որոտում կը թխսէ, որոյ շռինդը եւ կրակը ժողովուրդին ոսկրների ծուծին մէջ, իբր երկաթուղիի գիծի վրայ, կը թաւալեցուցէ արագաթեւ, իրաւունքի այդ նիչը ձեռքերը կը մօտեցուցէ

բնազդով, եւ, բիւր ափերի բաղխումին մէջ, իւր բողոքներին կամ ներբողներին արձագանգը կը զտնէ: Ժողովուրդը յայնժամ մի հսկայ անտառի կը նմանի, որոյ կաղնիները սրեկ ուրականին առջեւ կ'ընդհարուին ճարճատումով. եւ հովին եւ ծառերի զոռումին մէջ մերթ ընդ մերթ լսուող առիւծի մռունչներին կը նմանին այն անզուսպ կեցցէները, որ ծափերի փոթորիկին մէջէ կը վերարձչին:

Զինուորական պերճախօսը կ'ատենաբանէ, եւ զինուորը բշնամիին սուրին իւր սուրը բաղխելով կը ծափահարէ: Այս ահռելի ծափն է Զինուորական պերճախօսութիւնին վարձը:

Դատաստանական պերճախօսը անմեղը պատպանելի համար կ'ատենաբանէ, եւ դատաւորներին համր ծափերէն աւելի՝ անմեղին երախտագէտ արտասուն է իւր վարձը:

Ճեմական պերճախօսը եւ քաղաքական պերճախօսը բուռն ծափահարութիւններին կ'արժանանան, եւ նոցա մեծ խրախոյս կը տայ այս:

Սրբազան պերճախօսը ծափի համար չ'է ելներ բեմ: Նմա համար փառասիրական բզզումներ են այն ծափերը 'զուս կը խլեն ուրիշ դասերի պերճախօսները: Նմա համար ամենէն փառաւոր ծափը՝ ժողովուրդին խիղճը ապտակելով նորա սիրտը գիղջով բաբախեցուցելն է: Թէ աջողի իւրեան յանձնուած հօտին տիրող մոլութիւնները բլիտտել, թէ աջողի հանդերձեալ մի դրախտի հեշտանքը նկարագրող բանաստեղծական ասացուածներ եւ մի դժոխքի տեսիլը ահաւորող

նոր բոցեր եւ սատանաներ հայրայրել յրմբռնում նիւթամիտ ռամիկին, թէ աջողի անողոք սիրտերը ի գուր շարժել եւ յուսահատ թշուառները սփոփել եւ խրախուսել, քարոզիչը իւր որոնած վարձը լիապէս զտած կը համարի, եւ ինքն ինքեան կը ծափահարէ:

Թ.

Պերճախօսութիւնին այս հինգ նիւղէն ոեւէ միին մէջ աջողիլ ուզողը կը պարտի ուշ դնել մի քանի պահանջումների:

Պերճախօսին համար աջողութիւնի առաջին պայմանն է հատալ իւր ասածին:

Երբ պերճախօսը իւր ներքին համոզումին համաձայն կը ջանայ համոզել, յանախ կ'աջողի: Սակայն, պարոններ, երբ իւր սիրտը «ոչ» կը մնչէ եւ բերանը «այո» կը հնչէ, երբ իւր ձայնովը կ'ընդդիմանայ հոգիին անձայն հաւատին, երբ մի կողմէն իւր գիտակցութիւնը կը խեղդէ եւ միւս կողմէն լեզուն ազատ կ'ոլորէ, այս քրնադատական պահին մէջ՝ պերճախօսը իւր ներքին պատերազմին մէջէ չը կրնայ համոզել ունկընդիրները, եւ յանախ կը լռէ ամօթապարտ:

Ինչ քաղի տակ ալ քաջի կեղծիքը, միշտ իւր նակատը մերկ կը մնայ նշմարտութիւնին ակնարկին առջեւ:

Ներքին ձայնակցութիւնը միայն կրնայ ազդել այն գերմարդկային յուզումը, որոյ հրափետուր բեւերին վրայ բարձրանալով մարդը՝ նոր ձոյլ

գրէրէ կ'առնու, չը գիտես որպէս նոր գաղափարներ կը ստանայ յեղակարծ, այնպիսի ազդու բառեր, այնպիսի ողորկ ոճեր կը գլորեցունէ լեզուին ծայրէն որոց վրայ խորհած չ'էր երբէք, 'զինքն այնպիսի շքեղ մի ուղիի մէջ կը տեսնէ 'զոր իւրեան չ'էր գծած յառաջագոյն, այնչափ կը խոյանայ որչափ չ'էր հաշուած բնաւ, այնպիսի խօսեր կը գտնէ որոց վրայ ինքն ալ կը զարմանայ յետոյ, եւ իւր վրայ նոր համարում կը ստանայ՝ տեսնելով թէ տակաւին յիւրմէ իսկ բաֆուն տաղանտներ ունի :

Պարոններ, աշողիլի համար բաւ չ'է հաւատալ իւր ասածին. հարկ է նաեւ որ ասածը լինի ճշմարիտ. եւ ոչ միայն ճշմարիտ, այլ եւ աւաֆինական, այլ եւ դարին ոգիին ֆիչ շատ յարմար:

Սակայն, այս բանաւոր պայմաններէն դուրս, աշողիլ ուզող պերճախօսը կը դիմէ երբեմն անմեղ շահադիտութիւնի, եւ, թէ նեռելի է ասել, ոսկէդարեան դիւանագիտութիւնի, 'զոր «ճարտարութիւն» կ'անուանեմ հոս :

Ճարտար ատենաբանը ժողովուրդին տկար կողմը կ'որոնէ, որպէս ռազմագէտը պատարուած պարիսպին խարխուլ մասերը, եւ այդ տկար կողմին յենուլով՝ ազգերի ծափը եւ սիրտը կը մագնիսէ :

Հայրենիքի եւ ազատութիւնի գաղափարները եղած են ց'արդ ժողովուրդների տկար կողմը: Ով որ այս մոգիչ բառերովը ազգերի միտը կը գրաւեցունէ, նա ժողովուրդի մարդ կը համարուի :

Թատրի մէջ նմա կը ծափահարեն, զի գիտէ հայրենասիրական ասացուածներ յեղյեղել իւր ողբերգութիւններին մէջ. հանդէսների մէջ նմա կը ծափահարեն, զի գիտէ վերացեալ խորհուրդներ տալ եւ սին բացագանչութիւններով իւր ճառերը խնողել. հանրային բերբերի մէջ նմա կը ծափահարեն, զի գիտէ սպառնալից եւ կատաղի յոդուածներ գրել. բերեւս իմաստասիրութիւնը միայն ի բաց կը մերժէ 'զայն, զի *հաշիշէ* չ'են ախորժիր իմաստասէրները :

Պարկեշտ ատենաբանը յայնժամ միայն ժողովրդային առիւծը զարթեցունելի է՝ երբ հաւատայ թէ այդ գրգիռէն կրնայ օգուտ ծնիլ մարդկային ընկերութիւնին: Նա, իբր ճարտար բժիշկ, հանրութիւնին երակը պարտաւոր է զննել եւ նորա մի արդար զարկ ունենալին հսկել. զարկը փութացունելը, որպէս եւ յամրացունելը, հիւանդին կեանքը խանգարել եւ մահը ճեպեցունել է :

Ճարտար ատենաբանը ազդու խօսերի մի անընդհատ շարով, այն խիզախ նաւապետին պէս որ կը նգնի զապել ովկիանին կոհակները, թումբ կը դնէ ժողովուրդին պոռթկալի մտօ ծափերին, մինչեւ այն վերջին կայծակէ խօսը՝ ուր շունչ առնուլի եւ ծափ ընդունելի համար կը լռէ, եւ այն բաւական ատենէ ի վեր զսպուած ծափերը՝ ամեն պատուար խորտակելով՝ կը սկսին գոռալ եւ միջոցը լնուլ :

Այնչափ մեծ է պերճախօսներին վեհապետութիւնը ազգերի վրայ: Ո՛ւր էր թէ միտս մարդկութիւնի օգուտին համար ի կիր արկանէին 'զայն

ԳՐԱԴԱՐԱՆ

Ժ

Մի տեսակ Պերճախօսութիւն ալ կայ, պարոնՆեր:

Ոչ հրապարակ կ'իջնէ, ոչ կը գոռայ, ոչ ծափ կ'ուզէ: Ցանախ սուգի սեւերին մէջ կը ծնի եւ անհետանութիւնի խաւարին մէջ կը մեռնի: Պերճախօս է, այլ չ'է խօսիր: Համր է, այլ կը յուզէ:

Այս անձայն պերճախօսութիւնը աչիինն է:

Օ՜հ, քանի՞ պերճախօս են այն կոյսին աչքերը որ, արիւնի դաշտին վրայ իւր նորայր այրին դիակը գրկած, մերթ երկինքը կը դիտէ, մերթ սիրելիին շուրթը, զգացումներին բազմութիւնէն եւ բռնութիւնէն անզգայ կը դառնայ, նայուածքը յիմար, ճակատը ապուշ . . . : Քանի՞ պերճախօս են այն թշուառին լուսաս եւ գունաս աչքերը որ, մարդկային զրկանքներին տակ ընկճուած, քիքերը երկին, արտօսրը երկիր կ'ուղղէ· վսեմ եւ անաւոր ելեւէջ, որով մի ճնշուած հոգեակ, իւր վիշտերը յերկիր թօթափելով, մի պահ գերազոյն երջանկութիւնի մէջ կը խոյանայ, եւ ապագայ հզօր վրէժի խոհերի մէջ ներկայ աղէտը մոռնալով՝ կը նիրհէ յուսաժպիտ, անռելի վէպեր պատմուած ատեն անզգալապէս ննջող տղային պէս . . . : Քանի՞ պերճախօս են այն բողոքող աչքերը 'զորս գերի ժողովուրդներ յերկին կը սեւեռեն իւրեանց փշուս լուծին տակէ, զանգատ բառնալով այն խուժդուժ բռնաւորին դէմ որ նոցա արիւնը կը խմէ որպէս զի անհիսին, նոցա շուրջը հեն-

կան պատուար կը բոլորէ որպէս զի չը լուսաւորուին, նոցա ազատ զաղափարները կը թուէ որպէս զի նոյնչափ կառափնատներ կանգնէ նոցա, կասկածի ջերմաչափ ի ձեռին՝ նոցա եռանդը կը չափէ որպէս զի Սիպերիայի սառերին մէջ ամսորէ այն սիրտերը որք դեռ կը մնան, նոցա իրանը կը կաշկանդէ որպէս զի չը շարժին, եւ ծունկերը կը շղթայէ որպէս զի յառաջ չ'անցնին . . . : Քանի՞ պերճախօս են այն մութ կապոյտ ցնցոտիների տակէ վեր նայող անմեղներին աչքերը որք, սէրի բեմերին վրայէն ատելութիւն քարոզող այն սեւ վիշապները անիծելով, Դողգոթայի փայտէն մինչեւ իբերեան փայտակոյտները իւրեանց արիւնովը ոռոգած, տասուր խոշոր դարերի անցագիրը իւրեանց արտօսրովը թրջած, եւ իւրեանց գլուխին վրայէ անցող տարիներին հիւսկէնը հառաչներով եւ անարգուած բողոքներով ստուարացուցած են . . . :

Պէտք է թաղել այս դարերը, պե՜րճախօսներ:

Բանակների մէջ, դատարաններուն մէջ, ճեմարաններուն մէջ, ժողովներուն մէջ, եկեղեցիներուն մէջ մարդկութիւնը ըզ ձեզ իւր փաստաբանը ընտրած է:

Կանգնեցէք բեմը, կանգնեցէք մարդկութիւնը:

Թէ նախախնամութիւնը ձեր լեզուին մէջ մի ջիլ աւելի դրած է, գիտցած եղէք, զուրալի համար տուած է 'զայն:

Զ

ՀՈԳԻԻ ԱՆՄԱՀՈՒԹԻՆ.

(Հասգիւղ, 1869, հոկտեմբեր 26.)

Ե՛ղբայրներ,

Այս խորհրդաւոր լռութիւնը որ ըզ մեզ կը շրջապատէ, այս արտասուահիւս տխրութիւնը որ, մահի խորշակին պէս, կը թառամեցուցէ ամեն ժպիտ, այս այտերը որոց վրայ մի սեւ ձեռք անցած կը թուի, այս մերթ ընդ մերթ լսուող անյուսութիւնի սրտաբուխ հառաչները, այս մարած աչքերը որք մի աղիողորմ բողոք արտայայտող երկնապիտ դիրը առած են, եւ այս ցերեկ ատեն պլպլացող գիշերային ջահերը, որք մի վաղամեռիկ պատանիի կեանքի առաւօտին հետ մահի երեկոյին խառնուողը այնքան ճշտութիւնով եւ այնքան սրտաբեկ ներշնչողութիւնով կը բացատրեն, այս ամենը, աւաղ, արդէն բաւական պերճախօս է համոզելի համար թէ մի կորուստ կայ. եւ այս սուգի վերմակին տակէ դուրս սլացող անխորհրդաւոր նակատը կը յաւելէ թէ կորուստը տարաժամ է . . . :

Մարդ մի տեսակ յամառութիւնով կ'ընդունի այն կորուստը 'զոր նախագուշակած է. իսկ լրմումով եւ յուսահատ կամակցութիւնով կ'ընդունի 'զայն որում չ'էր մնար: Վիշտը, որոյ բեռին տակ ձեր նակատները կը հակին, այնչափ աւելի դառն է որչափ անակնկալ. եւ ես, որ չ'եմ կրօնաւոր, չ'եմ զար ըզ ձեզ սմա համար նախատել: Կ'ուզեմ ձեր կսկիծը մի պահիկ աճեցուցելով իսկ ամոթել անզգալապէս, անշնչացած պատանիին ազնիւ ազնիւ յատկութիւնները յիշելով. զի «Կսկիծը յուշ կ'ածէ» ասաւ մի հանճար:

Ֆինճանճեան պատանին ի նոցանէ էր որոց օժիտ կամ ժառանգութիւն է բարութիւնը: Իւր ազնիւ եւ ամբիծ սիրտովը աջողած էր մագնիսել իւր ընկերակիցներին համակրութիւնը, որպէս պիտի աջողէր անշուշտ ապագային մէջ՝ երբ ընկերական բազմածուփ յորձանին մէջ խառնուէր: Իւր մանկական փոքրիկ ձախողութիւններին մէջ արի, դէպ մի գերագոյն նակատագիր կը թուէր սլանալ իւր հոգին. հազիւ նոյնչափ կարեւորութիւն կ'ընծայէր իւր աջողութիւններին, որոց վրայ լոկ մի վաղանցիկ ժպիտ կ'արձակէր. սոքա պատանի ուսանողների քով հազուագիւտ յատկութիւններ են, որք արդէն նորա ապագայ մեծութիւնը կրնային երաշխաւորել: Իւր անարատ ոգին, մի բարէպաշտ մայրի ծունկերի խորանին վրայ ընտելացած լինելով կրօնական սքանչելի զգացումների հետ, Ցաւիտենականին բոլորանուէր սպաս հարկանելն էր իւր գլխաւոր հանոյքը, եւ ասուածասիրութիւնի բուրվառին մէջ յաւէ՛տ ծխող նա մի խունկ էր անսպառ. այս սուրբ վայրերը իւր աղօթքներին հրեշտակային շունչովը զմռսուած են տակաւին:

Մի մեծ ապագայի նախատօն այս ներկայը էր ոչնչանայ տարաժամ. էր դիակնանայ այս նակատը որ գործակից պիտի կանգնէր մարդին վե-

ռածնութիւնին. Էր, մինչ դու իսկ, ով երկին, այդ մեծ գործին կը սպասես անհամբեր: Նախախնամութիւնը, այն տիեզերական մայրը, որ չնչին թռչնիկին լերկ բեւերին փետուր կը հայթայթէ 'զայն պահպանելի համար ցուրտէն, Էր գերեզմանին յաւիտենական ցրտութիւնէն չը պահեց ըզ քեզ, ով պատանի. ապրիլի համար քեզ կեանք տալէ յետոյ՝ Էր մահէն չ'ազատեց ըզ քեզ. ան, Էր . . . : Ըզ քեզ իւր փառքը երգելի համար միթէ խլեց մեր գիրկէն. ոչ ինքն է որ քիւր քերոքներ ունի շուրջանակի. եւ ինչ հարկ քո երգերին, մինչ ամեն վայրկեան անքիւ մրմունջներ կը վերապատանան երկիրէս . . . եւ Էր տալ 'զայն եւ ես առնուլ նոյնժամայն. ինչ, զոյգիր 'զայն ստեղծելիդ, ով երկնային իմաստութիւն: Ա՜հ, հոս է որ իմաստասէրը կը խաչաձեւէ իւր բազուկները, կուրծքին վրայ կը հակէ գլուխը եւ կը լռէ երկրապիտ, նա՝ որ չը գիտէ շլանալ, ցարանալ, եւ մանաւանդ պապանձիլ . . . : Հոս է որ Կրօնն իսկ, մանիանին եւ դագաղին վրայ բեւաստարած այն սփոփի հրեշտակը, իւր անշարժ պատուանդանին վրայ խախտիլ կը բուի, եւ մեր վիշտը մեղմելի տեղ՝ նոր շիքեր կը յաւելէ մեր արտասուքներին առուակին մէջ . . . — օհ, քրիստոնեայ լինիլէ յառաջ՝ մարդ եմք մեք . . . : Հոս, հոս է որ կամ կոյր հաւատ կամ յուսահատ տարակոյս կը ստանայ մարդ: Ստեփաննոս, տուր մեզ մի մաս այն հաւատէն որ այնքան առատ էր քո մէջ: Բայց անօգուտ են այս մարդկային բացագանչութիւնները. բերեւս, ուրիշ շատերի պէս,

մի անբափանցելի գաղտնիք է այս, որոյ վրայ հոս ճառել ներելի եւ կարելի չ'է ինձ:

Սակայն, մի գիսաւորի պէս անցաւ նա մեր հորիզոնէն, ե՛ղբայրներ. օգուտ քաղեմք ուրեմն այն լոյսէն 'զոր իւր ետեւ կը թողու: Իւր վարքը կեանքի անապատին մէջ մի լուսեղէն սիւն թող լինի մեր առջեւ. իւր յիշատակը թող մեր սիրտերը օծէ, եւ մի մատեան լինի մշտաբաց որոյ առաքինաւէտ էջերը ընդօրինակել ջանամք այս կենցաղին մէջ, ուր, աւաղ, շատ պէտք ունիմք մենտորների. եւ թէ այսպէս վարուիմք, մի փառոս պիտի հանդիսանայ Ստեփաննոս, որ իւր կեանքի ովկիանին եզրը մի առաջին նշոյլ սփռելով շիջաւ՝ մեր կեանքին մէջ շեղազոյն մի երկրորդ ցոլացում սկսիլի համար:

Հսկէ մեր վրայ, ով մանկական ոգի, որ, թերեւս այս վայրկեանին, անկենդան այտերիդ տակ կը խնդաս մեր ունայն վիշտերին վրայ, եւ խաւարած բիբերիդ տակ կը ժպտիս ի տես յաւիտենականութիւնի ճանանչին, որ լոյսի շաւիղ կը հորդէ ոտքերիդ առջեւ՝ ըզ քեզ կարապետելի համար հոն ուր հոգիիդ աչքերը սեւեռած ննջեցիր:

Է

ՄԱՀԻ ՊԱՏԻԺ.

(Բէրա, 1870, փեբրվար 11.)

Պարոնցեր,

Դռօբմանի լուսանկարը տեսայ :

Այն մեծ նկատցեր էն է իւր նկատը որոց վրայ մատը դնելով կը ստեղծէ Աստուած զ նոսա, որպէս կ'ասէ չը գիտեմ որ բանաստեղծը: Իւր կոպերին տակ, որոց ծայրերը վար կ'իջնեն ուղղագիծ, երկու մանրիկ բիբերի մանիկները կ'երեւին. նայուածքին մէջ մարմարէ յուսահատութիւնը եւ նորա ծնած արհամարհոց անտարբերութիւնը իրարի կը խառնուին. աչքեր չ'են կենդանի որ կը նային, արձանի աչքեր են որ կը յառին, կը պաղին: Երիքացած համր այտերը կը ցուցնեն թէ պարկեշտութիւնը իւր ծիրանի թեւիկներովը չ'է տաքցուցած երբէք զ նոսա : Իւր պերեւեշտներին վրայ Ժամանակը աղուամազի թեթեւ հետքեր սրփռելով անցած է: Շուրթերը, բռնի իրարի մէջ մտած կառչած, մարդկութիւնին դէմ տամուկ եւ ցուրտ շանթեր ունին, եւ մի զաղտ լեզու որ չ'է խօսիր, կը շարժի, եւ որոյ շարժումը հայհոյութիւն է միայն: Նա մի ըմբիշի ջլուտ, մսուտ վիզը ունի: —Այժմ, նկարիչի պէս, որ, մի դէմքի զանազան մասերը աւարտելէ յետոյ, հանրական վրձինով

կը միաւորէ զ նոսա, Դռօբմանի մարմնային մասնաւորութիւնները ի մի ձուլելով՝ կ'ունենամք մի ուժեղ երիտասարդ, ծանր դէպքերի տակ ընկնուած :

Այս մարդը տասինամեայ էր: Ին մարդ սպանեց: Գլխատուեցաւ :

Այս բառերը լսող զանազան դասի մարդեր բնականապէս զանազան խոհերի կը դառնան: Զարմանալի չ'է այս. զի որ բանը մի տեսիլի տակ երեւած է մարդերին. այն ատենին մէջ, որ երկինքի կապոյտը ոսկէխատոյտ կը պնդէ, մի ատուածուրիւն տեսան մոգերը եւ մեռեալների հոգի նշմարեցին բերբոլները, մինչ գիտունները հողի կոյտ հուչակեցին 'զայն: Որպէս ամեն աչք իւր մասնաւոր տեսնելի կերպը, նոյնպէս եւ ամեն նկատ իւր մասնաւոր խորհիլի կերպը ունի: Ինչ որ կինը կը խորհի ոնրագործին վրայ՝ չ'է այն 'զոր այրը կը խորհի, եւ ինչ որ այրը կը խորհի՝ չ'է այն 'զոր իմաստասէրը կ'որոնէ :

Երջանիկ եմ ապահէն զի կրցած եմ 'զիս կանուխ հաշտեցուցնել այն մեծ ոգիներին հետ, որ այս մի դարէ աւելի է որ մի մեծ խնդիրի խաչակրութիւնը կը ստանձնեն եւ տարբեր կլիմայների, զանազան ժամանակների եւ անունների տակ միեւնոյն փառքով կը մարտնչին. որ Իտալիան մէջ Վիքօ կ'ասուին եւ կը համոզեն, Պէքքարիա կ'ասուին եւ կը տրամաբանեն, Ֆիլանգիէրի կ'ասուին եւ կ'օրինադրեն, Ֆրանսայի մէջ Մօնդէսքիէօ կ'ասուին եւ կը յիշեն, Դիւրկօ կ'ասուին եւ կը վարեն, Լամարդին կ'ասուին եւ կը յու-

զեն, Նոր—Աշխարհին մէջ Ֆռանկլին կ'ասուին եւ լոյս կը տան, Նոր—Դարին մէջ Իւկօ կ'ասուին եւ շանթ կը տեղան :

Այս հանճարի մարդերը սպառած են ամեն փաստ. ուստի, անխոնջութիւն է միտի արծիւներին ըզ հետ պնդիլ՝ երկու փետուր ունենալով իր թեւ. անխոնջութիւն է նետուիլ այն ջերմ խնդիրներին մէջ՝ ուր ձայն ունենալի համար իմաստասէրի միտ, պերճախօսի լեզու, բանաստեղծի սիրտ, իրաւագէտի աչք ունենալ պէտք է: Սակայն, փորձեմք. տղայն է որ, անհոգ եւ ծիծաղկոտ, իւր ձեռքը դէպ հուր կը ձգէ :

—Մարդասպանէն վեր, զոհերէն վեր, կախաղանէն կամ կառափնատէն վեր, մի իրողութիւն կայ որում հարկ է վերածել ամեն մասնաւորութիւն. «Մահի պատիժ»ն է այն :

Տասուքերորդ դարին մէջ մարմնական տանջանքին բարձումէն ի վեր, ահա մի դար է որ խորհող անձեր Մահի պատիժին ի սպառ բարձումը կը պահանջեն: Աւելորդ է հոս բուել նոցա փաստերը. աւելորդ է ասել թէ որպէս նոքա կը հաստատեն մարդկային կեանքին անբռնաբարելի լինելը, եւ կ'եզրակացուցնեն թէ մարդ կըրնայ պատժել մարդը, այլ չը կրնայ ջնջել 'զայն: Համոզուիլ ուզողները կը դրկեմք մեծին Իւկօի, որ անշուշտ դարիս Աւեստաանը գրեց իւր մոգական գրիչովը, որ մի շանթ է ինքնին՝ չը գիտեմ ո՞ր կիկղոպէն ձուլուած :

Մեք, մի բանձրացեալ օրինակի վրայ խորհիլով, 'զայս միայն կ'ասեմք թէ ո՞վ կրնայ ապագայէն յառաջ վազել եւ հաստատել թէ մի կեանք այնպէս պիտի վերջանայ որպէս սկսեցաւ. ո՞վ կը համարձակի երաշխաւորել անծանօթին. նա, որ մի քսանամեայ Դռօքման կը գլխատէ, կրնա՞յ համոզել ըզ մեզ թէ, նորա արեւէն թերեւս եօքսուն տարի մարելով, վնաս չ'է պատճառած բնաւ: «Բայց, պիտի ասեն, նորա կեանքը կրնայ մահաբեր լինիլ նոր Քէնֆերի.» հաւանական է այդ. այլ ո՞վ կ'ասէ թէ պէտք է ազատ թողուլ մարդասպանը. բանտի մէջ պահեցէք 'զայն, եւ մի պատկերազարդ *Լէ Միզէռապլ* տուէք որ կարդա՞յ . . . :

Ամեն անգամ որ Կիյեոդէնի գործին կը հանչէ, ամեն անգամ որ նորա սանդուղներէն վեր կ'ելնէ մի մարդ, ամեն անգամ որ այն ճարտար դանակը մի կեանք կը չֆացունէ անիսօսուկ, ոչ ոք կրնայ իւր հոգիին մէջ թաղել այն ձայնը որ կը բարձրանայ 'զինքն ալ մեղապարտ հոչակելի համար: Ցանցաւորը, որ կառափնատ կ'ելնէ, իւր եսեւէ կը քաշէ մարդկութիւնը իր ստուեր. բանձրացեալն է որ կ'անկնի, վերացեալն է որ կը պատժուի: Այն առոյգ արիւնին մէջ, որ դանակին սայրէն կը կաթկթի որպէս ջուրը թիին ծայրէն, Ընկերութիւնը իւր ոճրագործութիւնին փաստը կը կարդայ, եւ մի անկող եղբայրի արիւնին անձնիւր շիթը մեր ամենին ճակատին վրայ մեղսակցութիւնի կարմիր կնիքը տաք տաք կը սեւեռէ :

Ամեն անգամ որ եղեռնագործը դատապարտուած չ'է որպէս պէտք է, ամեն անգամ որ սատկի համար կը զարկնէ, մեր ամենին սիրտին կը

տայ այն մահաբեր հարուածը, եւ մարդասէրին միտը դէպ Հօդվիլ—Հաուզ կը սլանայ . . . :

Պարոնոներ, գիտեմ, պիտի զարմանան շատեր, եւ թերեւս պիտի կըսամբեն 'զիս, պաշտպան նը-կատելով 'զիս Դրօբմանի, այն «հրէշ»ին, որպէս կ'անուանեն 'զայն դասականները՝ Բանդէնի ոճիրը յիշելով: Բայց թող գիտնան թէ, ոճրագործը պաշտպանելով, ես մարդը կը պաշտպանեմ:—Օ՜հ, մի՛ պնդէք թէ մի հրէշ է նա. մի՛ պնդէք թէ ուրիշ կաւով շինուած է նա. մի՛ պնդէք թէ «մայրիկ, մայրիկ» գոչող մանուկներին կուրծքը միսեց անտարբեր այն աղիտաբեր դանակը, որ նոցա մատղաշ ոսկրներին մէջ երկու կտոր եղաւ . . . ՕՀ, մարդկութիւնին պատիւին խնայեցէք: Ես չ'եմ սիրեր եւ չը կրնամ հաւատալ թէ այսչափ նուաստանայ մարդը, Գերագոյն Արարիչին այդ գերագոյն արարածը, 'զոր այնքան բարձր գոյների տակ կը տեսնեմ եւ որոյ վսեմութիւնը կը դաւանիմ աշտ լանջիս վրայ դրած եւ աչքս դէպ երկին համբարձած: Օ՜հ, մի՛ դատապարտէք. գիտէք ինչ է մոլորումը. գիտէք ինչ պաղ քիրտեր կը քրտնի այն ճգնաժամին մէջ մոլորեալին ճակատը . . . : Ա՜հ, ինչ հետս է, մի խաւ ի վար մուտքակ ուսը առած, քաղցը անցուցած, կրակարանին գլուխը անցած, վնիռ հատանել թէ հրէշ է նա. փայլուն բառ. այլ քննեցէք 'զոր կը դատապարտէք, եւ սասանիլով պիտի տեսնէք թէ նորա ափին մէջ դուռ դրած էք այն դանակը:

Այո, մեք այն դանակը յանձնեցինք յանցաւորին. «զուրկ» ասինք, եւ երբ զարկաւ՝ «էր զարկար» գոչեցինք: Օ՜հ, ասէք ինձ, մարդկութիւնը յանցաւոր չ'է երբ կը թողու որ բռնաբարութիւնի մէջ տառապի մի պատանի, մի տասնամեայ տղայ, որ կը մաշի՝ «ախ, 500 Ֆրանկ ունենայի» ձայնելով . . . : Եւ այսուհետեւ, թող գան համոզել 'զիս որ *Լէ միզէռապլը* չը սիրեմ. թող պապը Ժան Վալժանի հասակէն աւելի երկար մի *հնտէֆս* հրատարակէ եւ բանադրէ այդ մատեանը: Երանի՜ նմա որ ժամանակին վեհավճիռը ունի: Մի Ժան—Պաղիսդ Դրօբման կ'ելնէ, եւ կ'անմահացունէ Վիգոր Իւկօ:

Ինչ որ ալ լինի, ոճրագործը մի մոլորեալ է. եւ մոլորեալին կից չ'են տար, ձեռք կը տան:

Սակայն, դիւրաբորբոք Ֆրանսացին ահա նոր տեսարան կը բանայ մեր առջեւ. ամբոխի տեսարան, ուր միլիոնաւոր մարդեր մի անկեալի վրայ իւրեանց զայրոյթը կը թափեն, եւ «ի խա՜չ, ի խա՜չ» կ'աղաղակեն: Ջ'եմ ուզեր մասնաւորութիւններուն մէջ թարթափիլ. ուստի եւ կ'ազատեմ ունկնդիրներս այդ անհաւասար մարտին փոքրոգի պարագայներէն. օր թէ պատմութիւնն ալ մի տխուր էջ զոնէր Ֆրանսայի պատիւին. սակայն, Ճշմարտութիւնը կծծի է: — Հոս, խորհրդոյին առջեւ գաղափարներուն նոր շաւիղ կը պարզի. որպէս շատերի երջանկութիւն կ'առնէ մի սին բառ, *խան, գեներալ, բաշա*, նոյնպէս եւ շատերի թշուառութիւն եւ մոլորում կը պատճառեն զանազան բառեր. ամբողջ ազգեր խաբուեցան բառերով (Յուլիոս Կեսար քաջ գիտէր 'զայս), եւ մի բառ մայր եղաւ բիւր աղէտի: Հակառակ Պ. Ռօմիէօի փցուն

փասեերին, գաղափարները մեծ ազդեցութիւն ունին ժողովուրդների վրայ. ուստի, ծուռ հասկացուած մի գաղափարի տրուած մի թիւր անուն կրնայ ցաւալի արդասիք ունենալ: Հին դարերին մէջ, մարդասպանութիւնի գաղափարը «դիւցազնութիւն» անունով արտայայտեցին. եւ յայտ է թէ այս բառը ինչեր տուաւ գործել. մի կարմիր պատան փռեմք նոցա վրայ, եւ ներկային անցնիմք: Թէ մի ուրիշ անհատ, տարբեր բեմի վրայ, կատարէր ինչ որ կատարեց այն մարդը որոյ անունը, աւա՜ղ, մի զէնք անա կը լինի արդարութիւնի բրնամիներին ձեռքը, ո՞չ ապահէն աշխարհ «արի» պիտի կոչէր 'զայն. թէ կըտամբես Ֆռանսացիներին իւրեանց փոքրոգի կատաղութիւնը, «արդար զայրոյթ» կ'անուանեն 'զայն. Դուրման, որ մինչեւ իւր վերջին շունչը ծածկեց իւր ոճրակիցները, «յամառ» կոչուեցաւ, մինչ մի ուրիշ անձ «անյողդողդ» պիտի կոչուէր: Եւ դեռ ինչ փայլուն բառեր ունիմք, որոց իմաստասիրական բրնութիւնը իւրեանց դատապարտութիւնն է. նենգութիւնը ճարտարութիւն, ստախօսութիւնը դիւանագիտութիւն, վատութիւնը խոհեմութիւն կ'անուանուին մարդկային զարմանալի բառարանին մէջ. լուծէ բարի նախանձ, հայրենիք, ազատութիւն, յեղափոխում, մահի պատիժ, պատերազմ բառերը. ինչ կը զնես. — Պատմագէտ իմաստասէրը քաջ գիտէ 'զայն:

«Ցամառ» ասինք. կանգ առնումք այս բառին վրայ, որ մի քանի մարդերի ցասումը անեցուցելով անեցուց: — Շատեր, մի անձ ներբողելի համար, այնպիսի՛ յատկութիւններ կը վերագրեն նմա՝ որ բերութիւն են, եւ ոչ աւելի. շատեր ալ, պարսաւի համար, այնպիսի մոլութիւններ կը կարծեն յատկացուցել ենթակային՝ որ արդարեւ կը փառաւորեն 'զայն: Զրկեալին յամառութիւնը այս վերջիններէն է գուցէ. զի մի վայրկեան կայ ուր մարդը 'զինքն օրէնքէն աւելի բարձր կը զնէ, մի վայրկեան ուր հոգին, իւր նախնի վեհութիւնը սանալով, 'զինքն ամեն տեսակ արուեստակեալ կանոններէ վեր կը զգայ, եւ իւր ոգիին մէջ մի գերագոյն բան կը հառաջայքէ. աստուածութիւնը մարդկութիւնին հետ կը զրկախառնի . . . այս վայրկեանին մէջ, այն մարդը, որ իւր անմեղութիւնին գիտակից է, աւագ աչքով կը նայի որոց կը դատապարտեն 'զայն եւ պատասխանի արժան կը դատէ ըզ նոսա, որպէս Յիսուս Պիղատոսը. այս վայրկեանին մէջ, դատապարտեալը, որ թերեւս արդարութիւնը միայն երկիրի վրայ երկնային բան կը հաւատար, իւր բոլոր հաւատը կը կորցունէ, կը տեսնէ մարդը իւր յետին գծծութիւնին հասած, եւ կրնայ դէպ գծուծը խոնարհիլ նա որ դէպ բարձրը կը թռչի լանջին տակէ: Այն մարդը, որ իւր գլուխը դէպ Աստուած կը բարձրացունէ, իւր ոտքը կը դարձունէ աշխարհի: Այս վայրկեանը, որոյ մակդիրը մեզ կը պակսի, հաւատի եւ գաղափարի մարտիրոսները ունեցան 'զայն. եւ ապշեցաւ մարդը, իւր նմանին վրայ այնքան մեծութիւն տեսնելով:

Բայց, պարոններ, այն թռու
ը, որ թերեւս իւր անմեղութիւնին գիտակցութիւնովը դառնա-

ցած էր մարդերին դէմ, որ իւր սիրտը խաւարցուցած էր աշխարհի արդարութիւնին առջեւ՝ որոյ պաշտօնեայները հազիւ կիսկտուր պատասխանների արժանի կը համարէր, եւ 'զորս կը հեգնէր՝ հաւատացուցելով նոցա մի բան 'զոր երկու ժամէն կը հերքէր, այն բռնաւորը, 'զոր «հրէշ» անունի տակ կ'ուզեն ճանաչել մեր հակառակորդները, դեռ ունի մի սիրտ որ իւր վրայէ վեհանձնապէս կը բռնվէ այդ մակդիրը: Նախախնամութիւնը, այն մեծ մեծ դէպքերին տակ, մեծ պահել կ'ուզէր զոգ իւր ձեռակերտը:

Երբ մարդը աչքերը լոյսին կը բանայ, մի քանի ճանաչներ կը սպրդին իւր սիրտին մէջ, սէրի մանուկ ճանաչներ, որք անձնիւր հոգիի խորշին մէջ կը շողան, ամենէն անտարբեր, ամենէն հեղձամղձուկ, ամենէն դժոխային վայրկեանների մէջ անգամ իւրեանց փայլը կը պահեն, եւ գերեզմանին եզրն ալ, դեռ կայտառ, ծերին մուր աչքերէն արտօսր կը խլեն: Այս ճանաչներին առաջինը մայրական սէրն է:

Մայրական սէ՛ր. ամեն սիրտի առաջին բռիչն է այն. նովաւ է որ ի մէնջ դուրս ալ կ'ապրիմք, այս անարգ կաւէն վեր կը սլանամք, եւ Արարիչին շունչը կը զգամք մեր մէջ. նա մարդին մէջ անձնաւորութիւնն է սահնչանքի եւ զորովի, որք ըզ մեզ կը բարձրացուցեն, կը վսեմացուցեն, անձուկ եւ ցամաք նիւթէն վեր հանելով՝ բարոյական մի գերազոյն էութիւնի կը մօտեցուցեն, եւ մեզ մի երկրորդ կեանք կը տան, կեանք վեհագոյն քան 'զոր Բնութիւնը կը բաշխէ կուրապէս. նա

աղբիւրն է այն մեծ զգացումներին՝ որք մարդին անասունիններէն գերազոյն առաւելութիւնները կ'ապացուցեն, Պ. Շ. Միսմէռի կենդանաբանական փաստերին հակառակ. նա հաշակն է սէրին, 'զոր նախախնամութիւնը ստեղծեց իւր հրաշակերտները անմահացուցելի համար: Մայրական սէ՛ր. հարկ է բացատրել 'զայն. ամեն որ, որ չ'է ինքնաբոյս, կը զգայ 'զայդ իւր մէջ. սիրտիդ հարց, եւ նորա բաբախումները գորովալից դասեր պիտի տան քեզ այս մասին. յիմարութիւն է քարոզել ինչ որ հանրածանօթ է, այլ ինձ իմ հաւատը չ'է մարթ լռել: Մայրական սէ՛ր. եւ ոմն չ'է զգար 'զայն թէ ոչ անասունը, որ իւր մայրը կը թողու երբ ալ պէտք չ'ունի նմա. իսկ մարդը կը յուզուի երբ իւր մայրը տեսնէ, եւ աւելի կը յուզուի երբ յիշէ 'զայն. զի գերեզմանի մէջ փակուած մայրին յիշատակը անմահ է միշտ որդիներին մէջ. ես որքեր կը ճանաչեմ որք մի մայր կամ մի մայրի պատկեր տեսնելով կը յուզուին եւ կը լան. մայրական սէրը նոցա մատղաշ բիբերէն բիւրեղէ մի զոյգ մանրադիտական մանիկ կը կախէ նոյնժամայն . . . : Մայրական սէ՛ր. նա մեր հոգիին մէջ զգացումների մի համաստեղութիւն կը գոյաւորէ. երախտագիտութիւն, սէր, բարեգործութիւն, գութ, հաւատ եւ դեռ շատեր այդ կոյս սէրէն կը բխին. որչափ շատ զգամք 'զայն, այնչափ հզօր կը լինի առաքինութիւնը մեր մէջ. այս համոզումը համարձակութիւն կը տայ ինձ գոչել աներկմիտ. «Ասէ՛ ինձ որչափ մայրդ կը սիրես, եւ ես ասեմ քեզ որչափ բարի ես:»

Ուշադրութիւն, պարոնցներ, եւ մանաւանդ դուք, անհաշտելի Կաղոնցներ: — Ոչ, հրէշ չ'է բրշուառը. գլխաւեալն իսկ մի արիւնոտ պատիւ ունի. հրէշ չ'է նա որ իւր մայրը կը պաշտէ: Եւ, ով գիտէ, թերեւս այդ սէրը ոճիրի մղեց 'զայն. աղքատ էր մայրը, եւ որդին չ'էր ուզեր որ նեղուի նա. քանի Ֆռանգցոցը կը յիշէք անշուշտ: Երբ ձեր մայրին անունը տաք, անտարբեր կը կենաք, կը յօրանջէք, կ'ընդհատէք, ուս կը բրթէք. Դուրման (սգալով կ'արտասանեմ այս անունը) այդպէս չ'էր, ե՛ղբայրներ: Երբ «մայր» բառը լսէր, կը փղձկէր անմիջապէս. կառափնատին մինչեւ վերին ատիճանը իւր մայրին յիշատակովը կը զեղուր հոգին. մայրասէր արտօր խառնուեցաւ իւր արիւնին անձնիւր շիթին մէջ: Նա մի ազնիւ դաս կը տայ աշխարհի. քառասուն միլիոն Ֆռանսացիներին մէջ քառասուն մարդ չ'է զտնուիր որ այնքան զգայուն լինի ծնողի վրայ: Եւ կ'ասէք թէ մի հրէշ էր նա, եւ ոչ մոլորեալ. եւ կը պրնդէք թէ «մայրիկ, մայրիկ» գոչող մանուկները խողխողեց անգթապէս. լռեցէք, պարոնցներ. սուտ կը խօսիք:

Որչափ այլափոխուի մի սիրտ, որչափ գծծութիւնի եւ ոճիրի տիղմին հետ խմորուի, դեռ մի նախնական բան ունի որ չ'է կորչիր: Զը գիտեմ ինչ է այդ. այլ գիտեմ թէ մի բան է որ մարդին մէջ կայ, եւ մեծ մարդին մէջ շատ կայ: Աստուած մեր սիրտը կը շօշափէ անշուշտ, եւ յոկելի կ'անէ 'զայն. եւ ուր ձեռք դնէ Աստուած, հոն մի երկնային բան կը թողու: Ամօթ նոցա

որ մի մարդի հրէշ անունը կը տան, եւ երբ այն հրէշ կարծուածին վրայ տեսնեն մի վսեմ զգացում 'զոր չ'ունին, չ'են շիկնիր, կը յամառին: Կոյր յամառութիւնը մի ձախող զէնք է որ աւելի գործածողին կը վնասէ քան որուն դէմ կը գործածուի:

Ինչ ալ ասէ Պ. Դուս, իմաստասիրական մի փտած դրութիւնի այդ նոր ջատագովը, մի պարտուած բանակի այդ վերջին մարտիկը, դարձեալ մեր օրէնքները շինծու են մեծ մասով եւ ոչ բնական: Մեր նենգիմ օրէնքները, որ արդարութիւնին քանցին տակ կը յոխորտան, այն գերազոյն արդարութիւնէն դեռ շատ վար են: Երբ մարդկային օրէնքը կը զարկէ արդարութիւնին անունովը, կայ Ոք որ մեր հարուածները կը համբէ. Արդարութիւնը հարուածեալին առջեւ կ'ելնէ. Աստուած, ձեռքը նակատին վրայ, մի վայրկեան կը խորհի ոճրագործին համար . . . :

Ես մինչեւ վերջը պիտի հաւատամ թէ մի մոլորեալ է եղեռնագործը. եւ կը վախեմ թէ երկրային արդարութիւնը, նորա վրայ բազուկ բարձալով, մի անմեղ կը զարկէ:

Մինչեւ վերջը պիտի բողոքեմ մահի պատիժին դէմ. տկար է ձայնս, գիտեմ. այլ մի արդար բողոք զօրաւոր է միտս:

Իմ նպատակը, պարոնցներ, Դուրմանի փաստաբան կանգնիլ չ'է. մեր արդարութիւնին վերջին փաստէն յետոյ անօգուտ է ամեն պաշտպանութիւն. ցուցնել կ'ուզէի որ թէ Դուրման իսկ, այդ տիպ գերական հակակրութիւնի մարդը, կրնայ փաստ

տեր հայրայրել, որ 'զինքն յաւէտ կամ նուազ կ'արդարացուցեն, որչափ աւելի փաստեր ունին անշուշտ աւելի անմեղ ոճրագործները, որպէս Մօնշաւմօն, 'զոր Շառլ Իկօ պաշտպանեց, եւ ուրիշ մարդասպաններ: Այլ այս փաստերը կը կորչին կառափնաւոր սրտապախ նիչին մէջ, երբ կը նունչէ իբր մի սայլ որ մի մարդկային էութիւն առած մեր երազներին աշխարհը կը տանի: Կը տանի . . . անմեղ էր գուցէ. որովհետ նոգ. ժողովուրդին բարի օրինակ եղաւ նա . . . :

Հոս Ժիւլ Սիմոնի յիշատակը իմ մէջ կը զարթի: Այդ հոյակապ իմաստասէրը անցած տարի «Մահի պատիժ» տիտղոսով մի վէպ հրատարակեց, շատ պարզ եւ սոյգ: Նոքա, որ 'զայն կարդալի հետաքրքրութիւնը ունեցան, գուցէ դեռ չ'են մոռցած մահի դատապարտուած Նայլ եղբայրները, որոց գլխատումը, մի բացառիկ պարագայով, յապաղուեցաւ քիչ ատենի համար, սոյն պահին մէջ հանգչուեցաւ նոցա անմեղութիւնը, եւ ազրեցան: Թէ տեղի չ'ունենար այն երիցս օրհնեալ յապաղումը, որպէս եւ չ'ունի երբէք ուրիշ ատեն, սպանուած պիտի լինէին Նայլերը եւ նոցա անմեղութիւնը անկարող պիտի լինէր նոցա յարութիւն տալի :

Վերցուցեմք մահի պատիժը: Ամենէն մեծ ոճիրին օրինաւոր է ամենէն մեծ պատիժը տալ, կ'ասէք. լաւ. նոյնչափ ուրեմն օրինաւոր է թէ մի աղքատ պարտական իբր գերի ծախեմք եւ նորա գինը առնումք իբր վնաս. հոս մի ազատութիւն է որ կը տուժուի, հոն մի կեանք է որ կը տուժուի,

եւ ազատութիւնը կեանքին օրինաւոր վայելումն է. նոյնչափ ուրեմն օրինաւոր է թէ կամայ վնասեմք նմա որ ակամայ վնասեց մեզ, եւ ծովը նետեմք այն նաւապետը որոյ նաւին մէջէ մի քանի ուղեւորներ կորան ջրասոյզ՝ ալէկոծութիւնի ատեն. եւ ո՞ւր պիտի երթար այս լուսաւորեալ ընկերութիւնը. ինչ, հազիւ մի քայլ առաջա՝ հինգ հազար տարի ետ երթամք :

Վերցուցեմք մահի պատիժը: Ամենէն մեծ պատիժը կը հռչակէք 'զայն եւ մարդկային վերջին կարողութիւնը. այլ քանի՞ ծաղրելի կ'անէք 'զայդ: Ձեր այս մեծագոյն պատուհասին վրայ կը խնդան դատապարտեալները. չ'էք յիշեր, կառափնաւոր սանդուղներին վրայ նստած՝ խաղաղ կը ծխէր կամ զարէջուր կը խմէր երբեմն նա որ միայն մի վայրկեան ունէր ապրիլի. գինի կը տար Դուօրմանին, որպէս զի անզգայ լինի արուեստական մահին. կը մերժէ նա ժպտիլով, եւ սանդուղներէն վեր կ'ելնէ թեթեւոտն: Թէ դատապարտեալը կը կը զղջայ, 'զինքն ի ձէնջ յառաջ կը դատապարտէ նա, եւ խիղճին դատապարտութիւնը ամեն նախարակուած արարողութիւնէ հզօրագոյն է. թէ չ'է զղջար, նմա համար մահի պատիժը այնպէս է որպէս թէ չ'էր: Առաջինը իրաւունք ունի բողութիւնի. վերջինին համար տկար է կառափնատը :

Վերցուցեմք մահի պատիժը: Թող Օրէնքը սոսկում ցոյց տայ ոճրագործին իսկ կեանքը բառնալէ, արիւն թափելէ, եւ նորա դատը ժողովուրդին թող յանձնէ. հանրային կարծիքը այնպիսի

մի հաւաքական ոյժ ունի 'զոր չ'ունի երբէք այն մահացան դանակը. հանրային կարծիքն է որ օրէնքները կը հեղինակէ եւ կը վաւերացունէ. ուրեմն հեղինակին բողէք նոցա բարձրագոյն գործադրութիւնը: Երբ մի արիւնոտ յիշատակ ժողովրդային աչեանին յանձնէք, ամեն ձայն պիտի միանայ դատապարտելի համար 'զայն, եւ բիւր դատապարտութիւններ աւելի երջանիկ արդիւն կ'ընծայեն քան յանցաւորին միանգամ ընդ միշտ գլխատումը, որ կրնայ հանդիսականներին գուրը շարժել: «Գուր» բառը լաւ նշանակեցէք:

Ահա մի երիտասարդ որ պիտի գլխատուի. առողջ է. դեռ շատ օրեր պիտի ապրէր. մի ընտանիք ունի. մի ընտանիք ալ պիտի կազմէր. կ'ուզենէ արիւնարբու դանակը. մի ճիչ, մի ձայն, մի մրմունջ կը բարձրանայ. նորա խարտեաշ կամ սեւ խոպոպները կը ծածանին կենսախայտ արիւնի մէջ. մի յեսին շարժում, մի ջլածիգ սարսուռ դէմքին վրայ, եւ ողբերգութիւնը վերջացաւ . . . : Նա, որ ոչինչ կը զգայ այս տեսիլին առջեւ, ըստ ինձ՝ աւելի ոճրագործ է քան այն ոճրագործը. իսկ որ զգայուն է, որ մարդ է, չը կրնայ անտարբեր մնալ. կը զգայ մի սոսկում որ գուրի կը դառնայ, մի գուրբ որ կարեկցութիւնի կը շրջի, մի կարեկցութիւն որ համակրութիւնի կը փոխուի: Եւ այնուհետեւ, թէ Պէֆֆառիա է՝ քունը ափին կը յենու, թէ Լամառդին է՝ հոգի կը յուզէ, թէ Շառլ Իւկօ է՝ անէծք կը ժայթքէ եւ կը մռնչէ իբր կորիւն առիւծի, թէ Վիզդոռ Իւկօ է՝ մի հզօր ձայն կ'արձակէ եւ աշխարհ կ'ալէկոծէ: Թէ այդ գուրը չը զգայի, ես իսկ, ազատամիտներուն նկունը այլ ոչ նուազ եռանդունը, չը պիտի թոթովէի այս մի քանի խօսքերը եւ չը պիտի պարզէի զգացումներս հայ ազատասէրներուն ցանցառ թիւին առջեւ:

Եւ այդ գուրն է որ կը վարէ ըզ մեզ յանցաւորին ոնիրը թերեւցունելի ջանալ, Դուրմանի եղեռը մեղմացունել եւ նորա յատկութիւններին խոտորացոյցով նայիլ, մահի պատիժին բարձումը ստանալի համար: Եւ թէ վերնայ օրինական ըստանութիւնը, ամեն գրիչ կը միանայ մարդասպանին դէմ, եւ կը սկսի կարմիր եւ սեւ գոյներուն տակ նկարագրել Քէնֆերի ջարդը, որպէս զի դուրս ցայտէ ոնիրին բոլոր պժգանքը:

Ներեցէք, պարոններ, որ մի վայրկեան շեղիմ խնդիրին ընդհանուր կարգէն: — Մօտերս, *Ռէյխսդակին* այն անմահ նիստին մէջ ուր մահի պատիժը պատժուեցաւ եւ կառափնատը ամոռուեցաւ Հիւսիսային Գերմանիայի ծոցէն, արիւնի օրէնին ջերմ պաշտպանը, Պ. Ուակնրը, մի նշանաւոր փաստ տուաւ, նշանաւոր՝ տղայական իմաստովը միայն. «Թէ մահի պատիժը չը լինէր, մարտիրոսներ չը պիտի ունենայինք:» Ո՛վ Դեմոկրիտ, տիեզերական ժպիտդ Գերմանիայի լուրջ հորիզոնին վրայ ալ կը փայլի . . . : Նոյն նիստին մէջ, Պ. տը Պիսմառք ջանաց համոզել թէ ցը մահ բանտարկութիւնը աւելի ծանր պատիժ է քան վայրկենական գլխատումը: Մի քանիներուն համար ծանր է, շատերուն համար թեթեւ. մի կոյր պարագայ, մի մասնաւորութիւն է սա. խնդիրը աւելի բարձր է. մի սկիզբ կայ վէնի տակ, եւ

ոչ մի բացառում. կեանքի անբռնաբարելուբիւնի սկիզբը կ'ուզուի հաստատել. բանին յաղթանակը ձեռք բերել կ'ուզուի նիւթին վրայ: Կը մոռնայ 'զայս նրբամիտ կոմսը, եւ այդ միամիտ գաղափարը կը յայտնէ: Իմաստասիրութիւնը շատ յօժար չ'է երեւիր արդի դիւանագէտներին պսակ բոլորելի: Անցնիմք:

Վերցուցեմք մահի պատիժը: Իրականութիւն կը պահանջէ եւ ոչ վերացական փաստեր. չ'է բաւեր ձեզ ապացոյցը լսել, կ'ուզէք մանաւանդ օշափել 'զայն: Լաւ: Ահա պատմութիւնը, մարդկութիւնին այդ կենսագրութիւնը, ձեզ դէմ կը դաշնակցի մեզ հետ: Քանի դար եռ երթամ, քանի առաջէ հնութիւնին բաւիղին մէջ պատմութիւնին թելը բռնած, քանի հեռանամ այս վերածնութիւնի դարէն եւ Ծնունդներու դարերին մօտիմ, մի քայլ չը պիտի առնում առանց մի փաստ գտնելի ձեզ դէմ: — Ձեր հզօրագոյն փաստն է թէ կառափնատին անաւոր ներկայութիւնը ոճրագործներին թիւը կը պակսեցունէ: Մի ատեն կար, կը լսէմ, մի ատեն 'զոր պատմիչները «Միջին դար» կ'անուանեն. մի ատեն ուր աշխարհ մի խորհրդաւոր եւ զարմանալի առանցքի վրայ կը գլորէր. մի ատեն ուր Կրօնը անգամ, ազգերի այն գրառաս ծնողը, Մինովացուլ դարձած էր. կառափնատ չը կար յայնժամ. ոճրագործը չ'ունէր դիւրով գլխատուելի շնորհը. խաւար եւ խոնաւ բանտի մէջ կը դնէին 'զայն, գելարանի վրայ կը պառկեցունէին մերկանդամ, նորա ձեռքերը եւ ոտքերը կը պրկէին, երկու դահիճ արջառի ջիլերով

կը ծեծէին նորա մարմինը մինչեւ որ բոլորովին ծածկուէր թուխ կապոյտ գիծերով. եւ դեռ ինչ խստմնելի տանջանքներ գիտէին, որոց հազիւ մի փոքրիկ մասը կը յիշէ Պ. Լէոնառ Կալլուա. յետոյ, կիսամեռը կացինով կը ջարդէին, կամ չուանով կը խեղդէին, կամ ոտքին մի քար կապած՝ ջուրը կը նետէին. ադրիական խոնուն կոնակը եւ բիւզանդեան երազող ալիքը ինչ մութ վէպեր կը յիշեն՝ եւ իրարի կը փըսփըսան արդեօք...: Եւ սակայն, այն տգէտ դարերին մէջ, ուր այնքան անուելի սոռոգելիներ ունէր մահի պատիժը, մարդասպանները ամեն տեղ կը վխտային, մինչ այսօր հազուագիւտ են նոքա համեմատապէս: Ուրեմն կառափնատին ներկայութիւնը չ'է որ կը պակսեցունէ յանցաւորները, վարժարանին ներկայութիւնն է. եւ արդէն ինքնին հետզհետէ անօգուտ լինիլ կը սկսի նա:

Թէ միջին դարի վայրի տանջանքներին առջեւ մարդասպաններին թիւը անեցաւ եւ նոր դարի թեթեւ տանջանքներին առջեւ շատ զգալի կերպով նուազեցաւ, իրերին բնական տրամաբանութիւնէն կը հետեւի թէ աւելի եւս պիտի նուազի երբ տապարը վերնայ բոլորովին: Եւ արդարեւ ամենասոյգ հաշիւներ կը ցուցնեն այսօր թէ ոճիրները մեծ մասով վերցած են այն երջանիկ աշխարհներէն որոց մէջ մահի պատիժը ջնջուած է: Այս վիճակագրական նշմարտութիւնին ծը թէ ուշ դնէր կրակոս Ֆռանսացին, եւ կառափնատին կարմիր մահիկները խորտակէր իւր յեղափոխիչ բազուկովը. Ֆռանսայի, քաղաքակրթութիւնին այն

յանդուգն առաջապահին, կը սպասէ Եւրոպա. ամբոխ գաղղիական ազատասիրութիւնին՝ թէ տակաւին այսուհետեւ զուրգուրայ դահիճին վրայ: Կառափնատը խաղաքակրթութիւնին խրատուիլակն է. բաւ է որ նա վայրենի աշխարհներուն մէջ իւր բոյնը ունի: Մինչեւ Երբ տասիներորդ դարին արեւը մեր վայրագութիւնին կոխողին վրայ պաղ ճառանչներ սահեցունէ եւ հին բարբարոսութիւնին յիշատակարանը, միջին դարին մի արիւնոտ բեկորը շառագնիլով լուսաւորէ:

Վերցուցեմք մահի պատիժը: Ի՜նչ այլանդակ տրամաբանութիւն է սպանել 'զայն որ կը սպանէ, մի դիակի վրայ մի նոր դիակ նետել, պատժել ոճրագործը մի այնպիսի ոճիրի համար 'զոր մեք ալ նորա վրայ կը գործեմք, օրէնքներով նուիրագործել այն յանցը 'զոր ուրիշներին վրայ կը դատապարտեմք, միեւնոյն արդիւնքներին տարբեր աչքով նայիլ, միին ասել. «Այս օրէն է,» միւսին՝ «Այս եղեռ է:» Թէ բռնութիւնը ապօրինաւոր է, բռնաւորներուն վրայ բռնանալը օրինաւոր է. թէ գողութիւնը անիրաւ է, իրաւ չ'է գողէն գողել. թէ մարդասպանութիւնը ոճիր է, առաքինութիւն է կառափնատել եղեռնագործ մարդը: Զոհը մեղապարտ է կամ անմեղ, Դրօքման է կամ Կիւսդալ. պարագայները մեկուսի, արդիւնը միեւնոյն է անձնիւրին համար. երկուն ալ տարաժամ կը սիպուին կորցունել իւրեանց սահմանափակ օրերը, բայց մին մեր սուրովը:

Ոչ, կեանքին անբռնաբարելի լինիլը ծանուցանելի համար կեանք բռնաբարելով չը սկսիմք.

արեանհեղութիւնը արգելելի համար Արդարութիւնին աջը արիւնով չը ներկեմք. պէտք չ'է որ ընկերութիւնը մինչեւ ոճրագործը խոնարհի, եւ մարդերին գերագոյն միութիւնը հաւասարի մի պարտազանցի՝ միեւնոյն կարմիր ասիանանին վրայ: Մինչեւ Երբ Լասնէռի պէս մարդասպաններ, կառափնատին բարձրէն, պիտի համարձակին մեր նակատին բքել սա յաւիտենական բառերը. «Մեք սպանեցինք. դուք կը սպանէք. ալ պարտ չ'ունիմք իրարի:»

Վերցուցեմք, պարոններ, մահի պատիժը, 'զոր երեսուն կառավարութիւն ջնջած են արդէն: Ժ. Սիմոնի հզօր ձայնին իմ ձայնիկը յարելով, կը հարցնեմ թէ անսխալ եմք մեք: Զ'նն սխալիր երբէք դատաւորները եւ մի անմեղ ի մահ մատներ, որպէս շատ անգամ արած են ճշմարտապէս եւ ոչ ըստ վէպերի: Քանիներէ անմեղութիւնը իմացուած է նոցա շիրիմին վրայ. սակայն Արդարութիւնին սխալը անդարմանելի է: Եւ, գիտէք, քառասուն դար չը կրնան քաւել մի անմեղ արիւն, ընկերութիւնին անունովը թափուած եւ մեր խիղճին վրայ տաք տաք սրսկուած . . . : Դատաւորները կրնան սխալիլ, կ'ասէք, բայց օրէնքները անսխալ են: Քննելի է այդ: Ո՞վ կը յանդգնի պնդել թէ Լրժանտի երկրաչափական առածներին պէս անսխալ են օրէնքները: Մի ակնարկ անցեալին վրայ, եւ պիտի համոզուիք թէ մարդկային արդարութիւնը որչափ մոլորած է: Անսխալ են օրէնքները, որք մատնի, որսի գողերը անիւի, կրակի կը մատնէին, հայհոյիչներուն վերին

շուրջը, ներքին շուրջը, լեզուի կէսը եւ գլուխն իսկ կը կտրէին երբեմն, մի երեւակայական գիտութիւնի, այսինքն կախարդութիւնին, երեւակայական հեռամուտներեր փայտակոյտի վրայ կը հանէին միջին դարի մէջ. վայ էր այն այրերին եւ կիներին որ դեղնած դէմք ունէին. զի տգուեղութիւնը կախարդութիւնի յատկանիշ էր. Պ. Լուանտրի կը դրկեմք հեռաբրիրներեր. դժբախտապէս շատ ըզ նոսա պիտի ապշեցուցէ այս մասին: Անսխալ են օրէնքները, որ հաւատը կ'այրէին զի հաւատ էր, խիղճը կը խեղդէին զի խիղճ էր, միտը, ահ, խեռ միտը ի սուր կը մատնեցուցէին զի միտ էր եւ կը դատէր ըզ նոսա. եւ այս՝ զի գիտէին թէ հաւատ, խիղճ, միտ անկախ են եւ գերագոյն քան օրէնքը: Անսխալ են օրէնքները, որ անձնիւր քայլի պատիժ, անձնիւր ակնարկի պատիժ, անձնիւր ժպիտի պատիժ, անձնիւր խօսքի պատիժ, անձնիւր շարժումի պատիժ կը սահմանէին, մինչ զի Պատիժը, Արդարութիւնին բացատրութիւնը լինիլէ դադրիլով, վրէժի փոխուեցաւ եւ ընկերութիւնին գլուխին վրայ իրաւունքի մագէն կախուած սուրը եղաւ Դամոկղէսի: Ուրեմն անդարմանելի պատիժը չը տամք, զի ոչ անսխալ եմք եւ ոչ պապերի յաւակնութիւնը ունիմք: Պիտի ներեմ մեզ, ով Լրզիւրգ:

Վերցուցեմք մահի պատիժը: Մի փրկարար ազդեցութիւն ունի այն եւ չարագործին բազուկը կը կասեցուցէ, կ'ասէ: Այս ալ սուտ է: Ի՞նչ կը կարծէք, մարդասպանները չը գիտեն թէ մի կառափնաս կայ. եւ սակայն չ'են կասիր. կայ

ոճրագործ որ գլխատում տեսած չը լինի. եւ սակայն ոչ նուազ կը զարկնէ: Մահի պատիժին զոյութիւնը չը գիտէր Դուրման. ոչ ինքն էր որ, Բանդէնի ոնիրէն վեց օր յառաջ, Մօնպլի կախուիլը տեսած էր, Մօնպլի, մի մայրի եւ մի որդիի սպանիչին. եւ՝ սակայն Քէնք մայրը եւ որդիները չ'ապրեցան:

Կիրքը կամ շահը սպանութիւնի կը դրդէ մարդը. թէ կիրքը կը սադրէ՝ մահի արժանի չ'է ոճրագործը, զի կը զարկնէ հակառակ իւրեան, մեքենապէս եւ գրէթէ բնազդով. թէ շահը կը մղէ՝ ոճրագործէն յառաջ հարկ է պէտքը ջնջել, մի քայլ առնուլ դէպ ընկերականութիւն: Պապէօթ, Ռուսօն յաւիտենական անարգանի արժանի չ'են թերեւս:

Մի ժամանակ կար ուր մարդերը, եւ մանաւանդ քերթողները՝ փակագիծի մէջ, տարբեր լեզու կը գործածէին գերեզմանին առջեւ: Պարկայներին խեղճ մկրատը կ'անիծէին եւ ոճրագործ կը հրաչակէին անմեղ քոյրերը: Այդ հեթանոսական նորաձեւութիւնը անցաւ, արդարացան Պարկայները: Մարդերը, ալ ազատած այն մկրատէն որ կեանքին թելը կը խզէր, *կիյեօդինը* հնարեցին որպէս զի կեանքին ջիլերը խզէ: Զը գիտեմ ինչ անոյշ բան կայ արիւնին մէջ, որ մարդը չ'է հանիր զրկուիլ այդ հեղուկէն: Իմ նպատակը չ'է բայց անպատուել Պ. Կիյեօդէնը. մարդկութիւնին բարիք արաւ նա՝ վայրի տանջանքների զոհերին տեղ մի նոր գործի շինելով, որ հեշտին եւ դիւրին կերպով գլուխը կը զատէ մարմինէն.

կ'ուզեմ որ ընկերութիւնը լրացունէ այս կիսաս շնորհը 'զոր կ'անէ մոլորեալին, *կիլեսոդինն* ալ վերցունէ. առանց սմա, այդ շնորհը պիտի նմանի Հռոմի չը գիտեմ որ կայսրին շնորհին, որ հնոցի դատապարտուած մի քրիստոնեայի վրայ գրալով՝ հրամայեց քիչ կրակով այրել 'զայն :

Ինձ այնպէս կը թուի թէ երբ վերնայ մահի պատիժը, երբ վերնայ պատերազմը, այդ բիւրադէմ մահի պատիժը, երբ ուսումը սիպսոլական եւ ձրի լինի, մի դար յետոյ, զէթ Եւրոպայի մէջ, մարդասպանութիւնը այնքան հազուագիւտ պիտի լինի մինչ զի մարդասպանին այնպէս պիտի նային որպէս կը նային այսօր մի վայրենի մարդակերի, եւ արիւն թափելը այնքան սարսուռ պիտի ազդէ որքան կ'ազդէ այսօր մի մարդկային դիակ ուտելը : Ցնոր չ'է այս, զի փորձով հաստատուած է կիսովին :

Այո, պէտք է որ ամեն մարդ ապրի · յանցաւորը մեր շնորհովը, մեք Ստեղծողին շնորհովը · նա իւր անձնուկ աշխարհին մէջ որ «բանտ» կ'ասուի, մեք այս արձակ բանտին մէջ որ «աշխարհ» կ'ասուի: Օ՜հ, սուղ է կեանքը · եւ Համլէդի մենախօսութիւնը մեկուսի, սեւ բլուրէն յետոյ ինչ կայ · · · · · · · Շարէ կեցերդ, մանկանացու :

Վերցունեմք մահի պատիժը, պարոնոներ : Հրապարակային գլխատումը ժողովուրդին տրուած մի բարի օրինակ է · այս է ձեր վերջին փասը, 'զոր անհերքելի կը կարծէք: Ներեցէք որ 'զայն ալ հերքեմ : Անզգութիւնի մի տեսարան, վայրենութիւնի մի պատկեր, կատաղութիւնի մի ցոյց կրնայ

բարի արդիւն յառաջ բերել · դահիճը կրնայ դաստիարակ լինիլ · այսպիսի մի տեսիլ, որ պարկեշտ մարդերին յոյզ եւ սարսուռ կ'ազդէ եւ նոցա խիղճը կը խախտէ, ինչ կը ներգործէ չարերին · ոչ ապահէն կառափնատը անվախ տեսնելի կը վարժեցունէ, գերագոյն պատիժին կ'ընտելացունէ զգ նոսա · ոչ ապահէն կ'ուսցունէ չարին թէ որպէս աներկիւղ կը մեռնին ոճրագործները եւ թէ ինչ դիւրին բան է գլխատուիլը, որով կը քաջալերուի կատարել այն ոճիրը 'զոր թերեւս մտաբերած է : Բայց մահի պատիժին կուսակից պարոնները, որոց մասնաւորապէս կ'ուղղուին այս խօսքերը, մի յատկութիւն ունին որում արդարեւ չ'եմ նախանձիր · տեսականին վրայ կը ժպտին, գործնականը կ'որոնեն · կ'ուզեն որ *ա+բ*ով իւրեանց կարծիքը ջրուի · լաւ · գործնականն ալ մեր կողմն է : Բարէբարոյ շատ մարդեր տեսուած են, որք, գլխատումի հանդէսէ դառնալով, արիւնոտ երեւակայութիւնով ուրիշների կեանքին դաւանանած են · գործաւորներ, պարկեշտ գործաւորներ, դատապարտեալի արիւն նոր տեսած՝ սպանած են իւրեանց ընկերները · Դոօքմանի գլխատումին ականատես հինգ անձ, հազիւ մի շաբաթ անցած, սպանութիւն գործեցին · եւ այս է ձեր բարի օրինակ հռչակածը · · · : Աւելի զարմանալին լսեցէք · մինչ կախաղան բարձրացած Ֆռանսն Միլլէռ մարդասպանին դիակը, դեռ գաղջ, կը ծածանէր օդին մէջ, երեք քայլ հեռին մի հանդիսատես ատրճանակով այրեց ընկերին ուղեղը · եւ այս՝ մինչ ձեր բարի օրինակ կոչածը գլուխին վրայ

կը շարժէր երեկոյեան զեփիւռէն օրօրուած...:

Հրապարակային գլխաւումը միշտ ազդեցութիւն ունեցած է խուժանին վրայ: Այս ճշմարտութիւնը զգալով, շատ կառավարութիւններ ջնջած են այդ սովորոյթը, եւ բանտերի խորերը, մութի մէջ, գաղտագողի կը սպանեն յանցաւորները: Շատ ատենէ ի վեր բարձած են 'զայն երկրագունցիս ամենէն աւելի լուսամիտ ժողովուրդները, Սաքս, Պատէն, Վիւրդէմպէրկ, Պավիէռ, Զուիցէր, Բրուսիա, Անկլիա, Միացեալ—Նահանգներ, եւ ուրիշներ: Ֆրանսայի Օրէնսդիր ժողովին քիչ օր յառաջ մի խնդրագիր ներկայացուց Պ. Սդինմաքէռ երեսփոխանը, որով հրապարակային գլխատումին բարձումը պահանջելով՝ կ'ուզէ որ բանտի մէջ սպանուի յանցաւորը. կ'երեւի թէ այս խնդիրը պիտի ընդունուի եւ Ֆրանսայի մէջ ալ չը պիտի լոյս տեսնէ մի վայրագութիւնի շրինակ, Օրէնին տիրական մատին տակ:

Այսպէս, հրապարակային գլխատումը վերնալով հետզհետէ, ձեր բարի օրինակ համարածն ալ ինքնին կ'անհետանայ, եւ մարդկութիւնը կախաղանէն արիւնոտ դասեր կը դադրի առնուլ. մահի պատիժին ընծայած այն երեւակայական ծառայութիւնը, կրթիչ պատշաճը կը չքանայ, եւ կառափնատը, այս պատկառելի դարին մէջ, ալ չը կրնայ բարութիւնի դպրոց լինիլի յաւակնիլ: Մահի պատիժին այդ հանրային սեպուած միակ օգուտը վերնալով, այսուհետեւ մի անպէտ եւ աւելորդ պայման, Օրէնին կարմիր սուրերը կը դառնայ այն: Սուրերի

հետեւ շատ վազեցինք, ալ ճշմարտութիւնի կ'ուզեմք հետեւիլ. ծո, շատ չարչարուեցանք. ալ չ'եմք ուզեր մեզ խրատիչակներ շինել. դահիճները վար անցնին, ապրի Ազատութիւն: Մարդկութիւնը մութին դարձած էր, եւ Իւկօի հետ «լոյսին կը դառնայ» այսուհետեւ:

Վերջապէս, վերցուներմք մահի պատիժը: Բայց որո՞ւմ կը խօսիմ, յորոյ կը պահանջեմ կախաղանին բարձումը. իմ հայ ունկնդիրներէն. — սակայն խաղաղասէր են Հայերը. արիւնի ժողովուրդ չ'է իմ համեստ եւ պարկեշտ, իմ բարի, իմ ազնիւ ազգը: Կախաղանին բարձումը կը պահանջեմ. ինչ յիմարութիւն. Ասուած իմ, Թուրքիան մէջ եմք...:

Այլ համոզումի մարդը, իւր հաւատը հրաչակելի համար, ոչ շուրջը կը նայի, ոչ ժամացոյցը. ոչ այն երկիրը կը նկատէ ուր կը բնակի, ոչ այն ժամանակը ուր կ'ապրի. ամեն տեղ, ամեն ատեն կը նաւէ, կը զորձէ. խուժանէն վեր է, դարէն վեր է համոզումի մարդը:

Սմա համար է որ Թուրքիան մէջ, այս կէս բարբարոս ժամանակին մէջ, մահի պատիժին դէմ ձայն բարձրացուցի: Ներկային մէջ ցանեմք ճշմարտութիւնին սերմերը. ապագային մէջ իւրեանց պտուղը կը տան նոքա: Մի օր պիտի զարթի Թուրքիա. եւ մեր սերունդը պիտի տեսնէ բերեւս այն գեղագոյն օրը:

Ուրեմն ի կրկին տեսութիւն:

Ը

ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ.

(Հիւնֆեար—Իսկէլէսի, 1870, մայիս 24.)

Մի օր, այն մեծ օրերէն որ դարերին ստուերը կը համասեղեն, մի օր Բիւզանդիոնի վրայէ Ազատութիւնին շունչը անցաւ: Նա Արեւմուտէն կը գար Իտալիան հրահրելէ, մարտիրոս Բելգիայի վրայ մռնչելէ, եւ Ելլադայի մէջ ողբեր շշնջելէ յեռոյ:

Այդ մրրկոտ շունչը, Թափառական Հրեային պէս, մարդկութիւնին մէջ յաւիտեան կը շրջի: Մի բառ գիտէ. «Ցառաջ.» մի ոյժ ունի. «Յեղափոխում:»

Աշխարհի զօրութիւնները նմա դէմ կանգնեցան. յաղթեց նոցա: Բռնաւորները, սարսափահար, խելդել ուզեցին 'զայն, ջնջել ուզեցին այդ կարողութիւնը որ երկիրի հին կարգերը կը գար տապալել: Զարկան: Թանձրացեալը մեռաւ, վերացեալը ապրեցաւ. մարդը անկաւ, գաղափարը կանգնեցաւ. լեզուն ընդարմացաւ, այլ ձայնը բարձրացաւ եւ երկիրը դղրդեց: Այդ շունչին մօտիլը զգալով, սարսռացին բռնասէրները, հուրի, սուրի դիմեցին, փորձեցին հալածել 'զայն. կոյրե՛ր. մինչ նոքա կը բգկտէին ազատասէրները, չ'էին նշմարեր թէ սոցա արիւնովը կարմրած դրօշները արդէն կը ծածանէին իւրեանց եռեւ:

Խաչեցին Ցիսուսը, այլ երկնային հոգէվարին յետին շունչը աշխարհ յեղափոխեց. Հաւատարքնութիւնին բոցերին մատնեցին Խիղնը, այլ ազատութիւնին շունչը, Վօլդէռի հեգնող շուրթերը փոխ առնուլով, մարեց ըզ նոսա. չարչարեցին Գալիլէոսը, այլ սորա սկիզբները նուաճեցին նոցա միտը: Այդ շունչը ուր աւելի ճնշուեցաւ, հոն աւելի յաղթանակեց: Ժողովուրդների սիրտին մէջ կը վառի նա. լոյս է երբ ազատ բոլորի, հրաբուխ երբ բռնաբարուի: Ֆռանսայի մէջ սաւառնեցաւ, եւ 89 պայթեցաւ. այս վսեմ խառնարանին մէջ Նոր Մարդկութիւնը կը ծնէր: «Երկնէր երկին եւ երկիր:»

Նրբաքնին քաղաքագէտները այս ոյժը չը կրցան հեռատեսել. վա՛յ նոցա, զի դիմադրել փորձեցին: Ցիմարութիւն է մահաբիլ Ազատութիւնին շունչին դէմ. Առաջդիմութիւնին շունչն է նա. կը շինէ կամ կը քանդէ, եւ իւր ուղին կը շարունակէ. ես չ'է դառնար տեսնել թէ ինչ արած է, զի գիտէ թէ լաւ արած է. ուստի յառաջ կը վազէ: Նա Ցաւիտենականին ալ առջեւէ կ'երթայ:

Այս շունչն է որ Բիւզանդիոնի վրայէ անցաւ մի օր: Դուք ծծեցիք 'զայն, Հայեր, եւ անոյշ զբաղեցաք, եւ վսե՛մ զգաք 'զայն: Զարթեցաք. մի շրջբայ տեսաք, որ ձեր ազնիւ բազուկները կը կաշկանդէր. անձնիւր դար նոր օղակներ յարած է նմա. թօրվեցիք, եւ փշրեցաք: Ցգիտութիւնն էր որ կը խորտակուէր, լոյսն էր որ կը ճառագայթէր: Անձնական իշխանութիւնը կը խոնարհէր, եւ [illegible] ազատարարութիւնին պատուանդանին վրայ Սահմանադրութիւնը կը բարձրանար;

ԳՐԱԴԱՐԱՆ

Այդ օրը 1860, մայիս 24ն է: Անմահ օր: Տաս տարի անցաւ այն սուրբ թուականէն ի վեր, առանց ձեր աւիւնը ծերացուցելի: Աւելի դիւրին է մի կեռ տալ Արիմեդէսին, որով երկիրը իւր տեղէն խախտէ, քան ձեր հոգիին ջերմութիւնէն մի հիւլէ քաղել եւ ձեր սիրտը խախտել ազատութիւնին սէրէն: Ձեր եռանդը անիլով կ'անի, եւ, յաւիտենական ժառանգութիւն, կ'անցնի ձեր որդիներին, նոր սերունդին: Մեր հայրերը նուիրական հուրը անշէջ կը պահէին. մեք ազատութիւնին բոցը վառ պահեմք մեր մէջ:

Հայեր, այն յաղթանակը, 'զոր դուք ստացաք, անմահացուցեալ կ'ուզէք 'զայն: Կը զուլեմ այդ փառասիրութիւնը որ այնքան հեռին կը նայի: Աշխարհային զբաղումներու փոփոխութիւնին մէջ՝ լաւ են այսպիսի բարոյական յաղթանակներու յիշատակներ. ժողովուրդին ոգին կ'ընդլայնեն, նորա միտը կը մեծցուցնեն սոքա: Մեծութիւնը, որեւէ պայմանի մէջ, խուժանին բարոյականը կը շինէ:

Ամեն տարի հոս ձեր յաղթանակը կը տօնէք: Ձեր անցեալ նիգերը կը յիշէք, եւ կը զմայլիք: Ցիշելը հրճուալի է: Կը գաք տօնել այն օրը ուր ազնուապետութիւնը խոնարհեցուցիք, եւ հաստատեցիք ժողովուրդին իշխանութիւնը, միակ օրինաւորը անտարակոյս: Մեծ յեղափոխութիւն էր սա, Հայեր. եւ մի այսպիսի յեղափոխում անելի համար՝ Ռոպէսբիէռի տապարին չը դիմեցիք, բանաւորութիւնին դիմեցիք: Օրհնեալ լինիք, խաղաղութիւնի զինուորներ, իմաստասէր յեղափոխիչներ. դուք արիւնը ասեցիք եւ ձեր աչը սուրբ պահեցիք: Տր-

կարութիւնի մէջ համբերող, եւ, ինչ որ աւելի դժուար է, յաղթութիւնի մէջ հեզող եղաք: Վսեմ է այդ. օրհնեալ լինիք, ազնիւ Հայեր:

Երբ այսպիսի մի գերազոյն նպատակի համար հաւատած կը տեսնեմ ազգին այս ընտրազոյն մասը, հայ երիտասարդութիւնին այս ծաղիկները, ոչ, դիւրին չ'է ինձ համբ կենալ: Տարին մի անգամ իրար կը տեսնեմք, իրարի կը միանամք. մեր վրայ, ազգին վրայ խորհիմք:

Անցած տարի, չ'էք մոռցած թերեւս, լուսաւորութիւնի վրայ կը խօսէի. եւ երբ կը յիշեմ այն մասնաւոր համակրութիւնը որով 'զիս պատել եւ պատուել հաճեցաք, դեռ այսօր կը շփոթիմ: Այս տարի, կ'առաջադրեմ ինձ խօսիլ այն սկիզբին վրայ որ ամեն տեսակ առաջդիմութիւնի մայր ընկատելի է: Լոյս ծաւալելէ յառաջ՝ զոհողութիւնի յօժարութիւնը պէտք է ունենալ. որպէս լոյս տարածէ նա որ չը գիտէ Անձնուիրութիւն: Նախ 'զայս հարկ է ուսնիլ:

Անձնուիրութիւնը, պարոններ եւ տիկիններ, ուրիշների համար ապրիլի դիւցազնութիւնն է: Բոլոր առաքինութիւններին մէջ թերեւս միակ անշահախնդիրն է սա. միւսները, բարէպաշտութիւնը անգամ, շահի ակնկալութիւնով կը կատարուին: Սիրել ընկերը, պատիւէն զատ՝ ամեն բան զոհել նորա սէրին, օգնել նմա ամեն պարագայի մէջ, ամեն տեղ, նիւթապէս եւ բարոյապէս, օգնել՝ ոչ տհաճութիւնով, այլ մի տեսակ հեշտութիւն զգալով, հաց տալ նմա երբ աղքատ է, խրատ տալ նմա երբ հարուստ է, յոյս տալ նմա երբ վհատած է,

լոյս տալ նմա երբ տգէտ է, զգալ ինչ որ նա կը զգայ, սիրել ինչ որ նա կը սիրէ, կասարել ինչ որ նա կը բաղձայ, զոհել ամեն բան մի ընկերի կամ ընկերների եւ կամ ամբողջ ընկերութիւնի համար, զոհել հանգստութիւն, զոհել հոխութիւն, զոհել երջանկութիւն, զոհել մինչեւ անգամ իւր կեանքը. այս ամենը իւր պարտը կը սեպէ անձնուէրը, եւ կը փութայ վճարել եռանդով: Ի՞նչ աւելի վսեմ, ինչ աւելի երկնային քան այս զգացումը :

Անձնուիրութիւնը մի երկրորդ նախախնամութիւն, եւ թէ ճերելի է ասել՝ մի առձեւն նախախնամութիւն է 'զոր Աստուած մեր քով դրած է, որպէս զի նմա դիմեմք, եւ սիրեմք ապրիլ: Նա ամենէն բարձր յատկութիւնն է 'զոր մարդկային հոգին կարենայ պարունակել: Նա, որպէս երէկ կը գրէի «Երկրագունտ»ին մէջ, մի ոգիի ելն է դէպ Աստուած: Գողգոթայի բլուրին վրայ նմ զօրացուց Հրէաստանի Մարդը: Թէ երբէք մի Աստուած նախանձիլ ուզէ մարդին, Անձնուիրութիւնը միայն նախանձելի պիտի գտնէ նորա մէջ :

Հեռի յինէն անձնուրացութիւն քարոզել. նա միջին դարի մէջ մի աղէտալի դեր խաղաց, նա նուաստացուց մարդը, նա ընտանիքների աւերակին վրայ վանքերի միաբանութիւնները հաստատեց, Նովպոսի անասունին պէս՝ իրականը բողուլ եւ նորա ստուերին ետեւ քափառիլ տուաւ մարդին: Այս կոյր զգացումը չ'է որ պիտի փրկէ քզ մեզ, այլ Անձնուիրութիւնը, ողջամիտ եւ լուսաւոր Անձնուիրութիւնը, այն Անձնուիրութիւնը

որ խորհիլէ յետոյ կը սկսի գործել, եւ ոչ այն որ երազելէ յետոյ կը գործէ :

Անձնուէր լինիմք, եւ ամեն բան կ'աջողի մեզ: Ցայնժամ ոմ կը յանդգնի մեզ անիրաւել: Քուրդերը անգամ տեղի կը տան, այդ Հայասանի պատուհասները՝ որպէս Ասորիքի պատուհասն են մարախները, այդ վայրենի ցեղերը որ ոչ օսմանեան պետութիւնին հպատակ, ոչ մարդկութիւնին յաւիտենական օրէնքներին հպատակ, բարոյականի դէմ, կրօնի դէմ, ամեն օրէնքի դէմ ապստամբ կանգնած են, եւ դարերէ ի վեր մեր հայրենիքը խաչը կը հանեն :

Լամարտին, իւր մի հոյակապ ազգայինի ուղղած նամակին մէջ, կ'ասէր Հայերին համար. «Ես կը սիրեմ զգ նոսա՝ իբր *բարեյոյս ժողովուրդ*՝ Արեւելքի գործոն, զգօն եւ գրական հասարակութիւններին մէջ:» Քերթող քաղաքագէտին այս բարի յոյսը իրացուցելի համար ինչ կը պակսի մեզ. — Անձնուիրութիւն, ե՞ղբայրներ. եւ յայնժամ յոյսը կ'անկնի իրականութիւնին առջեւ :

Արդէն, թէ անցեալին դիմեմք, պիտի տեսնեմք որ մեր պատմութիւնը անձնուէրների մի Ցայսմաւուրք է: Անձնիւր քայլի, մի անձնուէրի դագաղին պիտի բաղխիմք :

Հնութիւնին այնքան փառաւոր օրինակները բաւ էին մեզ՝ հետեւիլի համար նոցա. բայց Աստուած կը սիրէ նոր հրաշակերտ ստեղծել անձնիւր դարի մէջ : Մի մօտաւոր անցեալի, եւ նոյն իսկ ներկայինի մէջ՝ անձնուէրների գունդեր ունիմք : Պէտք է հեռին երթալ. Խրիմեան հոս է : Նա,

անձնուիրութիւնի հրեշտակ, Նոր Հայաստանի առաքեալն է: Նա յոյս, խաղաղութիւն, սէր, եղբայրութիւն, հաւատ եւ լոյս ծաւալեց մեր հայրենակիցներին մէջ: Ընկճուած էր Հայը, նորա գլուխը վեր առաւ. տգէտ էր Հայը, նորա ուղեղին մէջ մի լոյսի կաթիլ դրաւ. յուսահատ էր Հայը, նորա հոգիին մէջ հաւատի զօրութիւնը կազմեց. իւր տկարութիւնին մէջ, ճի, բերահաւատ էր Հայը. երկինքը ցոյց տուաւ նմա: Հալածուեցաւ. եւ այս պսակեց իւր փառքը: Մեծ հալածականները մեծ յաղթականներ են: Կուրութիւնը, Նախանձը, Զրպարտութիւնը նմա դէմ ելան իբր վիշապ եռագլուխ. այլ նորա զարշապարէն վեր չը կրցան յարձակիլ: Ազգին քուէն գնաց արժանաւորը գտաւ, եւ ժողովուրդին ապագայը նորա ափին մէջ դրաւ: Այն օրը, ընտրական սափորին մէջ անշուշտ Ցաւիտենականին շունչը սպրդեցաւ . . . :

Եւ մի այսպիսի անձի դէմ, Հայեր, իւր պաշտօնին մեծութիւնին մէջ կը դաւե՞ն տակաւին: Անմի՛ն Սրաբներ, որ արեւին դէմ կը հայհոյեն: Ամենս ալ արդար ցասումով բորբոքեցանք երբ երէք թշուառական վարդապետների անլուր լրբութիւնը իմացանք: Չ'եմ ուզեր ձեր զայրոյթը անեցուցել՝ նոցա զրպարտութիւնը կրկնելով. այլ կ'ուզեմ հրապարակով արհամարհել ըզ նոսա, եւ սմա համար սոյն հանդիսաւոր օրը ընտրեցի:

Անիծեա՛լ լինին այդ մարդերը, որ, մութի զաւակներ, Հայրիկին ետեւէ աղրայ կը կնրտեն եւ նենգութիւնի դիմակին տակ սուտ կը խօսին: Անիծեա՛լ լինին այդ մարդերը, որ Ցուդայի համբոյրը կը տան եւ կ'երթան անուրդի հանել արդարին պատիւը: Անիծեա՛լ լինին այդ մարդերը, որ Կիրակոսների, Ամնադիններին փառքին կը նախանձին, ռամիկը սուտ հրաշներով կը դիւթեն, եւ իւրեանց մոլեգնութիւնին մէջ՝ անմեղը բզկտել, արդարը զրպարտել, ազգը մատնել, առաջդիմութիւնին դէմ կիր զարկնել կը ջանան:

Դաւանանները վա՛ռ անցնին, ապրի՛ Խրիմեան, ապրի՛ն անձնուէրները:

ԱՌԱԾՆԵՐ.

Գուրը մի զրկուած ոգիի վրայ մի մեծ ոգիի էջն է:
Սէրը մի ոգիի մղումն է դէպ մի ուրիշ ոգի :
Անձնուիրութիւնը մի ոգիի ելն է դէպ Աստուած:
Հաւատը կուրութիւններին վսեմագոյնն է :
Յոյսը քաղցրագոյնն է խաբէութիւններին :
Սէրը բնազդներին բռնագոյնն է :
Սիրտը կը յարի :
Հոգին կ'ընդգրկէ :
Հանճարը կը ստեղծէ :
Պատերազմը մարդերին հաւասական հայնոյութիւնն է Արարիչին դէմ :
Շողոմորթութիւնը մի շահամոլ սիրտի խունկն է, որ տկարամիտների հանելի, այլ մեծ մարդերի առջեւ բացէ ի բաց խոտելի է :
Նա, որ գովեստի կամ պարսաւի, շողոմորթութիւնի կամ ամբաստանութիւնի առջեւ կը տկարանայ, գիտցած եղէ՛ք, մեծ մարդ չ'է նա :
Երբ մի մարդ գովէ զքեզ խօսով կամ գիրով, մտածէ՛ք ինչ կրնայ շահիլ իւր այս գործէն. երբ զգաս որ ներկայ կամ ապագայ շահ կը յուսայ ի քէն, գիտցած եղիր, շողոմորթ է նա :

Գերութիւնը մի երկար հոգէվար է, որ ժողովուրդների կենսական տարրերը կը սպառէ:
Ազատութիւնը այնչափ հարկաւոր է մարդկութիւնին որչափ կաթը մանուկին :

1870, մայիս.

ՆԱՄԱԿՆԵՐ.

Ա

ԱՌ Պ. Մ. ԱՍԼԱՆՕՖ.

Հասգիւղ, 1869, մայիս 30.

Երբաս բարեաւ, ով դու իմ մտերիմը. հրաժեշտի մելամաղձոտ եւ զուարթ ճնարին թելերը բրբռալ սկսեցան. այլանդակ ճնար, որ մի թելով կը լայ, միւսով կը ժպտի. մի թելով կը զարկնէ, միւսով կը փայփայէ. մի թելով «զատուէ» կը մռմռայ, միւսով «միացիր» կը նլուրլայ: Անա Հրաժեշտի Կոյսը որ մի ձեռքով նեկտարի բաժակը կ'առնու, միւսով լեղիի բաժակը, եւ իրարի խառնելով ըզ նոսա՝ մի այլանդակագոյն ըմպելի կը պատրաստէ, եւ 'զայն քե՛զ կը նուիրէ այսօր, Ասլանօֆ...:

Երբաս բարեաւ, ով դու իմ սիրտին հատորը. թող արսուր չը հեղու հոգիիդ ճնարը. թող չ'ընկնի ոգիդ, որ, աւաղ, շատ զգայուն է: Մեծ մարդերը չ'են ծնած վիճաբանելի համար. նոքա կոչուած են յաղթահարել ամեն կսկիծ: Խմէ, Ասլանօֆ, խմէ այս յեղին բաժակը. իմաստասէրի պէս խմէ 'զայն, ստոյիկեանի պէս խմէ: Հայրենիքդ գրկել

կ'երթաս, կ'երթաս ի համբոյր մատչիլ նորա սրբազան հողին. ուրեմն արիացիր, Գողգնի զաւակ: Գնա յարութիւն տալ այն ոսկէդարեան ճնարին, որ հնութիւնին նուիրական փոշիին տակ թաղուած՝ ալ չ'է բաբախեր եւ ալ չ'է թնդացուներ Հայաստանի կորիւնները: Եւ երբ Արարատի Մուսայները իջնեն ածել 'զայն արտուրուչ, դու մեզ հաղորդէ նոցա աւաչները, մինչեւ որ Հայաստան, այնքան ողբերէ զարթած, սարսռայ իւր աւերակներին մէջ, եւ վերածնութիւնի դրօշ ի բրռին՝ ելնէ ողջոյն տալ իւր հոգէվարին ականատես տիեզերքին...:

Երբաս բարեաւ, Ռուսիայի փուրերին եւ սառերին մէ՛ջ ծնած վարդ. հայրենիքն է որ ըզ քեզ կը կոչէ իւր անձկութիւնին մէջէ. Եւ միթէ նորա հրաւէրը չ'է գոռար հոգիիդ մէջ իբր անմահ որոտում, եւ միթէ չ'ես զգար քո մէջ մի հզօր բան որ քեզ ընդնշմարել տայ կոչումդ: Այո, դու մեծագործելի սահմանուած ես, Ասլանօֆ. երկին մի պարզ դեր չը յանձնեց քեզ: Գիտեմ, ուխտած ես լուսաւորել Հայաստանը. գործադրէ ամեն պարկեշտ միջոց, այդ վեհ պաղատիարը իրացուցելի համար: Թէ տգիտութիւնին խաւարը փորձէ մոլորեցուցնել ըզ քեզ, լուսաւորէ 'զայն, եւ քայլէ. թէ մատնութիւնին մռայլ աչքը լրտեսէ ըզ քեզ, արհամարհէ 'զայն, եւ քայլէ. թէ նախանձին դալկացած եւ կմախքէ ուրուականը քեզ դիմադրէ, խնդա նորա վրայ, եւ քայլէ. թէ ազգատեցութիւնը քեզ դէմ բարձրացունէ իւր հին կոթողը, կործանէ 'զայն, եւ քայլէ. թէ կրօնն անգամ, ժան-

տաժուս պաշտօնեայների ձեռքով, զի թեզ ճգնի կասեցուցել, ծն, գրա՛ նոցա վրայ, եւ քայլէ· քայլէ անդադար, զի կենալը ոնիր է նմա համար որ յառաջ անցնիլի ասուածային մղումը կը զգայ իւր մէջ: Այո, կործանեմք մարդկային լուսաւորութիւնին դէմ կանգնուած պատուարները, եւ, թէ հարկ է, նոցա փլատակներին տակ փորեմք մեր գերեզմանը: Մեծին եւ հանճարին նակատագիրը զոհողութիւնն է:

Երբաս բարեաւ, Ասլանօվ· պէ՞տք է որ ցաւի որդին՝ երբ մայրին գիրկը կ'երթայ նեստուիլ: Ցընծութիւնով դիմէ հոն ուր մանկութիւնդ ժպտեցաւ՝ եւ խօշ թիթեռնիկներ հալածելով անցաւ, ուր պատանեկութիւնդ բողբոջեց, զուցէ մի դժբախտ սէրի օձը շոյեց, եւ ուր առաջին անգամ հառաչեց, արտասուեց, վշտացաւ: Այո, առանց հաշակը առած լինելի՝ կը զգամ ինչ որ պիտի զգաս դու այն գերագոյն ժամին մէջ:

Ուրեմն երթա՛ս բարեաւ, Ասլանօվ: Բայց երբ Ոսկեղջիւրի խաժ ալիքներէն անցնելով՝ հասնիս Վոսփորի կապոյտ ջուրերը, երբ Կոստանդնուպօլիսի *մինարէ*ներին ոսկի մանիկները միայն նըշմարես, երբ ալ համայն Իսդամպոլ մի հրալառ հորիզոնի ծայրը մի մոգական գիծի պէս նուաղի, ծն, յիշէ 'զիս · · · : Եւ երբ Պոնտոսի ամեհի կոնակներին մէջէ նեստուիս համբուրել Հայաստանի հողը եւ ծծել այն բանաստեղծական երբերը, ծն, աւելի եւս յիշէ 'զիս: Եւ, ջերմագին, գնա պատմել Ազատ Մասիսին թէ Բիւզանդիոնի հրապուրիչ բլուրներին մէջ փակուած մի որդի

ունի, որ դեռ նմա համար կը հառաչէ, կը խորհի, կը հալածուի, եւ մինչեւ անգամ նմա համար կը մեռնի · · · :

Բ

Ա. Ռ Տ· Մ· ԽՐԻՄԵԱՆ·

Հասգիւղ, 1869, նոյեմբեր 8.

Սրբազան հայր,

Երբ մարդը իւր միտին սահմանէն վեր արդիւն տեսնէ, երկիրի հորիզոնէն վեր կը սիրէ նշմարել նորա պատճառը:

Երբ ճգնաժամների ատեն մեծ մարդեր, մեծ դատերի ատեն մեծ փաստաբաններ, եւ մեծ վրէժների ատեն մեծ նահատակներ ի տես գան, մարդ, բնազդով, աչքերը կը սեւեռէ դէպ երկին, ուր լոկ մեծութիւն կ'ըմբռնէ:

Եւ, արդարեւ, մարդ մի տեսակ կրօնական վերացում կը ստանայ երբ կը տեսնէ թէ անկումի մէջ յանկարծ մի կանգնիչ կը ծնի, դիմերի հարուածներին առջեւ եղիսներ կը բարձրանան, եւ Հային անիշխանութիւնին ատեն մի Խրիմեան իշխանութիւնի կը կոչուի: —

Այնպիսի մի ժողովուրդի սանձը կ'առնուիս ի ձեռին, Սրբազան հայր, որ, առանց կեղծաւորութիւնի եւ սնափառութիւնի խօսիլով, մի ոտքը վայրենութիւնին մացառին վրայ, միւսը քաղա-

քակրթութիւնին սեմէն ներս դրած՝ խաւարի եւ լոյսի մէջ կը տատանի տակաւին :

Կը սոսկամ ազգիս վիճակէն. այլ աւելի կը սոսկամ ձեզ համար ձեր վիճակէն :

Դարիս մէջ, ուր ամեն բան փեսուր կը փոխէ, հանճար ունենալ եւ չը սեղծել, պերճախօս լինիլ եւ լռել, գրիչ ունենալ եւ բողուլ որ ժանգոտի, մամուլ ունենալ եւ չը հրատարակել, ոճիրների ոճիրն է այդ: Աւելի մեծ պատասխանատուութիւնի ենթակայ է նա որոյ վրայ բիւր յոյսեր թառած են, որ ժողովուրդների ճակատագիրին վրայէ կը նայի, եւ ընկերական մալէսդրումին մէջ մի ղեկ ունի աջին տակ :

Տասիներորդ բազմապահանջ դարիս մէջ, հրամայելէ աւելի դժուար բան չը կայ : Քսաներորդ իմաստասէր դարին մէջ, իշխելէ աւելի անհաւոր բան չը պիտի լինի :

Երէկ թագի խենդ էին մարդերը. վաղ թագ կրելէ պիտի դողան եւ խոյս տան: Մարդկութիւնին գաղափարական առաջդիմութիւնին ծանրաչափն է այս:

Այո, սոսկալի է ժողովուրդներին ժամերը զործածել. եւ ահա սմա համար է որ, Սրբազան հայր, «կը սոսկամ» ասի «ձեզ համար» :

Սակայն, այս երկիւղը կը տկարանայ ձեր առջեւ : Ձեր գահակալութիւնը Առաջդիմութիւնի գահակալումն է :

Հայը հաւատ ունի ձեր վրայ: Երբէք մի վեղարի շուրջը ժողովրդականութիւնի այսքան անհուն պսակ չ'է բոլորուած ;

Այն ոսկէբեւ յոյսերը, որք ձեր շուրջը կը թրթռան, վերջապէս իրականութիւն պիտի առնուն. այս է անյեղլի վստահութիւնը մի համայն ազգի, որ ըզ ձեզ կենդանի նահատակ լուսաւորութիւնի կը նկատէ : Վստահ է նա թէ ձեր զործօն անձնուիրութիւնը պահանջումներին եւ պէտքերին բարձրութիւնին պիտի հասնի :

Դուք անձնուիրութիւնի ընտել էք, Սրբազան հայր. ձեր կեանքին թելը մեծազործութիւնների ոսկիովը եւ զոհողութիւնների մետաքսովը հիւսուած է : Դահի վրայ բարձրանալով, ուրիշ բան չը պիտի անէք այլ գերազոյն կարողութիւնով շարունակել ինչ որ արդէն սկսած էք այնքան արութիւնով :

Այսպէս, հաւատարիմ մնալով ազգային լուսաւորութիւնի դրօշին 'զոր այնքան բարձր բռնեցիք ց'արդ, ոչ թէ միայն հայ երիտասարդութիւնին համակրութիւնին վրայ պիտի բռնանաք, այլ եւ մեր, պատանիներիս, ոգին պիտի դիւրէք ձեր հոյակապ զործերովը :

Պատանիներս այժմ լոկ ձեր զործերը կը դիտեմք. այլ ապագային մէջ մեք ձեր կեանքը պիտի գրեմք եւ ձեր արարքները պիտի հոչակեմք :

Մի անհուն պատասխանատուութիւնէ հանդարտ խիղճով գերծանելի համար, մարդկային ամեն նիզէ վեր մի աջակցութիւն կայ 'զոր պէտք է հայցել: Թէ ընդունելի են մեր մաղթերը, կ'աղօթեմք. թէ չ'են ընդունելի, կը լռեմք, եւ մի որբ ազգի խորհրդաւոր նայուածքովը դէպ երկին կը նայիմք...;

ԳՐԱԴԱՏՈՒՄՆԵՐ.

Ա

Հայկ դիւցազն, ողբերգութիւն վեց արարով, հեղինակ՝ Պ. Ռոմանոս Սէյէֆեան.

Քաջալերը մի գրիչի սնունդն է, այլ քննադատութիւնն է նորա բովը, ուր նա իւր ժանգը թօթափելով՝ դուրս կ'ելնէ փայլուն եւ սիրուն:

Ներկայ բատրական եղանակին մէջ Նաումի բատրը երկու ազգային ողբերգութիւններ խաղաց, որոց ես ալ ներկայ գտուեցայ. աւելորդ չ'եմ համարիր գրական աշխարհին առջեւ հանել իմ անձնական դիտողութիւնները նոցա վրայ, զի համոզուած եմ թէ գրադատումները միայն կրնան գտել մեր ազգին գրական ճաշակը, որ այնքան աղաւաղ է դեռ:

Առաջինը, որոյ վրայ միայն պիտի խօսիմ այսօր, ունի բաւական թերութիւններ, ըստ իմ անձնական կարծիքին: Կարելի չ'է ուրանալ որ Պ. Սէյէֆեան լաւ ըմբռնած է Նոյին, Քամին, Հայկին, Բէլին եւ Բիւրասպին նկարագիրները, Հայ-

կանոյշին եւ Հրանտին բերանին մէջ դիւցազնական ժամանակների յատուկ մի սիրահարական լեզու դրած է, հարտարապէս ներկայացուցած է Բաբը, 'զոր իւր սէրը գերի կ'անէ եւ իւր ծնունդը զոռոզ. կը խոստովանիմ որ մերթ իբր իմաստասէր կը խորհրդածէ Հայկ, եւ չ'եմ ժխտեր որ Հայկանոյշին «Ներե՛մք, հա՛յր իմ» ը վսեմ է. սակայն կը կարծեմ թէ Պ. հեղինակը սխալած է հրեշտակին բերանին մէջ գրաբար եւ ոտանաւոր պատասխաններ դնելով, մինչ հարցերը միշտ աշխարհաբար եւ արձակ կը լինին. ցուրտ է այս եւ անիմաստ. նախապաշարում, եւ ոչ տրամաբանութիւն. նաեւ դատապարտելի է այնքան երկար մենախօսութիւններ անել տալ Հայկին. տաղտուկ է լսել անքիւ եւ անհատնում ճառեր մի ողբերգութիւնի մէջ, որչափ ալ գեղեցիկ լինին: Այս թերութիւնէն զերծ չ'են մեր բոլոր բատրագիրներն ալ. եւրոպական բատրաբեմներին վրայ աւելի կը գործուի քան կը խօսուի, հայականներին վրայ աւելի խօս կայ քան գործ. մեր ազգային նկարագիրէն է այս արդեօք:

Զը մոռնամ ասել թէ այս ողբերգութիւնը տեղ տեղ Հ. Ս. Կ. Բագրատունիին համանուն դիւցազներգութիւնը կը յիշեցունէ:

1869, յանվար 27.

ԳՐԱԴԱՐԱՆ

Բ

Լենկիմուր, ողբերգութիւն չորս արարով, հեղինակ՝ Պ. Սրապիոն Թղլեան.

Ա.

Երկրորդ ողբերգութիւնն է այս, որ, ըստ ինձ, բաւական անկատար է, չ'ասեմ խիստ անկատար: Կ'երեւի թէ Պ. Թղլեան լաւ չ'է ըմբռնած Դիմուր—Լենկի նկարագիրը, որպէս եւ իւր խաղին նիւթը: Ես պատմեմ, ընթերցողը թող դատէ:

Առաջին արարին մէջ, մի Ճինանկիր, մի Շահանդուխտ եւ մի Լենկ—Դիմուր(1) տեսանք Արարատի (2) մէջ. յետոյ նոյն անձերը տեսանք արքունի պալատին մէջ, այսինքն Սմրղանդի(3) մէջ, առաջինը սէր յայտարարելով նմա որ կինն էր իւր հայրին (տես Ռասինի *Միթրիդատը*), եւ վերջինը իւր կինը սպանել հրամայելով իւր որդին:

Երկրորդ արարին մէջ, Պ. հեղինակը, որ պատմութիւնի դասատու է, 1000 տարի յառաջ մեռած խեղճ Վարազդատին գերեզմանը բացեր եւ փոշիներին, թէ մնացած էին, մարմին շնորհելով,

(1) Պ. հեղինակը աջողած է իւր դիւցազնին ոտքը բժշկել:

(2) Հայ հողին վրայ Դիմուր դեռ կոխած չ'էր յայնժամ. մի ժամանակագրական սխալ է այդ:

(3) Բոլոր արարները կը պարունակեն այս ոստոստումը, որ, ըստ տատերի, աննեբելի է:

Արծրունի թագաւոր(1) շիներ է 'զայն, Արագած լեռին վրայ մի ամրոց ալ բարէհաճիլով նուիրել նմա. եւ այս՝ Հայաստանի վերջին թագաւորէն երեք եւ կէս դար յետոյ. բայց զարմանալին սա է որ մի թաքար կին, 'զոր իւր այրը ձգած է, թագ կը դնէ մեր օդային իշխանին գլուխը եւ նմա հետ կ'ամուսնանայ: Սա ալ եզական չ'է. այն Դիմուրը, 'զոր պատմութիւնը այնքան անուելի կը ներկայացունէ մեզ, սուր ի ձեռին կը դողայ «Ես մարմին չ'ունիմ, 'զիս չ'ես կարող սպանել» ասող մի ուրուականէ, եւ կը թողու որ իւր ձեռքէն կորզէ այն միակ արարածը 'զոր կը սիրէ ջերմագին (տես Տիւվալի *Մանոնին*):

Երրորդ արարին մէջ, այն Լենկ—Դիմուրը, որ բոլոր Ասիան նուաճեց եւ ընկնեց, Հայերէն յաղթուած՝ անձնասպանութիւն կ'երկնէ. Թուրքէման եւ Շահանդուխտ իրարի կը նուիրեն իւրեանց մայրին կենդանագիրները (տես Իւկոի *Անանոն*) (2):

Չորրորդ արարը բոլորովին ձախող է. Թուրքէման, այն կինը 'զոր լրեց Դիմուր եւ որ խլեց նորա սիրունին, դեսպանուհի եղած, երդում կ'առնու Դիմուրէն որ սա մեկնի Հայաստանէն. Ճինանկիր, խոցերով ծածկուած, տեսարան կը գայ եւ կը մեռնի, եւ մինչ Դիմուր, մի ծագկորոյս վագրի պէս կատղած, երդում կը տայ ջնջել Հայերը որք իւր զաւակը սպանեցին, կը հասնի դեսպա-

(1) Կ'երեւի թէ Պ. պատմաբանը շատ կը բաղձայ նոխացունել ազգային պատմութիւնը:

(2) Պատկերհանութիւնը շատ ծաղկած է եղեր յայնժամ:

նունին(1), կը յիշեցունէ նմա թէ իւր սուրին վրայ երդուաւ չը ջարդել Հայերը, եւ միւնչեւ անգամ «Կեցցէ՛ Հայաստան» ասել կը տայ Էնկ—Դիմուրին (Avocat, passons au déluge.) Ուխտաւորի զգեստ հագած (տես Իւկօի *Լոնանին*), դա հաշտութիւն կ'առաջարկէ Հայերին. Վարազդաս(2) եւ Շահանդուխտ եկեղեցի կը մտնեն. այն Դիմուրը, որ տանարները ոտնակոխ կ'անէր, հեզ հիսոնեայ, նոցա հետ եկեղեցի կը մտնէ, իւր կինին մի օտարի հետ պանակուիլը տեսնելի համար. երեք վեհափառ ժամուորները դուս կ'ելնեն. Թուրքման (սա՛ էր դիւցազնունին թէ Շահանդուխտ, խաղին հապաղութիւնը եւ մրուրիւնը չը նեռեցին որոշել), իւր հոյրին երջանկութիւնը տեսնելով, անձնասպան կը լինի (այս էր բարոյականը), Էնկ—Դիմուր ալ Հայերին «Եղբա՛յր եմ մեք» կ'ասէ, եւ կատակերգութիւնը կը վերջանայ:

Այսպէս, յայտարարութիւնին մէջ խոստացուած «ուսեմ դեռեռ»ը չը տեսուիլի չափ հազուագիւտ էին: Թէեւ տեղ տեղ ազդու եւ վայելուչ կտորներ կը գտուէին, բայց նոքա ալ արդէն շատ լսուած բաներ էին: *Լենկթիմուրի* փուշերը կը խեղդեն այն ցանցառ վարդերը, որ չքնաղ կը լինէին թէ մի աւելի բեղուն երկիրի մէջ ծլէին:

1869, յանվար 28.

(1) Այն դարին Հայաստանը արդի Միացեալ—Նահանգներէն աւելի լուսաւորուած է եղեր:

(2) Դիտելի է որ այս երեւակայական հայ թագաւորը երկու կին առաւ Պ. հեղինակին շնորհովը:

Բ

Իմ(1) լուրջ գրադատումիս իբր պատասխան, մի խեղկատակ յօդուած տեսայ «Սէր»ին մէջ:

Ես այնպէս կը կարծեմ թէ, երբ մի հեղինակի ուեւէ գործին վրայ մի խորհրդածու քննադատութիւն հրապարակ կ'ելնէ, *պրոբլեմ համալի, չամաշրճի ապլա* բառերով եւ «խեղկատակ, առաքինի, խորախորին, տղայ, կարճ խելք» բնամանքներով պատասխան չը տրուիր գրադատին. փաստ պէտք է, փաստ:

Ուստի, ժողովուրդին խոհուն մասին կը յանձնեմ դատել *Լենկթիմուրը* եւ կշռել իմ փաստերը նմա դէմ: Ահա Պ. ընդդիմախօսիս պատասխանին անձնիւր հատուածին դէմ իմ պատասխանները:

Նա գրադատումիս զօրաւորագոյն փաստերը չը տեսնել կը ձեւացունէ եւ կը սկսի յարձակիլ այն տողերին վրայ 'զորս, իբր երկրորդական, դուրս հանած էի յօդուածէս: Կ'ասէ թէ Բրուտս կուզ էր եւ Ասսիղա գանան. իւր սխալներին մէջ թերեւներէն են սոքա:

Այն օտար եւ բնիկ պատմիչները, որք անա զրասեղանիս վրայ շարուած են, կը վկայեն թէ Դիմուր չ'էր տեսած Հայաստանը այն ժամանակին մէջ 'զոր Պ. հեղինակը կը ներկայացունէ. ուրեմն կրնա՞ր ապարան ունենալ հոն, որպէս կը պնդէ նա:

(1) Պ. Թղթեան սխալած է յոհնակի կոչականներ ուղղելով ինձ միտ: Եզակի եմ ես:

Պատմութիւնին դէմ մի ոնիր է այն ողբերգութիւնը ուր պատմական նշմարտութիւնները կոխան եղած են: Վերջին Լեւոնէն յետոյ չը կայ հայ թագաւոր. զուտ ստայօղ առասպել է Վարազդաս Բ թագաւորը, 'զոր մեր ընդդիմաբանը կը ստեղծէ: Լաւ ուսէք պատմութիւնը, Պ. պատմաբան:

Մի կին էր որ թատրաբեմին վրայ թագաւոր կարգեց Վարազդատը, թէեւ Պ. հեղինակը այժմ իւր գործը կ'ուրանայ: Թէ, զի մի անգամ միայն տեսած եմ այս ողբերգութիւնը, մոռցած եմ նորա մի քանի պարագայները, ձեռքս է ծանուցագիրը, ուր իմ ասածը տպուած է:

Օգոստոս կայսրին որոտումէ վախելէն Պ. հեղինակը կը հեսեւցունէ թէ Դիմուր ալ հարկով կը վախէր ուրուականէ, եւ այս ձախող տրամաբանութիւնովը կ'ուզէ 'զինքն արդարացունել: Թէ ողջ լինէր Էսգօպատ, այս փաստաբանութիւնին պիտի նախանձէր:

Մեծ տարբերութիւն կայ մեր այն հին եկեղեցական պատկերհանութիւնին եւ բուն դիմագծութիւնին մէջ. եւ քանի որ յայտ է թէ պատկերհանութիւն բառը դիմագծութիւնի տեղ գործածած եմ, կը զարմանամ թէ որպէս մեր հակառակորդը կը համարձակի այնքան ծաղկած ըմբռնել 'զայն մեր մէջ Դիմուրի օրով:

Դեսպանութիւն առած չը՞լինիր այն անձը որ մի պատերազմող բռնամի կայսրի հաշտութիւն կ'առաջարկէ եւ ընդունիլ կը տայ 'զայն: Թուրքէման դեսպանունի ներկայացաւ ուրեմն, թէեւ Պ. հեղինակը կը ջանայ ժխտել: Տաչորտերորդ դարին մէջ դեսպանունի. ոչ նշմարիտ է սա, ոչ իսկ նշմարտանման:

Մի Դիմուր, այնպէս որպէս պատմութիւնը մեզ կը նկարագրէ 'զայն, ճգնաժամի մէջ եւ կատաղութիւնի զգաքնակեն հասած՝ կարող է ոտքի տակ առնուլ իւր երդումը: Տեսնել իւր սիրելի զաւակին արիւնքաթախ բերուիլը եւ չարաչար մեռնիլը, եւ, մի այնպիսի կինի անսալով 'զոր կ'ատէ, վրէժ չ'առնուլ. Լէնկ—Դիմուրի գործ չ'է դա: Պ. հեղինակը, որ չ'է մտածեր այսպէս, Դիմուրի նկարագիրին հմուտ չ'է ըստ ինձ:

Դիմուր չը կրնայ խոնարհիլ մի Վարազդատի առջեւ, օդածին թագաւոր Վանոտոսի, եւ մի այնքան եզական մտերմութիւն նուիրել նմա: Այն «երկայն խելքը, որ, սմա հակառակ, ուխտաւորի զգեստ կը հագցունէ Լէնկին եւ մի Հայի ոտքը կը ղրկէ 'զայն, չ'է ճանաչեր Դիմուրը: Պ. հեղինակին, որ պատմութիւնի դասատու է ազգիս դրժբախտութիւնէն, կը հարցնեմ թէ այս ջերմ բարեկամութիւնովը որպէս կրնայ բացատրուիլ Վանի ջարդը. անշուշտ պիտի ասէ թէ Դիմուրի ուրուականն էր որ շամիրամակերտ պարիսպներէն գահավիժել տուաւ Վարազդատին հպատակները:

Մի Դիմուր չ'է կարող զառնուկի պէս գլուխ ծռել մի եկեղեցիի կամարին տակ: Նա, որ սմա կը հակառակի, չ'է հմուտ նորա ընդհանուր նկարագիրին:

Պ. հեղինակը կ'ասէ թէ Շահանդուխտ Դիմուրի կինը չ'էր: Աչքիս տակ է ծանուցագիրը, ուր կը տեսնեմ տպուած. «Հարսանիք Լէնկիմուրի

ընդ Շահանդխտոյ:» Ես իմ «կարճ խելք»ովը այնպէս կը կարծեմ թէ հարսանիքին յետոյ օրիորդը կինը կը լինի երիտասարդին. ձեր երկայն ուղեղին կարծիքը ինչ է, Պ. հեղինակ: Նաեւ մի՛ մոռնար ասիական նախանձը :

Պ. Թղլեան, կատակերգութիւն կ'անուանէք մի գրադատում, որ երեւան կը հանէ ծաղրելի կեսերը այն գործին 'զոր յանդգնած էք հրապարակել : Ծաղրելի չ'է, խոնուն ընթերցող, տեսնել մի Լէնկ—Դիմուր որ անզօր Հայերին օգը կը հայցէ Կոստանդնուպօլիսը կործանելի համար. ծաղրելի չ'է տեսնել մի Լէնկ—Դիմուր որ «Կեցցէ՛ Հայաստան, կեցցե՛ն Հայկազունք, կեցցէ՛ Վարազդատ Բ թագաւոր Հայոց» կ'աղաղակէ. ծաղրելի չ'է տեսնել մի Լէնկ—Դիմուր որ «Եղբա՛յր եմք մեք» կ'ասէ Հայերին . . . :

Մի՛ կարծէք թէ խելքի մեծավանառութիւն ունիք եւ հաւատացէք, Պ. Փայլատեան, թէ ճնճղատուքիւնին փայլատը կայ պատրաստ ամեն գրիչի վրայ: Գրեցէք, բայց լաւ գրեցէք . մի՛ մտածէք թէ բոլոր ժողովուրդը «կարճ խելք» է: Կ'ուզէք որ առանց դիտողութիւնի հաւնիմ ձեր *Լենկիրիմուրին*. ցուցէք ինձ ուրեմն նորա մի հատուածը որ գեղեցիկ լինի , որ վսեմ լինի, որ նոր լինի, մի հատուած ուր Լէնկ—Դիմուրը Լէնկ—Դիմուր լինի :

Ես, եւ ինձ հետ պատմութիւնը, կը նկատեմ Դիմուրը արիւնկզակ եւ կրօնամոլ , եւ հետեւապէս զուրկ այն ամեն փափուկ զգացումներէն 'զոր ջանացած էք տեղալ նորա սիրտին մէջ : Ես կը

պնդեմ գրական ատեանին առջեւ թէ ձեր *Լենկիրիմուրը* կաղ է :

Կը վերջացուցեմ գրադատումս , Վոլդէռի հետ խոստովանելով թէ «ժամանակը միայն կրնայ հաստատել ճնճղատուքիւններին արդար կամ անարդար լինիլը:» Սպասեմք :

1869, փետրվար 15.

Ց. Գ. Կը վերջացուցեմ, ասի, գրադատումս. այլ, թէ հարկ լինի , պատրաստ եմ շարունակել 'զայն եւ *Լենկիրիմուրին* ուրիշ թերութիւններն ալ երեւան հանել , ի սպառ հերքելով 'զայն :

Գ

Ահա վերջին անգամ կը հրաւիրեմ դարիս հայ գրագէտները դատել անաչառապէս իմ գրադատումը եւ Պ. Թղլեանի *Լենկիրիմուրը* : Թող վճռեն թէ ով իրաւունք ունի. կամ գէթ ականատես թող լինին այն յետին հարուածին 'զոր, ճնճղատուքիւնի տապար ի ձեռին , պիտի տամ այժմ *Լենկիրիմուրին* եւ որով մոռացութիւնի վիհին մէջ պիտի գահավիժեմ 'զայն :

Թող գիտնայ հանրութիւնը թէ «Սէր»ին էջերին մէջ փայլիլի համար ասպարէզ չ'եմ իջած : Ես ասպարէզ իջած եմ ներկային նախասը ապագայ գրիչներէն յափշտակելի եւ ներկային ծաղրը ապագայ շուրթերէն զողելի համար : Ես չը պիտի ասել տամ ապագայ սերունդին. «Ցասիներորդ դա-

ին լուսաւորուած Հային առջեւ բեմ եկաւ Լէնկ —Դիմուր, «Կեցցէ՛ Հայաստան» գոչեց, եւ երբ Հայը, զմայլած, կեցցէներ աղաղակեց եւ ծափերով բնդացուց բատրը, գրագէտները լուռ կեցան բոլորովին:» Այս է իմ ուխտը:

Ուստի, Պ. հեղինակ, բծնիլով մի՛ ներկայանամ ինձ. պաղ կատակէ չ'եմ ախորժիր: Զը պիտի բողում որ հպտանքի եգիպտի տակ հանանիներով խեղդէք ձեր ողբալի ողբերգութիւնին բերութիւնները, որ ապստամբ է բնականի դէմ, տրամաբանութիւնի դէմ, բատրական օրէնքների դէմ, պատմական ճշմարտութիւնների դէմ: Զգեցէք «բարտօն»ների խեղկատակութիւնը. ժողովուրդին ատեանին առջեւ եմ: Լուրջ խորհրդածեմ, բաջ գիտնալով որ բնաղատութիւնի դարեր յաջորդած են կուրութիւնի դարերին, բէեւ ներբողի բնար լսելի վարժ ականջներին դառնակոռոչ կը թուի բնաղատին շեփորը:

Պ. Թղեան, ձեր ինձ դէմ գրած երկրորդ յօդուածին մէջ, կը ջանամ պատասխանել ձեր ողբերգութիւնը Պ. Ժօզէֆ տր Համմէռի վկայութիւնովը, այն Ալէմանին որ մեր դարին մէջ ապրեցաւ: Եւրոպացիները դեռ շատ հեռի են Արեւելքը հանաչելէ. նոցա ամենէն երեւելի պատմագիրներին գործերն իսկ դեռ շատ անկատար են. մի եւրոպական հեղինակի համար ոչինչ աւելի դժուար է քան Թուրքիան մի ճշգրիտ պատմութիւն գրել. ուստի, Համմէռի «Օսմանեան կայսրութիւնի պատմութիւն»ն ալ մեզ համար մի անկատար գործ է, բէեւ Եւրոպայի մէջ ց'արդ երեւածներէն կատարելագոյնը.

այլ չ'եմ մեղադրեր 'զայն, զի Տիտրոյի հետ համոզուած եմ թէ «Մի հեռաւոր ազգի պատմութիւնը գրելի համար, անհուն աշխատանք, ժամանակ, հմտութիւն եւ դատողութիւն հարկաւոր է:» Դուք Համմէռի, «ջախջախ Եգիպտացիին», կը դիմէք. ես աւելի ստոյգ աղբիւրների կը դիմեմ. այնպիսի պատմագիրների կը դիմեմ որ Դիմուրի օրով ապրեցան եւ որոց մի քանիները առարկայ իսկ եղան նորա անգրութիւններին: Այժմ կը հարցնեմ ձեզ. Դիմուրի ժամանակակից ականատեսներին հաւատամք թէ մեր դարին մի Եւրոպացիին. Կռացի զաւակէն ուսնիմք Խօճա—Ալղատի վագրին կեանքը. հայ պատմիչները բողումք եւ Բիւրկսդալի սեպուհէն լսեմք Դիմուրին առընչութիւնները Հայերին հետ: Ուղիղ բանի դէմ է այդ. մի ապուշ իսկ կրնայ խորհիլ թէ աւելի արժանահաւատ է նա որ կը պատմէ ինչ որ տեսած է քան որ կը պատմէ ինչ որ չ'է տեսած: Ուստի կը դիմեմ Թովմաս Մեծոփեցի հռչակաւոր պատմիչին, որ կը գրէ.

«... Աշխարհաւեր բռնաւորն Լանկթամուր... ոմ կարէ պատմել ըզ քիւ գերեացն եւ 'զըսպանութիւն անմեղացն, այլ Ասուած միայն որ ստեղծ 'զամենայն եւ թուէ 'զամենեսեան. զի լցաւ աշխարհն ամենայն դիակամբք ... քանանայիցն(1) եւ աշխարհականաց. լցաւ երկիր եւ աշխարհ լալով եւ եղուկ կարդալով: Աւա՜ղ եւ եղո՜ւկ ա-

(1) «Թիմուր կրօնական յարգանք մը ունէր,» կ'ասէ. այո, բայց լոկ իւր կրօնին համար. պատմութիւնը վկայ է; Երբ

մենայն ազգիս Հայոց, զի աւերեցաւ ամենայն երկիրս : Բանզի, յԱրնիւոյ մինչեւ ի տունն Վրաց եւ մինչ ի Կուր գետ Աղուանից, շաղախեցաւ արեամբ անմեղաց երկիր ամենայն, տագնապեալ արհաւրօք եւ չարչարանօք, սպանմամբ եւ գերութեամբ . . . : »

Ահա «Կեցցէ՛ Հայաստան» գոչող Դիմուր—Լէնկին հայելին, ուր գլխովին նկարուած է նորա «ծայրահեղ վեհանձնութիւն»ը, որպէս կ'ասէր : Թէ չ'էր հաւատար Մեծոփեցիին, ուրիշ հայ պատմիչներ ալ նոյն վկայութիւնը կը տան միաբերան: Շահապօնսի պերճախօս վարդապետը կը գրէ ·

«Աւերեցան աշխարհք մեր եւ կոխան եղեն ազգք Հայոց · ոմանք ի գերութիւն վարեալք արք եւ կանայք, եւ կէսք առաքուր դիպաւալ սրախողխող գալարեալ· առ հասարակ քահանայք (1) եւ աշխարհականք զէջ անկեալ դիակամբ անբաղ ընկեցեալք, եւ այլք ի բազմազան տանջանարանս մաշեալք : Ոմանք հրով կիսայրեացք տոչորեալք, եւ այլք ի սովոյ գազանաբեկ վտանգեալք . կէսք խստամբեր կրիւք չարչարեալք, եւ

նենգով տիրեց Սեբաստիայի, քրիստոնեայները միայն ջարդեց եւ մահմեդականներին չը վնասեց, զի «Դիմուր, կ'ասէ պատմութիւնը, չ'էր ուզեր ջարդել քրիստոնեայներին բնամիները:» Բիւրաւորներ մահմեդական արաւ, բիւրաւորներ նահատակեց նա: Կը կարծեմ թէ բաւ է այսքան ապացոյց հաստատելի համար թէ նա կրօնամոլ էր :

(1) «Թիմուր կը յարգէր կրօնաւորները,» կ'ասէր. այո, բայց լոկ մահմեդականները, եւ մանաւանդ *շեյխ*երը եւ *տերվիշ*ները, որք իւր լրտեսներն էին :

այլք երկիւղիւ պաշարեալք · · · մեծի սասկասարսռուն ատենի · · · ջնջեցան մարդկութիւնս մանաւանդ հայկազեան գաւառաց · · · : »

Ահա «Եղբայր եմք մեք» գոչող Դիմուր—Պէկը, որոյ հարուածներին տակ շատ մայրեր իւրեանց զաւակները կերան Հայաստանի մէջ. կարդացէք եւ դատեցէք : Այն դարին բոլոր հայ պատմիչները սոյն լեզուն կը գործածեն ձեր սիրելի դիւցազնին դէմ: Թէ, կարեւորութիւն չը տալով նոցա կամ ստութիւն համարելով նոցա վկայութիւնները, օտարների դիմել կը բաղձաք, ահա ձեզ ժամանակակից օտարազգի պատմիչներ ալ· Լաւոնիկոս Կալկոկոնդիլաս, Գէորգ Փրանզաս, Դուկաս, եւ ուրիշներ նոյնպէս կը նկարագրեն այդ արիւնկրզակ Թարարը: Թէ առասպելախօս կը համարիք եւ ըզ նոսա, ալ որո՞ւմ դիմեմ· Համմէրի՞ : —Ոչ, ոչ· դեռ մի քանի սոքա հզօրագոյն պատշգան ունիմ ի ձեռին, այն է Դիմուրի կրօնակից եւ ժամանակակից կենսագիրը, Ահմէտ—պին—Ապտուլլահ—պին—Արապշահ մեծահամբաւ պատմիչը, որ կը գրէ ·

«Դիմուր—Լէնկ արիւնարբու էր, պատուհաս աշխարհի, աղբիւր արիւնի եւ աղէտի · · · կը պատմեն թէ նորա ձեռքերը բանձր արիւնով շաղախուած էին երբ ծնաւ, որով գուշակեցին թէ, երբ երիտասարդ լինի, կամ բռնաւոր պիտի լինի, կամ աւազակ, կամ մսագործ եւ կամ դահին · · · իւր ծնունդը ապիտաբեր եղաւ տիեզերքին· որչափ մարդ ջարդեց, որչափ թագաւորութիւններ եւ ցեղեր ջնջեց, որչափ քաղաքներ աւերեց · · · : »

Անհա գլխաւորապէս այս անաչառ անձին դիմեցի, որոյ գիրքն շատ բան խաղած է ձեր Համմէռ բարգմանիչն ալ:

Պ. հեղինակ, այսչափ պատմիչների էջերը անհերքելի փաստերով կը յայտնեն թէ դուք, Լէնկ—Դիմուրը Լէնկ—Դիմուրութիւնէ հանելով, մի առաքինի արարած, մի Սոկրատ արած էք 'զայն: Մեք թատրաբեմին վրայ մի գերմարդկային էակ չ'եմք ուզեր տեսնել. մեք Դիմուրը կ'ուզեմք տեսնել այնպէս որպէս էր: «Գորովալից սիրտ մը ունէր,» կ'ասէք. զարմանալի «գորովալից սիրտ», որ Տէլնիի առջեւ 100,000 գերի խողխողեց, Պաղտատի առջեւ 90,000 մարդազլուխով մի նոր աշտարակ (1) բարձրացուց, Դամասկոսի առջեւ անքիւ (2) անմեղ գլուխներով եօր բուրգ կանգնեց՝ սնափառ Փարաւոնների ապիկարութիւնը ծաղրելով անշուշտ...: Սարսեմք Հային աղէտներին տապանը, պատռեմք Հային թշուառութիւններին երակը, եւ դոցա մէջ կարդամք Լէնկ—Դիմուրի սիրտը. այդ տապանին վրայ, այդ երակին մէջ, արիւնէ տառերով սա գրուած է. «Լէնկ—Դիմուր մի գազան է մարդանման:» Տուր ձեռքդ, Պ. Թղլեան, այց ելնեմք Սեբաստիայի «Սեւ հողերին. այդ արիւնի հովիտին մէջ քո եւ իմ նախահայրները կը ննջեն, Դիմուրի հրամանով ողջ ողջ

(1) Քանի անմեղ է Ներոնի այս բարբարոսին քով:

(2) Հրամայեց որ անձնիւր զինուոր մի մարդազլուխ բերէ, այս յուրաքանչիւրը շինելի համար: Ըստ մի քանի պատմիչների, 1,700,000 զինուոր ունէր յայնժամ;

թաղուած կտրիններ, ձիերի կոխան մանուկներ, յօր յօր պատռուած աղջիկներ. այն դարաւոր դաշտին «Սեւ հողեր» մականունը սրբելով, պիտի կարենամք արդեօք «Գորովալից սիրտ» անուանել 'զայն.—ոչ, ոչ. պատմութիւնը եւ ժամանակը անմահ պիտի պահեն սա սոսկալի տառերը. «Սե՛ւ հողեր...:» Պ. Թղլեան, Լէնկ—Դիմուրը չ'էք հանաչեր դուք: Համմէռ չ'է կարող ըզ ձեզ արդարացուցանել:

Այսպէս, Համմէռը չ'ընդունելով, նորա զրոյցներն ալ մերժած կը լինիմ հարկով. այլ քանի որ նորա անձնիւր խօսին դէմ փաստեր ունիմ, էր ծածկեմ ըզ նոսա:

«Թիմուրի սկզբունքն էր, կը բարգմանէք Համմէռէն, միտքը դրածը երբէք չփոխել, երբէք տրուած հրամանը ետ չառնուլ.» Պատմութիւնը հինգ գլխաւոր պարագայ կը համրէ, ուր այդ սկիզբին չը հետեւեցաւ նա. Ա. Մազանտարանի Ապուպէզիր—Սասիանիին, Բ. Դէօֆէի իշխան Սէյս—Ալի Քիւրտիին, Գ. Բարապաղի Թուրքերէն Իմմէդի—Թիւրքմանիին, Դ. Մէլիգ Գորգիի հայր Վրաստանի Բագարատ թագաւորին դէմ, Ե. Երզնկայի մէջ (1):

«Ուղղութիւն, փրկութիւն.» ըստ մեզ, Ներոնի «Օ՜ճ թէ գիր չը գիտնայի»ին արժէքը ունի դա. զի ձեր ասուածացուցած վայրենին թէ հաւատար որ «Արդարութեամբ միայն մարդս մեծ է,» այնքան անմեղների արիւնը չ'էր խամեր:

(1) Եւ Զ. Նաւմի մէջ. կարդացէք ձեր վերջին արարը:

«Հայաստանի իշխանները(1) չուզելով այդ աշխարհակալին հպատակիլ՝ անիկայ դեսպաններ ղրկեց անոնց որ զան հնազանդին իրեն.» մեղադրելի է Համմէռ, զի, «Հայաստանի» ասելով, մասը ամբողջին տալ կ'առնու: «Ըսել է որ Լէնկիմուրը դողացընող իշխաններ կան եղեր տակաւին Հայաստանի մէջ, կը յաւելէ հոս, Պ. Սրապ. երբ օտար պատմիչ մը այսպիսի գովելի խօսք մը կը գրէ մեր ազգին վրայ՝ Հայու մը համար յանցանք է արդեօք քիչ մը աւելի զարդարելը զայն.» կը ցաւիմ որ չարաչար կը սխալիք, զի Համմէռի «Հայաստանի իշխան» խօսքը «հայ իշխան»ի համանիշ կ'ըմբռնէք. նա «Հայաստանի իշխան» ասելով կը հասկանայ մեր երկիրին վրայ բռնացող մահմեդական *էմիր*, դուք կը կարծէք «բազաւորական տիրապետութիւն մը» ունեցող հայ իշխան: Այն անիշխանական տարիներին մէջ, մեր հայրենիքը չէին կառավարեր ազգային իշխաններ, այլ, ըստ Արապշահի, Պիւրհան—էտ—տին, Քարա—Նուլուգ, Թահիրդէն (մեր սանը, 'զոր այժմ ձեզ պիտի ներկայացուցեմ), Մէլիգ Զահիր, Էմիր Սիւլէյման, Քարա—Մէհէմմէտ, Քարա—Նուսուք, Աբալմիշ, Շէյխ Շէրէֆ, Բիրիպէկ, Սահաք, Սահանդ, Ամիր Էզտին, Մէլիգ Էօմէր, Ճաֆէր, Շէմս—էտ—տին, Մէլիգ Մահմուտ, Էօմէր—պին—Միրինշահ, եւայլն, եւայլն, եւայլն մահմեդական իշխանները. թէ նոցա բոլորին անունները յիշէի,

(1) Սխալ բարգմանած է 'զայս Ժռանսերէնէն, թէեւ ազգային վարժարանների մէջ այդ լեզուն ալ դաս կը տաք:

թերեւս Հայաստանի մէջ չը պիտի մնար մի քաղաք ուր մի Հայ կարենար իշխել:

«Հայաստանը կառավարողն էր ան ատեն Թահիրբան անունով իշխան մը՝ որուն մայրաքաղաքն էր Երզնկայ.» հոս կը յաւելէք. «Սոյգ է որ խիստ շատ անգամ օտար պատմիչները աղաւաղելով գրած են մեր անունները. ես Թահիրբանը Վարազդատ անուանած եմ.» Պ. Թղլեան, այս Թահիրդէնը, որ, ըստ ձեզ, Լէնկ—Դիմուրը դողացուցող մի իշխան է, ըստ Համմէռի՝ նապատակի սիրտ ունէր. այս Թահիրդէնը, որ, ըստ ձեզ, պարծանք է իւր ազգին, ըստ Համմէռի՝ Դիմուրի առջեւ ին անգամ գեսինը պագաւ. ձեր պատմիչն կը տամ ձեզ այս տեղեկութիւնները, թէեւ, ըստ ձեզ, չ'եմ կարդացած 'զայն:

Բայց ինչ գործ ունի մեզ հետ Թահիրդէն: Հայ չ'էր նա: — Այս հարուածը ձեզ համար մահացու է, գիտեմ. այլ դուք իսկ բռնադատեցիք 'զիս ազգային հրապարակին վրայ մերկացուցել ձեր ողորմելի տաղանտը: Հայ չ'էր Թահիրդէն: Դուք, Պ. Թղլեան, քրիստոնեայ, Հայ եւ Արծրունի շինեցիք, եկեղեցի մտցուցիք եւ հոն փառաւորապէս պսակեցիք, վերջապէս հոգիով եւ մարմինով հայացուցիք այն Թահիրդէնը որ մահմեդական ծնաւ, մահմեդական ապրեցաւ եւ մահմեդական մեռաւ: Կ'ուզէք ապացոյց. ես այժմ, իմ կարգին, կ'ասեմ ձեզ, որ, աւաղ, պատմութիւնի դասատու էք ազգիս տգիտութիւնէն. «Կարդացէք Համմէռը:» Սա կը պատմէ թէ որպէս վերեց Երլտրրիմ Սուլթան Պէյազիտ այն Թահիրդէնին *հարեմը* 'զոր Հայ

կարծած եւ որոյ վրայ հիմնած էք ձեր ողբերգութիւնին շէնքը :

Լենկթիմուրի հիմը տապալելէս յետոյ, աւելորդ է շարունակել իմ գրադատումը. սակայն որոշած եմ ոչինչ թողուլ անպատասխան, չը հեռեւելով ձեզ, որ լոկ ձեր ուզածին եւ կրցածին կը պատասխանէք :

«Տարօրինակ հակասութեամբ մը՝ Թիմուր քան հազար քրէք տուաւ երկու զմբէթներու շինութեանց համար՝ Ցոլնան Մարգարէի եւ Սուրբ Սարգսի գերեզմաններուն վրայ, որոնց այցելութիւն ըրաւ ուխտաւորի կերպարանքով (1).» երբ Համմէռ «տարօրինակ հակասութեամբ մը» կ'ասէ, բաւական յայտնած կը լինի թէ Դիմուրի նկարագիրէն դուրս է մի այսպիսի գործ եւ բռնաւորի քմահաճոյք է դա. այլ թողումք այս կետը. ըստ մեզ, հայ պատմիչները շատ մանրամասն կը գրեն ընդհանրապէս. նոքա կը պատմեն թէ Դիմուր շատ եկեղեցիներ կործանեց, մանաւանդ Երզնկայի (2) մէջ, ուր կը յիշեն Ս. Սարգիսի կաթողիկէն. « . . . Ապա հրաման եհան հիմնայատակ առնել 'զամենայն եկեղեցիս ընդ ամենայն տեղիս. այլ

(1) Սխալ թարգմանութիւն. բնագիրին մէջ ոչ «կերպարանք» կայ եւ ոչ «զգեստ», որպէս կը գրէիք ձեր նախորդ յօդուածին մէջ:

(2) Թէ ձեզ հետ Համմէռի հաւատայի իբր պատգամի, ձեզ պէս պիտի շուարէի այս դէպքին առջեւ. թէ ով կործանեց Թանէրդէնի մայրաղաքը, մի անլոյծ հանելուկ պիտի լինէր այդ ինձ համար, Թանէրդէնի, 'զոր կան պատմիչներ որք Ասորպատականի իշխան կը ներկայացուցանեն ;

ոչ ի սպառ տեւեաց այս հրաման նորա, քանզի իւրովի իսկ դադրեցոյց յետոյ (1).» Սեբաստիայի մէջ նորա քանդածներէն կը յիշեն Քառասուն մանուկներու տաճարը, որ քառասուն գմբէթ ունէր. ըստ Համմէռի, երկու գմբէթ կանգնեց նա որ կործանեց այս քառասուն գմբէթը, մին այն սուրբին վրայ որոյ կաթողիկէն փլցուց Երզնկայի մէջ. կը կրկնեմ. Դիմուր սկիզբով չը գործեց այդ գործը, այլ ասիական միապետի քմահաճոյքով, թէ ստոյգ է որ գործեց. այլ հաւանական չ'երեւիր այս վէպը, որ, ըստ Համմէռի, տեղի ունեցաւ մեր Տիգրանակերտին մէջ, քանի որ հայ պատմիչները կը լռեն եւ մի օտար, Շերէֆէտտին, կը պատմէ 'զայն, որպէս Համմէռ ալ կը խոստովանի :

Հոս հարկ չ'է ասել թէ այն «մարգարտայեռ փառաւոր թագ»ը, 'զոր կը կարծէք թէ Թանէրդէն անուն մի հայ իշխան կ'ընդունի Դիմուրէն, մահմեդական Թանէրդէնի գլուխը անցաւ, որով ձեր խնդումն ալ յօդս ցնդուեցաւ: «Ուրեմն կրնանք ըսել թէ, կը գրէք հոս, սակաւատեւ հայ թագաւորութիւն մը տեղի ունեցաւ ան ատեն Հայաստանի մէջ.» չ'էք կարող ասել 'զայդ, այժմ որ ուսաք թէ հայ չ'էր Թանէրդէն :

«Թիմուր . . . ունէր հայրագորով ներողամտութիւն մը իւր որդւոցը համար.» վագրերը շատ կը սիրեն իւրեանց ձագերը :

Զի Դիմուր «Քարապաղի դաշտին մէջ ամառը

(1) Տեսամ այն Դիմուրը որ, ըստ ձեզ, երբէք ետ չ'էր առնուր իւր հանած հրամանները :

անցուց, » կը կարծէք թէ կ'արդարանամ 'զայն Արարատի մէջ ներկայացուցնելով երբ դեռ յարաբերութիւն հաստատած չ'էր Թանէրդէնի հետ. ձեր այս ժամանակագրական սխալը անհաւելի է, զի Համմէռ իսկ, ձեր յոյսը եւ կեանքը, հոս ըզ ձեզ առանձին կը թողու ձեր տգիտութիւնին հետ:

Այժմ, ձեր բոլոր զէնքերը փոխելէս եւ ձեզ մի ամօթալի պարտութիւն կրել տալէս յետոյ գրական ասպարէզին մէջ, մի բարէկամական խրատ պիտի տամ ձեզ, սիրելի Պ. Թղլեան. այսուհետեւ մի ազգային խաղ գրելէ յառաջ, պատմութիւնը խնամով ուսումնասիրեցէք: Մի հեղինակ, որ կ'ուզէ աջողիլ, պարտաւոր է միշտ ժողովուրդը յիւրմէ աւելի հմուտ ենթադրել եւ հաւատալ: Ժողովուրդը զաւակներ ունի որք խարդախներին դիմակները կը բգկտեն: Վա՜յ նմա որ չը գիտէ այս ճշմարտութիւնը:

1869, մարտ 4.

Գ.

Մեծն Տրդատ եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ողբերգութիւն հինգ արարով, հեղինակ՝ Պ. Սրապիոն Թղլեան.

Անցած օր այս խաղին նախագիրը տեսայ չը գիտեմ ուր: Միշտ միեւնոյն Գրիգորն է, որ Աւետարան կը քարոզէ նախարարներին, եւ ապա կը վախճանի Մանեայ այրին մէջ. միշտ միեւնոյն Տրդատն է, որ կը շահատակէ կամ իւր շահատակութիւնները կը վիպէ, կը յուսահատի, կը փախչի, կը բունաւորուի: —

Թատրը լոկ զբօսարան կարծելէ շատ հեռի եմ ես: Մի ուսումնարան է այն, ուր ամեն սեռի եւ ամեն հասակի մարդեր կ'երթան դասիարակուիլ հմայքով եւ գաղափարներով: Մարդը երկու գոյութիւն ունի իւր մէջ. միտ եւ սիրտ. ուստի, հարկ է որ ամեն տեղ հաւասարապէս շինուին դոքա. մայրի ծունկերի վրայ, դասատուի քով, հեղինակի հետ, աստեւաբանի դիմաց, օթեակի մէջ, քարոզիչի առջեւ, միտը եւ սիրտը հարկ է որ միահամուռ օգտին, եւ ոչ թէ մին ի վնաս միւսին: Այն ուսուցիչը, որ սիրտը կը կրթէ, անիրաւ է. այն ուսուցիչը, որ միտը կը կրթէ, անիրաւ է. պատ՚ւ նմա որ միտը եւ սիրտը կը դասիարակէ միանգամայն. նա, եւ նա միայն կ'աջողի: — Թատրի մէջ ալ այս կրկին դասերը պարտաւոր են տալ բանաստեղծները. այն դերասանը, որ մեր սիրտին միայն կը խօսի, գրէթէ կը թշնամանէ մեր միտը, եւ փոխադարձապէս: Ուստի, մի թատրախաղի մէջ, պէտք է որ զգացումը եւ գաղափարը քովէ քով ապրին, որպէս զոյգը կ'ապրի առարկային հետ: Հաշտ է այն խաղը ուր զգացում մի այն կայ. հարկ է որ իմաստասիրութիւնը լրացուցնէ 'զայն:

Ահա այս վերջինը կը պակսի մեր թատրերին մէջ ծափահարուած գրէթէ բոլոր հայ հեղինակ-

ԳՐԱԴԱՐԱՆ

ներին: Այնքան ցաւալի է սա որքան տաղտուկ: Մեր բոլոր բատրախաղներին մէջ գրէթէ միեւնոյն յատակագիծը կը գտնեմք. ամբողջ գործը գրէթէ մի եւ նոյն զգացումով լի է եւ զեղուն. — հայրենասիրական զգացումն է այն, որոյ առջեւ խամրած կը չքանան այնքան նուիրական զգացումների ծաղիկներն անգամ, ուր մնացին լուրջ գաղափարները, որք խմբովին խոյս կը տան այդ մեծամոլ զգացումին առջեւէ: Կ'երեւի թէ մեր հեղինակները, մի իմաստասիրական նպատակի վերայ չը խորհած, հայ պատմութիւնը ձեռք կ'առնուն եւ դարէ դար կը թափառին, մինչեւ որ գտնեն մի վէպ որ իւրեանց ժպտի. սմա համար է որ կ'արտադրեն մի խեղ եւ կաղ գործ, որ չ'ունի բնաւ հանճարի թռիչ. մի մեքենայ, որ կը շարժի հայրենասիրութիւնին շոգիին տակ: Ի զուր կ'որոնես մի գաղափար նոր եւ լուսաւոր. ի զուր կ'որոնես ընկերային ոեւէ խնդիրի լուծում. ի զուր կ'որոնես մի բան, մի լոյս, մի փորձ՝ նպաստաւոր ներկային. մեքենայը յետախաղաց շարժում միայն ուսած է. դէպ անցեալը կ'երթայ. կիսաստուածների լեզու կը խօսի մեզ որ մարդի լեզու կը խօսիմք. եւ երբ՝ բատրին մէջ այն ոսկիէ ժամերէդ կողոպտուած՝ կը մեկնիս յօրանջելով, ինչ կը տանիս հետդ. — մի աղօս շուն որ ուղեղիդ մէջ մի պահ կը բզզայ . . . :

Թատրաբեմին վրայէ սկիզբներ պէտք է ծաւալել ժողովուրդին մէջ, ողջ եւ նոր սկիզբներ:

Այս խոհերը ծնան իմ մէջ՝ երբ յիշեալ ողբերգութիւնին նախագիծը կարդացի: Ես այն վստահ

նիւթը կը կսկծամ երբ կը տեսնեմ թէ միջակ գրիչներ կը շօշափեն 'զայն, եւ մանաւանդ այն գրիչը որ յաւիտեան ծաղրելի *Էնկիրիմուրը* վիժեց: Մի հեղինակ, որ, մեր պատմութիւնին այս իմաստասիրական շրջանին մէջ նետուելով, իրարի չ'է բաղխեր այն մեծ մեծ խնդիրները, իրարի դէմ չ'է հաներ հոգեվար կռապաշտութիւնը եւ նորածին քրիստոնէութիւնը, որ կը փախչի քաղաքական նուրբ տեսութիւններէ, որ, իմաստասիրութիւնի դաշտը լրած, ցնորի հովերին վրայ կը տարուբերուի, անմիտներէ «մեծահանճար» հռչակուած մի այսպիսի հեղինակ բնաւ արժէք չ'ունի գրադատին առջեւ, եւ նորա գրած տեսրները ներմակ բուղքի յարգն ալ չ'ունին, զի մոռնուած են:

1870, փետրվար 20.

Դ

Սուս Մարգարէ մը կամ Արձագանգ Ճշմարտութեան, կատակերգութիւն երկու արարով, հեղինակ՝ Պ. աշակերտները Մուրատեան վարժարանին.

Գրադատումը, որ ժողովուրդին մի անվիճելի իրաւունքն է, դեռ չը տարածուեցաւ մեր մէջ: Ցաւ է այս: Պ. գրադատները ասպարէզ չ'են իջներ, թերեւս զի չ'ունիմք տակաւին ականաւոր հեղինակներ, արժանի ընթերցումի, ուսումի,

գրաղատումի. իրաւունք ունին : Այլ չ'եմ կարծեր թէ լաւագոյն է արհամարհելով մերժել այն գրականութիւնը 'զոր ունիմք առձեռն: Մեր նոր գրականութիւնը իւր մանկութիւնի շրջանին մէջ է. ոչ ոք կ'ուրանայ 'զայս. ուստի, մանուկին հարկ չ'է դասիարակ : Հեղինակին երախտագիտութիւնին, ժողովուրդին շնորհակալութիւնին արժանի մի դասիարակ է գրաղատը, երբ օժտուած է հրմտութիւնով, երբ խորհրդածող է, երբ ընտիր ոճ ունի գրական, երբ անաչառ է :

Օր ըստ օրէ, գրաղատումը իւր պէտքը աւելի ըզգալի կ'անէ : Երբեմն այնպիսի գործեր կը հրատարակուին որք, թէեւ գովեստի եւ քաջալերի արժանաւոր, բայց՝ հանրային ուշադրութիւնին չը յանձնուիլով՝ չ'են գտներ ընդունելութիւն. սմա հակառակ, յաւիտենական պարսաւի արժանի գրուածներ կը տեսնեմք, որք ժողովուրդէն կը խըրախուսուին ջերմագին. — եւ գրագէտը, ճշմարիտ գրագէտը, այս գայթակղելի տեսարանին առջեւ կը հակէ եւ կը շփշփէ իւր խոհուն հակատը, մի գաղտ հառաչ կ'արձակէ, տեսնելով որ ուղեղ կը մաշէ մի այնպիսի հանրութիւնի համար, որ հանճարի Լիլիբիւդներին պատշաճ կը տանի միտ իբր հանճարի Տիտանների : Արի գրաղատներ պէտք է որ հրապարակ նետուին, «Կեցիր, անպիտան ես դու» պոռան միին, «Ցառաջ անցիր, դու ես պիտանին» գոչեն միւսին :

Բայց մեր վերնագիրը մոռցանք :

—Հոն էի շաբաթ գիշեր, Կայսերական Թատրը. *Սուս Մարգարէ մը կամ Արձագանգ ճշմարտութեան* ներկայացուեցաւ. եւ զի բատր չը կրնամ երբալ առանց տեսածս դատելի, ընթերցողներիս առջեւ. կը դնեմ այն դիտողութիւնները 'զորս արի նոյն գիշերը այդ կատակերգութիւնի մասին :

Խաղին նիւթը խոհուն եւ գեղեցիկ է, մինչ զի Ալէքսանտր Տիւմայի, Տը Ֆէռէալի, եւ մանաւանդ Էօժէն Սիւի գրուածները կը յիշեցուցէ:—Մի խաբեբայ, մարգարէ հռչակելով 'զինքն եւ (իբր թէ) զանազան հրաշներ գործելով, կ'աջողի մուտ գտնել մի իշխանական գերդաստանի մէջ, համոզել իշխանուհին եւ նորա դուստրը թէ, երկնային արքայութիւնը շահիլի համար, պարտաւոր են աղքատ ապրիլ եւ հեռեւապէս իւրեան յանձնել ամեն հարստութիւն, որպէս զի կարենայ որբանոց, հիւանդանոց, վանք, եկեղեցի, եւայլն կանգնել. իշխանուհին եւ իւր դուստրը, Տիգրանուհի, սուրբ մարգարէին բարէպաշտ սիրտով կ'ընծայեն ինչ որ ունին. յետոյ, նենգաւորը, վախելով թէ մի՛ գուցէ մի այր ընդդիմանայ, մի ժառանգ դատ վարէ իւր դէմ, եւ լսելով թէ Տիգրանուհի մի սիրահար ունի, Սեպուհ, որում հետ պիտի ամուսնանայ ինչ ատենէն, կը գայ համոզել իշխանուհին թէ, հոգիին փրկութիւնը կատարեալ անելի համար, հարկ է որ իւր միակ դուստրը Քրիստոսի նուիրէ, այսինքն վանքի մէջ փակէ. կ'աջողի. վանքի տեղ, մութ խցեակի մէջ կը շղթայէ Տիգրանուհին. այլ Սեպուհ կը փրկէ 'զայն, ոստիկանութիւնին կը յանձնէ մարգարէն, որոյ խաբէութիւնները յայտնի կը լինին, եւ որ ցը մահ աշտարակի մէջ փակուիլի կը դատապարտուի : — Այս յատակագիծը, որ չ'է

պարունակեր մանուածաւոր ինար, մի ազնիւ գաղափար կը տայ Պ. հեղինակներին վրայ: Նախապաշարումները մանաւանդ պապական հոգիներին հետ խմորուած էին ց'արդ, այնքան սերտ շաղկապով որ հիմնական ցնցումներէ միայն կը սպասուէր փրկութիւն. Մուրատեանները այն դարաւոր սնապաշտութիւններին վրայ մի քաջասիրտ ծիծաղ կ'արձակեն եւ նոցա դէմ նակատ կը բարձրացունեն այսօր. մի դրօշ կը պարզեն իւրեանց գլուխին վրայ, եւ այն դրօշը ազատութիւնին շունչովը կը բրբռայ. քանի՛ մեծ, քանի՛ բսփոփիչ է տեսնել թէ Միջին դարի զաւակը կը զարթի, խաւարի որդին իւր մայրին լանջը պատռելով դուրս կը նետուի, եւ բարեւ կը տայ լոյսին...:

Այս ամենը գեղեցիկ է. կան տգեղ կետեր ալ, 'զորս պարտաւոր եմ նշանակել իբր անաչառ գրադատ: —Ինձ այնպէս կը թուի թէ գործը շատ աւելի պիտի շահէր, թէ ողբերգութիւն լինէր. կատակը մի վայրկենական ծիծաղ կը շարժէ, 'զոր օրեակին մէջ կը թողու հանդիսատեսը եւ կ'երթայ ձեռ նունայն. ողբը կը յուզէ, հոգիին խորերը կը խառնէ իբր մոգական եռժանիով. եւ ինչ որ կը յուզէ, տեւական է:

Թուեցաւ ինձ թէ խաղին նիւթը, ստեղծումը լաւ, այլ գործադրութիւնը յոռի էր: Մի քանի կետերի մէջ գործը այնքան անկաւ, այնքան նուաստացաւ որ վախեցի հեղինակներին պատիւին համար: Հռոմի վատ եւ անարժան կայսրներէն մին, բատրի մէջ խաղեր ձեւացունելէ յետոյ, ի ծուռ կ'իջնէր հանդիսատես ժողովուրդին առջեւ, ծափ մուրալով ի նմանէ. այդ յիմար կեսարին հետեւած կը լինին հեղինակները, թէ, խուժանին ծափը եւ համակրութիւնը ստանալի համար, խոնարհին նորա առջեւ, գանան լինին 'զայն խնդացունելի, եւ ոչ դատասիրակ' 'զայն կրթելի համար:

Մի թերութիւն ալ կը նկատուէր: Սա այն զարմանալի արագութիւնն էր որով կը համոզէին, կը համոզուէին: Ատուած իմ, այդչափ դիւրին բան է համոզելը. մի անծանօթ մարդի վրայ, որ մարգարէ կը հռչակէ 'զինքն, որպէս կարելի է այդչափ մեծ վստահութիւն ստանալ մի ակնթարթի մէջ եւ իւր միլիոնները նմա յանձնել անկասկած. հեղինակը, այսպիսի երկբայ պարագայների առջեւ, մի պարզամիտ անձի մէջ անգամ պարտաւոր է հակընդդէմ կարծիք ներկայացունել. պէտք է որ տարակոյսներ զգայ սա, զղջայ, ապա ինքն իսկ իւր կասկածները ցրէ, երկու քայլ դէպ համոզիչը ընթանայ, մի քայլ ետ դառնայ, եւ մի ներին պատերազմէ յետոյ անձնատուր լինի. բնական է այս, եւ այս ազդու: Մի այսպիսի անհակառակելի նըշմարտութիւնի հակառակ, հեղինակները այնքան վստահութիւն ազդած են իւրեանց դիւցազնութիւններին, մինչ զի կարծեցի թէ Կոնփուկիոսի ժամանակակից են սոքա եւ Չինաստանի մէջ կ'ապրին, կամ Անկլիայի մէջ՝ Մեծին Ալֆրէդի օրով, կամ Նորմանտիայի մէջ՝ հռչակաւոր Ռոպէրդ դուքսին ատեն:

Մի վերջին դիտողութիւն ալ: Ցայտ է թէ, ընտիր կատակերգ լինելի համար, պէտք է հանճար ունենալ. ազնուապէս ծիծաղ շարժելը դիւրին չ'է.

ֆիչերի տրուած է Մօլիէռի մօտիլ: Թէ մի կատակերգ հարկաւոր ձիրքը չ'ունի, թէ չը գիտէ նկարագիրների մէջ, հնարների, դիրերի, իմաստների մէջ նրբամտութիւն խառնել, կը սիպուի դիմել անարգ եւ նենիմ միջոցների, որպէս զի ժպիտ բաղէ. ալ յայնժամ բառեր կ'աղաւաղէ, գիրերի վրայ կը խաղայ· եւ ոչինչ կրնայ կասեցուցնել 'զայն այս ծախող շարժումին մէջ: Մեր գրադատած խաղին մէջ ալ գործածուած տեսանք այս խեղճ գիւտը· մի անձի անունն էր Թապուֆոսոլորոպուսիանինոսսիոս . . . :

1870, ապրիլ 23.

Ե

Մարդ իրենց գործերու զաւակները, հեղինակ՝ Ֆիլառէդ Շալ, թարգմանիչ՝ Պ. Գէորգ Պուպլի· Զմիւռնիա, Տէտէեան. 1870.

Իմ ձեռքը մի տետր անցաւ որ այս մակդիրը կը կրէ: Մակդիրը չը հասկացայ (Պ. թարգմանիչը թող ներէ), բայց գործը լաւ իմացայ: Պ. Շալի բանախօսութիւններէն մին է այն· ընտիր գործ, 'զոր կը փութամ ներկայացուցնել իմ բանասէր ընթերցողներին:

Եւրոպական մտենագրութիւնը անսպառ գանձեր ունի որ արժանի են ամեն լեզուի թարգմանութիւի. այլ բանաւոր չ'է թարգմանել զգ նոսա

յախուռն, առանց ընտրութիւնի· կիրք հաճակ, դիտող միտ ունենալ հարկ է թարգմանիչներին, որպէս զի ազգին հաղորդեն ինչ որ նորա արդի պէտքերին կը համապատասխանէ: Կան գործեր որ վնասակար են մեր ներկայ կացութիւնին մէջ եւ աղիտաբեր ազդեցութիւն կ'ունենան· կան գործեր որ դեռ կանուխ են մեր ժողովուրդին համար եւ չը կրնան ընդունելութիւն գտնել ի նմանէ· կան գործեր որ մեզ համար երկրորդական կարեւորութիւն ունին եւ անօգուտ կը մնան. կան գործեր ալ որ, անհնան, մասնաւոր, դիպուածական պարագայների մէջ գրուած, հեղինակներին բնական երկիրին եւ ապրած դարին համար կարեւոր եղած եւ համբաւ ստացած են, այլ մեզ համար արժանիք չ'ունին, որպէս Վոլդէռի *Միքրոմեգասը*, որոյ թարգմանութիւնը մօտերս հրատարակուեցաւ, եւ ուրիշներ: Թարգմանիչները պարտաւոր են զանց առնուլ այսպիսի գործեր, եւ, ազգին վիճակը օգտագործելով, հաղորդել ինչ որ օգուտ է նմա:

Պ. Պուպլի կը թարգմանէ մի գործ որ ոչ վնասակար, ոչ ապաժամ, ոչ ֆիչ կարեւոր, ոչ անօգուտ է: Մի տետր է սա, այն ողջ դատողութիւնով, հաստատ հմտութիւնով գրուած տետրներէն, որ ոչ ծանձրոյթ կը տան եւ ոչ յոգնուդ, որ կը լափուին ֆան կ'ընթերցուին: «Թէ այսպէս քառասուն հատ լինէր, մի շունչով կը կարդայի·» այս գաղափարը ունեցայ երբ տետրին վերջին երեսը հասայ· նոյնը պիտի մտածեն անշուշտ նոքա որ կարդան 'զայն :

Մի գեղեցիկ ընտրութիւն արած է Պ. թարգմանիչը. ցոյց տուած է թէ նաշակի տէր է նշմարտապէս, եւ ոչ նոցա պէս որ նաշակի մարդ կը հռչակեն 'զինքեանս եւ կը պարծին, մինչ տգեղը գեղեցիկին չափ գեղեցիկ կ'ըմբռնեն յանախ, սուտը նշմարիտէն գերագոյն, չարը շքեղ քան բարին, անօգուտը օգտակարէն աւելի անհրաժեշտ: Պ. Շալ, Բարիզի մէջ խօսած ճառերովը, մեծ համբաւ ստացած է, որում արժանի է նա: Մի ուսումնասէր, ուշիմ, հեռատրիր, անհամբեր բազմութիւն ներկայ կը գտնի իւր բանախօսութիւններին, իբր մի իմաստների խնոյրի հրաւիրուած. կը գայ «համակրական հաղորդակցութիւնների մի պէտքը» լնուլ, գաղափար փոխանակել, իմացականութիւնի սնունդ հայթայթել, եւ գոհ կը մեկնի, նոր գաղափարներ տանելով իւր հետ. զի Պ. Շալ չ'է ի նոցանէ որ մի շքեղ մակդիրի ցոլացիկ եւ խաբուսիկ թեւերին տակ սեւ եւ անձեւ վիժածներ կը թխսեն, որ կը խոստանան ինչ որ չը կրնան կատարել, որ ունկնդիրներ ես կը ղրկեն՝ իւրեանց պերճախօս զրախօսութիւններովը նոցա օրօր կարդալէ յետոյ, եւ որ ուրիշ բան չը գիտեն անել այլ հանդիսականներին յօրանջում, մրափ եւ քուն պատճառել եւ ստէպ ստէպ սրահի դուռի եւ ժամացոյցի նայիլ տալ . . . :

Ազնիւ թարգմանիչը, որպէս ասի, Շալի գեղեցկագոյն ճառերէն մին կը հրատարակէ, 'զոր աւելի հեռին պիտի գտանեմ: Նախ Պ. թարգմանիչին առաջաբանովը կ'ուզեմ զբաղիլ: Իւր ոճին վրայ ալ դիտողութիւններ ունիմ. այլ

յօդուածիս վերջը պիտի յայտնեմ ըզ նոսա:

Առաջաբանը համառօս, բայց լի է լուսաւոր իմաստներով, եռանդուն ազատասիրութիւնով, առաջդիմութիւնի բոցով, հայրենիքի կրակով: Ազգին անկումը տեսող մի զգայուն սիրտի ճիչն է այն: Չ'եմ կարծեր սխալիլ թէ ասեմ որ նորա մէջ յայտնուած գաղափարները եւ զգացումները նոր սերունդին գաղափարներն եւ զգացումներն են: Այն բոցը, որ ամեն նշմարիտ Հայի, ամեն առաջդիմութիւնի զինուորի մէջ կ'եռայ, Զմիւռնիայի երիտասարդ գրասէրին մէջ ալ կը վառի: Իւր տողերը վկայ կը բերեմ.

«Տարիներ անցան, առանց մեզ համար մեծ նշանակութիւն ունենալի: Հազիւ այժմ կը զարթիմք: Տգիտութիւն ժառանգեցինք. մեք այսօր նժդեհ, տկար, նկուն, այլ պարտիմք լաւագոյն ապագայ պատրաստել մեր որդիներին: Սկսիլ պէտք է. ալ ատեն է որ ազգը մեռելութիւնի դատապարտող ախտերը, աղքատութիւնը, տգիտութիւնը վերնան, գեղեցիկ սեռը իւր դաստիարակութիւնի պաշտօնը եւ իրաւունքը առնու, լոյս ծաւալուի, եւ վշտակիր հայութիւնին տառապանքը վերջանան:»

Առաջաբանին մի մասին լուծումն են սոխ. փափագելի էր ինձ բառ առ բառ օրինակել 'զայն, բայց անձուկ է «Երկրագունս»:

Այս գաղափարները նոր չ'են. ամեն ոք ունի ըզ նոսա, շատեր խօսած են նոցա վրայ. նշմարիտ է. բայց մի արգել չ'է այդ որպէս զի խորհողը համր կենայ: Բոլոր գրագէտները իւրեանց գրիչները ջարդել պարտաւոր էին թէ ուշ դնէին ալէ-

ման հեղինակին, որ կ'ասէ. «Ինչ որ կը խօսուի եւ ինչ որ կը գրուի մեր օրերին մէջ, հազար անգամ ասուած եւ գրուած է յառաջ ի մէնջ:» Այո, երբ հարկ է ծաւալել մի սկիզբ որոյ վրայ հառուած է արդէն, տղայութիւն է կասիլ. հարկ է նոր ձեւ տալ նմա, եւ քարոզ կանգնիլ: Թերեւս երկու դար յետոյ, մի Հօդէնդօդ Պ. բարգմանիչին խօսք պիտի կրկնէ իւր հայրենակիցներին. եւ նա մեծ պիտի լինի, զի մի ժողովուրդ պիտի լուսաւորէ:

Մեծ յոյս ունիմ թէ այսպիսի վեհ գաղափարներ տածող մի երիտասարդ Զմիւռնիայի լուսաւորութիւնին պիտի ճգնի արիապէս: «Վաս» կը կոչէ ինքն զգ նոսա որք չ'են ուզեր քայլել դէպ այդ երջանիկ նպատակը. ես «վաստերի վաս» կը կոչեմ զգ նոսա որք կ'ընկրկին, իւրեանց հաւատը այսպէս հրապարակով դաւանիլէ յետոյ: Յարութիւն պէտք է տալ Զմիւռնիայի. նա Մամուրեաններ, Ոսկաններ, Զիլինկիրեաններ ունի. Ինչ կը պակսի նմա. — Ահ, մի կայծակ . . . :

Գամք Պ. Շալի հառին:

Ականաւոր ատենաբանը իւր խօսին առաջին մասը կը սկսի, գաղափարների փոխանակութիւնի հարկին հանրացումը դիտել տալով: Եւրոպայի եւ Ամերիկայի ամենէն աւելի յառաջադէմ աշխարհները կ'անուանէ ի վկայութիւն այս կարծիքին: Մեք, աւելի հեռին երթալով, հզօրագոյն փաստ կը գտնեմք այդ կարծիքը ապացուցելի համար: Այնքան զգալի եղած է գաղափարների հաղորդակցութիւնի պէտքը, մինչ զի յետադէմ աշխարհների մէջ իսկ իւր հակակշիռը ունի: Թուրքիա, 'զոր մի բաւական հերոդատիս անկիրթ աշխարհագիր «կէս քաղաքակիրթ» կը կոչէ, Թուրքիա իսկ այդ հարկը զգաց: Նախ Սամաթիայի մեծոգի երիտասարդութիւնը շարժեցաւ, լսարան եւ խօսարան հաստատեց. շատեր նմա հետեւեցան: Մի փառաւոր ապացոյց է սա թէ կարծիք փոխանակելի պէտքը ամեն տեղ կը զգացուի այսօր:

Հնութիւնն ալ, կը շարունակէ Պ. Շալ, նոր աշխարհին պէս, բանակցիլի, գաղափար փոխանակելի տեղեր ունէր: «Սակայն, կը յաւելէ, հիներին մէջ արուեստը ամեն բանէ նախադաս կը սեպուէր. ընտիր ձեռին սիրահար, յատակը չ'էին քններ բնաւ:» Այս դատողութիւնը, ընդհանուր կերպով ասուած, չը կրնայ դիւրով արդարանալ, զի շատ պատուաւոր բացառութիւններ եւ մեծ զիջումներ կան անելի. այլ երբ Պ. Շալ իմաստակներին վրայ կը մասնաւորէ նոյն դատաստանը, իրաւունք կը տանայ:

Հին Յոյներին մէջ մի դաս մարդեր կային. օգտաւէտ եւ զուարճալի ուսումների հմուտ, խօսով կամ գիրով կ'ուսցունէին գիտութիւններ եւ արուեստներ. իւրեանց այս դասիարակիչ պաշտօնին համար մեծ յարգ կ'ընդունէին եւ կը կոչուէին *սօֆիսդիս* (իմաստակ). այս բառին նախնական նշանակութիւնը նախատական չէր բնաւ: Առաջին անգամ Սողոն արժանացաւ այդ մակդիրին. ամեն նշանաւոր ատենախօս եւ գիտուն այս պատուանունը կը տանար: Այլ երբ Յոյներին բարի ապականութիւնը մինչեւ այն հանրային դասիարակներին վրայ ծաւալեցաւ, սոցա

իմաստութիւնը եւ հարստաբանութիւնը խանգարուեցան; եւ «իմաստակ» անունը առաւ այն անպատիւ նշանակութիւնը 'զոր ունի դեռ այսօր եւ 'զոր պիտի պահէ յաւիտեան: Յառաջ, ժողովուրդին օգտակար լինիլ կը ջանային նոքա. յետոյ, հանելի լինիլ միայն ցանկացին. մի մեղկ ամբոխի հաճոյ թուիլի համար՝ իւրեանք ալ պարտաւոր էին բուլանալ. մեղկացան սէրով, եւ իւրեանց հեռ արուեստն ալ մեղկացուցին: Պերճախօսութիւնը, որ անման Պերիկղէսի եւ տաս մեծ ատենաբանների արու ձայներովը ժողովուրդը վառած էր քաղաքային առաքինութիւնների եւ հայրենիքի սէրի, այդ առնական եւ օգտակար պերճախօսութիւնը, իմաստակների բերանին մէջ, արուեստակութիւնի եւ թուլութիւնի մի լեզու դարձաւ, ատտիկեան աղը եւ առուզութիւնը կորցուց: «Խօսի արհեստաւորներ եւ քանդակիչներ» եղան իմաստակները եւ հռետորները, որպէս կ'ասէ Պ. Շալ: Պերճախօսութիւնին այս անկումին գլուխ կանգնեցան Յոյներին մէջ Դեմեստ Փաղերացի եւ Հռոմայեցիներին մէջ Ա. Սենեկա:

Պերճախօսը, այսինքն փնախօսը (Պ. թարգմանիչին մի սիրելի բառն է այս), բեմ կ'ելնէ ծաղկապսակ, նինուէական զեղխութիւնով իւր գլուխը անոյշ իւղերով օծած, որ բոյր ի բոյր կը ծաւալին իւր շուրջը, եւ իւր շքեղ պատմուճանին գոռոզ ծածանումովը ուռած. մի փափկասոյլ սրինգ կը ձայնակցի նմա: Այս նախապատրաստական փափկութիւններին վրայ շուտով կը յաւելէ նորանոր նազեր, փաղաքշանք եւ ծնծղեռում: Անդ

կը սկսի խօսիլ. Ասուած իմ, մարդկային ձայնը կրնայ հասնիլ մինչեւ այդ նրբութիւնը. զրաւ կը դնեմ, նա լեզուին վրայ մի բաբուն բնարիկ ունի: Մտիկ արէք, մտիկ արէք. ճն, ինչ փայլփլուն գիւտեր, ինչ պերճախօսական ծաղիկներ, ինչ հմայող դիմառումներ, ինչ ոգէյոյզ բացագանչութիւններ, ինչ նեղաշնակ յանգեր, ինչ վսեմ պատկերներ, այն ինչ շնորհ, այն ինչ քաղցրութիւն, այն ինչ փափկութիւն, այն ինչ նրբութիւն, այն ինչ շուք, այն ինչ ձեւեր, այն ինչ հանճար . . . թէ մի Ասղիկ լինէի, այս պերճախօսական մարգարիտներովը մի մանեակ կը շինէի, եւ Ապողոնի բնարին վրայ կը կախէի: Ի՞նչ նիւթի վրայ կը խօսի այդ նիհանալի էակը. —Կը ջանայ համոզել թէ «ներմակը սեւ է, եւ սեւը ներմակ,» որպէս իրաւամբ կը հեգնէ Պ. Շալ. եւ այս էր իմաստակներին փառքը. կ'ուզէին անկարելին կարելի ցուցնել, որով հաստատէին թէ քանի գերազոյն է իւրեանց հանճարը . . . :

Իւր շքեղութիւնովը ծաղրելի այս ուրուագիրէն դիւրին է եզրակացուցել թէ ինչ քայլ առած է մարդկութիւնը իմաստակներին դարէն ի վեր, եւ թէ ինչ տարբերութիւն կայ նախնի եւ արդի ատենաբաններին մէջ, նախնին՝ դիւթելի խենդ, արդին՝ օգտելի ջանադիր:

Դառնամք Պ. Շալի: «Մարդկային անհաստութիւնը, կը շարունակէ, գրէթէ բնաւ զրաւուած չ'էր նախնիներին ուշը. Սոկրատ եւ Պղատոն երեւան հանեցին 'զայն, մարդին անձնական արժանիքը հռչակեցին: Քրիստոնէութիւնը պատասխանա-

տուրիւնի , խիղճի , հաւասարութիւնի գաղափարներ բերաւ , որով արուեստակութիւնէն գիտութիւնի , հանելիէն օգտակարին անցանիք : » Մի դիտողութիւն ունիմ Պ. Շալի այս վերջին գաղափարին դէմ . ինձ այնպէս կը թուի թէ քրիստոնէութիւնը չ'է որ աշխարհ բերաւ պատասխանատուութիւնի , խիղճի , հաւասարութիւնի սկիզբները . զի մարդերին մէջ կային նոքա Յիսուսի ծնունդէն շատ դարեր յառաջ , աշխարհի նախնի ամերի հանելուկին մէջ ծնած . եւ 'զայս ապացուցնելի համար բաւ է մի արագ ակնարկ նետել հին կրօնքներին եւ օրէնքներին վրայ : Եգիպտոսի կրօնը պատասխանատուութիւնի գաղափարը իւր բարձրագոյն աստիճանը կը հանէ, խիղճի գաղափարը իւրեան հիմ կ'առնու . Աբէնքի օրէնքները հաւասարութիւնի գաղափարին ներշնչումներին տակ խմբագրուած են :

«Աստուածաբանութիւնը եւ իմաստասիրութիւնը , կը շարունակէ , զօրացուցին մարդկային անհատութիւնը . » եւ Ֆէնելօնի մի գործին կը դրկէ, 'զոր չ'ունիմ դժբախտապէս եւ 'զոր չը կրնամ գտնել մի այսպիսի պատահական հարկի համար : Պ. Շալի այս մի հարը յիսուն հեղինակի կը դրկէ ընթերցողը , որ անշուշտ չ'է կարող կամ չ'է ուզեր գնել այնչափ գիրք, թէեւ մի պահիկ անհրաժեշտ են իւրեան : Այսպիսի պարագայների մէջ , քանի զգալի կը լինի մի հանրային բանգարանի պէտքը, եւ քանի ցաւալի է մտածել թէ տակաւին շատ տարիներ այսպիսի դիւրութիւններ չը պիտի ընծայէ Թուրքիա : Անցնիմք :

Պ. Շալ յետոյ կ'ընդլայնէ «Կամքը մարդը կը ստեղծէ»ի հանրածանօթ սկիզբը , եւ կը խոստանայ հաւել երկու մեծ անհատութիւնների վրայ , որք են Գրիգոր Ա պապը եւ Սդիֆրնսը գործաւորը : Բայց , հաւին ընթացին մէջ , պապը կը մոռնայ, գործաւորը մէջ կը բերէ : Աւելի աղէկ :

Իւրեանց գործերին զաւակները , այսինքն այն անհնաւան եւ թշուառ մարդերը որք յարատեւ աշխատութիւնով իւրեանց վիճակ կը ստեղծեն , մեծ անձեր կը լինին եւ մեծ քայլեր անել կը տան մարդկային ազգին , այդ իւրեանց քիրտերին որդիները «մարդկային աստուածութիւնը իշխանութիւնի պատուանդանին վրայ բարձրացուցին,» կ'ասէ Պ. Շալ իւր վեհ լեզուովը: «Պարագայների աղմուկին մէջ , այդ անյողդողդ հանճարներին քովէ կ'անցնիմք առանց հանգչելի ըզ նոսա .» այս դառն եւ արդար գանգատը արտաշարժ է , եւ մեզ կը յիշեցունէ Ս. Հեղինէի օգոստափառ ափսորականը , երբ տեսաւ սա մի շոգէնաւ՝ որ գոգ իւր բերահաւատութիւնին վրայ սուլելով կ'առաջէր . . . :

Հոս , երկու օրինակ մէջ կը բերէ Պ. Շալ ի հաստատութիւն իւր գաղափարին . Օկիւսդէն Թիէրի , որ կոյր , հիւանդ , տառապեալ , բայց ուզեց մի գործ կատարել, եւ մի երեւելի մատեան յօրինեց. Պէնժամէն Քոնսդան , որ առողջ , հարուստ, սրամիտ, այլ ցաւալի վախճան ունեցաւ , զի «ազգու անհատութիւնէ զուրկ» էր :

Եւ Արիստոփանի մի իմաստակներին դէմ հեգնական հրաւէրը մէջ բերելով , հաւին առաջին մասը կը վերջացունէ :

Ճառին երկրորդ մասը կը սկսի, մի քանի խորհրդածութիւններ անելով Արիստոփանի վրայ, 'զոր կը նկատէ իբր հնութիւնին հզօրագոյն անհատութիւններէն մին:

Արդարեւ Արիստոփան Ցոյներին ամենէն հոյակապ կատակերգն է, որ նուիրական ձիրքերի պրսակին իսկ արժանացաւ: Իւր յիսունչորս կատակերգութիւններէն տասմին միայն ամբողջ հասած են մեզ. այլ նոքա բաւ են ցուցնելի համար որ նուրբ, աշխոյժ եւ ազդու մի ոճ ունի նա, եւ քան ամեն գրիչները Ելլադայի՝ նմ ատտիկեան շքնորհը եւ փափկութիւնը կը փայլեցուցնէ իւր գրութիւններին մէջ: Զը կայ մի կատակերգ որ ի սրմանէ աւելի աղ եւ նրբամտութիւն ունենայ: «Շքնորհները, կ'ասէ Պղատոն, մի անկործանելի սրբավայր փնտռելով, Արիստոփանի հոգին գտան:» Սակայն նա, մի քիանաէր ազնուապետական լինելով, իւր կատաղի երգիծանքներին մէջ՝ ենթակային դէմ ունեցած ատելութիւնին կը զոհէր նրբամտութիւն, խիղճ եւ մինչեւ անգամ նաշակ: Իւր հեգնութիւններին թոյնը թափեց մասնաւորապէս Կղէոն ռամկավարին վրայ որում դէմ անձնական կիրք ունէր, Եւրիպիդէսի վրայ՝ իւր *Դորտեր* անուն կատակերգութիւնին մէջ, եւ մանաւանդ Սոկրատի վրայ որում դէմ չափազանց անիրաւ գտնուեցաւ: Կատաղի եւ անգութ յարձակումներով՝ երգիծանքի խաչը հանեց նորա պատիւը, զրպարտութիւնի մուր քսեց նորա յիշատակին վրայ: — *Ամպեր* կոչուած կատակերգութիւնին մէջ, Արիստոփան կը ներկայացուցնէ Սոկրատը իբր մի օդէն

կախուած վանդակի մէջ նստած, ուստի ծաղրելի եւ ամպարիտ խրատներ կը տայ եւ տղայական նիւթերի վրայ կը զրաբանէ. մի ծեր պարտապան վրայ կը հասնի յայնժամ, որ պահանջատէրներէն յուսահատ՝ խորհուրդ կը հարցնէ իմաստասէրին, եւ սա կ'ուսցուցնէ նմա թէ ինչ փաստերով կրնայ իւր պարտը ուրանալ եւ անիրաւութիւնը արդարութիւնի տեղ անցուցնել. ալեւորը, Սոկրատի գերիմաստ պատուէրները չը կարենալով ըմբռնել, կ'երթայ բերել իւր զաւակը, որպէս զի նա ունենայ դոցա տեղեկանալի բախտը. պատանին, իմաստասէրին դասերովը լուսաւորուած, կը ծեծէ իւր հայրը եւ նուրբ փաստերով կ'արդարացուցնէ այս ամպարտութիւնը: Վերջապէս, նախանձոտն Արիստոփան, ամեն անգամ որ Սոկրատը տեսարան կը հանէ, նորա բերանին մէջ կը դնէ իմաստակական նառեր, ասուածների դէմ հայհոյութիւններ, անբարոյական խրատներ որովք ապականէ ուսանողները. եւ այսպէս, իմաստասէրը ամենին ատելի անելով, ոյժ տուաւ նմա դէմ եղած ամբաստանութիւններին, արդարին մահին պատճառ եւ բռնամիներին ակամայ գործի եղաւ: — Է՞ր այս անարգ ատելութիւնը անկեղծ Արիստոփանի. միթէ Սոկրատի ոսոխներին դրդումովը այսպէս վարուեցաւ, միթէ ծախուած էր Անիտոսին եւ Մելիտոսին, որպէս կը հաւատէ Եղիանոս. ոչ Պ. Շալ կ'ընդունի 'զայդ եւ ոչ մեք, զի գիտեմք թէ հուչակաւոր երգիծաբանը անկախ կամեցողութիւն ունէր: Մի ուրիշ պատճառ կը տայ Պ. Շալ, որ ոչ նուազ անհաւանական կ'երեւի ինձ. «Իւր

հայրենիքին նեմարիս բարկամ, ինչ որ նորա սիրելի աւանդութիւններին դէմ սպառնում էր՝ կը հարուածէր 'զայն Արիստոփան,» կ'ասէ. եւ զի Սոկրաս հայրենի աւանդութիւններին կը հակառակէր, ասել կ'ուզէ, ուստի հայրենասէր կատակերգին երգիծանքը իւր վրայ կը հրաւիրէր: Այս կեցին վրայ համամիտ չ'եմ Պ. Շալի, եւ կը ցաւիմ որ կը սխալի: Արիստոփան հայրենի աւանդութիւններին այնչափ նախանձախնդիր չ'էր, որպէս կը կարծէ մեծահմուտ բանախօսը. զի ամենէն աւելի պատշելի աւանդութիւնները ծաղրած է նա: Ցունասանի աստուածները հեգնած է իւր *Պղուտոն*, *Թռչուններ*, եւ ուրիշ կատակերգութիւններին մէջ: *Պղուտոնի* մէջ սովալլուկ կը ներկայացունէ Հերմէսը, որ կը գայ հաց մուրալ մարդերէն, եւ յանձն կ'առնու ամենէն աւելի նուաստ պատշաճը ունենալ երկիրի վրայ եւ երբալ ապրիլ երկինի մէջ. *Թռչուններ*ին մէջ սուած կը ներկայացունէ բոլոր աստուածները, զի թռչունները կը յափշտակէին նոցա նուիրուած զոհերը. Արամազդ երեք նօրի աստուած դեսպան կը ղրկէ նոցա, որպէս զի հանին հատուցիլ դիւերին հետ. Հերակլէս, թռչուններին խորտիկներին հոտը առնուլով, խելքը կը թռցունէ, եւ խոհարարի ըսպասաւորել, շամբուր հոլովել կը տենչայ . . . : Ուստի, հայրենի աւանդութիւններին համար ունեցած սէրը եւ յարգանքը չ'են որ Արիստոփանը գրգռեցին Սոկրատի դէմ. այլ, որպէս կը կարծեմ, այն զի Սոկրաս կարեւորութիւն չ'էր տար բնաւ նորա կատակերգութիւններին եւ կ'արհամարհէր'զայն:

Արիստոփանը բողոքով, Սէն-Սիմոնի դուքսին կ'անցնի Շալ. մեք ալ նմա հետեւիմք: Ապացուցնելի համար թէ մարդկութիւնը մեղանչական է կամ մարդը սխալական, երկու օրինակ կ'ընծայէ իւր ազգէն. Սէն-Սիմոն, որ մինչ արքունիքին եւ իւր ժամանակակիցներին զեղծումներին դէմ կը գրէր, ինքն ամենին ծաղրելի կը լինէր իւր չափազանց ազնուապետական ընթացքովը. Մոլիէռ, որ շողոքորթութիւնը կը ծաղրէր իւր գրուածներին մէջ, մինչ ինքն ալ, շատ մեծ հեղինակների պէս, Լուի ԺԴի առջեւ կը նուաստանար եւ կը ծնրէր: Թէ այս մաղէն անցունէինք մեր ազգին երեւելի մարդերը եւ համբաւաւոր գրագէտները, քանի՞ քիչեր պիտի գտնէինք որ անձնական շահին կուռը փշրելի քաջութիւնը ունենան:

Կենսագիրների դառնալով, դիտել կը տայ թէ ինչ մեծ ազդեցութիւն ունեցած են մարդկային ազգին վրայ Պլուտարքոսի *Զուգակշիռները*, կը ցուցնէ թէ քանի հարկաւոր են երեւելի այրերի կենսագրութիւնները՝ ուրիշներին օրինակ հանդիսանալի համար, եւ Ասիա կ'անցնի:

«Ձեզ օրինակ առէք Ասիան, կ'ասէ, մարդկութիւնին խանձարուրը. տեսէք այն հոծ եւ տփոր զանգուածները, այն սեւ եւ անարգ հօտը: Մարդը չը գիտէ 'զինքն հոն:» Այս խօսքերը շեշտ Հային կը զարկենն գոգ. եւ այժմ ասէք ինձ, անձնուիրութիւն միայն չ'է պակսիր վեր հանելի համար այդ «սեւ եւ անարգ հօտը»:

Հոս Պ. Շալը նկարագրէ մի հովիւ 'զոր տեսած է Սուապի սահմաններին մօտ. երջանիկ էր նա,

զի զոհ էր: Այս գեղջկական զողտրիկ պատկերը կը բողում մեկուսի. Արեւելցիներին համար սովորական բան է այն:

Եւրոպայի մէջ, Ամերիկայի մէջ, կը շարայարէ, ամենէն աւելի սռորին վիճակի մարդեր, հզօր անձնաւորութիւնի շնորհով, կը հասնին մի այնպիսի բարձրութիւնի յորոյ բոլորովին զուրկ էին հնութիւնին ազնուականները եւ իշխանները անգամ: Անկլիայի մէջ երկու տեսակ ազնուականութիւն կայ, մին ժառանգութիւն, միւսը մրցանակ: Դիւրին չ'է ձեռք բերել այս վերջինը. մի մարդ, անհետ իսկ ծնած, յարատեւ աշխատութիւնով միայն կ'աշխարհակալէ 'զայն: Մի բռուառ տարազագործ, Ռօպէրդ Բիլ, մի աղքատ դասիարակ, Քէնինկ, մի տգէտ գործաւոր, Ճոն Սդիֆրնսրն, մրցումով եւ տքնութիւնով հասան ընկերական սանդուղին մինչեւ բարձրագոյն աստիճանները: Այդ սկիզբը չ'է որ նոյն իսկ մեր Թուրքիոյ մէջ «խեղճ պարտիզպանի մը ողորմելի զաւակը *Աղարօն Հփհնտի* փոխեց,» որպէս կ'ասէ մի պատանի որում անհուշ վեհ ապագայ կը սպասէ:

Դարձեալ իւր սիրելի օրինակներին կը դիմէ Պ. Շալ: Կը յիշէ Գրիգոր Ա. պապը, որ իւր նրկարագիրին զօրութիւնովը միայն Լոմպարտներին յարձակումը կասեցուց՝ պատուաւոր դաշ կռելով նոցա հետ, Մեծ-Բրիտանիան եւ Օսդրոգոթները (արեւելեան Գոթացիներ) շահեցաւ Քրիստոսի հաւատին, ջանաց բառնալ սրկութիւնը, կռուեցաւ բռուառութիւնին դէմ, եւ կազմեց պապութիւնին այն անեղ պետութիւնը որ մի օր շատ թագակիր

գլուխներ պիտի խոնարհեցուներ եւ դարերով պիտի սասանեցուներ Եւրոպան: Գրիգոր, որ ապա սուրբերի կարգը դասուեցաւ եւ «Մեծն» մականունը ստացաւ, իւր մահինին մէջ կրցաւ գոչել համարձակ. «Աշխատեցայ, եւ յաղթեցի: . . . : Արի մարդերը բոլ օգուտ քաղեն ի սմանէ:»

Պապը կը ձգէ եւ կը դառնայ իւր դիւցազնին, այն անձանօթ գործաւորին որ շոգէկառքը հնարեց, այն անմահ Սդիֆրնսրնին որ աշխարհ յեղափոխեց, երկաթէ երկու գիծի վրայ անիւներ գլորելով:

«Մի երեկոյ, կ'ասէ Սդիֆրնսրնի կենսագիրը, զտաւ նա այն զսպանակը որ իւր մեքենայը պիտի շարժէր եւ որում կ'աշխատէր տասվեց տարեկան հասակէն ի վեր . . . Սրտայոյզ, դողդոջուն, փորձին բաղձալով եւ վախելով ի նմանէ, Սդիֆրնսրն իւր ձեռքին մէջ մարդկային ապագայը կը բռնէր. տասուբ մատնաչափ փոքրիկ մեքենայը հոն, ածուխի կառքին հետ կը տաքնար, կը ծխէր, կը սուլէր: Կը դնէ շոգէկառքը երկաթների վրայ, որոց վրայէ պիտի քայլէ: Սոսկալի վայրկեան. պիտի քայլէ՞, չը՞ պիտի քայլէ: Փողոցին ծայրը մի խոժոռադէմ քարոզիչ կ'երեւի նոյնժամայն. ինչ հոգ. Սդիֆրնսրն կը դպչի մոգական զսպանակին. կը գոռայ մեքենայը, կայծակի պէս կը վազէ, կ'երթայ քարոզիչին սուրը ջախջախել: Ցաղրութիւն, յաղթութիւն. աշխարհի երեսը պիտի փոխուի: Ի զուր վիրաւոր քարոզիչը կը գոչէ. *Ի բաց զնա յինեն, սատանայ*: Խնդիրը լուծուած է. ներկայը եւ ապագայը անցեալին

զարկան, եւ այս հարուածէն պիտի ծնի նոր աշխարհը, 'զոր Սդիֆրնսրնի հզօր անձնաւորութիւնը ստեղծեց : »

Պ. Շալ, իւր հառին երրորդ եւ վերջին մասը չը սկսած, նախընթաց բանախօսութիւնին վրայ կը դառնայ, կը յայտնէ թէ բողոքական խիղճին դէմ ոեւէ չարակամութիւն ունեցած չ'է՝ երէցը անցեալին եւ Սդիֆրնսրնը ապագային իբր պատկեր ներկայացուցած ատեն, եւ, այս առիթովը, մի փառաւոր ակնարկութիւն կ'անէ Կրկնակնիք ասուած աղանդաւորներին, որոց պետն էր Նիքոլա Սդօռֆ, աշակերտ Լութրրի: Շատ կը գովէ նոցա ոգին եւ «խիղճի տէր» անձեր կ'անուանէ զգ նոսա. ինձ այնպէս կը թուի թէ հոս ալ մի քիչ կը սխալի Պ. Շալ. 1520էն յետոյ Ֆռանգօնիի եւ Սուապի անցքերին պատմութիւնը վկայ է ինձ: Ցայտ է թէ Կրկնակնիքներին ամենէն աւելի հրաչակաւոր պետը, Թօմաս Մունցրը, Գաւլսդատդի հետ միանալով, նոր Գեդէոն քարոզեց 'զինքն, Յիսուսի բազաւորութիւնը սուրով հաստատելի կոչուած. 50,000 մոլեռանդ ժողվեց գլուխը, տիրեց Թիւռէնժի Միւհլհաւզէն քաղաքին, եւ այն Կրկնակնիքների բանակովը կատաղի պատերազմներ տուաւ, սոսկալի անգթութիւններ գործեց մինչեւ իւր գլխատումը. ոչ նուազ բարբարոսութիւններ արաւ Լէյտցի Ժան (Ժ. Պօգէլսրն), որ 'զինքն անուանեց «մարգարէ եւ բազաւոր Նոր Երուսաղէմի», բազմակնութիւն հաստատեց, ստացուածքների հաւասարութիւն քարոզեց, եւ ուրիշ յիմարութիւններ, մինչեւ որ սպանուեցաւ Ուէսդ-

ֆալիի Միւնսդէռ քաղաքին մէջ: Չ'եմ ուզեր ուրիշ փաստեր բերել. այսչափը կը բաւէ ապացուցելի համար թէ շատ «խիղճի տէր» անձեր չ'էին այն Կրկնակնիքները, որպէս միջին դարի գրէթէ բոլոր աղանդաւորները :

Սդիֆրնսրնի ծնունդը կը սկսի պատմել. պատկառով մօտիմէ այս խանձարուրին, ուր աշխարհի բախտը կը ննջէ, եւ այս օրրանին, ուր անհոգ կը շարժէ իւր ոտիկները այն մարդը որ ապագային մէջ հողագունտը պիտի շարժէ :

Նիւրֆեասլրի մօտ, Ուայլոի մէջ ծնաւ Ճօռն Սդիֆրնսրնը 1781, յունիս 9—10ին : Իւր առաջին գործը եղաւ ածուխի կոյտերէ զատել հանել անպիտան երկաթի կտորները. եւ սմա զբաղած ատենը այնքան մանուկ էր որ, երբ տեսուչը անցնէր, կը թաքչէր, վախենալով որ մի՛ գուցէ համբուի զի շատ փոքր էր : Օրը երկու *քենտ* միայն կը շահէր, որով իւր ընտանիքը կ'ապրէր. սմա համար, ցամաք հաց կ'ուտէին միշտ. հազիւ տարին մի երկու անգամ միսի երես կը տեսնէին : Ցերոյ, ջերուցիչ եղաւ հանքի մէջ, եւ տաժանելի աշխատութիւնով օրը մի *շիլին* կը վաստկէր :

Ֆռանսան իւրեանց աղմուկովը կը լցուին յայնժամ Լուի ԺԵ սրիկայ թագաւորին տարփուհիները, Բոմբատուրի մարգիզուհին, Տիւ Պարռի կոմսուհին, որպէս եւ տիկին Տիւ Տէֆան, օրիորդ Տը Լ'Էսքինաս, Տ'Ուսրդօ կոմսուհին, եւ ուրիշներ. եւ մինչ այս անառակ կիները բազմաթիւ կենսագիրներ ունեցան, մարդկային սեռին բարերարը, անենշան Սդիֆրնսրնը, դեռ մի լաւ կեն-

ԼԵՕ ԳՐԱԴԱՐԱՆ

սագիր չ'է ունեցած : Պ. Շալի այս զանգատը իրաւացի է եւ տխուր:

Սդիֆրնսըն, իւր համեստ հիւղին մէջ, կը զարգանար հասակով, կը մեծնար աշխատիլով: Մեքենայներու վրայ մասնաւոր միտում ունէր : «Աշխարհի հանճարը սէրն է, կ'ասէ Շալ, մեքենայի սէրը ունէր նա : » Ուիլսընի ջրհանին մեքենայը կոտրած էր. Սդիֆրնսըն շինեց 'զայն, եւ մեծ համբաւ ստացաւ : Սակայն տարիքը տասնին մօտ էր, եւ նա հազիւ ուսած էր հեգել եւ ստորագրել :

Քսաներկու տարեկան էր երբ ամուսնացաւ մի իւր պէս աղքատ օրիորդի հետ, որոյ միակ օժիտը պարկեշտութիւնն էր. երջանիկ եղաւ Սդիֆրնսըն, զի կեանքին բեռը կիսելի ընկեր գտաւ : Սէրի ամուսնութիւնը նիւթական եւ մանաւանդ բարոյական անհուն առաւելութիւններ ունի ստակի ամուսնութիւնէն. այս փրկարար սկիզբը, որ, աւաղ, մեր ազգէն օր ըստ օրէ կը վերնայ անա, շատ տարածուած է մանաւանդ Անկլիայի մէջ: Մի տարի անցած, նա մի զաւակ ունեցաւ, Ռօպէրդ Սդիֆրնսըն, որ իւր հայրին անունը աւելի բարձրացուց եւ փառաւորեց ապագային մէջ :

Բախտը ժպտիլ սկսաւ երիտասարդ գործաւորին: Ամուսնութիւններ կան որ աջողութիւն կը բերեն: Լօռդ Ռավէնսուտօրթ եւ Քիլլինկուտրթի գործարանին տէրերը մեծ յանձնարարութիւններ արին նմա, 'զորս արժանապէս կատարեց : Եւ անա 1821ին շոգէշարժ մեքենայներու գործարան բացաւ Նիուքեասըլի մէջ :

Պ. Շալ, էտուարտ Ֆուռնիէի հետեւիլով, կ'ասէ թէ նորահնար գիւտ չը կայ բնաւ. հեռագիրը, հեռադէտը ծանօթ էին Կեղտերին. Սդիֆրնսընէն տաս յառաջ, Բալէոլոգոսներին օրովը, Բիւզանդիոնի մէջ կար մի տեսակ շոգէկառք, 'զոր մի տատակեր հարուստ կը գործածէր՝ խոհանոցէն կերակուր առնուլ եւ սեղանին վրայ բերել տալի համար: Հին դարերին մէջ գիւտը եսական բարոքումի կը նպաստէր. նոր դարերին մէջ մարդկութիւնին օգուտին կը գործածուի : Այժմ այն անձերը, որք մի ոեւէ գիւտ կ'անեն, հոգիի մեծութիւն, յամառ յարատեւութիւն պարտաւոր են ունենալ, չ'ընկճիլի համար ձախողութիւնի եւ նախանձի առջեւ: Տընիս Բաբէն, որ առաջին անգամ իմացաւ շոգիին ոյժը, չը կրցաւ իւր գիւտը վայելել եւ թշուառ մեռաւ. Ճէյմըս Ուադ, որ շոգէշարժ մեքենայը կատարելագործեց, նախանձորդներ ունեցաւ որք ջանացին իւր գիւտը խլել իւր ձեռքէն. Սդիֆրնսընն անգամ ատելութիւն եւ արհամարհանք զտաւ, երբ մի շոգէկառք առաջարկեց. Հանրային խորհրդարանը դէմ էր նմա, մինչեւ անգամ Ռօպէրդ Բիլ նմա կը հակառակէր: «Մին 'զիս կը ծաղրէ, կը զրէր այն մեծ մարդը իւր որդիին, միւսը կը թշնամանէ, կը նախատէ, մի երրորդ կը հրաւիրէ 'զիս դիւցազներգութիւն շարագրել, որ մի մեքենայի խլելին չափ օգտակար է . . . մտիկ կ'անեմ առանց պատասխանելի: Ասուած գիտէ թէ որչափ արութիւն պէտք է ինձ համբերելի համար, երբ կը լսեմ թէ սնապարծ, անձնազով, շաղակրատ, խաբեբայ, ժլատ կը հռչակեն 'զիս : »

Սոյն միջոցին մրցում բացուեցաւ, Լիվրբրուլի գիծին վրայ գործածելի լաւագոյն մեքենային ընտրութիւնին համար: Սդիֆընսըն շահեցաւ: Ալ այնուհետեւ երբալով հարստացաւ: 1830, սեպտեմբեր 15ին, շոգեկառքի գիծին գործածութիւնի հանդէսը տեղի ունեցաւ մեծ աջողութիւնով. այլ մի տխուր դիպուած պատահեցաւ. Պ. Հրսֆիսրն, վանառականութիւնի նախարարը, շուտով կառքին մէջ նեստուիլ փորձելով, անկաւ եւ ջախջախուեցաւ անիւներին տակ: Մի զոհով սկսեցաւ առաջդիմութիւնին անիւը, որ կ'երթար անջրպետը աշխարհակալել:

Ճոռն եւ Ռոպէրդ միացած, Անկլիայի մեծագոյն հարստարներին եւ հոխագոյն մեքենագործներին կարգը անցան. Բլէյ—Բրոսի մէջ ածուխի եւ երկաթի ընդարձակ հանքեր ունէին: Սակայն ցը մահ աշխատասէր եւ համեստ եղան:

Հայրը, Ճոռն Սդիֆընսըն, մեռաւ 1848ին, «կտակելով աշխարհի մի շեղ օրինակ այն կարողութիւնին 'զոր հանքարը կ'ունենայ, երբ օժտուած է հզօր աշխատութիւնով,» որպէս կը գրէ Պ. Շ. Կոմոն:

Անա այս վախճանը ունեցաւ այն մանուկը որ Նորբրմպէրլանտի մէջ ածխահանքերի մրոտած ձեռքին տակ մեծցաւ, եւ, կամեցողութիւնի ոյժով, մեծ մարդերի դասը բարձրացաւ:

«Իմ կամքէն է որ ոյժ կ'առնում,» կ'ասէր Նաբոլէոն Պոնապարդ: Հզօր կամեցողութիւնի տէր էր եւ Ուէլլսլիի մարգիզը, մեծահամբաւն Ուէլլինկդրն, որոյ վրայ հետեւեալ վէպը կը պատմէ Պ. Շալ:

«Մի օր, Տէյվիս Ուայլֆի, նշանաւոր պատկերահան սկովտիացի, սա ալ իւր գործերին զաւակը, մի ապսպրուած նկար կը բերէ Ուէլլինկդրնին:

Ի՞նչ է պարտս, հարցուց դուքսը:

— Հինգ հարիւր ոսկի, պատասխանեց:

Շատ է:

— Թէ Ձեր Վսեմութիւնը հարկաւոր զումարը չ'ունի իւր քով, կրնամ իւր կողմէն զրուած մի բառով առնուլ 'զայն սեղանաւորէն:

Ոչ, պատասխանեց Ուաղէրլոյի զօրավարը. ես ինքն պիտի վճարեմ. զի երբ անմտութիւններ գործէ մարդ, լաւագոյն է չ'իմացուցնել ըզ նոսա ամենին:»

Պ. Շալի հարին վերջին տողերը վերծանողներիս ուշադրութիւնին կը յանձնեմ: «Օ՛ւ բէ, այս հարովս, ձեր մէջէ մի անձի նեռնչած լինէի որ իւրեանց գործերի զաւակներին պատմութիւնը գրել ձեռնարկելի ոյժ եւ զաղափար ունենար: Յայնժամ մեր հայրենիքին մեծ ծառայութիւն արած պիտի սեպէի 'զիս:»

Իսկ ես, իմ մասին, կը փափագիմ որ, անօրգուս վէպերի տեղ, այսպիսի հարեր կամ գրութիւններ թարգմանուին, լաւագոյն թարգմանիչներէ:

Այժմ արժան է որ Պ. Պուպլիի վերջաբանովը զբաղիմք հոս:

Պ. թարգմանիչը Սդիֆընսընի մի «հանքարեղ» անձ լինելը կ'իմացունէ. ընթերցողը արդէն իւր կարծիքը կազմեց այս մասին, եւ, հետեւապէս,

պէտք չ'ունի այսպիսի վնիռներ: Ներուի ինձ միայն յաւելել որ, թէ Բնութիւնը նորա համեստ եւ խոնարհ նպատակին եղեւ հանճարի բոցը դրած իսկ չը լինէր, ինքն այնչափ անյողդողդ էր որ կրնար աշխարհակալել հանճարը աշխատութիւնով, թէ կարելի է այս: Իւր յամառ աշխատասիրութիւնին վրայ մի գաղափար տալի համար, կը դնեմք հոս իւր ժամանակին գործածութիւնը, 'զոր նա ինքն իւր կեանքին վերջին օրերին մէջ կը պատմէր.

«Ցերեկին տաժանելի աշխատութիւնէն յետոյ, երբ կը զգայի թէ հանգիստի պէտքը վրայս կը ծանրանայ, քունի դէմ կը կռուէի եւ իմ դրացիներին ժամացոյցները եւ կօշիկներն անգամ կը նորոգէի: Սակի ծարաւը չ'էր որ այս չափազանց աշխատութիւնը վրայս կը բեռցուներ, այլ այն զի կարող լինէի տալ որդիս մի դաստիարակութիւն որ ինձ կը պակսէր եւ որոյ պակասութիւնը այնքան կը յամրացուներ իմ առաջդիմութիւնները: Այսպէսով, միջոցներ կը հայթայթէի մի լաւ դպրոց ղրկելի համար Ռոպէռդը. օգնականս եւ ընկերս եղաւ նա:»

Որդին հայրին յոյսերը պսակեց: Ռոպէռդ Սդիֆրնսը, Էտիմպրռկի համալսարանէն ելնելով, իւր հայրին քով մտաւ եւ նորա արհեստը ուսաւ կատարելապէս: Միատեղ աշխատեցան. անձնիւր մեքենայ, որ նոցա գործարանէն կ'ելնէր, նորանոր կատարելութիւնների դրոշմը կը կրէր:

Հայրին մահէն յետոյ, որդին շարունակեց մեքենայներ շինել եւ երկաթուղիների ձեռնարկել:

Տիեզերական համբաւ ստացաւ, աշխարհի առաջին մեքենագործը եղաւ նա: Հազարաւոր շոգեկառքի մեքենայներ շինեց զանազան երկիրների համար: Անգլիա, Պէլճիգա եւ Նորվէգիա մէջ իւր ձեռքովը հաստատուեցան երկաթուղիներ: Սա շինեց այն հռչակաւոր փողածեւ կամուրջը, *Պրիդանիա* անուն, որ Ալպիոնի ներսակ եզրները կը միացուներ Էնգլիսի կղզիին: Հաշիւ արած են որ, 1850ին, Ռոպէռդ 360,000,000 տակառաչափէն աւելի հող եւ քար փորել տուած էր, 8,000 հազարամէջ երկայնութիւնի վրայ:

Ռոպէռդ, իւր հայրէն աւելի պատիւ ստանալով, աջողեցաւ մինչեւ Անգլիական խօսարանին անդամ լինիլ: Մեռաւ 1860ին եւ թաղուեցաւ Ուէստմինստրռի եկեղեցիին գաւիթին մէջ, Մեծ—Բրիտանիայի փառաւորագոյն մարդերին քով:

Պ. թարգմանիչը կը յիշէ Ֆռանսայի նշանաւոր գիտուններին եւ արհեստաւորներին կողմէն կրկին Սդիֆրնսըններին տրուած խնդոյքը, ուր Ճօռն, ժողովուրդին համակիր զարմացումի ցոյցերէն յուզուած, փղձկեցաւ, եւ բերկրական արտասուի գոհարներ կաթեցան իւր ներսակցած թարթիչներէն: Ո՛վ անմահութիւնի արժանի արտասուներ...:

Պ. Պուպլի իւր վերջաբանը կը կնքէ մի քանի գեղեցիկ տողերով, 'զորս հոս կ'օրինակեմ.

«Իմ խօսքիս ալ վերջ տալու ատեն ըսեմ նաեւ թէ աշխարհիս մէջ թէեւ հազարաւոր բաներ, պէյեր, էֆէնտիներ կան, բայց Գէորգ Սդիֆրնսը մէկնատիպ է, եւ ուր որ երկրիս երեսը երկաթուղի մը շինած են եւ անկէ օգուտ կը քաղեն՝ հոն

այդ երկաթուղիները անոր յիշատակին համար կանգնուած մէկմէկ անմահ արձաններ կրնան սեպուիլ :

Մենք ալ , կը յաւելէ , Իզմիրի մէջ անոր համար կանգնուած յիշատակարաններ ունինք , այն է Այտընի եւ Քասապայի երկաթուղիները : Ուրեմն փառք տանք մենք ալ Սդիֆրնսրնի յիշատակին, եւ մաղթենք որ հայուրիւնն ալ այսպիսի զաւակներ ծնելով՝ անոր պէս անմահութեան արժանանան : »

Այս մաղթը կրկնելով եւ ես , բարգմանութիւնին ոնին վրայ կը գամ խօսիլ, որպէս խոստացած էի գրադատումիս սկիզբը :

Ցոռի բարգմանիչներ եւ բարգմանութիւններ կը շատնան ազգիս մէջ , քանի քաջալեր գտնեն : Այնչափ կատաղի են այսպիսի բարգմանիչները , մինչ զի , հազիւ հայերէն եւ Ֆրանսերէն լեզուներին մակերեւոյթը ծծափած , ամեն գործի վրայ ձեռք կը դնեն , օտար գրականութիւնների ծաղիկները կը բարամեցուցնեն , ամենէն աւելի նուիրական գրուրիւնները կը պղծեն՝ իւրեանց քիթը նոցա մէջ երկնցուցնելով , որպէս կ'ասուի ռամկօրէն, եւ իւրեանց տգմուս բաժակին մէջ ազնիւագոյն նեկտարները կը լնուն անխիղճ : «Ծիածան»ին մէջ, մի ծերունի Լամարտինի *Ռաֆաէլը* բարգմանելի ձեռնարկեց . ինչ հակադրութիւն . մի սիրտ, որոյ կիրքերը մարած են եւ թելերը կոտրած, կը ջանայ բացատրել մի գործ ուր կիրքերը իւրեանց բուռն եւ առաջին բռիչը կ'առնուն, ուր քանամեայ հասակին թելերը կը թնդան՝ սէրի

տենդէ բռնուած . «*Ռաֆաէլը* բարգմանելի համար մի Լամարտինի պէտք է որ լինի մարդ,» կ'ասէր ինձ անցած օր մի բանասեղծ, 'զոր մտերիմներիս մէջ համբաւի մխիթարութիւնը ունիմ. այո, մի Լամարտինի պէտք է լինիլ, այսինքն հարկ է զգալ բարգմանելով ինչ որ նա զգացած է գրելով: Ամեն տեղ , ամեն օր, այսպիսի անյարմար եւ ապիկար բարգմանիչներ երեւան կը գան. մի թուռուռական կը քանդէ *Նոյն-Տամ*ը *Բառին*, Իւկօի այն սխրալի վէպը, մի ուրիշ չը գիտեմ ինչ: Կ'աղաչեմ, Պ. բարգմանիչները մի գինաղաղար թող շնորհեն, եւ մի քանի տարի ուսնիլ յեռոյ թող գան ուսցուցնել ժողովուրդին :

Պ. Պուպլի մի բարգմանիչ է. իւր ընտրութիւնը գովեցի, այլ կը ցաւիմ որ չը պիտի կրնամ գովել իւր բարգմանութիւնը :

Այս պարոնը կամ Ֆրանսերէն չը գիտէ , կամ հայերէն, եւ կամ երկուն ալ: Բայց, աւելի արդար լինիլի համար, պիտի ասեմ թէ հայերէն չը գիտէ, եւ, թէ հարկը պահանջէ, դիւրին է ինձ հաստատել 'զայն : Իւր բարգմանութիւնը Ֆրանսերէն կը հոտի. աւելի հայերէնէ Ֆրանսերէնի փոխուած կը թուի, քան Ֆրանսերէնէ հայերէնի:

Կը յուսամ որ Պ. Պուպլի , երբ մի երկրորդ բարգմանութիւնի զբաղի, պիտի յիշէ թէ Հայերի համար կը գրէ :

1870, մայիս 2.

ԱՐԳՈՍԻ ԽՈՀԵՐԸ.

(«Երկրագունց», 1870, յանվար 1—22 օգոստոս.)

Ա

Հին դարերի դիցերին եւ դիւցազններին ժլատէն, միջին դարերի բոցէն եւ կախաղանէն եւ նոր դարերի արիւնոտ յեղափոխումներէն հազիւ զերծած, Մարդկութիւնը ալ սկսեցաւ հաստատ քայլեր առնուլ դէպ այն գեղագոյն նպատակը, 'զոր տաս կանուխ նշմարած էր:

Նա, մի բոստրաներկ երազէ ընդոստ զարթիլով, կը շփշիէ աչքերը, եւ իւր երկար քունը իւրեան կշտամբելով՝ կը փութայ գործել: Անձնիւր անհատ կը խլրտի այդ շտապովը, եւ անձնիւր շուրթէ սա բառը կը թռչի. «Ցառաջ:»

Ցառաջ . . . եւ այս ցնցող ձայնին առջեւ, նորէն կը ծուլուի Հողագունցը, Բնութիւնը կ'ա-նի ծիղով եւ խնծիղով, եւ Արեւեսը թեւ կը տայ շոգիին՝ որպէս զի նուաճէ ովկիանը, մեսաղէ բելերէ ոստայն կը տարածէ՝ որպէս զի աշխարհակալէ միջոցը, երկաթէ անխզելի կապերով

կ'ամրապնդէ ժողովուրդները եւ ընդհանուրին օգուտին կը ծառայեցունէ մասնաւոր բարիքները: Ցառաջ... եւ ահա կը յառնեն համայն ազգերը, կը փշրուին սուրերը՝ ամօթով քան արիւնով կարմրած, զոյնի եւ արիւնի խտրութիւնները կը ցնդին, եւ ամբողջ Մարդկութիւնը, անկումի մէջէ կանգնիլով, մի մարդի պէս յառաջ կ'ընթանայ:

Նա յառաջ կ'ընթանայ, իւր ճակատին ետեւ մի գաղափար, սիրտին խորը մի հաւատ, լանջին վրայ մի մտեան, աջին տակ մի գործի, ձախին տակ մի մեքենայ կրելով:

Այդ գաղափարն է Երջանկութիւն, այդ հաւատն է Ազատայ, այդ մտեանն է Աւետարան, այդ գործին Գրիչ եւ Մամուլ այդ մեքենայը:

Աչքերը դէպ Երկին, ձեռքերը դէպ Երկիր. այսպէս կ'ընթանայ դարիս Մարդկութիւնը: Նախնի դարերի Մարդկութիւնը աչքերը դէպ Երկիր, ձեռքերը դէպ Երկին ուղղած քայլեց. եւ սմա համար է որ չեսադիմեց:

Որպէս բոյսը դէպ լոյս կը ձկտի, մարդկութիւնը դէպ լուսաւորութիւն կը դիմէ: Այս շարժումին կարապետն է Ցիսուս: Նորա ետեւէ կը քայլեն Սոկրատ, Պղատոն, Արիստոտէլ, Պիւքագոր, Լուքրը, Տէքարդ, Բանդ, Պէքքարիա, Վոլդէր, Իւկօ, եւ ուրիշներ: Մարդկային ազգը, անհուն եւ մրթին, սոցա կը հետեւի հետիէն. զի դեռ ինչ է մեր բոլոր լուսաւորութիւնը. — մի քանիներ ճակատ ճակատի բախեցին, եւ լոյս ծնան. մեք այն լոյսին եւ ճակատներուն կամարին տակէ է որ կ'անցնիմ . . . :

Կ'անցնիմք, եւ մեզ հեռ կը գլին կ'անցնին դարերին անիւներն ալ, ժամանակի անեզրութիւնին մէջ հազիւ մի պահ թալթալ խաղալով. մարդկութիւնը, թալ եւ թաւալ, կը ծնի եւ կը մեռնի. ապրող վայրկեանին մահովը յաջորդ վայրկեանը կը գայ ի լոյս. ամեն բան կ'անցնի արագ արագ, եւ Մամուլը միայն, անմահութիւնին այն երկաթէ դռնակը, ապագայներին կը կտակէ այս անցումների յիշատակը :

Մամուլը 1450ին ծնաւ: Այս թուականը մի նոր էջ բացաւ Պատմութիւնին մէջ: Մարդկային փբրկութիւնին երկրորդ թուականն է այն. եւ բանասեղծները, որք շատ բարէկամ չ'են թուականների, հիացումով կը պաշտեն Կիւդէնպէրկի հանճարին արարչագործած այս դարագլուխը :

Երախտագէտ Մարդկութիւնը, Մայանսի գործաւորը մեծ մարդերի համասեղութիւնին մէջ դասելէ յետոյ, ձեռք կ'առնու այն փոքրիկ մեքենայը, եւ երկաթը շարժելով՝ մոլութիւններին եւ մոլորութիւններին հիմերը կը խախտէ :

Ի՜նչ անհուն քայլ, Աստուած իմ . . . : Անցեալը, զրահով զինուած, արիւնոտ ուղիների մէջ կը դեգերի. մի քայլ յառաջ, մի քայլ ետեւ. այս է իւր յաւիտենական շարժումը: Ներկայը, մամուլով զինուած, յառաջ կը խիզախէ, յառաջ դէպ խաղաղութիւն, յառաջ դէպ սէր, յառաջ դէպ լոյս, յառաջ դէպ կատարելութիւն :

Մարդկութիւնը, մանուկ բազմապահանջ եւ հեշտաբիր, այն որ վեց դարէն հազիւ կ'ընդունէր մի յայտնի ճշմարտութիւն, այժմ, շնորհով բիւրլեզու մամուլին, կ'ողողուի լոյսով եւ գաղափարներով :

Ինչ որ են մարդերը, մամուլին կը պարտին 'զայն: Եւ մինչ Եւրոպացիները եւ Ամերիկացիները կը յայտնեն 'զայս միահաւան, մեք, Հայերս, չը կրնամք նոյնը խոստովանիլ :

Ոչ ոք կ'ուրանայ թէ մամուլը մեր ազգին ալ մեծ օգուտ կ'ընծայէ: Մեք ալ ունեցանք ընտիր թերթեր, որոց մէջ մի բարձր դիր առաւ «Երկրագունտ»ը Շահնազարեան Կարապետ վարդապետին, որ ննջեց յանմահութիւն :

Մեք, նորա սաները, ահա կը շարունակեմք այն գործը 'զոր նա սկսեցաւ եւ 'զոր մահը միայն ընդհատեց, նոյն իսկ այն մամուլին միջոցով 'զոր մի մեծ մարդի քիրտերը արբագործած են յաւէտ . . . :

Չ'եմք յուսար թէ մեր թերթը արժանի պիտի լինի սոյնպիսի փառաւոր յաջորդութիւնի. 'զայս միայն կը համարձակիմք յուսալ թէ մեր ընթերցողները չը պիտի զղջան իւրեանց դիւրագին վճարին եւ այն թանկագին ժամերին վրայ :

Իսկ ես, քաջ համոզուած թէ ամեն ապրող իւր ժամանակին հետ պարտաւոր է ապրիլ, կը սկսիմ հանդէսիս միջոցով հրատարակել իմ տկար խոհերը մարդկային արդի մեծ խնդիրներին վրայ, 'զորս Արգոսի աչքերովը պարտաւոր եմ դիտել :

Շատեր կը թողուն ներկայը՝ անցեալին դիմելի համար. շատեր կը թողուն ներկայը՝ ապագային վրայ ցնոր յորինելի փափագով: Սոքա ալ կը սխալին, նոքա ալ: Ցիմարութիւն է անցեալին դի-

մել, նորա մէջ ապրիլ ուզել. զեցին նիզն է սա դէպ իւր աղբիւրը ընկրկիլի. ոչ նուազ յիմարութիւն է ըզ հեռ պնդիլ ապագային, որ ներկային շարունակութիւնն է:

Ներկայը, Անցեալի նաւամատոյցէն իւր բեռերը առած եւ աչքերը Ապագայի հորիզոնին վրայ յառած, այնպէս պարտի յառաջ ընթանալ:

Բ

Ուսեալ դասերին մէջ մի ախտ կայ համաճխարհիկ:

Այս ախտը աւելի համանարակ է քան ժանտամանը, այն ասուռածառաք պատիժը, որպէս կը կարծէին մեր բարէպաշտ հայրերը. աւելի համանարակ է նա քան մաղձախտը, որ մանաւանդ Արաքադի բարձրէն կը խուժէ տասնորդել անխընայ մարդկային ազգը:

Նորութիւնի ախտն է այս, նախախնամային մոլիչ առաջդիմութիւնի:

Անուսին հորիզոնը շատ անձուկ է: Ինչ որ իւր շուրջը կը տեսնէ ի լոյս գալով, նա 'զայն կ'ուզէ ստանալ, եւ չ'է նայիր աւելի հեռին: Երջանիկ է արդեօք թէ աջողի հայթայթել մի զոյգ եզ, մի սայլ նունչուն, մի արտալար հող, մի կապերտ գունեղ եւ մի կին ամօրգեղ:

Քաւ թէ այսպէս լինի ուսեալը: Նորա հոգիին մէջ մի բան կայ թաքուն, որ 'զայն չ'է թողուր յագիլ բնաւ. թերեւս անմահութիւնի նախազգացումն է այս, կամ ցանկութիւնը, ոմ գիտէ . . . : Նորա աչքը, տաղտկացած այն յաւիտենական միակերպութիւնէն որ իւր շուրջը կը պարզուի, անդադար կը ձկտի դէպ անծանօթ հորիզոններ, որք, մթին վերարկի տակ, խոյս կը տան իւր նայուածքէն: Նորա ոգին կը թռչի միշտ հոն ուր թերեւս կը սպասէ իմաստասէրների Բացարձակը, այն Մեծ Հոգին, իբր մի արեւ որ իւր շուրջը կը հաւքէ իւր մոլորուն հանանչները . . . :

Ուսեալը, երկիրը հանաչելէ յետոյ, աւելի վերերը կ'ելնէ, եւ մի անզուսպ տենչէ մղուած՝ աննիւթին մէջ կ'ընկղմի հետանոթով: Ադամ, Գիտութիւնի ծառին պտուղը հաճակելին պէս, կը զգայ իւր մերկութիւնը, եւ նոյն վայրկեանին՝ կորած է նա. պիտի նգնի հասու լինիլ զերազոյն գաղտնիքների, եւ պիտի ամսորուի դրախտէն: Դառն այլ անխուսափելի անկում: Սակայն անկումներ կան յորոց վեհագոյն կանգումներ կ'ելնեն:

Գ

Ս.

Այն իրերը եւ իրողութիւնները, 'զորս դիպուածը կը սփռէ հոս եւ հոն, կարծես յարակցութիւնի գաղտ տարրներ ունին. եւ կարծես պատեր կան ուր բնազդը զուշակութիւնի կը մղէ ըզ մեզ:

Նոր տարիս սկիզբը, 1870 թուականը չը

գիտեմ ինչ ունէր որ Հային նպաստաւոր կ'երեւէր ինձ. 1870 կը ժպտէր աչքերիս: Եւ հազիւ տաս օր յետոյ, մի նոր որչափ նշանաւոր բուական կը ծնէր, քառասնամեայ դիակը կը շարժէր, Ղազարոս աչքերը կը բանար եւ պատանը կը բօրվէր...:

Յանվար 11ի արդարեւ աւագ կիրակէն ազգին երեւելի օրերէն մին է այսուհետեւ: Հայութիւնի գեղին, որ դարերի եզրերը քերելով կը բաւալի, մի կարեւոր առուն իւր բումբը խորտակեց՝ մայրգեղին գալի միանալի, եւ նմա հետ գիրկընդխառն դիմելի համար դէպ այն լոյսի նաւահանգիստը ուր կ'ընթանան ժողովուրդները:

Հռոմէական Հայերը, այն եկեղեցիին մէջ որոյ գերին կը կարծուէին, բարձան գերութիւնի դէմ բողոք եւ ազատութիւնի համար նիչ, ցոյց տուին թէ դեռ չ'են մոռցած շարժիլ, թէ դարիս մէջ ծնիլով դարէս դուրս չ'են ապրիր, եւ յամօր համակեցին ըզ նոսա որ դամբանականներ գրած եւ երեմիականներ երգած էին մի կարծեցեալ մեռեալի վրայ:

Օ՜հ, որչափ արդեօք Յաւիտենականին հաճելի եղան Պապութիւնին դէմ բողոքող այն աղաղակները, եւ որչափ աւելի հաճելի քան այն աղօթքները 'զորս քահանայը կը լռմլռէ եւ խուժանը կը թաչէ . . . :

Յանվար 11ի օրը, Պապութիւնին ժայռէ «չը կրնամք»ը ժողովուրդին շանթէ «չ'եմք ընդունիր»ը պատասխան առաւ: Հռոմ հրամայեց, Հայը ընդոտնեց: Անսխալականութիւնը, ժողովուրդին դէմ զինուիլով, սխալեցաւ, որպէս կը սխալին որ իւրեանց ազազուն լանջովը հոսանքի դիմադրել

կը կարծեն: Այն պատգամախօսները, որ աջողութիւնով գինովցած կը յայտնէին, սահեցան, անկան:

Երէկ, սեւ վեղարների տակ ցոլացող բուխ ժըպիտներով խառն, հետեւեալները կը մռմռային յաղթողները. «Դաղրած է սիրտին զարկը. ոչ եւս կը թնդայ լանջն այն մրրկոտ. արիւնը եր եւ եռ չ'է ելներ այլ եւս. այս ժողովուրդն ալ անցաւ. եւ դեռ քանիներ . . . : Ո՛վ Աստուած, քանի՞ մեծ ես դու... ըզ մեզ երկինի աւաստական անելէ զատ, երկիրի վրայ ալ միանեծան կ'անես ըզ մեզ:»

Այսօր, սեւ վեղարների տակ մռայլ անէծքներով խառն, հետեւեալները կը մռմռան յաղթեալները. «Քունը մահ եւ անկողինը դագաղ կարծեր եմք. զարթեր է Հայը . . . մահ, դիակն ալ կը զարթի եղեր... յաղթողներ, մի՛ հաւատաք երբ ժողովուրդը անշարժ տեսնէք. մի ընկնուած ազգի խաղաղութիւնը զինադադար է միայն: Աւա՜ղ, շատ ուշ իմացանք այս ճշմարտութիւնը:»

Է՞ր այս տարբերութիւնը երէկի եւ այսօրի. ինչ եղաւ ուրեմն:

— Շղթայների շշուկէն զարթիլ ստիպուեցաւ Նա որ քուն կը քաշէր:

Ո՞ւր են շղթայ կռօղները:

— Փախան յարամրի:

Այս է միշտ Ազատութիւնի պատմութիւնը:

Բ

Մի զարմանալի ճգնաժամի մէջ է Հռոմէականութիւնը: Մին քան միւսը այլանդակ լուրեր կ'առնուիմք եւ իրեր կը տեսնեմք ամեն օր:

Կը լսեմ թէ հռոմէական Հայերին խաւարամիս հովիւը, Հասունեան, կարդինալի բարձին բարձրանալի մօս է: Միթէ չը գիտէ՞ թէ կարդինալի ծիրանին բաւական կարմիր չ'է՝ խողխողուած իրաւունքներու արիւնին հետը պարտկելի համար: Միթէ չը գիտէ՞ թէ կարդինալի ոսկիէ խաչը չը կրնայ պաշտպանել 'զայն մի բռնաբարուած ժողովուրդի բողոքին դէմ, որչափ ակնախիտ լինի այն: Եւ մինչ ծիածանի եօթ գոյնը կը զգենու, մինչ իւր լանջին վրայ ոսկերչական արուեստահանդէս կը բանայ շքանշանների խիտ առ խիտ բազմութիւնովը, մինչ կը խայտայ թուրք մահիկին քով պապական վառ ի վառ խաչը կախելով, չ'է՞ տեսներ թէ մի մռայլ բան կը պատրաստուի իւր դէմ, չ'է՞ զգար թէ իւր գահը կը տատանի մի վիհի եզրը:

Բէրաի Ոսկէբերանի եկեղեցիին առջեւ միջին դարի մի մանրանկարը տեսնելի վիճը ունեցայ անցած կիրակէ: Մի վաշտ զօրք պաշարած էր աղօթավայրը: Այս թուրք զինուորները, կարմրավառ *ֆէսեր* ի գլուխ, որոց ծոպերը ձախ ուսին վրայ կը ծածանին զոռոզ, բալիքարեան հպարտ դիրքով՝ ձախ կռուփը կողին յեցած, աջով հրացանին ողորկ եւ փայլուն փողը սեղմած, իւրեանց պեխերը ոլորած առնապէս, սպառնալից աչքեր կը յառէին բարէպաշտ ժողովուրդին վրայ, որ հարիւրաւոր սուինների ահեղ փայլիւններէն շլացած եւ ապշած՝ խաղաղութիւնի Աստուածին կ'երթար մի խլռոված սիրտ ձօնել: Մինչ, այսպէս, սէրի կրօնը սուրով կը սրբապղծէին եւ ազատ համոզումը ոչ-

ռացանի կը բռնէին, պատարագողին դարձուցի աչքերս՝ նորա դէմքին վրայ այլայլում տեսնելի յոյսով: Ծերունի արքեպիսկոպոսը մի մարտիրոսի խաղաղութիւնը ունէր, եւ, յիշելով այն սուինները որ 'զինքն պաշտպանելի համար էին կանգուն, իւր սպիտակափառ հերերին տակ մորթ կը փոխէր կարծես, եւ իւր խորհում այտերը առուգանալով կը շառագնէին ...:

Ո՜վ դարեր, ո՜վ բարքեր:

Գ

Դարերէ ի վեր յուզուիլէ եւ քրիստոնեայ աշխարհը յուզելէ յետոյ, վերջապէս լուծուեցաւ պապերի անսխալութիւնին այն ծաղրելի խնդիրը: Պետրոսի յաջորդը անսխալ հրատարակուեցաւ: Բայց միթէ անսխա՞լ էր Ս. Պետրոս անգամ:— Բեթսայիդայի մօտ, Տէրին արգելին հակառակ, ասաւ ժողովուրդին թէ Յիսուս է Աստուածի Քրիստոսը. Տէրին այլակերպութիւնին ատեն, «չը գիտէր ինչ որ կ'ասէր». Յիսուս պատուիրած էր նմա հսկել եւ աղօթել, նա երեք անգամ քնացաւ Գեթսեմանի պարտէզին մէջ. Յիսուս, մի լինի վրայ, կշտամբեց Պետրոսը իւր թերահաւատութիւնին համար. մի ուրիշ օր, ծովին վրայ, «թերահաւատ, ասաւ նմա, էր երկմտեցար.» Ձիթենիների պարտէզին մէջ, կշտամբուեցաւ նա Մաղքոսը սուրով վիրաւորելին համար. Քահանայապետին սրահին մէջ, երեք անգամ ուրացաւ Տէրը. մի ուրիշ օր, երբ այլաբանական հացը եւ խմորը չը հասկացաւ, 'զայն

թերահաւաս եւ անմիտ անուանեց Յիսուս: «Եւ, գիտնալով թէ Պետրոս այսչափ անգամ սխալեցաւ, Պիոս Թ կը համարձակի 'զինքն անսխալ հռչակել,» որպէս կը գրէ Պ. Ալֆոնս Քառռ՝ իւր անման *Կեր*երին մէջ:

Արդարեւ, ինչ աւելի անմիտ քան այս անսխալութիւնի դաւանութիւնը: Մի կատակերգութիւն էր այս, տասիներորդ դարու մէջ ներկայացուելի պահուած, որպէս կը մտածէ մի ազգային խրմբագրապետ:

Թէ անցեալին մէջ պապերը սխալած են, անկարելի չ'է որ ապագային մէջ ալ սխալին կրօնական մասերի մէջ իսկ: Անսխալութիւնին այլանդակութիւնը ցուցնելի եւ ապացուցնելի համար, բաւ է մի ակնարկ նետել Արեւմտեան եկեղեցիի ստոյգ պատմութիւնին վրայ, որ շատ տեղ, աւաղ, անհաւատալի վէպի կը նմանի, եւ ի վեր հանել պապերի սխալները եւ հակասութիւնները:

Ինոսան Ա եւ Ժէլազ Ա պապերը հրատարակեցին թէ մանուկին անհրաժեշտ է հաղորդուիլ եւ թէ ուղղակի դժոխք կ'երթան որ անհաղորդ կը մեռնին, մի վարդապետութիւն 'զոր Դրանդի ժողովը, 1000 տարի յետոյ, անէծքով դատապարտեց:

Երբ կուրցաւ Փոնտանդէն Բ պապը, որ զէնքի զօրութիւնով Պետրոսի աթոռին տիրած եւ տասերեք ամիս իշխած էր, մի սինոդոս հրաժարեցուց 'զայն եւ նորա բոլոր ձեռնադրութիւնները չիք հրատարակեց:

Երբ Ֆորմոզ պապը մեռաւ, նորա հինգ տարի միջոցին արած ձեռնադրութիւնները անվաւեր

հռչակուեցան, պապերեւ սինոդոսներ իրարի հակառակեցան, եւ մեծ շփոթ անկաւ Իտալիայի մէջ:

Սիմոնականութիւնի առիթով, Լէօն Թ, Կռէկուառ Է, Իւռպէն Բ պապերը ձեռնադրութիւններ լուծեցին եւ երկրորդ ձեռնադրութիւններ արին:

Բէլաժ պապին որոշումին հակառակ, Նիքոլա Ա. պապը Պուլղարներին իմաց տուաւ թէ բաւ է լոկ Քրիստոսի անուանովը մկրտուիլ:

Էդիէն Բ պապը այն անձին, որ մի աղախին կին ընտրած է իւրեան, թոյլ տուաւ լուծել ամուսնութիւնը եւ մի նոր կին առնուլ, մինչ ուրիշ պապեր անլուծելի հռչակած են ազատների եւ ծառայների ամուսնութիւնը: Սոյն պապը հռչակեց նաեւ թէ, երբ ջուր պակսի, ներելի է մկրտուիլ գինիով:

Սէլէսդէն Գ հրատարակեց թէ ամուսնութիւնը կրնայ լուծուիլ, երբ ամուսիններէն մին հերետիկոս լինի. Ինոսան Գ մերժեց այս որոշումը, եւ Ատրիէն Զ պապը «հերետիկոս» հռչակեց Սէլէսդէնը՝ մի այսպիսի որոշում անելին համար:

Նիքոլա Բ, Հռոմի 1059ի սինոդոսին մէջ, նորոգեց այն դարերէ ի վեր մերժուած մոլորութիւնը թէ հաղորդութիւնի խորհուրդին մէջ Յիսուսի բուն մարմինը կը շօշափեն, աղբայներով կը խածնեն եւ կը ծամեն քրիստոնեայները:

Ինոսան Գ, որ հռչակեց թէ առաջնորդը իւր թեմին կապուած է որպէս այր եւ կին, եւ թէ Աստուած միայն, եւ նորա տեղ՝ պապը, կրնան լուծել այդ կապը, տգէտ էր աստուածաբանութիւնի, որով սխալեցաւ յանախ:

Ֆռանսիսքէնների մասին մի որոշում արաւ Նիքոլա Դ, 'զոր Դլէման Ե ալ հաստատեց: Ժան Իբ ալ 'զայն ընդունեց, հրատարակելով թէ ողջ, մեկին, անփոփոխ է նոցա որոշումը. այլ յետոյ իւր գաղափարը փոխելով, «հերետիկոս» անուանեց զզ նոսա: Ապա բռնամացաւ Ֆռանսիսքէնների դէմ, դատապարտեց Օլիվան, կրակի մատնեց 114 մարդ:

Սիքսդ Դ պապը, Ժան Իբի հակառակ, հաստատեց Օլիվաի գրածները եւ ուղղափառ ճանաչեց Ֆռանսիսքէնները:

«Պապերին շրջաբերութիւնի մէջ դրած ընդարձակագոյն վարդապետական կոնդակներէն մին է այն հրովարտակը 'զոր Էօժէն Դ ուղղեց Հայերին, —1439, նոյեմբեր 22 թուականով, Ցոյներին մեկնումովը Ֆլորանսի սինոդոսին դադրիլէն երեք ամիս յետոյ:—Հռոմէական եկեղեցիին հաւատի մի դաւանութիւնն էր այս, որ իբր կանոն պիտի ծառայէր Հայերին, եկեղեցական կենցաղի եւ վարդապետութիւնի մասին, այն կետերին վրայ յորոց հեռացած էին ց'այնվայր: Աստուածային էակի միութիւնին, Երրորդութիւնին, Քրիստոսի մարդկային բնութիւնին, եւ եօր խորհուրդներին վարդապետութիւնները կը պարունակէր: Եւ պապը կը հաւաստէր թէ այս հրովարտակը, այնքան շեղութիւնով հրատարակուած, ժողովին հաւանութիւնը ստացած է, այսինքն այն իտալացի եպիսկոպոսներին 'զորս դեռ Ֆլորանսի մէջ պահած էր:» Այս տողերը գրելէ յետոյ, *Ժանիւսի* հմտատաս հեղինակները կը սկսին քննադատել այդ հռչակաւոր հրովարտակը, որ Հայերին ուղղուած էր:

«Թէ պապին այս հրովարտակը ստուգիւ հաւատի կանոն լինէր, Արեւելեան եկեղեցին, եօթի տեղ, չորս խորհուրդ պիտի ունենար. Արեւմտեան եկեղեցին ալ զէր ութ հարիւր տարի զուրկ մնացած պիտի լինէր երեք խորհուրդէ, որոց մին այնչափ կարեւոր է որ նորա պակասութիւնը անկարեւոր կ'անէ միւս բոլոր խորհուրդները, միէն զաս: —Այս հրովարտակին մէջ, Էօժէն Դ կը նշդէ ձեւը, նիւթը, գոյութիւնը այն խորհուրդներին կամ իրերին որոց էութիւնէն կամ չ'էութիւնէն կախում ունի, ըստ ընդհանուր վարդապետութիւնին, նոյն իսկ խորհուրդին էութիւնը: Դրոշմի մի եղանակ կը ցուցնէ, որ Եկեղեցիին կէսերէն միին մէջ տեղի ունեցած չ'է երբէք, եւ որ միւսին մէջ տասերորդ դարէն յետոյ գործածուիլ սկսած է: Ապաշխարութիւնի մասին ալ նոյնը կ'անէ: Հոս ալ՝ իբր հիմնական ձեւ խորհուրդի՝ կը քարոզէ մի այնպիսի եղանակ 'զոր յոյն եկեղեցին չ'է նաչած երբէք, եւ 'զոր արեւմտեանն ալ հազար հարիւր տարի յետոյ գործադրած է: Զեռնադրութիւնի խորհուրդին գալով, թէ անօթների օծումը եւ այն պահին մէջ ասուիլիք խօսքերը ընշանակուած են իբր նիւթ եւ ձեւ, կը հեռեւի որ լատին եկեղեցին, հազար տարի, ոչ քահանայ ունեցած է ոչ եպիսկոպոս. այսպէս ալ յոյն եկեղեցին, որ երբէք հեռեւած չը լինիլով այդ սովորոյթին, մինչեւ ց'այսօր ոչ քահանայ ոչ եպիսկոպոս ունեցած է, եւ հեռեւապէս բոլոր խորհուրդներէն զուրկ է, մկրտութիւնէն եւ քեռեւս պսակէն զաս . . .: Զարմանալի է որ բոլոր

վարդապետաղները մէջ բերած, յիշած եւ ցրած են այս հրովարտակը, որով կը հաստատուի կամ կը կործանի պապական անսխալութիւնը, Եկեղեցիին բոլոր նուիրապետութիւնը եւ խորհուրդը. այլ անսխալութիւնի կողմակիցները երբէք չ'են ճաներ այդ հրովարտակը: Ոչ Պէլարմէն, ոչ Շաուլ, ոչ Ակիուռ, ոչ Օռսի, հռոմէական կղերին պատասխանեներէն ոչ ոք կը զբաղի նմա կամ կը դպչի:» Զի նա, կը յաւելեմք, պապին չարաչար սխալիլը կ'ապացուցնէ:

Մի վերջին օրինակ ալ պապերի սխալականութիւնին: Սիքսդ Ե պապը տպել տուաւ Աստուածաշունչը, եւ հռչակեց թէ այն տիպը, իւր ձեռքովը սրբագրուած, պէտք է որ գործածուի իբր միակ ճշմարիտ եւ հարազատ. բայց յետոյ գիտուն կարդինալներ այն տիպը բաղդատելով, երկու հազարէ աւելի սխալ գտան հոն:

Թէ ց'արդ այնքան անգամ սխալեցան Հռոմի պապերը, միթէ կարելի՞ է որ չը սխալին այսուհետեւ: Եւ միթէ աշխարհ իրաւունք չ'ունի՞ բողոքել այս ամօթալի սկիզբին դէմ:

Մեք միշտ խորհած էինք թէ Հայերը, քրիստոնեայ աշխարհին առջեւ, բացարձակ բողոք բառնալ պարտաւոր էին Պիոս Թ ի Քրիստոնէութիւնի անունով հռչակած մոլորութիւններին դէմ: Ուստի, անհուն ուրախութիւնով կարդացինք «Մասիս»ի 993 թիւին մէջ հրատարակուած մի նամակ, որ կ'առաջարկէ արեւելեան եկեղեցական ժողով գումարել եւ դատապարտել անսխալականութիւնը: «Հարազատ հայ քահանայ»ին յիշեալ յօդուածը,

որ կրօնական նախանձայուզութիւնով կը վառի, սա պերճախօս տողերովը կը սկսի.

«Արեւմուտքէն տխուր եւ անախորժ ձայներ մի զմիոյ կնի կը հնչեն, եւ կը խռովեն զհոգիս: Տակաւին մարդախոշոշ պատերազմին անաւուր որոտումները չ'լսուած, յառաջ քան զայն լսուեցաւ դժոխային ձայն մը, դիւախրոխտ վնիռ մը, որ ճշմարիտ քրիստոնեայ հոգիները կը տրտմեցունէ, եւ որ նախատինք է այն երկնային կրօնին ամենասուրբ ճշմարտութեանը, նախատինք է ներկայ դարուս մարդկութեանը:»

Այս ձայնը, որում դէմ մի այնքան հզօր ճիչ կ'արձակէ արի քահանայը, Անսխալութիւնի վրնիռն է այն: Այս հայհոյութիւնը, 'զոր Հռոմ կը ժայթքէ առաջդիմութիւնին դէմ, կը զայրացունէ հայ Լամբրէն, որ անէծքով կը ծածկէ այն կղերականները որոց անմտութիւնը կը նուաստացունէ Քրիստոնէութիւնը եւ Եկեղեցին կ'անպատուէ: Եկեղեցական ժողով գումարել կ'առաջարկէ.

«Երբէ այսպիսի ժողով մը կազմելու հոգ չ'ընեն հայկական եւ յունական եկեղեցոյ Ս. Հայրապետք, ճշան է՝ թէ իրենք ալ կը կամին կամաց կամաց —սուսիկ բուսիկ— աստուածանալ. քանզի մէկին մոլութիւնը չը հերքողը՝ ինքը ընդունած կը համարուի . . . :»

«Այս ի լուր աշխարհի բանադրական բողոքն ընելու եթէ անփոյթ զտնուի արեւելեան եկեղեցին, ապագայ դարուց պատմութիւնը այս լուութիւնն իբրեւ հաստատութիւն պիտի ըմբռնէ անոր ալ արեւմտեան եկեղեցոյ համամիտ ըլլալուն, որ քաւ ի մէնջ . . . :»

ԳՐԱԴԱՐԱՆ

Այս տողերին վրայ, մի համոզուած եւ հեռադէտ անձի գրիչէն ելած, Էջմիածինի Վեհափառութիւնին ուշադրութիւնը կը հրաւիրեմք :

Դ.

Այն կատարեալ անկարողութիւնը, 'զոր ունիմք մեր կեանքին առաջին տարիներին մէջ, իմացականութիւնի այն յապաղկոտ զարգացումը, որով այնքան կը վնասուիմք մեր նախնի ամերին մէջ, մեր պէտքերին բազմութիւնը, որ ըզ մեզ ուրիշների կարօտ կ'անէ միշտ, եւ դեռ ուրիշ անխուսափելի հարկեր որոշել տուած են մարդերին ի մի հաւքուիլ: Մարդը ընկերական է. մի այնքան հանրացած ճշմարտութիւն է սա, որ առածի կարգ անցած է:

Ընկերականութիւնի տրամադրութիւնը չ'է բաւեր կազմելմի ընկերութիւն, փոխադարձ յարաբերութիւնների արդար եւ ամուր հիմի վրայ հաստատուած: Կրօն եւ Օրէն. ահա ինչ որ հարկ է ընկերութիւնի բարոյ կազմակերպութիւնին համար : Կրօնը հարկաւոր է. զի պատասխանատուութիւնի, ապագայ կեանքի, պատիժի եւ վարձի, արդարութիւնի եւ անարդարութիւնի, խիղճի, փոխադարձ օգի զաղափարները կը ծաւալէ ժողովուրդների մէջ, զաղափարներ որ մարդկութիւնին յաւիտենական կապերն են եւ առանց որոց չ'իք ընկերութիւն. «Թէ Աստուած չը լինէր, կ'ասէ Վոլդէռ, պէտք էր հնարել 'զայն» իմաստասէրին այս խորին

խօսքը բաւ է ցուցնել թէ քանի անհրաժեշտ է Կրօնը, իբր հիմ ընկերութիւնի : Օրէնը հարկաւոր է. զի, Կրօնի ոգին ծծելով եւ ազգերի ներքին վիճակին գիտակից, կը սահմանէ մարդերին իրարի հետ ունեցած ամեն առնչութիւնները, եւ, թէ պէտք լինի, նիւթական ոյժի կը դիմէ՝ իւր սահմանածը յարգելի անելի համար ընդվզողներին, մի պարագայ որ այնքան կարեւոր է եւ որ կը պակսի Կրօնին: Ուստի զարմանալի չ'է որ հին դարերի մէջ Կրօնը եւ Օրէնը այնքան սերտիւ իրարի հետ խմորուած եւ շփոթուած էին :

Օրէնը առ այժմ փաստաբաններին ձգելով, դառնամք Կրօնի եւ նորա պաշտօնեայներին վրայ խօսիլ համառօտ :

Կրօնը խարիսխ եղած է ընկերական կեանքի, եւ քաղաքական կարգերի վրայ անգամ ամենէն ուղիղ եւ ամենէն հզօր ազդեցութիւնը ունեցած է: Թէ պատմութիւնը ձեռք առնումք, պիտի տեսնեմք թէ չը կայ մի ընկերութիւն առանց կրօնի: Վայրենին, որ անապատին եռացող աւազին մէջ կ'ապրի՝ մերկանդամ, կ'ուռնայ քանի կը խօսի, եւ ծառի կեղեւ կը կրծէ, այսպիսի թշուառ էակներէ կազմուած խումբէն սկսիլով մինչեւ ամենէն քաղաքակիրթ ժողովուրդը, գլուխ կը ծռէ մի Գերագոյն Էակի առջեւ : Կրօնը ազգերի օրրանին քով կը նստի, եւ նոցա կ'ընկերանայ յաւիտեան :

Զանազան տեսակներ ունի այն, որոց մէջէ քրիստոնէութիւնը արժանի է մարդկային ազգի յաւիտենական երախտագիտութիւնին:—Բարա-Պրահմա, պրահմանութիւնի գերագոյն աստուածը, չորս

զաւակ ունեցաւ. Պրահմա, որ իւր բերանէն ծնաւ. ի սմանէ կը սերին քահանայները. Շադրիա, որ իւր բազուկներէն ծնաւ. ի սմանէ կը սերին զինուորները. Վայշիա, որ իւր ազդրներէն ծնաւ. ի սմանէ կը սերին վաճառականները. Սուտրա, որ իւր ոտէն ծնաւ. ի սմանէ կը սերին գործաւորները. անհաւասարութիւնի կրօնն է այս, գերութիւնի սկիզբն է՝ ասուածացած: Քրիստոնէութիւնը հաւասարութիւնի կրօն է. եւ թէ այս յատկութիւնը միայն ունենար, դարձեալ կրօններին վսեմագոյնը կը լինէր: Չ'եմ ուզեր հոս գրել քրիստոնէութիւնի ներքողը, 'զոր շատ հանճարներ փորձած են արդէն. միայն թէ ուրախ եմ տեսնելով որ իմ ազգը, ամեն մեծութիւն կորցուցելէ յետոյ, դեռ ամուր պահած է այս կրօնը, որոյ սահնչելի ոգին կը փրկէ, կը քաղաքակրթէ մարդկային սեռը:

Թէ կրօնը ամեն ընկերական կարգի անկիւնակալ քարն է, ուրեմն քաղաքակրթութիւնի ամենէն գործօն ծաւալիչներէն մին է քահանայը: Նա խուժանին վրայ անհուն ազդեցութիւն ունի, զի մի բարձրագոյն կարողութիւնի անունով կը խօսի եւ կը յուզէ ինչ աննիւթական մաս որ կայ մարդին մէջ: Անտարբերի եւ նիւթապաշտի գործ է ուրանալ կամ արհամարհել այս ճշմարտութիւնը:

Մանաւանդ գաւառների մէջ հզօր է նորա ազդեցութիւնը եւ կարեւոր նորա ներկայութիւնը: Խնդիրը մասնաւորելով, կ'ասեմ որ հայ քահանայը, ամուսնացած լինելով, աւելի քան ուրիշ

ոք կը հասկանայ իւր ծուխերին պէտքերը, որք իւր պէտքերն ալ են: Ընտանիքին իբր մի անդամը կը նկատուի նա Հայաստանի մէջ. իւր խրատները բանկագին են ժողովուրդին համար, որ մտիկ կ'անէ նմա երկիւղած եւ պատկառ:

Այս բուռն եւ ներքին ազդեցութիւնը օգտակար անելի համար ինչ պէտք է. — Պէտք է ուսեալ լինի քահանայը եւ գործնական դաստիարակութիւն ալ առած: Եւ յայնժամ կրնայ գործի լինիլ մեր ազգային վերածնութիւնին: Քանի որ խուժանը կ'անսայ նորա խօսքին իբր ասուածայինի, կարեւոր է որ նորա խօսքերը հրահանգիչ լինին եւ ճշմարտութիւն քարոզեն. կարեւոր է որ Աւետարանի ոգին մեկնեն, եւ ոչ արտաքին ձեւը, նիւթական մասը:

Քահանայը ուսում առած պէտք է որ լինի, որպէս զի կարենայ ուսում տալ. հոս զգալի է ժառանգաւոր վարժարանների հարկը: Կրնայ տաս տարի մէջ վերածնիլ Հայաստան, թէ հազար ուսեալ քահանայ սփռուի նորա երեսին վրայ:

Ժառանգաւոր վարժարաններին մէջ, քահանայը պարտաւոր է զբաղիլ ասուածաբանական ուսումների. այլ արտաքին գիտութիւնների ալ պարտաւոր է աշխատիլ: Գիտութիւնը կրօնի քրոնամին չ'է, որպէս կարծած են շատեր. երկու քոյր են նոքա, զոյգ նանանչ ճշմարտութիւնի արեւին:

Քահանայը երաժշտութիւն ալ պարտաւոր է ուսնիլ: Սա կը վերացունէ մեր հոգին, եւ երեւակայութիւնի թեւերին վրայ ըզ մեզ բարձրացունելով՝ մեր սիրտը կը սքանչացունէ, մեր բարքը

կ'ածէ ի համբոյր: Քահանային ոլորուն ձայնը, խունկի բուրումին միացած, կը յուզէ ժողովուրդը եւ կ'առաքինացուցէ 'զայն: Երաժշտութիւնը քաղաքակրթեց Մարդկութիւնը, թէեւ արդի երաժշտութիւնը, աւաղ, մասերի մարմնամարզութիւն է աւելի:

Նաեւ հարկ է որ քահանայը հմուտ լինի բնական գիտութիւնների, կամ գէթ նոցա ընդհանուր ծանօթութիւններին: Գիւղացիները, բնութիւնին անքիւ երեւոյթներէն պաշարուած, նոցա պատճառը չը գիտեն, եւ այլընդայլոյ պատճառներ, սնապաշտութիւններ կը հնարեն եւ կ'աւանդեն մի ժառանգական ախտի պէս. քահանայը, ճշմարիտը գիտնալով, պարտաւոր է ցրել նոցա թիւր կարծիքը, այն աղիտաբեր նախապաշարումները. Բնութիւնի գիրքը նոցա առջեւ դնել, արարչագործութիւնի հրաշալիքը մեկնել պէտք է, որպէս զի տիեզերքին այս մեծութիւնը եւ ներդաշնակութիւնը տեսնելով՝ հիանան Արարիչին վրայ եւ յօժարակամ պաշտօն տանին նմա:

Քահանայը պերճախօսութիւնի ալ պարտաւոր է սովորիլ: Սա, այո, բանաստեղծութիւնին պէս, մի տեսակ ձիրք է բնութիւնէն տրուած. այլ չ'եմ ուզեր որ նա մի Պօսիւէ լինի, կամ հաւասարի Շահնազարեանների, Խրիմեանների, Վարժապետեանների, Նար-Պէյների, Էնֆիէճեանների. բաւ է որ, վարժութիւնով եւ աշխատութիւնով, աջողի սանալ մի հեշտ եղանակ, մի բեղուն եւ սիրուն կերպ խօսակցութիւնի:

Կը վերջացուցեմ այս խորհրդածութիւնները,

քահանայներին յիշեցուցելով Յիսուսի սա խօսքը. «Գնացէք, աշակերտեցէք, ուսուցէք»:

Ե

Զմեռը իւր հերմակ զորքը կը տարածէ երկիրի վրայ, որպէս աշունը դեղին, ամառը կարմիր, գարունը կանաչ զորգ տարածեցին:

Զարեհ եւ Զարուհի, իւրեանց տունի դուռին առջեւ, ձիւնի հետ կը խաղան: Մի խաչ ձեւել կ'ուզեն, նման այն սեւ խաչերին որոց ձեւը դեռ կը յիշեն, թէեւ մի տարի յառաջ տեսան ըզ նոսա շինական գերեզմանատունին մէջ:

Յանկարծ, մի մոռցուած բան յիշածի պէս, փոքրիկ Զարուհին հարցաւ անձկագին:

Ե՛ղբայրիկ, ձիւնը ինչ է:

—Լաւ չը գիտեմ, պատասխանեց. այլ կը կարծեմ թէ մի շնորհ է 'զոր կ'անէ մեզ Աստուած:

Օրհնեա՛լ լինի Աստուած, ասաւ Զարուհի. եւ ափով ձիւն առաւ գետինէն:

Այս պահին մէջ, մայրը երեւեցաւ տունին սեմին վրայ:

Զարուհի սլացաւ դէպ նա:

Մայրիկ, ձիւնը ինչ է:

—Երկիրէս վերացած զոլոշիները, պաղիլով, ձիւնի կը փոխուին, ուրեակ: Օրհնէ Աստուածը:

Օրհնե՞մ . . . :

Եւ մայրը ներս կոչուեցաւ:

Զարուհի ափով ձիւն առաւ գետինէն, խաչը ի գլուխ հանելի համար:

Եւ մի ծերունի քահանայ կ'անցնէր;

Զարուհի վազեց նորա քով եւ ուզեց աչը համբուրել. ձախը կարկառեց նա :

Հայրիկ, ձիւնը ինչ է :

—Մի պատիժ, 'զոր Աստուած կը տայ մարդերին, որպէս զի, հեշտալի եղանակներէ զրկուիլով, ուսնին թէ իւրեանց երջանկութիւնը, որպէս եւ թշուառութիւնը, ի Նմանէ կախում ունի, եւ որպէս զի միշտ յիշեն 'զԱյն : Օրհնէ Աստուածը :

. . . . . .

Զարուհի կիսկատար թողուց խաչը, եւ ներս մտաւ :

2

Մօտերս, Բարիզի Բժշկական ճեմարանին մէջ, մի գիտուն անձ մահի պատիժին դէմ մի ճառ արտասանեց, որ ջերմ ծափերով ընդունուեցաւ ժողովուրդէն : Այդ ճառին ոգին ամփոփուած է սա վերջաբանին մէջ. «Մահի պատիժը մի հին օրէն է, փոխադարձ պատիժի օրէնն է՝ մարդկութիւնին տղայ հասակէն մնացած. նորա բարոյական եւ մտային կարողութիւններին անզարգացումը կը ցուցնէ, եւ սովաւ մեր արդի բարքերին դէմ մի ժամանակագրական սխալ է : »

Դուօրմանի գլխատումը մահի պատիժի բարձումին պիտի նպաստէ : Արդէն օրի խնդիր դարձած է այդ : Ամեն աշխարհի մէջ, ամեն ժողովի մէջ, ամեն ակումբի մէջ այդ խնդիրը կը յուզուի: —Կարեւոր կը համարիմ հրապարակել, այս առիթովը, մի վիճաբանութիւն որ տեղի ունեցած է մի հայ ակումբի մէջ ;

Օ. Գ. Կարդացի մահի պատիժին դէմ հրատարակածներդ :

—Ո՞րպէս զտար զոզ նոսա, օրիորդ :

Օ. Գ. Բաւական երկար զտայ. եւ դեռ շարունակելի են, այնպէս չ'է :

—Այո. նիւթը, որպէս յայտ է, շատ բեղուն է:

Օ. Գ. Բայց ինչ հարկ թուղթ մրոտել մի դատի համար որ կորած է արդէն, ասաւ ջերմագին. եւ նախ, սխալ է այն փաստը որոյ վրայ հիմնած ես խոհերդ :

—Ի՞նչ փաստ է այդ, հարցայ հեշտաբերիր :

Օ. Գ. Այն թէ աղքատ էր Դուօրման : Օրը 20 Ֆռանգ կը շահէր նա. եւ մի գործաւորի համար մեծ բան է այդ գումարը, յարեց հակառակորդս՝ մի հնչուն եւ զուռզ շեշտ արձակելով :

—Ի՞նչ, միթէ նա չ'էր որ, Քէնիթը սպանելէ յետոյ, նորա վրայ գտած 20 Ֆռանգնոցը դրկեց անմիջապէս իւր թշուառ մայրին, որ թէեւ ծեր՝ այլ դեռ աչքին լոյսը կը մաշեցուցէր աշխատանքի տակ:

Օ. Գ. Որդիին աղքատ լինելին ապացոյց չ'է այդ. եւ կարոտութիւնին համար չ'էր որ նա մի ընտանիք անհիտեց :

—Ուրեմն էր գործեց այդ ոճիրը :

Օ. Գ. Է՛հ, ո՞վ գիտէ, ասաւ կմկմալով. թերեւս հանոյք կը զգար մարդ սպանելէ. այո, մի հրէշ էր նա, մի նիւաղ. . . : Եւ այնպիսի արտաքուստ շեշտեր կը զարկէր այս վերջին բառերին որ անկարելի էր չը զիջնիլ: Նորա կապոյտ բիբերին մէջ նախանձայուզութիւնի բոցը կը կայծկըլտար, եւ ոսկէբոյր բարքիչները անշարժ կը պա-

ղէին: Խոր լռութիւն տիրեց մի վայրկեան. ապա, նախկին հանդարտութիւնով, խօսի թելը ձեռք առի;

—Ձեր խօսքերը 'զիս շատ կը յուզեն. այլ ներեցէք ինձ հարցնել թէ էր Դրօքման հանոյք կը զգար արիւնէն, որպէս կ'ասէք:

Օ. Դ. Մի բնածին զգացում, մի չարաբարոյութիւն է այդ:

—Ուրեմն յանցաւոր չ'էր նա, զի, որպէս կը կարծէք, բնութիւնը չար միտումներ տուած էր նմա:

Օ. Դ. Սակայն կրնար բնութիւնին դէմ ոգորիլ, կրնար այդ խեղ նկարագիրը ամոքել եւ ազնուացուցել՝ դաստիարակութիւնով:

—Այդ բառին կը սպասէի: Մարդկային ընկերութիւնը յանցաւոր է, զի Դրօքմանի լաւ դաստիարակութիւն չը տուաւ. ոճրագործ է, զի սպանեց 'զայն: Այսպէս, ամեն յանցաւորի կամ նիւթական կեանքի բարոյում կը պակսի կամ բարոյական կեանքի եւ կամ մանաւանդ այդ երկու կեանքերի ալ բարոյում: Ուստի կառափնատը կործանեմք, գործարանը եւ վարժարանը կանգնեմք:

Է

Մի գիշեր, այն գիշերը ուր Պ. Թ. Թէրզեանի *Արշակ* Բին ներածութիւնը կը նուագուէր, Կայսերական Թատրին առջեւէ կ'անցնէի շուտափայլ: Մի հետաքրքրութիւնով, 'զոր դիւրին է բացատրել, ուզեցի ականջ դնել մի հայ տաղանտի հրաշակերտին, Պ. Տ. Զուխանեանի նուագերգութիւնին: Ներս մտայ ուրեմն, եւ մի քանի մոգիչ խաղեր լսեցի իսկոյն, մոլորեալ նուագներ՝ որ բատրէն դուրս սպրդած կը թափառէին, կարծես անտարբեր խուժանը հմայելի համար. . . : Այս ձայները որքան հեռուէն կը հասնէին, այնքան աւելի անոյշ կը հնչէին. աւաղ, որ բանը տգեղ չ'է մօտէն: Այդ նուագները այնչափ ախորժ էին ինձ, որչափ անցորդին ախորժ է շուշանին մեղամաղձիկ բոյրը, որ հեռին կը ծաւալի թեթեւասոյր եւ եթերը կը խնկէ շուրջանակի: Բաւ էր. ուղիս շարունակեցի. ալ երեւակայութիւնիս մէջ կրնայի շինել ներածութիւնին միւս մասերը, որպէս հնագէտը՝ մի աւեր շէնքի բեկորները տեսնելով՝ կ'ամբողջացուցնէ 'զայն իւր միտին հաշիւներովը:

Կրնայի երեւակայել մի Հայի յաղթանակը Ապողոնի հանրապետութիւնին մէջ: —Կ'երեւակայէի տիեզերքի ամենէն անոյշ գործիքները եւ ամենէն մեղոյշ շուրթերը, որք իւրեանց վայելչագոյն նուագները ի հանդէս կ'ածեն եւ հեղինակին երգերը բերանէ բերան կը յափշտակեն, մարդի ձայնը որ մեսաղի ձայնին հետ կը մրցի իւր համայն նրբութիւնին մէջ, բիւր դայլայլիկներ զանազան, որք իրարի խառնուելով կ'արտաղրեն այն փափկանոյշ ներդաշնակութիւնը որ հոգին կը զսէ եւ գեղեցիկ ձայներով կը սնցուցնէ, 'զայն իւրեան խաղալիկ արած՝ մերթ անդորր կը տայ նմա, մերթ մի խռովայոյզ երգ կը նետէ հոն, եւ մերթ կը բարձրացուցնէ մինչեւ հոն ուր նրբագոյն աւաչը կը նուաղի. կ'երեւակայէի նուագի եւ հոգիի այս գերագոյն մրցումէն ծնող սքանչա-

ցումը, որ ծափով միայն կը փարատի: Պ. Զուխանեանի մրտենին կը նախատեսէի :

Հիանալի չ'Է, Պ. ընթերցող, տեսնել թէ ամեն ճիւղի մէջ Հայը կ'աջողի: Զեռքը, որ խոպանին մէջ խոփ կը քշէ, դաշնակէն ջինջ մեղեդիներ ալ կը քաղէ: Ցառաջ անցիր, Պ. Զուխանեան. թեւ տուր խանդիդ, Հայերի տիտղոսները աւելցու: Վարազդատեան է առաջին քայլդ, շատ նուազատեղծ հանճարների հետ համեմատելով: Ռուսինի քսանեռորդ քայլն էր *Օրէլլո*, եւ դու գիտես թէ քանի կաղ է այն :

Ը

Շատեր Պէշիկթաշլեանի մատենագրութիւններին արեւ տեսնելին կը սպասեն անհամբեր :

Պէշիկթաշլեան, իբր բանաստեղծ, Հ. Ղ. Ալիշանէն անմիջապէս յետոյ կը գայ, որ հին եւ նոր Հայերին առաջին թերթողն է թերեւս :

Թէ բանաստեղծութիւնը միտին գինովութիւնն է, որպէս կ'ասէր Իզզէտտին-ապիւլ-Ֆոսայիլ-Ապտէլ-Վահապ-Ամատէտտին-պին-Իպրահիմ-էլ-Սէնճանի, ուրեմն ինչ աւելի հեստարբական քան իրարի քով բերել եւ բաղդատել երկու մեծ գինովներ, այսինքն երկու մեծ թերթողներ, որպէս Ալիշան եւ Պէշիկթաշլեան : —

Երկուն ալ բանտուած են այն ոսկիէ վանդակին մէջ որ կը կոչուի « ոտանաւոր » . մին արծիւ է, միւսը աղաւնի : Վանդակը, 'զոր արծիւը նեղ կը զտնէ, լայն է աղաւնիին : Ուր արծիւը սեպ-

ուած է ինքն իւր մէջ ամփոփուիլ, աղաւնին հոն ազատ կը շարժի : — Ալիշան խիտ եւ հոծ իմաստներով կը լնու իւր տողերը . Պէշիկթաշլեան լայն ասպարէզ կը տայ իմաստներին, եւ ինչ որ մի տողով կը բացատրէ արծիւն Ալիշան, սա բազմաթիւ տողերի մէջ կ'ընդլայնէ 'զայն մեղմիկ :

Երկուն ալ կ'երգեն : Ալիշանի երգը զոռում., Պէշիկթաշլեանինը ելուզիւն է : Մի ջրվէժ է Ալիշան, որ ռնալով ժայռէն վար կը նետուի, փրփուր եւ կոհակ կը ժայթքէ դէպ երկին, եւ քարերը ծեծելով, խութերի վրայէ ցատքելով կը վազէ անեղամռունչ, կարծես մի յաւիտենական խոչընդոտի դէմ կռուիլով, հայհոյելով. բարձրէն վար կ'ոստնու, աւելի վեր թռչիլի համար. եւ այս ելեւէջը իւր թերուածներին յատակագիծն է : —Պէշիկթաշլեան մի առուակ է, որ խոտին տակ դրդըչելով կը սահի, չ'է հոսիր՝ կը ծաւալի, մերթ հոս, մերթ հոն մի արեւի ճառագ կը հաւքէ իւր ծոցին մէջ եւ դարձեալ մարգերի տակ կը թաքչի անհետանալ, եւ մի ոլորուն ստուերի պէս՝ հեզաշարժ բեկբեկներ յօրինելով՝ ինքն իւր մէջ կը խայտայ :

Ալիշանի ճարը սեւ պատանի մէջ թաղուած է կիսովին. կրճաւորի պատանն է այն, որ, իբր անկողին Պրոկրուստի, բանաստեղծին խանդը կը ծայրատէ : Պէշիկթաշլեան չ'ունի այս նախապատը : Ուստի, երբ Պէշիկթաշլեան Աստղիկին կը նայի, Ալիշան հառաչելով Արեգին կը դառնայ . . . :

Երկուն ալ ունին հանճարի մեծ աչքերը, որովք խորերի մէջ կը յառին անդադար : Կարծես Աստուած վեհութիւնի կնիքը կը դրոշմէ այդպիսի բի-

բերի վրայ, որ մի բացխփիկով եւ մի կշիռով՝ ով գիտէ քանի անհուն խոհեր կը ծրարեն։ Անգութ հանճարներ, որ կը հաւրեն ինչ որ գեղեցիկ, ինչ որ զողտրիկ, ինչ որ վսեմ է, կը կապտեն բնութիւնը, եւ ապագային ոչինչ կը թողուն կոյս. անյաղ մեղուներ, որ անձնիւր վարդի հիւթը կը ծծեն, չոր թերթեր միայն կտակելով յաջորդներին...։

Թ

Վիգդոռ Իւկո վաթսունինամեայ է այժմ, այլ չ'է ծերութեան տակաւին։ Կէռնըսիի ժայռին վրայ Ֆռանսայի անոյշ գեփիւռը, Անկլիայի ազատաբոյր հովը եւ Ատլանտեանի առնական քամին ծծելով, կարծես հեծրզնեն դէպ իւր հին տարիները կը դառնայ։ Սպիտակախառն պեխերին տակ կը խնդայ թերեւս նոցա վրայ որոց հանճարը մարմնին հետ իւր կորովը կը կորցունէ, որոց հոգին կ'ընկնի հիւլէին տակ։ Կեանքի ձմեռին ձիւները կը հալին իւր կրակոտ նայուածքին առջեւ։ Այն ովկիանը, որ կը շրջապատէ 'զայն, մի Ժուվանսի անեզր աղբիւր է կարծես, ուր նորա երեւակայութիւնը սուզվելով միշտ՝ եւս քան 'զեւս կ'առուգանայ։

Ինչ բոց, ինչ խանդ, ինչ աւիւն որ կը վառէր իւր գրածներին մէջ մինչ երիտասարդ էր, նոյնը կը ցոլայ տակաւին իւր տողերին մէջ։ Մանշի փրփրուն ալիքները չ'են կրցած մարել այն յունական հուրով ծուլուած շանթը, 'զոր Բարիզէն Կէռնըսի փոխադրեց Իւկո։ Միշտ նա միեւնոյն զօրականի որդին է, որոյ գրիչը մի սուր է Ազատութիւնի,

որ չ'է մրոտեր, կը կտրէ։ Հատու են իւր ասացուածները եւ մի ներքին հզօր կապով զօդուած, եւ ոչ թէ, իւր կապիկներին պարբերութիւններին պէս, կացինով մանրուած եւ իրարի քով դրուած՝ առանց իրարի յարիլի։ Իւր խօսքերը կարճ են մի պատգամի պէս, եւ արագ՝ մի շանթի պէս։

Ուրիշ անգամ առիթ պիտի ունենամ այդ հրակային շուրջը դեգերիլի։ Իւկո ի նոցանէ է որոց վրայ խորհիլով չ'է յագիր միտը եւ խօսիլով չ'է յոգնիր շուրթը։ Մի հանճարի կենսագրութիւնը Մարդկութիւնի պատմութիւնն է։

Ժ

Ամերիկայի Միացեալ-Նահանգները այնքան յառաջ դիմեցին կէս դարի մէջ, որքան չ'է առաջդիմած Եւրոպա այն հին դարերէն ի վեր, ուր Ատտուած-Ցուլը (Արամազդ) հոն փախցուց Ագենորի դուստրը։

Հոն է Վօլդէռի երեւակայած Էլտորատօն, մի Էլտորատօ ուր ոսկին աւազի մէջ չ'է, քիրտի մէջ է։ Հանրապետութիւնի Ատտուածը մի անհուն ամաղթեղջիւր կախած է կարծես այդ գեղածիծաղ հորիզոնէն։ — Եւ կարելի է որ չ'առաջդիմէ մի երկիր ուր ժողովուրդն է վեհապետ, ուր ինքնավարութիւնի սկիզբը տեսականէն գործնականի անցած է. մի երկիր ուր բացարձակ հաւասարութիւն կը տիրէ, ուր նախագահը գործաւորին չափ խոնարհ եւ գործաւորը նախագահին չափ բարձր է. մի երկիր ուր սէրը իւր բարիքը կը ցանէ լիա-

բուռն, ուր բարեբար բազուկներ կը կարկառին ամեն կողմէ եւ օգի կաros մարդեր կ'որոնեն. օրհնեալ երկիր ուր ծոյլը ամօթէն կը մեռնի բան բաղցէն, ուր աշխատութիւնը միայն յարգի, նակատի քիրտը միայն պատուաւոր է, ուր անձնիւր ոք եւ անձնիւր իր կ'առաջդիմէ, կը կատարելագործուի, ուր աղքատը կ'աշխատի ապրիլի եւ հարուստը՝ ապրեցուցելի համար, ուր խաղաղութիւնի ծաղիկէն երջանկութիւնի մեղրը կը ծորի, ուր հանրային բարեբերին մէջ անգամ մի բան կայ ոսկէդարեան, ուր կիները այնչափ հաստ որչափ այրերը բարէբարոյ, որդիները այնչափ գործօն որչափ հայրերը աշխատող, օրիորդները այնչափ պարզասէր որչափ երիտասարդները ժուժկալ, եւ ուստի շուայլ նոխերը Եւրոպա կ'ապաստանին ազատիլի համար հանրային կեցամբանիէն, եւ հոն միայն, անպատիժ, իւրեանց գանձերը կը մսխեն . . . կարդամք Պ. Դօգվիլի գիրքը, եւ աւելի զարմանալին պիտի ուսնիմք: Վերջապէս, կարելի է որ չ'առաջդիմէ մի հանրապետութիւն, ուր կ'եռապետեն Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն, 89ի այն պատեալի յաւէրժահարսները:

Այս անոյշ եւ իրական երազէն յետոյ, մասնաւորեմք մեր տեսութիւնները Միութիւնի արդի նախագահ Կուանդ զերապետին վրայ: — Երջանիկ ազգ, երջանիկ ազգապետ: Մի երկրորդ Ուաշինկդրն է Կուանդ. նա քաղաքական գերութիւնի յաղթանակող, սա ընկերային գերութիւնի՝ անմահ Լինքոլնի հետ: Պ. Կուանդ մի Հայի չափ բարէսիրտ

է, մի Սպարտացիի չափ պարզամոլ, մի Իտալացիի չափ հայրենասէր, մի Հռոմայեցիի չափ արի, մի Ֆրանսացիի չափ ազատասէր, եւ աշխատող՝ մի Ամերիկացիի պէս, որոյ ճշգրիտ տիպարն է: Իւր աչքերը, 'զորս, իբր զօրավար, խոժոռ ցուցնել կ'ուզէ, սէրի եւ պարզմտութիւնի հեզիկ ճանանչներ կը ծաւալեն: Անիրաւութիւնը իւր սեւ դրոշմովը չ'է խարած նորա պայծառ ճակատը. նորա ձեռքերը չ'են խառնած մի անարդար ոսկի փոշին: Նա միեւնոյն աջողակութիւնով կը շօշափէ սուինը եւ գրիչը. մարտի դափնին եւ անդորրիկ ձիթենին իւր ափին մէջ նոյն մեծվայելչութիւնը ունին: Ուզես դիւցազն է, ուզես քաղաքագէտ. սուրի մարդ, սէրի մարդ. եւ այնքան խոնարհ է որ, գահէն իջնելով, հողը կը պատռէ ցնծագին եւ ցորեան կը ցանէ . . . :

ԺԱ

Սիւէզի պարանոցին նեղումը այն հոյակապ գործերէն է որ դարիս շուքը կը կազմեն: Մի գործ, 'զոր այնքան դարեր եւ պետեր ի զուր փորձեցին կատարել, Պ. Ֆէռտինան տը Լէսէպս ի զբլուխ հանեց 'զայն մի ափ տոկուն գործաւորներով: Ալ իրացաւ այն խորհուրդը 'զոր անկարելի կարծեցին մեր հայրերը. ալ աջողեցաւ այն ձեռնարկը որոյ առջեւ տկարացան Փսամեթիքոս, Նեքաւով, Վշտասպեան Դարեհ, Պտղոմէոս Փիլադեղփոս, Տրայիանոս, Ադրիանոս, Էսմէր, եւ նոյն իսկ Նաբոլէոն Պոնապարդ: Մի աւազուտ պեղուե-

ցաւ 180 հազարամէջ երկայն, Ափրիկէ կղզի փոխուեցաւ, Միջերկրական ալիքները Կարմիր ալիքներին խառնուեցան: 200,000,000 ծախսով մի ջրանց բացուեցաւ, որ 10,000 հազարամէջ եւ աւելի կը կարնէ Հնդկաստանի ուղին: Հոս՝ քարերը ալիքի փոխեց Լէսէբս, երկու քայլ հեռին՝ ալիքները քարի փոխեց Մովսէս: Հանճարը նոր դարերի մոգական գաւազանն է:

Երանի՜ որոց տեսած են այն խորհրդաւոր Եգիպտոսը: Երանի՜ որոց նկատած են այն կոյս հնութիւնները. երբ սոցա առջեւէ կ'անցնի ժամանակը, պատկառով կը ծածկէ իւր մանգաղը: Երանի՜ որոց այդ հնաբոյր հորիզոնին տակ, լի կրօնական երազներով եւ թերեւս քրմանոյշի նրւազներով, այդ բոցաժմիտ հորիզոնին տակ բափառած են մերթ յուրանների եւ բուրգերի շուրջը, որք արուեստակեալ լեռների պէս դատին երեսէն կը բարձրանան աներեւոյթ. մերթ կիսականգուն տաճարների սրբատաշ սիւներին յեցած՝ շնչած են այն օդը որ կարծես Սեթոնի օրերէն ի վեր այն նուիրական որմերին մէջ անփոփոխ մնացած եւ չ'է խոնարհած խառնուիլ արտաքին եթերին, մի անսուրբ խուժանի շունչովը պղծուած. մերթ Նեղոսի մենաւոր եզրներին վրայ նընջած է սրբազան ալիքների մրմունջով, արմաւենիների թեթեւ խշրտիւնով, անհոգ Ֆելլահի մելամաղձոտ սրինգով եւ կրոկոդիլի մռունչներով օրորուած. մերթ ափին մէջ առած այն ոսկի՜ աւազը, որ Հիւկուսոսների ոտին հետքը ունի, զրնցած է 'զայն հիացումով, եւ իբր հնապատում յի-

շատակագիրի՝ նորա մէջ կարդացած է անցած դարերի խորհուրդը, մի անցած կրօնի գաղտնիքը, մի անցած ժողովուրդի մեծաշուք ոչնչութիւնը . . . : Օ՜հ, ինչ բանաստեղծական եւ իմաստասիրական ներշնչումներ արդեօք անցորդին կ'ազդէ Ոսիրիսի դրախտը, խորհուրդների եւ հրաշքների հայրենիքը, խոհանքի եւ սահանքի Նեղոսը, եւ քանի՜ դիւրին է մի Վոլնէյ լինիլ Հնութիւնի այն վեհափառ փոշիներին առջեւ . . . :

Այսքան սքանչելիքների վրայ է որ նոր սքանչելիք կ'աւելնայ անա: Երէկ անապատ էր հոս, լռին եւ մենիկ. բնութիւնը մեռած էր մի աւազէ, խիստ եւ ժժմակէ պատանի տակ. մի կանաչ խոտիկ չ'էր տեսուեր. սիմունը,

Ամպ աւազուտ յարուցեալ ըզ յեռոյ,

կը գար լիզել այն Արաբներին արագ հետքերը որք դուն ուրեք կ'անցնէին ուղտերի վրայ. այսօր, ո՛վ հրաշ, անապատին մէջ տես, մի քաղաք ծնած է, Պ. Բուժէի քաղաքէն աւելի արագ . . . բիւրաւոր մարդեր հաւքուած են, Եւրոպեանը եւ Ափրիկեանը խաղաղ կ'ապրին եղբայրների պէս եւ իրարի երջանկութիւնը կը յարդարեն. հոն, ուր քառասուն դարէ ի վեր տիեզերները կը կռկռային, ցնծումի երգեր կը լսուին եւ զոհութիւնի աղօթքներ կը բարձրանան հեզաշունչ. արեւին ճառագիները, որք երէկ աւազին վրայ կը ննջէին անշարժ, այսօր կանաչ կարմիր կը փայլփայլին եւ Սիւէզի ջրանցին մանր ալիքները կը փայփայեն: Ո՛վ երջանիկ արգասիք խաղաղութիւնի, 'զոր յոգնած Մարդկութիւնը կը ճաշակէ վերջապէս, ո՛վ անոյշ

պտուղ ընկերհաճոյութիւնի, ոմ հեծալի խայրի համազգային միութիւնի, ոմ առաջին համբոյր եղբայրական 'զոր ազգ ազգի հետ կը փոխանակէ, ոմ հանդէս հարսնեկան կրկին աշխարհների, ոմ ոսկէդար երանաւէտ, ծշ թէ fo հրապոյրները սրփռուէին հանրամած, ծշ թէ տիեզերական լինէր բուրգերին առջեւ լռելեան կնքուած այս դաշը, որով սրուկ համարուածը եւ ազատը, Սեւամորթը եւ Սպիտակամորթը, միւսիւլմանը եւ քրիստոնեայը ձեռք ձեռքի կը տան հաշտ ժմիտով, եւ խոչերի վրայ կոխելով՝ կը վազեն իրարի գիրկը նետուիլ· ծշ թէ Նեղոս ատելութիւնների Լեթէն լինէր . . . :

Օ՜ն, քանի՞ փոքր են դա հսկայ բուրգերը այս տեսիլին առջեւ . . . :

ԺԲ

Մի կողմէն Ոսկեղջիւրի ծոցովը մանեկաւոր, միւս կողմէն Քարա-Աղաճի բլրակներովը եւ Օք-Մէյտանիի դաշտերովը սահմանափակ մի գիւղ կայ ընդարձակ. մեր Հասգիւղն է այդ, «Կոստանդնուպոլիսի Արէնքը», որպէս կ'ասէր Շահնազարեան :

Կան գիւղեր որոց հորիզոնին մէջ կարծես մի զուարթութիւնի ծիածան կը ցոլայ. երկինը նոցա վրայ կապոյտ ժմիտներ կ'արձակէ, երկիրը կանաչ ժպիտներ կը սփռէ նոցա շուրջը, եւ ծովը նոցա ստորոտը կը խայտայ բիւրեղէ ծիծաղներով: Այս գիւղերէն չ'է Հասգիւղ. խնդուն գիւղ չ'է այն:

Թուրքիայի շատ վայրերին պէս, հոն ալ մի ծիւրօղ միօրինակութիւն կը ծանրանայ, միօրինակութիւն որ մարդը կը յոգնեցուցնէ եւ կը տխրեցուցնէ, ուժաթափ կ'անէ երեւակայութիւնին թեւերը, կը ցամքեցուցնէ երիտասարդ աւիւնը, կեանքը կը խամրեցուցնէ: Հասգիւղ շատ քիչ անգամ կը խզէ այս տաղտուկ միաձեւութիւնը, շատ քիչ անգամ կ'առուգանայ այս երկար հոգէվարին մէջ: Իմ ծննդավայրին այդ մի քանի օրերին, այդ մի քանի տօներին ամենէն հետաքրքրականը, աղմկայոյզը եւ խոհեր նետնչօղն է անշուշտ Նոր Կիրակէի հանդէսը, որ երեք օր կը տեւէ եւ որոյ վրայ պիտի խօսիմ առաջին անգամ: —

Մի ձորակ կայ որ Օք-Մէյտանին կ'անջատէ Հասգիւղէն· ձմեռը, մի հեղեղ կը շէջ եւ կը սողայ նորա յատակէն՝ իբր մի օձ դեղին սաթէ· ամառը, զոյնազոյն թիթեռնիկներ կը թրթռան հոն: Այդ ժեռուս ձորակին աջ կողմը կը կանգնին ճերմակ, կանաչ, կապոյտ վրաններ· անխոնջ թմբուկը եւ փողը կը սկսին հրաւէր կարդալ պանդուխտ Հայերին, որք Արամասանի ամեն կողմերէն Կոստանդնուպոլիս գաղթած են եւ որք, նոյն օրը, Կոստանդնուպոլիսի ամեն կողմերէն Հասգիւղ կը դիմեն: Հրաւէրը կ'ընդունին նոքա· Հայերը, հեզ զառնուկներ, հովիւի սրինգին կը լսեն· զառիվայրը անմիջապէս կը ծածկուի հազարաւոր անձերի տակ: Ամեն քաղաք իւր ներկայացուցիչը ունի հոն· այլ հոյակապ է մանաւանդ Մշեցին, երբ ճերմակ կարմիր ծաղկանկար *արախչին* գլուխին վրայ, ոսկեթոյր եւ վարդագոյն գիծերով վեսքոնէ

ԳՐԱԴԱՐԱՆ

բանկոնով, որոյ թեզանիֆները հովին տրուած կը ծածանին, կը սկսի իւր կէս զինուորական պարը, եւ գոռոզապէս իւր ձախ բազուկը կը բարձրացունէ ոսոխին դէմ, որ հազար եւ մի ձեւերով յառաջ կը գայ, եռ կը քաշուի: Այլ ձգեմ այս մանր պարագայները, որ խոր հմտութիւն կը պահանջեն Հայաստանի արդի բարքերին եւ սովորութիւններին. բարոյական մասը վեր հանեմ, պանդուխտների ներքին վիճակը քննեմ, սիրտը ծծափեմ. եւ այս նպատակին դիւրով հասնիլի համար, ձեռ առնումք մին ի նոցանէ, 'զոր «Վարդան» պիտի կոչեմ:

Ո՞րպէս կը զուարճանայ Վարդան:

—Պանդուխտի պէս:

Այսինքն:

—Այն բառը կը պարունակէր ամեն իմաստ. այլ զի բացատրութիւն կ'ուզէք, լսեցէք ուրեմն: Վարդան, հայրենի նուագարաններէն առաջնորդուած, զբօսավայրը կը հասնի յուզումներու յորձանի մէջ ալէծուփ. թմբկահարին հարուածները կ'անկնին իւր կուրծքին վրայ, սիրտին թելերը կը զալարուին:

Օ՜հ, մի քիչ օղի, բարէկամ . . . :

Եւ բաժակը պարպելով, կը կարծէ մոռնալ իւր հայրենիքը: Ցանկարծ, դիմացի վրանէն մի ձայն կը լսուի. մի հայրենական երգի նշխարն է այն, ով երիցս սուրբ նշխար . . .

Ղարիպին սիրտն է խոց, ճիկիրն է վիրամ.

Կերած հացն է լեղի ու ջուրն է *հարամ*:

Վարդանի քիքերը կը մթագնին, աչքերը կ'ողողուին արտասուով, Վարդանի հոգին կը նմլուի . . . :

Օ՜հ, մի քիչ օղի . . . :

Եւ բաժակը քամելով, կը կարծէ մոռնալ իւր հայրենիքը: Պարել կը սկսին ուրիշները, կը ներկայացունեն այն պարը որ այնչափ քաղցր էր Վարդանին եւ իւր մտերիմներին հայրենի դաշտերի վրայ. ո՞ւր են այն սիրելիները . . . իւր շուրջը կը նայի, կը տեսնէ մի կիսափուլ պատ եւ դիրեւտար շիրիմներ, կիսափուլ իւր սիրտին պէս, դիրեւտար իւր յիշատակներին պէս . . . բունդ կ'ելնէ հոգին:

Օղի ինձ, անապարէ՜ . . . :

Գինէպանը կը մատուակէ, եւ Վարդան կը կարծէ թաղել իւր վիշտերը ըմպելիին բաժակին մէջ: Ճակատը կը հակէ ափին վրայ, եւ սիրելիները մի առ մի կը շարուին իւր միտին առջեւ: Հեռացէ՜ք, անգութ երազներ, օհ, մի՛ չարչարէք ցիզդեհը . . . :

Օղի տուէք Վարդանին, օղի տուէք, տագնապի մէջ է . . . :

Դարձեալ կը ներկայանան ընկնող երազներ: Կը տեսնէ կիները. այո, ինքն է . . . ձիւնափայլ լաչակը հակատին վրայէ ոլորելով՝ վարդ շուրթերին վրայ բերած կնքած է. իւր սրբութիւնին դրոշմն է այն. բայց տես որպէ՜ս կը փախչի անգութը ցիզդեհին առջեւէ, աչքին ծայրովը նմա նայելով . . . : «Նազլու» կը գոչէ, եւ կը զարթի Վարդան:

Օղի բերէք, օհ, օղի . . . :

Երազները կը յամառին դարձեալ: Իւր անդրանիկ որդին, սէրին առաջին երաշխը, Գառ-

նիկը կը տեսնէ. ծն, որչափ ալ մեծցած է... երկու քոյրիկներին ձեռքը բռնած է. կ'անցնին երեքն ալ, երեքն ալ կ'անցնին գլխակոր, աչք ի գետին:

Օղի հասցուցէք, ծն, կը նուաղի նժդեհը ...:

Կ'արբենայ Վարդան, խօլ ընթացի կը տայ 'զինքն, առանց արածը գիտնալի. եւ ամեն մարդ կը կարծէ թէ կը զուարճանայ նժդեհը ...:

Այս տխուր կողմը թողումք, հանդէսին զուարթ մասը նկատեմք: Ողբերգութիւնէն յետոյ, զաւեշտը:

Զբօսավայրին հարաւային կողմը աւելի շարժում, աւելի կայտիռ, աւելի ցնծում կայ քան այլուր. պատանիները եւ երիտասարդները հոն են: Ճշմարիտ է թէ աղքատիկ են սոքա, այլ հարուստներէն աւելի հանոյք կը զգան իւրեանց խուն զբօսանքէն. սրտալիր կը վայելեն սոքա իւրեանց մանր հանոյքը, մինչ հարուստները իւրեանց նոխ հանոյքը չը կրնան հաշակել առանց ծանձրոյթի լեղին նոցա հետ եւ թերեւս ի նոցանէ աւելի ծծելի. հարուստին համար հանոյքը մի ոսկէզօծ ծանձրոյթ է: Բայց ինչ են այդ պատանիներին զբօսանքը. —անմեղ խաղեր արդարեւ. օրրանի մէջ, կամ հաւասարակշիռ գերանի ծայր, կամ փայտէ ձիի վրայ հեծած են. բարձր կեանքի (high life) պարոնները պիտի խնդան 'զայս լսելով, եւ «տղայական խաղալիքներ» պիտի փսփսան. իրաւ է. այլ ով սին խաղալիկով չ'է զբաղիր, չ'է խաբեր 'զինքն այս մոլորակին վրայ: Պաշտօնատարը մի շքանշանով կը դիւրուի, պերճախօսը մի ծափով կը գինովնայ, գրագէտը մի մակդիրով կը մեծամտի, *ղօռտը* մի ծնրակապի ծուռնր կը դնէ, նոխը կը հառաչէ մի

ժապաւէնի համար. սոքա խաղալիկներ չ'են միթէ, աւելի փայլուն, աւելի շառաչուն խաղալիկներ: Ամենն ալ մի ոեւէ խաղալիկի վրայ դրած եմք մեր երջանկութիւնը, կ'երազեմք կամ կ'ապրիմք, յոյս կը շնչեմք քան օդ. աւա՜ղ, սուտերի ետեւէ կը վազեմք անդադար, եւ չ'եմք տեսներ թէ ժամանակը մեր առջեւէ կը փախչի, մահը մեր ետեւէ կը վազէ: Եւ ամենս ալ, երբ այս անընպատակ մրցումէն, այս փանաթի կենցաղէն ելնելի մօտիմք, ուշ կամ կանուխ պիտի համոզուիմք թէ, մի մանկանացու բերանի մէջ, երբէք Սողոմոնի սա խօսքին պէս անման խօս լսուած չ'է եւ չը պիտի լսուի.

«Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է:» . . . . . .

Ժ. Գ.

Նոր Կիրակէէն յետոյ, Հասգիւղ կը կատարէ մի ուրիշ տօն, որ աւելի բանաստեղծական է: Մայիսի առաջին օրի հանդէսն է այդ: —

Զբօսավայրը գիւղէն դուրս է, եւ բաւական հեռի: Մինչեւ Քեաղրս-Խանէ պէտք է երթալ: Բայց հոգ չ'է. Հասգիւղցին չ'է ուզեր լքել իւր զուարճութիւնի սահմանափակ օրերը: Մայիսի մին է, Աստուած իմ. կարելի է մնալ տունի մէջ: Թուրքիացիները աւելի բնութիւնի մարդ են քան ընկերութիւնի. այդպէս են Հասգիւղցիներն ալ, այն վաղեմի Բիւրիսթիսնին զաւակները: Մայիսի հանդէսը բնութիւնի տօնն է, մի ողջոյն է առ զա-

ռուն. Նոխա, որ կ'ուզեն վայելել գարունը, պարտաւոր են ուղղուիլ դէպ Քեաղրս-Խանէի գեսակը, հինն այն Քիՙնարիս: Անապարեմ:

Առաւօտ է: Արեւը ձորերի մեռուին վրայ վարդ ճաճանչներ կը սահեցունէ. կաթնաթոյր ամպերի եսեւէ Մայիս կը ժպտի, եւ հեղուկ մարգարիտներ կը թօթափին իւր թեթեւ թարթիչներէն: Թռչնիկները, իւրեանց գլխիկը վեր հանելով ճնճուռ թեւի տակէ, առաւօտեան անհամբերում շարականները կը սկսին եւ Մայիսի հրապոյրը կ'երգեն: Մարգին մէջ գառը կը մայէ եւ իւր մայրին եսեւէ կ'ուսուսէ: Հեռին, մի առուակ կ'անցնի մի ջինջ եւ փայլուն քարավազի վրայէ դրդրչելով, փրփուրներ ցայտելով աջ եւ ձախ՝ իր սպիտակ ծաղիկներ: Մերթ ընդ մերթ մի ճաճանչ կ'անկնի նորա գոգը, եւ մանրադիտական ծիրանի գօտիներ կը փռէ նորա մանի մանի պղպջակներին վրայ:

Օգուս քաղեմք օդէն, մի նաւակ մտնեմք եւ գրօսավայրը դիմեմք:

Գեսակը հարիւրաւոր նաւակների տակ անհերեւոյթ եղած է արդէն. թիավարը կը քաշէ թին իւր պղինձէ բազուկներովը եւ հրամաններ կ'արձակէ իւր շուրջը: Կղզեակների, կնիւններու առջեւէ քերելով անցանք, եւ դէպ կամուրջ կ'ընթանամք: Տես սա նաւակը. Թրքուհիներ են հոն. կարմիր բաւիշէ ծածկոյթ տարածած են խելիին վրայ, եւ նորա ոսկէթել ծոպերը, վտակին բիւրեղը խառնելով, կը գծեն կապոյտ շրջանակներ, որ հեռը զնեսէ կ'ընդլայնին եւ մինչեւ գեսեզր կը հասնին, ուր կը նուաղին գարնային սէգերի տակ՝

իբր սէրի մի հառաչ...: Տես սա մակոյկը. Մայիսի ձօնուած է դա. հելլէն նաւազներ զարդարած են 'զայն շագանակի բրգաձեւ ծաղիկներով եւ դալար ոստերով, լեռի կարմիր դեղին փունջերով. շեփորուկի կապոյտ ողկոյզներ կը ծածանին վրանակին շուրջը եւ ալեակին վրայ թոյր եւ բոյր կը սփռեն: Առաջեմք:

Ձախ եզրին վրայ մի կայսերական հովանոց կառուցուած է, չը գիտեմ ինչ նաբակով: Անցած տարի մի ուրիշ հովանոց կար հոն, աւելի հոյակապ. նորա աւերակներին վրայ կանգնեցին 'զայս. Էր.— Է՛հ, *Թագաւորը կը զբօսնու*: Ապարանքին դիմաց մի հսկայ կաղնի կայ. բնութիւնը մի դուռ բացած է նորա բունին վրայ. ծառին խոռոչին մէջ մի պահապան կը նստէ, մի աղքատ արեւելցի. խեղճը անշուշտ չը գիտէ թէ ինքն եւ իւր պէս թշուառներ կանգնած են այդ պալատը, ուր Սուլթանները կը հովանան . . . : Ա՛հ, անցնիմք:

Երկրորդ կամուրջէն քիչ հեռի, մի կայսերական պալատ ալ: Նոյն խոհեր: Այլ մտնեմք հանրային պարտէզին մէջ:

Հոն, արեւեսը կ'իշխէ բնութիւնին վրայ: Ամենէն նկարագրական առարկայն է գեսակը, որ իբր նախարակէ ձեւակերպուած՝ կը խայտայ կանաչ ոստերներ օրրելով: Երեք կարգ մարմարէ աւազաններ ջուրը կ'ընդունին, եւ իւրեանց արուեստական ծերպերէն վիժելով 'զայն կը գլորեն ծոցէ ծոց. կիներ փեթակներ, որ ամեն կողմէ արծաթավառ հեղուկ կը ծորեն: Սոցա շուրջը Մորփէի նաժիշտներ կը սաւառնին արդեօք՝ ափիոնի

պսակներ ի նակաս. մահկանացուն ննջել կ'ուզէ այն յաւիտենական խոխոջներին մոս. այլ բազմութիւնի մէջ եմմ, տօն է այսօր:

Գեսակին ձախ եզրին վրայ մի անտառակ կայ, որոյ մուտը փակուած է կառուեռով: Փարթամներին սիրելի վայրն է դա:

Սակայն ոչպէս կը զբօսնու ժողովուրդը.—«Մայիս կ'անէ». կը նաւէ, ման կը գայ, կը հանգչի, նուագարան կը լսէ, կը նաշէ, կը պարէ, կ'երգէ. վերջապէս *ֆէյֆ* կ'անէ, որպէս կ'ասեն Օսմանցիներ: Եւ գիշերը տուն դառնալով՝ այս ամենը կը յիշէ մարդ, կը յօրանջէ եւ կը հառաչէ բընազդով:

Օ՜հ, մի քայլ եւս առած էր նա դէպ գերեզման...:

Ժ. Դ.

Ամեն ժողովուրդ մի գեղեցիկ նախանձ ունի ազգային մեծ օրերը տօնելի, նոցա յիշատակը անմահացուցելի: Այս սովորոյը հաստատած էր նաեւ հին ժողովուրդներին մէջ. օրէնսդիրները, քաղաքագէտները մեծ փոյթ ունէին 'զայն հաստատելի, զի գիտէին թէ մի ազգի զօրութիւնի հիւթերէն է այն: Բաւ է յիշեցուցել այս մասին Յունաստանի ողիմպիական տօները. յայտ է թէ այն երկիրին իշխանները քանի հոգ կը տանէին նոցա պահպանութիւնին. այդ տօները բուլացած էին քիչ ատենէ ի վեր, եւ Հերակլէս (Իդաեան) նորոգեց ըզ նոսա. տարիներ անցնիլէ յետոյ՝ երբ դարձեալ բուլացան, Պեղոպս վերականգնեց ըզ նոսա.

երբ բաւական ատենէ յետոյ նորէն դադրեցան, Իփիտոս, Եղիսի օրէնսդիրը, նորէն ըզ նոսա հաստատեց. մի դար յետոյ, նոր կազմ տուին նոցա. եւ էր այսքան փոյթ. — զի համոզուած էին թէ ազգային տօները անհրաժեշտ են մի ժողովուրդի ներքին ոյժը անեցուցելի համար:

Երկար ատեն ասստուածների եւ կիսաստուածների տօները եղան ազգերի տօները. նոր դարերին միայն կը պարտիմք գաղափարի մարդերի տօներին հաստատումը. սա բարոյականին յաղթանակներէն մին է այն յաւիտենական մարտին մէջ 'զոր կը մղէ նիւթին դէմ: Շուառնբընպէռկի արձանին առջեւ, Շիլլէռի հարիւրամեակը կը տօնեն. սրտառուչ է այս: Ամենէն աւելի ասպետական հաճակի տէր անձերն իսկ հանճարի պաշտօնը հրացանի պաշտօնէն վեր կը դասեն. մի բարոյական յաղթանակի տօնը աւելի հրահանգիչ է ժողովուրդին համար քան այսինչ զօրավարին այնինչ դաշտին մէջ արած նախնիին յիշատակը: Այս մտածումովը, մեր Սահմանադրութիւնի տարեդարձը սիրելի է մեզ, եւ պէտք է որ սիրելի լինի ամենին. զի նա հանրավարական գաղափարին յաղթանակը կը ներկայացունէ ազնուապետական գաղափարին վրայ: Այս նկատումը ունենալով, ախորժ է ինձ խօսիլ Հիւնֆեար—Իսկէլէսիի հանդէսին վրայ:

Մայիսի 24ն է: Մի բանաստեղծական ուղեւորութիւն պիտի անեմք դէպ Վոսֆոր. վրանը ձեռք առնումք:

Շահնազարեան հաստատութիւնին տնօրինութիւ-

ՆԸ մի շոգէնաւ վարձած է. հոն եմք: Կանաչ դափնիներով եւ *ագաստիա*ների նուրբ եւ բրբռուն տերեւներով շրջապատուած է այն: Մեր գլուխին վրայ կը ծածանին վառ ի վառ դրօշներ կարմրավառ. հոս կը փայլի թուրք մանիկը, որոյ ծոցին մէջ մի ասղիկ անկած է. հոն *Ազգ* բառը կը շարժի. ամենէն աւելի խորհրդաւոր բառերը դրօշի վրայ բարձրացած են. *Հաւաս, Յոյս, Սէր* կ'օրրին, իբր մարմնացած երազներ:

Նուագարանները խազերի ներդաշնակութիւնով եթերը կը լնուն: Դեղեցիկ երգեր սեղծող հանճարներին մրմունջները Վոսփորի կապոյտ գոգէն դէպ երկին կը բարձրանան իբր մի կընդրուկի ամպիկ, որ բիւրեղէ բուրվառի մէջէ կը ծառանայ: Կարծես Ռօսինիի, Մօձառդի, Պէրվրնի, Մայէռպէռի երգերին համեմաս կը շարժին կամ կը կասին ալիքները, եւ նոցա արուեստակուած նուագներին կը պատասխանեն բնութիւնի վեհ ձայներով, ծովի խուլ շշուկներով:

Զեփիւռը, կոյս թափառական, որ չ'է փախչիր այսպիսի հանդէսներէ, զարնային ծաղիկների խունկը կը հաւէ՝ որպէս մեղուն նոցա հիւրը, կը գայ խաղալ դրօշների հետ, ալեակների վրայ սահիլ, հազար եւ մի կատակ անել, հազար եւ մի հեգնանք. կարծես մի փափկիկ ցնոր է որ ճակատիդ վրայէ կ'անցնի եւ մայիսեան բոյրեր կը ցանէ քունիդ պատրանքին վրայ . . . :

Մեր նկարը լրացուցելի համար լոյսը միայն կը պակսի. այն ալ պուտ է: Օդը պայծառ է, արեւը շեղ; Շոգէնաւը յառաջ կ'ընթանայ եւ իւր

կողերէն յասմիկ փրփուրներ կը ցայտէ, 'զորս արծաթազօծել կը գան արփի հանանչները: Եւ այս գոյների, ձայների, խունկերի եւ լոյսերի մոգիչ միաւորութիւնին մէջէ, Պէյ-Գօզի նաւամատոյցը հասած եմք:

Քայլեմք, քայլեմք. փոքր առարկայներ առջեւ կանգ առնուլ հարկ չ'է: Դափնիներով ձեւացած մի արուեստական ծառուղիի մէջ եմք. իւր պարզութիւնովը շեղ մի կամարի տակէ կ'անցնիմք. ինչ տարբերութիւն սորա եւ Ֆիտոսի, Կոստանդինի յաղթակամարներին մէջ 'զորս Հռոմ կը պահէ դեռ. ընթերցողին կը թողում այն գեղեցիկ խոհերի շարը, 'զորս այդ հարցը կը զարթեցուցէ իմաստասէր ոգիների մէջ: Կամարին բարձրէն չորս օրիորդիկ վարդի թերթ անձրեւ կը տեղան ժողովուրդին վրայ. քանի՞ զոյգ է այս եւ քանի՞ ոսկէդարեան: Առոյգ երիտասարդներ կուրծքիդ վրայ կը կախեն մի կարմիր, կապոյտ, ներմակ ժապաւէններէ վարդիկ, շքանշան սիրտէ առ սիրտ ընծայուած, եւ ոչ նենգամտութիւնով տրուած եւ շողոքորթութիւնով ընդունուած: Աւելի հեռին, բարձրաւանդակի վրայ մի երկրորդ կամար, որոյ ճակատը *Սահմանադրութիւն* գրուած է վարդէ տառերով:

Դէպ հանդիսավայրը կ'ուղեւորիմք: Շահնազարեանները ունին իւրեանց յատուկ շրջանակը, իւրեանց սեղանները, ուր կը նստեն եւ բաժակ կ'առաջարկեն ի պատիւ ազգին եւ իւրեանց բարերարներին: Ճաշին վերջին մասը կրակոտ է, որպէս եւ սովոր է:

Եւ ահա կը սկսին երաժշտութիւն, երգ, պար, պտոյտ, փոխադարձ այցեր: Ամեն տեղ եղբայրութիւն, ամեն տեղ սէր, ամեն տեղ զուարթութիւն. անձնիւր նակատի վրայ ժպիտ կը ցոլայ, անձնիւր աչքի մէջ յոյս կը նշուլէ, անձնիւր լանջի տակ ազնիւ զգացումներ կը բրբռան: Մեծ օր, մեծ մարդեր:

Սեր խումբին դառնամք: Կ'ընթրեն Շահնազարեանները: Ճառերը կը սկսին տգեղ եւ գեղեցիկ սեռէ ունկնդիրներ հաւաքուած են եւ մտիկ կ'անեն մի տեսակ կրօնական երկիւղածութիւնով: Անկեղծապէս խօսիլով, ապագայը բոլոր ուսանողներին, այլ մանաւանդ Շահնազարեաններինն է. նոքա մեծ մարդեր լինիլ, մեծ դերեր խաղալ կոչուած են. գաղափարի զինուորներ, գաղափարի նահատակներ պիտի լինին. մի քաղաքակրթութիւնի փաղանգ է որ կը կազմուի Հասգիւղի մէջ. եւ կոյր է, եւ ամպարիշտ է ով որ չ'է սիրեր Շահնազարեան Լուսարանը, ով որ չ'է պատկառիր ի նմանէ:

Օ՜հ, քանի՜ կարճ է օրը. բաժանումի ժամը հասաւ...:

Շոգենաւ կը մտնեմք եւ կոտրած սիրտով հրաժեշտ կը տամք այն եզրերին, ուր մեր կեանքին զուարթագոյն օրերէն մին անցուցինք, անխառն զուարթութիւնի օր:

—Հրա՜ծ, գոչեց ծերունին. կարելի է որ Հայը անցունէ մի զուարթ օր, 'զոր չը դառնացունեն վիշտեր:

Եւ հեռին, բլուրին ետեւ, մի ծուխ ցոյց տրուաւ, որ կը շառագնէր քանի կը մօտենինք:

—Հրդե՜հ, հրդե՜հ, պոռացին:

Մեր անմեղ զուարթութիւնին վրայէ մի սեւ շունչ սահեցաւ: Շահնազարեաններ, հաւատարիմ իւրեանց բնազդին, հրատանջ բռուանեներին սուզը պահեցին. երգերը սառեցան իւրեանց շուրթերին վրայ, խոր լռութիւն պատեց իւրեանց շուրջը...:

Եւ մինչ Բէրաի մէջ աւերակներ աւերակների քով կը բարձրանային, բռուանութիւններ բռուանութիւնների վրայ կը դիզուէին, դագաղներ դագաղների կը յաջորդէին, Սահմանադրականները Հասգիւղ կը մտնէին գլխակոր, ոչ իբր տօնէ, այլ իբր յուղարկաւորութիւնի հանդէսէ վերադառնալով...:

Ժ. Ե

Երէկ, մի արքուն, զուարքուն հանրութիւն կը ծաղկեցունէր այս վայրերը. եւրոպական եռանդուն եւ ասիացի տոկուն երիտասարդութիւններ ձեռք ձեռքի կը տային Թուրքիայի Բարիզը հոս հիմնելի համար. Աշխատութիւնը, իւր անխոնջ բազուկովը, դիւրութիւն եւ երջանկութիւն կը բաշխէր ամենին: Հոս էր ինչ որ աւելի տուք կը բերէր այս երկրին, ինչ որ աւելի քաղաքակրթութիւն եւ նոխութիւն կը յայտնէր. հոս էր հանրային պարտէզն ալ, ուր կրկին սեռերը իրարի ժամադիր կը լինէին, կը մրցէին հագուստների եւ ձեւերի շնորհովը, լուսինի կապուտակ նոյլներէն շրջապատուած՝ սիրային երազների Լերէին մէջ կ'ընկղմէին, *ազատիա*ների թեթեւ շշուկին եւ նը-

ԳՐԱԴԱՐԱՆ

ւազարանների ոոյ կամ յամր ձայներին ներդաշնակութիւնը լսելով կը զմայլէին, եւ կը փոխանակէին ակնարկներ որոց մէջ թափանցելի համար հարկ է ճանաչել «հոգի» ասուած յաւիտենական խորհուրդը ... հոս էր նաեւ թատրը, Կայսերական Թատրը, ուր կը հաւքուէին գեղարուեստների եւ գեղատաւների սիրահարները, ուր կը դիմէին որ այս նիւթապաշտ դարին մէջ դեռ Պղատոնի հաւատը կը դաւանին, դէպ իտէական գեղեցկութիւն կը ձգտին, դեռ պաշտօն կը տանին վսեմ զգացումների: Այսպէս, ամեն տեղ կեանք էր երէկ:

Այսօր, մի լայն գերեզման բացուած է հոն: Աւերակների անեզրութիւնը լռում կը պատնառէ ականատեսին: Մի մոխիրի անապատ կը տարածուի քո առջեւ: Այս փլատակների ովկիանին մէջէ իբր փարոս կը բարձրանան սեւ եւ մուր ծխանքներ, որ շանթահար տիտանների պէս՝ կարծես դեռ չ'են ուզեր խոնարհիլ: Պենատէրն Բէրա մի անեղ պատանի մէջ է. կ'ուզէ սնգոյր.—մոխիրը առաս է:

Եւ էր այս աւերը:

— Մի օր, անհոգութիւնը մի կայծ ձգեց, հովը փչեց, եւ հրդեհը ծնաւ: Այս անաւոր հսկային բաւեցին մի քանի ժամ՝ ամեն բան նուաճելի, ամեն բան տապալելի համար: Նա գրկեց Բէրան իւր կրակէ բազուկներովը, մոխրակոյտների վրայէ վազելով՝ մի դժոխային ծուխ արտաշնչեց, մինչեւ երկին բարձրացուց իւր բոցէ բաշերը, եւ իւր նախնիներին սպառումը տեսնելով՝ «Ալ հանգչիմ» մռմռաց. կէս գիշեր էր. կրակը մարեցաւ,

եւ Հրդեհը, իւր մոխրոս սրունը տարածելով, եռացող սալարկին վրայ քնացաւ: Բիւր ընտանիք բռնուռացած էին, եւ վրանների տակ կը հեծէին հեռեւեալ օրը . . . :

Այս վրանների քաղաքին այդ ելեմտ. թուառին հեծերը կարեւոր են խորհողին համար:

Նօրի եմտ, մայրիկ.

— Համբերեցէք, զաւակներս. դեռ կանուխ է . . .

Այս մի օր է որ բան չ'է մտած մեր բերանին մէջ.

— Հրդեհը առաւ ձեր հացը, զաւակներս.

Ի՜նչ անգութ անձ է այդ Հրդեհը, փսփսաց Վահանիկ:

Մայրիկ, հաց տուր մեզ.

— Աղջիկներս, մի քիչ ալ սպասեցէք.

Կը մարիմտ ահա նօրութիւնէ.

— Օ՜հ, մի՛ լաք, աղջիկներս. մի՛ կոտրէք ձեր մայրին սիրտը . . . Ասուած մեծ է.

Միտ այդպէս կ'ասես:

Մի պատառ հաց, մայրիկ.

— Հրանտ, Աննիկ, մի՛ յուսահատիք. Երկին պիտի գթայ ձեր վրայ . . .

Մինչեւ էրբ սպասեմտ, անոյշ մայրիկ.

— Օ՜հ, ձեր հայրը չ'երեւեցաւ դեռ . . . մի՛ յուսահատիք . . .

Մի՛ յուսահատիր, եղբայր. Երկին պիտի մխիթարէ ըզ մեզ, ասաւ Աննիկ Հրանտին:

Մայրիկ, էր կը լաս.

— Ձեր հայրը . . .

Մի լար, կարելի չ'է որ մեր հայրիկը կորած լինի, այնպէս չ'է.

— Օ՜ շ քէ այդպէս լինէր, հառաչեց մայրը՝ սրբելով մի արտասուի խոշոր կաթիլ: Բայց... յարեց նա վնաս ձայնով:

Բաւ է, մայրիկ. ոչ, մի լար... քէ ոչ, մեր ալ կը լամի...

— Դուք հանդարտ կեցէք, զաւակներս. բայց անդրանիկս... ուր է Երուանդ.

Հոգ մի՛ աներ, մայրիկ, նա դպրոց գնացած է անշուշտ. դու չ'ես ասած մեզ քէ բարի է Աստուած.

— Այո, յարեց վշտակիրը մեթենապէս: Եւ սակայն թաշկինակը ձեռք առաւ:

Երկու զաւակ միասի՛ղ...

— Մայրիկ, ինչ կը փսփսաս.

Օ՜հ, սիրուն Արամ, քաղցրիկ Հրանոյշ... այրած...

— Հաւատա ինձ, մայրիկ, պտոյտի ղրկած է հայրիկս ըզ նոսա. եւ գուցէ սա երկար կառքին մէջ են.

Ա՜հ, դժոխային անմեղութիւն, պոռաց մայրը՝ տեսնելով մահի սեւ կառքը, 'զոր մանուկը կը ցուցնէր:

Մարդկային ընկերութիւնը կը փութայ օգնել այս զանազան թշուառութիւններին. եղբայրը եղբայրին խոցին սպեղանի կը ճարէ:

Քանի՞ արտառուչ է այս տեսարանը... արեւի տապէն պահպանելի համար թշուառ հրկիզուածները, վրաններ կը բաշխեն նոցա. բիւրաւորների հաց կը շնորհեն, մինչ քաղցը մահ կը սպառնայ. աղբիւրներ կը սեղծեն նոցա ծարաւը անցուցանելի համար. հագուստ կը տան, որպէս զի ծածկեն իւրեանց մերկութիւնը. անկողին կը նուիրեն, որպէս զի պաղ չ'առնուն հողին վրայ. միս կը բաժնեն գործաւորներին, եւ արգանակ հիւանդներին. վերջապէս կը զգան քէ պարտաւոր են զրկեալներին, օգի բազուկ կը կարկառեն նոցա, եւ Աստուած, երկինքի բարձրէն, կը զմայլի մարդին այս վսեմութիւնին վրայ:

Դուք ինչ կը խորհիք, պարոն մարդասէրներ. ինչ պիտի անուանէք այս փոխադարձ եղբայրութիւնի, սէրի եւ կարէկցութիւնի ցոյցերը: «Կեղծաւորութիւն է» պիտի զոչես, դատարկուրախ Դեմոկրիտոս. այլ արդի սերունդը կը գարշի քո մարմարէ ժպիտներէն եւ սառէ ծիծաղներէն:

Եւ դու, Պայրոն, ո՞վ վսեմագոյնը մարդասէրներին, ո՞վ դու որ քնարի վրայ բարձրացուցիր սկեպտիկութիւնը, ասէ, կը շարունակէս «ոտքի վրայ քայլող զեռուն» կոչել մարդը, որ, մանաւանդ ներկայ դարիս մէջ, այնքան փորձեր կը տայ անձնուիրութիւնի, սուրբ իղձերի, բարձր յաւակնութիւններու, վսեմ յատկութիւններու: Քո վեհափառ նակատիկը չը՞պիտի շառագնի երբ մարդերին, 'զորս ատեցիր, այնքան վեհ արարներ տեսնես այն յաւիտենականութիւնին մէջէ որում շատ քիչ կը հաւատայիր թերեւս:

Ժ. Զ.

Երեսս դէպ Արեւելք դարձուցի:

Մի ընդարձակ երկիր տեսայ, չորս գետով շրջա-

նակուած. հոն կը բարձրանայ մի ձիւնապսակ լեռ, որ մի հին յիշատակի խորհրդաւորութիւնը ունի: Այդ երկիրը մի սրտաճմլիկ տեսիլ կ'ընծայէ. Ամայութիւնը իւր լերկ թեւերին տակ առած է 'զայն. հոն սեւ կանաչ գեղձը իւր բունահոյզ ոստերը կը ծաւալէ տխրագին. մեռած տերեւներ մի շարժուն պատան կը կազմեն. Բաբելոնի ուռիներ, գեհեզրներու վրայէ, կարծես արտօսր կը թափեն գլխակոր. ոսկէծաղիկը կը պարզէ իւր դեղնած թերթերը. նոնին կը հակի գերեզմաններու վրայ, եւ կարծես մեռեալներու աղօթքը կը լսէ: Այդ սուգի վայրերին մէջ, լայն աւերակներ կ'երեւին հոս, հոն. ամեն տեղ նուաղում, ամեն տեղ կործանում . . . :

Հարցայ թէ ինչ երկիր է այդ:

— Հայաստանն է, պատասխանեցին աչք ի գետին:

Եւ փղձկեցայ . . . :

Այս գծծութիւնին մէջ պարտաւոր էի տեսնել ըզ թեզ, ով երկիրդ ազատներու եւ մեծերու. տգէտ, տկար եւ գերի պարտաւոր էի զտնել ըզ թեզ. քո անիւններին ժառանգը պիտի լինէի. աւերներիդ համբոյր ածելով՝ հոգէվարի շունչդ ծծել հակատագրուած էր ինձ. դու դարերի բեռին տակ չը պիտի ընկնէիր, էր ուրեմն այդպէս կորամամակ ես. դէպ շիրիմ կը հակիս. այլ դու մի անհուն շիրիմ ես արդէն. մեռնիլ կ'ուզես. այլ դեռ ապրած չ'ունիս: Պէտք ունիս կեանքի. —շարժէ ուրեմն կորիւններիդ մոխիրները, Վարդանների ոսկրները . . . : Բայց դու չ'ես խօսիր ինձ. աչ-

քերդ կը պլպլան յուսահատ, հակատիդ վրայ լռում կը կարդամ. ինչ, միթէ վհատած ես այնքան, մինչ զի չ'ուզես շարժիլի փորձ փորձել. ով Աստուած, քանի՞ աղիտաբեր այս վհատումը . . . :

Հայրենիքիս վիճակին վրայ յուսահատ էի. կեանքը ինձ ոնիր կը թուէր այլ եւս. վհատումը կը ծանրանար հոգիիս վրայ:

«Մի՞ վհատիր, ով Հայ,» ասաւ մի մեղմ ձայն մօտաւոր. եւ մի կաքնաթոյր մատ հեռին, շատ հեռին, մի հրեշտակ ցոյց տուաւ: Դէպ այն դարձայ մեքենապէս:

Մի խարտեաշ կոյս էր նա. ոսկէզօծ գանգուրներ կը ծածանէին իւր կիսէ ուսերին, որպէս մի գեղեցիկ ստուեր ալեակին վրայ. իւր կապոյտ աչքերին մէջ կը պատկերուէր երկինքը, իբր արձնուած ապակիի վրայ: Իւր կարապի թեւիկները կը բրբռային, կարծես շուտ հասնիլ կը տենչային. այլ նա յամր յամր կ'ընթանար սպիտակ դժնիկներու մէջէ: Մերթ մի ամպի մէջ փաթթուած՝ դէպ երկին կը սլանար, եւ մերթ կ'իջնէր երկիրի վրայ: Ամեն տեղ կը ծաւալէր զուարթութիւն եւ կեանք. երբ նա մօտէր, զօսցած ոստը մի ծաղիկ դուրս կը տար, չորցած միջատը մի նիկ կը հանէր. արեւծաղիկը դէպ այն կը դարձուցէր իւր լայն հակատը, իբր թէ մի երկրորդ արեւ լինէր նա. թուփերը նորա քայլերին առջեւ կը հակէին իւրեանց երիտասարդ ծաղիկները, որպէս զի Հրեշտակը նոցա վրայ կոխելով անցնի. իսկ նա, վարդերի բաժակներին վրայէ ոստոստելով, կակաչների շեղ

կոնֆին մէջ իւր ոտիկները լուալով, դէպ ինձ կ'առաջէր :

Ո՞վ ես դու, բարեւ՛ր հրեշտակ, որ ամեն տեղ կայտիռ կը սփռես, յարուրիւն կը տաս հոգէվարին, կեանք կ'ազդես դիակին :

— Ես Ցոյսն եմ. ես եմ որ մարդը իւր խանձարուրին մէջ կ'առնում, թեւերիս վրայ օրրելով կը ֆնացուցեմ 'զայն, եւ իմ շունչը կը խառնեմ նորա յեսին շունչին հետ . . . : Գիտեմ, դու ալ ինձ պէտք ունիս, ո՞վ պատանեակ, դու ալ վնասած ես. մի մեծ վիշտ ըզ քեզ կը մաշեցունէ. այլ աւեսիս քեզ, խոցեալ պիտի բուժուին :

Եւ Հայաստա՛ն . . . :

—Ես ձեռք դրի նորա վրայ, եւ պիտի ապրի : Կը տեսնէս, յարեց նա՝ մատին ծայրովը ինձ հեռին ցուցնելով :

Աչքերս դէպ այն կողմը սեւեռեցի. հոգիս բաբախեց. Մասիսի գագաթին վրայ արշալոյսը կը ճառագայթէր :

Կ'իմանա՞ս, ասաւ ինձ :

—Այո՛, զոչեցի :

Նոյն վայրկեանին մէջ, չը գիտեմ ինչ շարժում արաւ Ցոյսը, եւ ահա մի հիանալի տեսարան պարզուեցաւ իմ առջեւ. Արմաւիր կը բարձրանար փոշիների մէջէ, Արտաշատ կը կանգնէր, Անի ոտքի կ'ելնէր, մի անթիւ ժողովուրդ կը ծաղկեցունէր անապատները . . . :

Այս մեծ յեղափոխումին վրայ սքանչացած, զարթեցայ :

Մի երազ էր դա . . . :

ԺԷ

Ա.

«Մամուլ» ծաղրաթերթին մէջ, մեր ուղղագրութիւնին վրայ մի քանի միամիտ դիտողութիւններ տեսանք, որոց մէջ Պ. խմբագրապետն իսկ կը խոստովանի թէ մեր նորութիւնները «առանց նպատակի չեն » :

Բանաւորութիւնն է մեր նպատակը :

Դիւրին է մեզ կեռ առ կեռ պատշգամել մեր ուղղագրութիւնը եւ անկեղծորէն ջրել այն «անկեղծ» դիտողութիւնները որոց մէջ Պ. շարագիրը նենգած է անգիտապէս. այլ կեռերի ցամաք բանակռիւով առ այժմ չ'ելնք ուզեր ձանձրացունել մեր ընթերցողները :

Բ

Երկու բառի բացատրութիւն :

«Երկրագունտ»ի նախորդ թիւովը ասած էինք թէ «Մամուլ» անգիտապէս նենգած է մեր ուղղագրութիւնը : Զարաշար մեկնութիւնների տեղի չը տալի համար, կը փութամք յայտնել մեր միտը :

«Մամուլ» *նենգած* է, զի մեր ուղղագրութիւնը այլայլելով ի հանդէս հանած է իւր ընթերցողներին առջեւ : Նա կ'ասէ թէ, *ի* նախդիրին տեղ ('ի տուն), առջեւ կը կեռադրեմք (ի' տուն). երբէք. մեք այս նախդիրին մակակեռ

չ'եմք դներ, զի գիտեմք թէ մի անբան աւելադրութիւն է այդ, թէեւ մեր գրագէտները կը գործածեն 'զայն անխորհուրդ: Նա կ'ասէ թէ *զ* նախդիրին առջեւ կը կեցադրեմք (զ'իս) · երբէք · մեք այս նախդիրին հետ կը դնեմք ապաքարց ('զիս), զի հոն մի գիր կայ յապաւուած, *ըզին ը* գիրը, թէեւ աւանդամոլ գրիչներ չ'են ուզեր փոխել իւրեանց սովորոյթը: Կան ուրիշ այլայլումներ ալ, 'զորս տաղտուկ է մեզ շարայարել երկարօրէն:

«Մամուլ» *անգիտակ* նենգած է, զի չ'եմք կարծեր թէ կամայ խեղաթիւրած լինի մեր ուղղագրութիւնը: Բարէմտութիւնով կը մեկնեմք այս այլայլումները, անուշադրութիւնի արդիւն կը հաւատամք ըզ նոսա, եւ կ'արդարացուցեմք մեր ոսոխը, մտածելով թէ չը գիտէ քաջ մեր գրելի կերպը:

Սակայն չ'եմք յուսար թէ նա բափանցած լինի այս բառային նրբութիւններին մէջ· ուստի կը սպասեմք որ իւր ծաղրելի զէնքերը ձեռք առնու մեզ դէմ եւ գրագէտ ականջները վիրաւորէ կապելայի լեզուով:

Գ

Ազգային խմբագիրների Տօն Դիւոդը (հարկ է նորա անունը տալ) մի նոր դաշտ կ'ընտրէ քաջագործութիւնի: Մեզ դէմ յարձակելի կատաղի տենչով, «բանասիրական փափուկ բանաքննութիւն»ի ասպարէզին մէջ կը նակատի, ձանձրացած իւր հին դափնիներէն, որոց անձնիւր տերեւը բիւր

ծաղրներով անարգուած է: Իւր սուինին ծայրը բաւիշ կը փաթթէ նա:

Կը շնորհաւորեմք մեր պաշտօնակիցը, յայտնելով միանգամայն թէ անզուսպ հեգաբերութիւնով կը սպասեմք այն շահատակութիւններին, որովէտ այս կրկէսը պիտի լնու · · · : «Մամուլ»ը բանասէր տեսնել, ինչ զուարճալի:

Այս նորընծայ բանաքննին մի խրատի պէտք ունի բայց · — թող իւր զէնքը իւր գրական նախապաշարումներին դէմ փորձէ նախ: Իւր առաջին քայլովը յայտնեց նա թէ, ըստ արեւելեան առածին, փոսուռայէն կը դողայ իբր հրդեհէ, զի, մի կեց տեսնելով, «անհերթեր նորածնութիւն է» կ'աղաղակէ եւ կը խռովի: Մի գրական մարդ, որ այսքան երկչոտութիւնով կը սկսի, փախուստով կը վերջացունէ:

Դ

Մի ձանձրալի հարկի վնար:

«Մամուլ» առիթ չ'է կորցուներ ինձ դէմ «տղայ» մակդիրը ժայթքելի, իբր անպատիւ պայման: Կ'ընդունիմ 'զայդ, եւ բոլոր համեստութիւնովս կ'իմացուցեմ նմա թէ միակ փառքս նոյն իսկ կրսեր լինիլս է: Դեռ տասեօթամեայ, ազգիս օգտակար լինիլս ինձ պատիւ է, կը յուսամ: «Տղայամիտ»ը կը կոչէ 'զիս նա որ դեռ հազիւ երկու ամիս յառաջ «իմաստալից» եւ «վսեմ» կ'անուանէր հառերս. «Որչափ փոխուած են ժամանակները,» կ'ասէ Ռասին;

Հայկական առածները իւր միտէն վաներ են բուրբ առածը. *Ամլոյ հաշտա տեղի* :

Մեր հակառակորդը, որ «Բերականաց *պաշը-պօզուրը*» կ'անուանէ 'զիս, իւր բերական անբիւ'սխալները մեզ հետեւիլով ուղղելի տեղ, մեր կեսերին դէմ կը մաքառի : Մեք սովորած չ'եմք ընթերցողները նեղել չնչին խնդիրներով, եւ չ'եմք ուզեր մեր էջերը կեսաբանութիւնով լնուլ. թէ նա կեսադրութիւն ուսնիլի այնքան ջերմ փափագ ունի, կրնայ դիմել մեր վարժարանը. լաւ է որ «մեր աղտոտ լաթը մեր մէջ լուամք, » որպէս կ'ասէր Նաբոլէոն Ա. այլ չը կարծուի թէ խնդիրը մութի մէջ լուծել կը բաղձամք. արտօնութիւն կը տամք նմա ի լոյս ածել մեր փաստերը :

«Մամուլ», որ կարեւորութիւն կը տայ իւր «Շառիվարի»ներին, կը կարծէ թէ «կը սոսկամ» ի նոցանէ : Կը պժգամ, Պ. խեղկատակ. զի նոցա անձնիւր տողը մի նախատ է հայ գրականութիւնի դէմ : Երբ «Մամուլ» կը խօսի, մամուլի դէմ կը հայհոյէ : Եւ սա պիտի կրթէ ժողովուրդը : Ամօթ :

Կ'ասէ թէ ճշմարտութիւնը ինձ համար «ցնորք» է. սմա կը տամ այն պատասխանը 'զոր ճշմարտախօսն Էլ-Մա'մուն տուաւ մի սոյնօրինակ առարկուի : Աւելորդ է գրել 'զայն, զի «Մամուլ»ի շարագիրը, առանց կասակի, գիտէ անշուշտ Արաբների պատմութիւնը : Մի խմբագիր, որ չ'է հմուտ պատմութիւնի, մի վարդապետ է որ չը գիտէ Աւետարան ;

Ե

«Մամուլ», իւր այս չորրորդ յօդուածին մէջ, շատ ցեխոտ լեզու կը գործածէ ինձ դէմ : Այնքան անարգ են այն տիտղոսները, 'զորս ինձ կը շռայլէ, մինչ զի իւր հոգիին ներքին խորերէն բխած կը թուին : Մի այսպիսի փոքրոգիի վրայ կարէկցութիւնով կը նայիմ :

Ես, որ Գէորգ Այվազեանը մօտէն ճանաչած եմ, ես, որ նորա ուղեղին անձնիւր հիւլէն կշռած եմ, կ'արհամարհեմ 'զայն :

Ես վատութիւն կը համարիմ սուր քաշել մի քրշնամիի դէմ, որ անարժան է ինձ :

Ազգային կեանքիս մէջ, գիտեմ, շատ այսպիսի մախացողների պիտի հանդիպիմ. այլ, թող գիտնայ աշխարհ, միշտ բերանիս մէջ բաւական թուք պիտի զտուի այսպիսի նախատների դէմ :

Ժ. Ը.

Նիւթերի անհունութիւնը կը շուարեցունէ 'զիս: Մենաշնորհուած դասը մեկուսի, այն ժողովուրդը, որ ըզ մեզ կը շրջապատէ, ամեն նիւղի մէջ այնպիսի թերի եւ անկերպարան առաջդիմութիւններ արած է, մինչ զի կարելի է ասել այն երեւելի իմաստասէրին պէս որ նորոգիչը եղաւ գիտութիւններին. «Ամեն բան վերակերտելի է : » Եւ յիրաւի, երբ մարդ աչքերը շուրջը դարձունէ, կը տեսնէ նոյնժամայն թէ ինչե՞ր դեռ կը պակ-

սին ի մէնջ, որչափ կարեւոր խնդիրներ անծանօթ են ազգին, եւ քանի՞ անքիւ նիւթեր կան որոց վրայ դեռ չ'են խօսած նմա գրագէտները: Եւ, աւաղ, քանի՞ քիչ են որք զրիչ կը բռնեն իւրեանց ուսածը ժողովուրդին ուսցուցելի համար, անկեղծ, անշահամոլ, անփառասէր ոգիով վառ:

Այն այնքան բազմաթիւ նիւթերը, որք զանազան կարգերի կը վերաբերին, ունին մասնաւոր հրապոյրներ որք 'զիս կը յանկուցնեն: — Իմաստասիրութիւնը, աշխարհի ժամանակակից ծերունին պատկառելի, հալեւմաշ հակատներ կը ցուցնէ եւ նոցա փառաւոր արահետին վրայ կը հրաւիրէ: — Քաղաքագիտութիւնը, երկու կեցի մէջ քաշուիլ կարելի եղած գիծերին այդ ամենէն երկայնը, կը հրաւիրէ խոնարհիլ անիծեալ Մաքիավէլի անիւնին առջեւ: — Մի ազնիւ ժպիտ աչքերին մէջ, հրաւէր կը կարդայ քաղաքական տնտեսութիւնը, այն մեծ գիտութիւնը 'զոր ստեղծեցին Գուէսնէյ, Դիւրկո, Ատամ Սմիթ, Ժան-Պաղիսդ Սէյ, Մալթիւս, Ռիքարտօ, եւ ուրիշ բարեբարներ մարդկային ցեղին: — Գեղարուեստներն ալ կը հրապուրեն 'զիս, Պարթենոնի փոշիները, Միքէլ-Անճէլօի մարմարը եւ Պ. Գուռպէի հանրապետական կտաւները ցոյց տալով: — Գեղատառները մտերիմ ժպիտով հրաւէր կը կարդան, եւ ես «շատ յարմարութիւն» ունիմ նոցա հետեւիլի, որպէս ասաւ մի խորին անձ: Ընտրութիւնս եղած է. Քերթութիւնը յանկուցաւ 'զիս, այն 'զոր բաւական երկար ատենէ ի վեր լքած եմ նիւթին իրականութիւնին եւ կեանքին անողոքելի հարկին մէջ:

Մի ուղեւոր, արեւի տապին ենթակայ, լերկ նեղուցներէ եւ մերկ ժայռերէ անցնելով, փոսերէ, խրամներէ ցատքելով, կը յոգնի վերջապէս, ժանտաքզենիի շուքին մէջ կը նստի, եւ մի գինիի բաժակ կը պարպէ: — Ուղեւորը Մարդն է, գինիի բաժակն է Քերթութիւնը:

Երբ մի մարդ, ոսոխներէ պաշարուած, նախանձէ հալածուած, անարգներէ անարգուած, իւր մէջ կ'ամփոփուի եւ անցեալը կը յիշէ, մի վսեմ քերթուած կը յորինէ լռելեան:

Երբ Նախանձը, ապիկար մարդերի այդ հոգին որ ման կը գայ մեր ներքանին շուրջը, երբ Նախանձը, մի մտերիմի մարմին առած, ջերմ ձեռքով աջս կը սեղմէ եռանդոտ, ժպիտներ կը փոխանակէ առջեւս, եւ մի քայլ հեռին՝ խոժոռ ակնարկ կը նետէ ետեւէս, մուր կը քսէ ամբիծ հակատիս վրայ, չարամտութիւն կը տեսնէ բարէմտութիւնով կատարուած մի գործի մէջ, եւ վերջապէս թոյնով կ'օծէ յիշատակս, ձեռք կ'առնում Քնարը, նա որ ամեն կիրքէ վեր, ամեն հաշիւէ անկախ, ամեն նուաստութիւնէ սուրբ, ամեն յարձակումէ բարձր է, գերագոյն խոհերի մէջ կը մոռնամ Ցուդայի համբոյրը, եւ կը մխիթարուիմ:

Երբ Ատելութիւնը, — զի ատելութիւնի մարդեր կան, որպէս կ'ասէ այն վսեմ աֆորականը, — երբ Ատելութիւնը, իւր անկարողութիւնին կատաղութիւնովը յիմարացած, «երախայ» կ'անուանէ 'զիս եւ կը թքէ տողերիս վրայ, կը ժպտիմ, եւ Քնարին դիմելով՝ կը վերանամ վեհագոյն հորիզոններուն մէջ, ուր ալ 'զիս չ'են զբաղեցուներ այն նուաստները

որ կը սողան հողագունեիս վրայ եւ այն նուաստութիւնները որովք յանախ լաւագոյն սիրտերն անգամ կը շաղախուին :

Երբ ներկայս խնծծեն , մի շեշ, մի կեռ պատրուակ առած՝ զորտի պէս հայհոյութիւն կուկուան տիրվի մէջէ , անցեալին կը դառնամ , եւ հին յիշատակների մէջ կը դիտեմ մի այնպիսի խորհուրդ որ թեւ կը տայ հոգիս եւ լոյս աշխարհների մէջ կ'առաջնորդէ 'զայն :

Թէ ամեն բան խլեն յինէն , զէր յիշատակներս չ'են կարող խլել : Բաւ է ինձ այդ , եւ շատ իսկ :

Օրհնեա՛լ լինին յիշատակները , որ կեանքին շուտասոյր ժամերը կ'անմահացուցեն : Օրհնեա՛լ այն բարէկամը , որ այնքան հեռիները երբալով՝ ժամանակի եւ միջոցի վրայէ պիտի յիշէ 'զիս.

« . . . Երբ հայրենիք հասնիմ , կը գրէ ինձ նա որ կոչուած է մեծ դեր խաղալ Արեւելքի մէջ , ըզ քեզ պիտի յիշեմ այն պահուն՝ յ'որում զով հովանոյ մը ներքեւ , կամ առուակի քով , կամ ծաղկաւէտ եմակի մը կուշտն ընկողմնած՝ երազեմ արքուն. այն պահուն՝ յ'որում աջով բաժակ մը եւ աչերով ժպիտ մ'առած՝ բարեկամի մը կենաց պարպեմ. այն պահուն՝ յ'որում բուրաստանէ մ'անցնելով՝ սիրոյ ձեռք մը ինձ ծաղկափունջ նուիրէ , համակիր դէմք մը ինձ ժպիտ , սիրոյ ողջոյն ու խնդակցութեան նշմար մ'ընէ. վերջապէս ըզ քեզ պիտի յիշեմ՝ երբ գեղեցկին ու սիրունին հանդիպիմ . . . »:

Մի նմանօրինակ պարագայի մէջ գրուած է հետեւեալ տաղը :

Քերթողին հոգիի զեղումը թումբ ունի.—ոսանաւորն է այն : Քերթողին հոգին մի քանարիկ է , որ կ'երգէ ոսանաւորի ոսկիէ վանդակին մէջ : Մտիկ անենք : (Տես էջ 22) :

Ժ. Թ.

«Բացակայութիւնը չարիքների մեծագոյնն է , » կ'ասէ Լա Ֆոնդէն. ուստի եւ, *Ծաղիկների բարբառ*ին մէջ, օշինդրը , բոյսերի դառնագոյնը, բացակայութիւնին խորհրդանշանն է :

Թերեւս այդքան դառն չ'է հեռաւորութիւնը , մանաւանդ որ յանախ հեշտալի եւ անհրաժեշտ է այն : Մարդ շուտ կը ձանձրանայ աշխարհէ , քէ միշտ միեւնոյն տեսիլներով շրջապատուի. միօրինակութիւնը մի տեսակ հիւանդութիւն է. հարկ է որ մարդ երբեմն տեղափոխէ , հեռանայ սովորական երեւոյթներէ , ընութիւնի անհուն ծոցին մէջ ուղեւորի , որոնք նորանոր տեսիլներ որ աչքերը կը պարարեն , միտը կ'առուգացուցնեն , եւ կարծես կ'երիտասարդացուցնեն մարմինը :

Եւ քանի՛ քաղցր է մի ուղեւոր լինիլ զգայուն եւ հանճարեղ , ի զիր առնուլ վայրկենական տրպաւորութիւններ , անցած ժամերի հաշիւը տալ քերթող , տրամաբան եւ պերճախօս լեզուով , որ միայն յատուկ է այն անձին որոյ օրագիրքն կը քաղեմ հետեւեալ տողերը :

«Ցուլիս 1 , օր ուրբաթ , կէս օր.

Նախանաշ.— Պտոյտ.— Այցելութիւն առնանց Կիւրքէնպէրկայ , հնարողին տպագրութեան , եւ

Շիլլէոի, ազնիւ բանասեղծին գերմանացւոյ։ Օրհնեա՛լ քաղաք . . .

Այցելութիւն Թանգարանին. — Հնութիւնք եւ ձեռագործք երեւելի պատկերահանաց. բեկորք նախնի քաղաքակրթութեանց. ինչ որ թափթփեր մնացեր է այնքան մեծագործութիւններէ. —ունայնութի՛ւն։ Եւ անդ կմախք կնոջ մը, ո՞վ գիտէ ինչ գեղանի եւ հեզանազ եւ սիրավառ կնոջ, պարանոցեակն՝ որով կուրծքը կ'ըզգենուր, եւ սանտրիկը՝ որով ըզ խոպոպիս կը յարդէր, քովն ի վեր դրված, եւ այս պանուենքին՝ չ'էին ոչընչացած, եւ միայն զոր կը պանուենէին՝ հերքն խարտիշագեղ եւ կուրծքն սիրով տրոփուն, անոնք ոչընչացեր են . . . եւ անոնց վկայ՝ այս չոր ոսկրոտիք եւ չոր սանտրիկն ու պարանոցեակ . . .

. . . . . .

Յ $^{3}/_{4}$ հասանք ի Վիսպաս.

Օրհնեա՛լ է Տէր . . . Ազատեցանք այն աղմուկի աղաղակի քաղքէն, ուր մարդիկ փողոցները կ'ապրին՝ ուր այնքան հանգըստութիւն եւ դիւրութիւն կայ, եւ տուներն ալ այնքան անհանգըստութիւն. —ա՛լ սալայատակներուն վրա բիւրաւոր կառքերու գոռումը գիշեր ու ցերեկ անդադար ականջներս չը պիտի դրընչեցնեն . . . .

Վիսպաս եմք.

Վայրն է գեղեցիկ ու հանդարտիկ.—Հոս ջուրը ծիծաղ մ'ունի, օդը ծիծաղ մ'ունի, երկինք ծիծաղ մ'ունի՝, որ անմեղ աղջկան ծիծաղին կը պատասխանեն։ Անտառն իր գոս տերեւոց խոշիւնն ունի, իր մամռապատ ծառերն ու ծառի կոները, իր բա-

ռանձաւը, իր սահանքը, իր բացավայրը եւ իր հովուաց հովիտը։ Կը մխիս անտառին մէջ, կը խորասուզիս, եւ նա ի խորոց անհուն մթութեանն կերկերածայն թռչնոց վայիւններովը ու անագնագոչ ծառերուն սոսափիւնովը կը պատասխանէ սրտիդ անհուն աղաղակներուն։ Քիչ մ'անդին կը տեսնես որ անագին ապառաժ մը երկնից դէմ կը ցցուի ու կարծես շանքը կ'արհամարհէ. իր լուռուս կողերուն վայրի կանաչին վրայէն կաթիլ կաթիլ ջուր մը կը մգի վնիս, փայլփլլուն, զովագին, եւ այն կաթիլը հեղեղ կ'ըլլայ, որ ըզ մայրիս կը խորտակէ ու անհուն հովիս մը կը փորէ իր համբուն վրա, հոս՝ ջրվէժ, հոն՝ ջրի առուակ, հոս՝ կը դրդրչէ, հոն՝ կը կարկաջէ, հոն՝ ամպերուն հետ թխագոյն կ'որոտայ, հոս՝ դալարագեղ ծաղկասփիւռ խոտերուն եզերքը՝ մանուածապատ ման կու գայ, հոն՝ կը փրփրայ, հոս՝ կը փայլփլլայ, եւ արեւուն նախածագ փայլիւններուն առջեւ կը կարմրի՝ իբրեւ կոյս մը իր սիրականին առաջին տեսութեանը։

Հոն է ներդաշնակութիւնը, կարգը այս անկարգութեան մէջ է. եւ զի մարդուն ձեռքը ոչ ժպիրն այլ համեստօրէն խառնուած է բնութեան գործոցը, անոր կամացն ու քմացը հնազանդելով. եւ զի բնութիւնն է որ կը տիրապետէ։

Մշուշ չ'ունի երկինքը՝ որ այն մշուշը պատէ նաեւ ըզ սիրտը. կապոյտ կը տեսնես ցերեկը, աստղունք կը տեսնես գիշերը. ամպերն ալ, երբ ամպեր պատեն, զովագին են եւ թափանցիկ արեւին լուսովը, զայն լոյսը ֆողարկելով այնչափ՝ որչափ

բարակ շղարշ մը՝ ձրգված նազելի կուսին վառ ի վառ այտերուն վրա եւ մաքրափայլ խանդավառ կուրծքին, զոր եւ բարակ հովիկ մը վեր կը վերցրնէ երբ երբեմն . . . . . .»

Ակամայ վերջ կը տամ այս սքանչելի տողերին: Գրական գոհարներ են դոքա, որք այնչափ բանկագին են որչափ հազուագիւտ: Հայ գրականութիւնին այս անկումի վիճակին մէջ, լաւ է որ մերթ ընդ մերթ գան ի տես այսպիսի ընտիր գրութիւններ, իբր մոլորած հանանչներ մի բարձրագոյն գրականութիւնի:

Զը մոռնամ այս առիթովը ասել թէ շատեր *պուհs*, *քերթող*, *բանաստեղծ* կ'անուանեն 'զինքեանս, այլ շատ քիչեր զգացած են նշմարիս քերթութիւնը եւ կրցած են բացատրել 'զայն: Ի՞նչ ասես. «Սակաւք են ընտրեալք:»

Ի

Զբօսանքի եղանակին մէջ եմք: Քիչ շատ հարուստ անձեր ցրուած են Վոսփորի գիւղերին եւ Իշխանների Կղզիներին մէջ: Մեք ալ, այդ անձերի բաստէն զուրկ, Եւրոպայի քաղաքներին եւ մայրքաղաքներին զբօսավայրները յիշելով զոհ լինիմք:

Մատրիտի մէջ, հռչակաւոր է *Բռատօ* նեմավայրը, որ չորս հազարամէջ երկայնութիւն ունի: Մի լայն եւ լերկ դաշտ է այն, ծառուղիներով շրջապատուած եւ մի քանի աղբիւրներով գեղազարդուած: Դաշտին եզրը գծուած է մի մասնաւոր ուղի, կառքերի եւ ձիաւորների երթեւեկին համար: Շատ փոշի, դունչիւն, տրտիւն, ճիչ եւ աղմուկ, հպատանք, նոխուրիւն. ահա ինչ որ կը լնու Բռատօն: Ուրիշ նեմավայրներ ալ ունի Մատրիտ, որք են Ֆլորիտա, Տէլիս, Քամբօ-Կուանտ:

Սէն-Բէդէրսպուրկի մէջ, նշանաւոր է *Ամառի Պարտէզը*, բարձր եւ սաղարթազեղ ծառերով հովանաւոր, ներմակ արձաններով զարդարուն: Երբ ձմեռը մօտի, փայտէ արկղների մէջ կը պահեն արձանները, որպէս զի չը վնասուին. Ալէմանները ալ կ'անեն այդպէս: Գեղեցիկ է Քուիլոֆի արձանը, այլ գեղեցկագոյն է պորփիւրէ սափորը, 'զոր Շուէտի թագաւորը նուիրած է: Ուրիշ բազմաթիւ նեմավայրներ ալ կան, որպէս Ալէքսանտրի, Բէդրօֆսքիի, Էքաթէրինէնհոֆի մարգերը, Իսահակի, Պաշտօնականների փողոցին եւ Ռումիանձոֆ պարտէզները, Սէն-Միշէլ հրապարակին եւ Քազանի նեմելիները, եւ ուրիշներ:

Վիէննայի մէջ, երեւելի է *Բռատէր* նեմավայրը 'զոր Դանուբ կը գրկէ եւ 'զոր երկայն ուղիներ կ'ընդհատեն: Մէջ տեղը մի լայն պողոտայ կը տարածուի, ուր անթիւ կառքեր կը սուրան: Շագանակիներ բրբռուն հովանիին տակ, կանաչ խոտին վրայ կը բազմի ժողովուրդը եւ կը հրճուի նուագարանների դաշնակով, վայրին շքեղ տեսիլով: Ժօզէֆ Բ յորինեց 'զայն, 1766ին: Երեւելի են նաեւ Օկառդրն, Պռիկիդդրն-Օ, Պասդիոնս, Վօլքս-Կառդրն:

Պէրլինի մէջ, հռչակաւոր է *Թիէրկառդրն* անուն նեմավայրը, 'զոր կը կիսէ դէպ Շառլոտդրն-

պուրկ առաջնորդող մի պողոտայ : Պարտէզին երկու կողմը կը կանգնին երկու հսկայ արձան, տձեւ, տգեղ եւ անհեղեղ : Ունի ծաղկոցներ, աւազաններ, որ արդարեւ չէնաղ բաներ չ'են, որպէս ականատեսները կը վկայեն :

Կոստանդնուպոլիսի մէջ, նշանաւոր են *Սերային Պարտէզները* : Պ. Ա. Ուպիչինի ուղեւորը աշխարհի գեղեցկագոյն տեսարանները կը հուշակէ այդ վայրերը, որ միանգամայն Ոսկեղջիւրի, Վոսփորի, Ասիայի եզրներին եւ Մարմարայի վրայ կը նային : «Ժամը 5ին, նաւայարկին վրայ կեցած էի, կ'ասէ Լամարդին. նաւապետը մի մակոյկ կ'իջցուցնէ ծովին մէջ, հոն կը մտնեմ նմա հետ, եւ դէպ Վոսփորի բերանը կ'ուղեւորիմ՝ բերելով Կոստանդնուպոլիսի պարիսպները, 'զորս ծովը կը գայ թանալ : Խարիսխ ձգած բազմաթիւ նաւերի մէջէ մի ժամ նաւարկելէ յետոյ, Սէրային պատերին մօտեցանք : Հոն է որ Աստուած եւ մարդ, բնութիւնը եւ արուեստը, զետեղած կամ ստեղծած են միաձայն ամենէն հրաշալի տեսիլը, 'զոր մարդին աչքը կարենայ նկատել երկրի վրայ : Ակամայ մի ճիչ արձակեցի, եւ յանէ՛ն մոռցայ Նաբոլին եւ իւր ամեն հմայքը. այս շքեղ եւ շնորհալի տեսարանին մի բան բաղդատելը՝ արարչութիւնը թշնամանել է : »

Լօնտօնի մէջ, երեւելի է *Հայտ-Բարքը*, որ նոխ տեսիլ կ'ընծայէ կիրակէ օրերը: Անքիւ կառքեր հոն կը խուժեն, որ իրարի հետ կը մրցին փարթամութիւնով : Կարծես մի տարբեր ժողովուրդ կը տեսնես հոն. ալ չ'են այն լուրջ եւ զբաղոտ Անկլիացիներ

ը 'զորս տեսար գործի օրերին մէջ. այլ զուարթ եւ համբոյր Անկլիացիներ են, որ հետի կամ ձիաւոր կը նեմեն գոհ սիրտով, եւ երբ յոգնին՝ ջուրին եզրը կը նստին : Բազմաթիւ հանրային պարտէզներ ալ կան, որպէս Սէն-Ճէյմսը, Ռիճէնդ'ս-Բարք, Կրին-Բարք, Բոլ-Մոլ, Վօքսհոլ. կան շատ *սգուէյ*ներ ալ, որոց նշանաւորներն են Կրօսվէնորը, Բոռդմէն, Պէռֆլի, Հանօվրը, Մանչէսդրը, Քավէնտիշ :

Բարիզի մէջ, հոյակապ է *Ժառտին տ Դիւիլը-ռին*, 'զոր Լընոդրը ձեւակերպեց 1665ին, Լուի ԺԴի օրով : Շատ սիրուն եւ զուարճալի է այն. հազար ծաղիկներ, բիւր ծառեր 'զայն կը պճնեն, որպէս եւ բազմաթիւ չէնաղ արձաններ, աշխարհի ամենէն անուանի վարպետներին ձեռքէն ելած : Խուռն բազմութիւն կը հաւքուի հոն ամեն երեկոյ. տղայներ, որ կը խաղան չուանի վրայ կամ շրջանակի հետ. այրեր եւ կիներ, որ կը կրեն աշխարհի ամենէն վայելուչ եւ ամենէն նորաձեւ հագուստները : Ուրիշ նշանաւոր նեմավայրներն են Ժառտէն տիւ Լիւքսանպուռ, Ժառտէն տէ Բլանդ, Բլաս Ռուսիալ, եւ Պուլվառները որ քաղաքին շուրջը կը պատեն իբր մի անհուն գօտի :

Պրիւսէլի մէջ, մի գեղեցիկ նեմավայր է *Բարքը*, շքեղ ծառերով եւ գնացներով զարդարուած: Պարտէզին մէջ տեղ տեղ կը կանգնին ականաւոր արձանագործների ձեռակերտներ, որպէս Օլիվէռի, Ժէռամ Տիւգէսնէ, Կոիբէլլօ, Ժանսան, Վանտէռնաէկրն, Վէռվուսդ, Լրժէօն, Տէլվօ : Գեղեցիկ են նաեւ Ալէ-Վէռդ եւ նոր Պուլվառները:

Ֆլորանսի շուրջը, անթիւ նեմելիներ կան: Պոպոլիի պարտէզը շատ հռչակաւոր է. հոն են Միքէլ-Անճէլոի, Պանտինէլլիի, Ժան տը Պոլոնյի կերտած չքնաղ անդրիները: Երորդութիւնի կամուրջը մի զով եւ հով զբօսավայր է: Բայց ամենէն աւելի վայելուչ նեմավայրն է *Քասչինե* ասուած մի տեսակ թեռակոզին, ուր կը դիմեն քաղաքին հարուստները եւ աղքատները: Թէ չ'ես հաւնիր սա, գնա Պէլլո-Սկուառտո, Սէն-Սոլէօռ տէ Ֆռանսիսքէն, Մունեռանո, Քառռէնի, Զէռդոզա, Իմբռունէդա, Բոնինիո ա Քաեռանո, Բէդռայա, Քասդէլլո, Մէլնի, եւ ուրիշ վայրեր:

Վենեսիկի մէջ, որոյ փողոցները ջրանցներ են, շատ հեշտալի է *կոնտոլ*ներով նաւարկել: «Մարդ կրնայ երկար ատեն բնակիլ Վենեսիկի մէջ, կ'ասէ մի Ֆռանսացի ուղեւոր, առանց ծառի երես տեսնել փափագելի:»

Նաբոլիի մէջ, բազմաթիւ են մոգիչ տեսարաններ: Ճեմել կ'ուզես.— Գնա *Վիլլա Ռեալէ*, գնա ծովեզրին մօտ, գնա բլուրներին վրայ. եւ թէ ախորժ է քեզ, գնա տես Վեսուվը, որ դուն ուրեմ կ'ոռնայ. եւ թէ հետաքրքիր ես եւ հնասէր, գնա Բոմբէի:

Հռոմի մէջ, *Բինչիո*ի նեմավայրը գեղեցիկ է, մանաւանդ երբ իտալեան վերջալոյսը կ'ոսկէզօծէ նորա սիրուն պուրակները եւ կայծեր կը ցայտեցուցնէ մարմարէ շատրուանաներին դողդոջուն առուներէն: Օ՜հ, քանի՞ խորհրդաւոր է այդ վերջալոյսը. մի օր (եւ մօտ է այդ օրը) պիտի ծագի նա պապական գահին փոխուելուն վրայ, եւ պիտի աւետէ այն գերապանծ արշալոյսը յորոյ պիտի բուսականի ազատութիւն կրօնական ընկերութիւնի, որ կը պարունակէ պատօնաներին եւ խորհիլի ազատութիւնը:

Ալ թողումք այս դատերը ուր մարդերը կը սանեցուցնեն իւրեանց ժամերը խաղաղ եւ երջանիկ: Աշխարհի ուրը այլուր է. Հռենոսի շուրջը դատեր կան ուր մարդերը իրար կը պատռեն. հոն կը սաւառնին մեր միտերը:

Հոն մի մեծ բան պիտի ծնի:

ԻԱ

Ա.

Հարիւր էին, եւ մեկնեցան: Գնացին Ֆռանսայի դատերին մէջ պարպել իւրեանց հայ երակներին արիւնը: Գիտէին թէ Հայաստան երախտապարտ է այն ազնիւ աշխարհին:

Շատեր կ'ամբաստանեն դարս՝ առարկելով թէ երախտագիտական զգացումները նուազած են եւ ապերախտութիւնը սիրտի անկախութիւն համարուած է: Հայ կամաւորները կ'երթան իւրեանց արիւնովը ջնջել այս արատը. դարս քաւել կ'երթան նոքա:

Գնացէք, գնացէք, ո՞վ Հայկի կորիւններ. Ֆռանսական դրօշը առաջդիմութիւնի յառաջապահն է. ուր նա երեւեցաւ, հոն վերածնութիւն տեղի ունեցաւ: Փառք է մեռնիլ այն դրօշին տակ որ, դեռ երէկ, ապտակեց Հիւսիսի հսկայը Մա-

լաֆոֆի աշտարակին վրայ, իւր հարազատներին արիւնովը մկրտեց իտալական միութիւնը՝ Մանէնդաի դաշտին մէջ: Փառք է մեռնիլ այդ երկիրին համար, զի վառարանն է այն ազատ եւ վսեմ գաղափարներին, 'զորս բերանաւատները «եղջերուաքաղ» կը կարծեն եւ 'զորս Իւկօ «իրականութիւն» կը հաւատայ:

Գնացէք, զարկէք Վանտալները.— եւ երբ անկնիք դիակնացած, յիշեցէք, ե՛ղբայրներ, թէ պատերազմը մի դժոխային վայրագութիւն է:

Բ

Ասուած իմ, 1870ի մէջ եմք, եւ պատերազմ կայ: Միլիոններ միլիոնների վրայ կ'անկնին, մի մեծ ժողովուրդ կը մենամարտի մի մեծ ժողովուրդի հետ, ազգային ատելութիւնների գետը կը յորդէ, աւանդական զայրոյթները յարութիւն կ'առնուն, Ալէմաններ եւ Ֆռանսացիներ, դէմ առ դէմ գալով, իրար կը բզկտեն: Ո՛վ անձկալից օրեր . . . կարծես աչքիս առջեւ կը տեսնեմ սա խստմնելի տեսարանը. բիւր դիակներ, անհանաչ եւ անձեւ, որք՝ հազարաւորների վրայ փռուած՝ կը հեծեն եւ կը հայհոյեն, մարդկային արիւնով կարմրած դաշտերի վրայ՝ բիւր գանկեր ջախջախուած, կտրուած աջեր՝ որք դեռ սուրին երախակալը կը սեղմեն ջլածիգ սարսուռով, եղբայրներ՝ սէրի հրաժեշտի տեղ՝ յաւիտենական հայհոյութիւնով իրարի փաթթուած եւ անկած, որք անճանաչացած՝ կարծես դեռ իրարի լանջը կը կրծեն, ցաւիտենականին խոժոռ ակնարկին եւ Սաղայէլի դժոխային ժպիտին տակ . . . :

Ահա այս վիճակին կը հասնի մի այնպիսի ժողովուրդ, որ ցեղափոխութիւնէ սարսափած՝ կոյրզկուրայն կը նետուի մի բախտախնդիրի գիրկը, 'զոր «Փրկիչ»կ'անուանէ առանց ճանաչելի 'զայն. մի այնպիսի ժողովուրդ, որ յօժարապէս կը յանձնէ իւր էութիւնը նմա՝ որոյ բոլոր արժանիքն է Պօնապարտի արիւնը կրել: Ա՜հ, այդ անունը բաւ չ'էր կասեցուցելի համար Ֆռանսան. Պոնապարտի արիւնլուայ ուրուականը չ'էր կարող սարսել իմացականութիւնի եւ յեղափոխութիւնի ժողովուրդին խիղճը. ինչ շուտ կը մոռնայ սա Այաչիոի պատուհասը . . . :

Աւա՜ղ, այնքան լեղի փորձերէ յետոյ՝ դեռ տղայ են ժողովուրդները, դեռ կարծես Ռամաեանի դարերին մէջ կ'ապրին: Փայլուն բառերէ կը հրապուրուին, պատիր խոստումների հաւատ կ'ընծայեն: Աջողութիւնը իւրեանց կուռքն է. ամեն բան կը ներեն նմա որ կ'աջողի: Պ. Թիէր ասած է թէ ազգերը չ'ունին երախտագիտութիւն. ես կ'ասեմ թէ յիշողութիւն չ'ունին:

Արծիւները բարձրացան ահա, ո՛վ 89ի ժողովուրդ. Նաբոլէոն պատերազմ հրատարակեց քո կողմէն, առանց հաւանութիւնդ առնուլի: Ցառաջ. ասպարէզ կը կարդայ դեկտեմբեր 2ի դիւցազնը, այն որ Պոսէնը սպանեց, այն որ Իւկօն ափսորեց, այն որ բնդանօր շիտկեց կիների, մանուկների վրայ: Պեխերը կ'ոլորէ նա իբր առիւծ եւ «ի Պէրլին» կը գոչէ: Վա՜յ քեզ, Բրուսիա.

«Անյաղթելի»ն է որ կը գայ, իւր համբաւաւոր ասողէն առաջնորդուած . . . :

Դաշտերը ծաղաւի են արիւնի. Լուի կը գայ ըզ նոսա : Շատ չ'է տաս տարի խաղաղութիւնը այնպիսիների համար որ, խաւարամիտ Ժողէն տը Մէդրի հետ, կը հաւատան թէ պատերազմը բնական օրէն է, ասուածային է :

Ֆռանսա, սիրելի՛ Ֆռանսա, այս դասը պիտի լինի՞ քեզ վերջին դաս :

Մինչեւ ե՞րբ, ո՛վ Մարդկութիւն :

ՎԵՐՋ.

ՎՐԻՊԱԿ.

Էջ.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
Խթ	11	*հաչարար* է	*հաչարարէ*
17	11	ՈՂՋՈՅ ՆԱՌ	ՈՂՋՈՅՆ ԱՌ
37	9	Անմանութիւնը	Անմահութիւնը
	12	Մեծագործութիւով	Մեծագործութիւնով
51	2	ուսաւոր	լուսաւոր
59	11	վրայէն	վրայէ
74	17	զտնուիր	զտուիր
77	20	կը զղջայ	զղջայ
95	24	բաղխիմք	բախիմք
129	6	բաղխեր	բախեր
130	26	պօռան	պռան
155	5	հարցուց	հարցաւ
175	24	մոլութիւնը	մոլորութիւնը
176	30	'զայն	'զայն.
192	25	է	են
	30	է	են
193	1	է	են
198	17	հանոյքը	հանոյքները
	20	զբօսանքը	զբօսանքները
206	9	սկսին	սկսին.
213	11	այն	այն էակը

ՑԱՆԿ.

ԶՕՆ . . . . . Ե
ԱՌԱՋԱԲԱՆ . . . . . Է

ՏԱՂԵՐ.

Ա. Ի մահ Պէշիկթաշլեանի 1
Բ. Ի տապան Լամառդինի 4
Գ. Առ մայր որդէկորոյս 8
Դ. Առ զեփիւռ 12
Ե. Ուղերձ առ Նուպար բաշա . . . 14
Զ. Առ փոքրիկն Տիրունի 15
Է. Աղօթք ուսանօղաց 16
Ը. Ողջոյն առ Խրիմեան 17
Թ. Առ պանդուխտ 20
Ժ. Ցիշատակ 22
ԺԱ. Երդում 24
ԺԲ. Ուսում 26

ՃԱՌԵՐ.

Ա. Դասիարակութիւն 27
Բ. Լուսաւորութիւն 30
Գ. Մեծագործութիւն 33

Դ. Առաջդիմութիւն 38
Ե. Պերճախօսութիւն 42
Զ. Հոգիի անմահութիւն 60
Է. Մահի պատիժ 64
Ը. Անձնուիրութիւն 90

ԱՌԱԾՆԵՐ.

Առածներ 98

ՆԱՄԱԿՆԵՐ.

Ա. Առ Պ. Մ. Ասլանօֆ 100
Բ. Առ Տ. Մ. Խրիմեան 103

ԳՐԱԴԱՏՈՒՄՆԵՐ.

Ա. Հայկ դիւցազն 106
Բ. Լէնկթիմուր 108
Գ. Մեծն Տրդատ եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ 126
Դ. Սուս Մարգարէ մը կամ Արձագանգ ճշմարտութեան 129
Ե. Մարդ իրենց գործերու զաւակները . 134

ԱՐԳՈՍԻ ԽՈՀԵՐԸ.

Արգոսի խոհերը 160
ՎՐԻՊԱԿ 235
ՑԱՆԿ 237

ՀՀ Ազգային գրադարան
NL0341051